



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lipstick
Imperial

891.71
S - 80



891.77 4762-85

5-950

Yntjybjf inde

~~REC 18977821/188~~
~~MMP 6354 13/10~~

Nº 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՇՄԱՐՔ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Կրկյցերի Սօնատը,
Կրկյցերի Սօնատի Վեշչաբանը,
Կանոնց եւ Ալք

Փարզմանեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տպարան Մայր Աթոռու Սրբոյ Էջմիածնի

1905

91.71
3-80

391.71

S-80

ԱՐ.

№ 1.

ԿՈՍՍ Լ. Ն. ՏՕՂՄԱՆՅԻ

19 NOV 2010

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԿՐԵՑՑԵՐԻ ՍՈՆԱՏԸ

Կրկյցերի Սօնատը, Կրկյցերի Սօնատի
Վերջաբանը, Կանանց եւ Սեր

Թարգմանեց

Ե. Ֆ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊՈՅ

Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

1905

23.08.2013

73940

Дозволено цензурою. 22 Января 1905 г. г. Тифлисъ.



4762-55

ՑԱՐԱՁԵԲԱՆ

Լուսաւոր է արեք և ընդհանրական է նրա
լոյսը: Նրանից անխափի օգտառում է բնութիւնը և
բոլոր արարածները, և լրյափ օգտառելու այդ իրա-
ւունքների սահմանափակումն միշտ համարւում է
պատիժ՝ և ամենամեծ պատիժ է իսկապէս, որով-
հետեւ պատճեռում է մարդուս ամենանշանաւոր
զգայարանը՝ աչքը և նրա շարժուելու իրաւունքը
բռնարարւում:

Հարկաւոր է օդ, հողն ու ջուրը, որ մարդս
կարողանայ ապրել և պահպանել իւր զոյսութիւնը,
և այդ երեք բաներից որևէ մինից զրկուիլը առաջ
է բերում նրա ֆիզիքական մահը:

Ճիշտ այդպէս էլ եղել են և կան մարդ լու-
սասուներ, որոնց լոյս է տուած ընդհանրութեան
համար, որոնց լուսով լուսաւորւում է մարդու
կենցաղավարութեան ոլորապտոյտ և խոչ ու խու-
թով ծածկուած ճանապարհը. որոնք երկրիս աղն
են և մարդոց հոգու լոյս. որոնք իրենց արձակած
լուսով շղթայում են մեր կրքերը, արթուն և ուժեղ
պահում մեր խիզճը, մաքրում և զգայուն են գարձ-
նում խղճից զէսի ուղեղ տանող ճանապարհը,
քննադատում մեր իւրաքանչիւր քայլն ու են-
թարկում խղճի պահանջներին: Թէև նոյն այդ
նպատակով է ստեղծուել քաղաքացիական և քրէ-

ական, զինուորական և եկեղեցական օրէնք և օրէնըսդրութիւն, որոնք որոշում են մարդկային պարտուց և իրաւանց սահմաններն և այդ սահմաններից դուրս գալու իւրաքանչիւր դէպքի համար պատիժներ, բայց ցայսօր ոչ մի օրէնք, ոչ մի խստութիւն և ոչ մի պատիժ երբէք չի զսպել և զսպել էլ չի կարող մարդուս այն բազմաթիւ ուժեղ և անզուսպ կրքերը, որոնք կան արդէն մեր կենդանական գոյութեան մէջ և կամ ծնունդ են առնում մոլորուած միջավայրի, հիւանդուս ժամանակի և փչացած ճաշակի չնորհիւ։ Կրքեր, որոնք երբեմնակի միայն զսպուել են արթուն և լուսաւոր խղճի չնորհիւ, ինչպէս այդ տեղի ունեցաւ քրիստոնեայ հաւատացեալների հետ սուածին դարերում, երբ ծէսը դեռ չէր խեղտել Աւետարանի ամենավսեմ բարոյական վարդապետութեան քարոզը և սփռած հաւատարութեան ողին։

Ս.յ.ն. մեր կրքերը և նրանցից առաջ եկած յանցագործութեան ձգտումն ու ծարաւը զսպուել են և կարող են զսպուել միմիայն արթուն և լուսաւոր խղճի չնորհիւ և ոչ թէ դիւրաբեկ և փոփոխական օրէնքների, անկատար—մարդ դատաւորների, տեղ տեղ միայն աչքի ընկնող՝ հարուստին և զօրաւորներին զիջող, իսկ միւս դէպքերում խիստ սստիկանների ու սստիկանութեան չնորհիւ, որոնք լի են նոյնանման կրքերով և մարդկային թերութիւններով, որոնց ենթասրահը փոքր է և տեսողութիւնը թոյլ։

Թոյլ են մարդկային աչքերը։ Նրանք ամենաթեթև արգելքի միւս կողմն այլ ևս չեն տես-

նում թէ ինչ է կատարւում պատերի ներսը, տներում, սարերում, անտառներում, ստուերախիտ այգիներում և այլն և այլն։

Այդ աչքերը կարիք ունին քնոյ և հանգստի, նրանք միւս բոլոր մարդկանց աչքերի հետ միաժամանակ չեն փակւում, և ահա այդ պատճառով ինչքան էլ խիստ գծելու լինինք մարդկային պարտուց և իրաւանց սահմանները օրէնսդրական կարգով ու գատարաններով, ինչքան էլ միլիօններ վասնենք աչալուրջ սստիկանութիւն և հսկողութիւն ունենալու մարդկային ընկերութեանց համար, երբէք չենք կարող այնպիսի արթուն և հսկող սստիկան գտնել, ինչպէս որ մեր խիզճն է և այնպիսի օրինակելի կեանք վարել, ինչպէս մեզ խղճին հսագանդուելու վարժեցնելուց յետոյ։

Ինչպէս որ ոչ մի լոյս և ջերմութիւն մեր արեգակնային համակարգութեան մէջ չի կարող արեի լոյսից և ջերմութիւնից հզօր և պայծառ լինել, ծիշտ այգպէս էլ ոչ մի օրէնք և խստութիւն չի կարող արթուն խղճից աւելի լաւ հսկող և անաշառ դատաւոր լինել։ Դա, այդ արթուն և անաշառ դատաւորը միշտ մեզ հետ է. նա անբաժան է մեզանից։ Նա քնում է, երբ մենք ենք քնում և արթնանում, երբ մենք արթնանում ենք։ Նա անբաժան ընկերակցում է աւազակին՝ անմատչելի լեռներում և դողացնում նրա բազուկները ոճրագործութեան ժամանակ, ընկերակցում հարուստին նրա ցոփ կեանքի իւրաքանչիւր քայլափոխում և ձանձրացնող աղքատ մուրացկանի նման աղաչում ու պաղատում է մեղմել այդ հար-

ընթացքը։ Նա անբաժան է ուրիշի գանձուց մօտ կանգնած և աւարառութեան պատրաստուող աղանձնածուին և շշնջում է, որ այդ օտարինն է, որ ինքն իրաւունք չունի այդ գանձին ձեռնամուխ լինելու։ Նա անբաժան է հոգեորականից, որը միմիայն որոշ աղօթքների ու շարժումների, որոշ երգեցողութեան և անմատչելի ընթերցանութեան մէջ է տեսնում։ Աստուծոյ պաշտամունքը և յիշեցնում։ «Սիրեսցես զընկեր քո» և «Հաւատք առանց գործոց մնուեալ են»։ Նա անբաժան է կրքու և ցոփ երիտասարդից, երբ նա ամեն ինչ մոռացած և անանութեան հասած, մոռացած ուրիշի մարդկային իրաւունքները, միմիայն իւր կրքերին յագուրդ տալու վրայ է, մաղնելով թոյն մարդկային կեանքի մէջ և յափշտակելով այլոց պատիւն ու ընտանեկան անդորրութիւնը։ Այն, այդ սատիկանն է, որ զինուորականին ու քաղաքացուն, հարուստին ու աղքատին, հոգեորականին ու գատառին հակում է ։ անընդհատ, աղաչում է յետ կենալ սիսալ և անարդար մատրութիւնից, որքան կիրթ է նա, որքան ուժեղ է և ազատ թըմքեցնող նիւթերի և խմիչքների աղդեցութիւնից, այնքան յաղթանակող, այնքան արդար է կեանքը, մարդկային գենցաղավարութիւնը և անխախտ են կեանքի բարոյական սկզբունքները։ Մարդիկ յաճախ մոռանում են այս յաւիտենական նշմարտութիւնը և ապաստանում իրենց հնարագիտութեան և ահա այն անձինք, որոնք առանձին ուժեղ շեշտում և յիշեցնում են մարդկանց այդ յաւիտենա-

կան ճշմարտութիւնը, որոնք ցոյց են տուել և ցոյց են տալիս աշխարհային օրինաց և դատարանների, ոստիկանութեան և նրա խստութիւնների ապարդիւն լինելը մարդկային եղբայրութիւն ստեղծելու գործում՝ երբ կրթուած չէ մարդուս իսիդը գեղեցիկ գործնական և աստիճանական կեանքով։ որոնք աշխատել և կարողացել են վարել իրենց կեանքը խոզի՝ այդ գերազոյն օրէնսդրի և դատաւորի ամենաթոյլ պահանջների համեմատ, կոչուել են մեծ, գլխովին բարձր են եղել իրենց միջավայրից, իրենց փայլով շամեցրել են մոլորուած մարդկութիւնը, գարձել նրա հալածանքի առարկայ, բայց և անպայման մնացել անմահ և անպարտելի։

Այդպիսի մի մեծութիւն է ժամանակիս նշանաւորագոյն բանաստեղծն ու բարոյականութեան փիլիսոփիայ Լ. Ն. Տօլստոյը, որն ամենաուժեղ կերպով հնչեցնում է իւր անպարտելի քարոզնի պաշտպանութիւն բարոյական՝ մոռացուած ճշշմարտութիւնների, և որին ամենքիկացիք շատ գեղեցիկ կերպով բնորոշել են, անուանելով «աշխարհիս խոզը»։

Դեռ օգոստոս ամսին ես խոստացել էի տալ հայերէն Տօլստոյի ամբողջ հեղինակութիւնները առանձին զբոյիներով, հայ ժողովրդին ևս մասնակից անել այն բարոյական լուսոյ, որ սիսում է նա արտակարգ առատութեամբ և համարձակութեամբ, այն ուժեղ քարոզի, որով նա աշխատում է փոքր առ փոքր մտցնել և նորից արծարծել խոզի գատավարութեան ենթարկուելու սովորութիւնը՝ այդ բանում ձեռնարկ և օրէնսպիրք

ընդունելով Աւետարանի վսեմ վարդապետութիւնը:

Մի բանում միայն համաձայնի չենք կարող յարգելի փիլիսոփայի հետ և այդ այն է, որ նա նախ ընդունում է, որ Քրիստոս ամուսնական խորհուրդ չի հաստատել և երկրորդ՝ որ ներկայ եկեղեցական ամուսնութիւնն ընդունում է թերի և ոչ համապատասխան քրիստոնէական վարդապետութեան պահանջներին:

Իբրև բարոյական իդէալ ընդունելով ողջախոռնութիւնը, ամուսնական կենքի և ամուսնացողների երջանկութեան հիմունք համարելով ամուսնացողների անպայման մաքրութիւնը ամուսնալուց առաջ և որոշ ժուժեկանութիւն ամուսնութիւնից յետոյ, յարգելի փիլիսոփան պահանջում է, որ օրինաւոր ամուսին համարուին միանգամայ արդէն իրար հետ կենակցողները ու ուշադրութիւն դարձնելու իրաւունք չունենան ոչ ծագման, ոչ կրթութեան և ոչ կարողութեան վերայ, և այդ ընդունում է իբրև նորութիւն, որին համապատասխան չէ և չի եղել եկեղեցական ամուսնութիւնը:

Մենք համաձայն ենք, որ Քրիստոս յատկապէս ամուսնութեան խորհուրդ չի հաստատել ներկայ ձեռվ՝ ինչպէս և միւս խորհուրդները. որ նրանք հետեանք են Քրիստոսի վարդապետութիւնից հանած եղակացութիւնների՝ Առաքելոց և առաջին հայրապետների ժամանակ և նրանց իսկ ձեռքով սահմանած. բայց որ եկեղեցին՝ հաւատացեալների ժողովն՝ այլապէս չի ընդունել ամուսնական խորհուրդը՝ քան ինչպէս հասկանում է Տօլստոյը,

գրանում ոչ մի կասկած չկայ և դորան իբրև ապացոյց ծառայում է սրբոց վարքը, եկեղեցական օրէնսդրութիւնը և ժողովների վճիռները: Ասածներիս իբրև գեղեցիկ ապացոյց կարող է ծառայել տասն և չորրորդ գարում գրուած մի մաշտոցի միջի պսակի խրամը, որ ես գտայ Ատրպատականի թեմի Ստեփաննոս Նախավկայի վանքում և որն այժմ գտնում է Թաւրիզի առաջնորդարանում:

Ստուգելով ամուսնացողների մաքրութիւնը խոստվանութեան չնորհիւ, քահանան հրապարակաւ դառնում է վիսային մօտաւորապէս հետեւեալ բառերով.—«Տեսէք որդեսկը. դուք այսօր եկել էք ամուսնանալու եկեղեցական սուրբ ամուսնութեամբ. իմացած եղէք (դասնում է վիսային), որ աշխարհիս բոլոր կանանցից Աստուած այս մէկին ընտրեց և տուաւ քեզ կին, և մնացած բոլոր կանքը և աղջկերք քո մայր են և քոյր, և եթէ նրանց այլապէս նայելու լինիս, կը մեղանչես քո Տէր Աստուծոյ դէմ: Եւ քեզ աղջկւու—Աստուած բոլոր տղամարդկանց միջից այս մինը տուաւ, և բոլոր այր մարդիկ քո հայր և քու եղբայր են հարազատ, և այլապէս մտածելը մեղը է Աստուծոյ դէմ: Բացի սորանից չը մոռանաք, որ տարուայ կէսը պահք է և կէսն՝—ուտաիք. պահոց օրերին մաքուր պէտք է լինի ձեր ամուսնական արագաստը և ողջախոն ձեր կեանքը: Սուրբ և մաքուր պէտք է մնաք և յղութեան ժամանակ՝ ինչպէս և իւրաքանչիւր ամսուայ որոշ օրերին, երբ կինը հիւանդէ, որովհետեւ այդպիսի ժամանակ անժութկալութիւնը գաւակի հետ լինեն է, մեղք է և այդ բանից են

առաջ գալիս բազմատեսակ հիւանդութիւններ (թուած են և հիւանդութիւններ): Ապա վերջաշնուրմ է խրատը, վկայ կանչելով խօսեցեալների ուխտադրութեան բոլոր ներկայ եղողներին և ամենակարող Աստուծոյ:

Եկեղեցական այսպիսի պահանջների ժամանակ բաւական էր հաւատ և մաքրութիւն ամուսնութիւնից առաջ, բաւական էր աչալուրջ և պարտաճանաչ եկեղեցականութեան և ոչ թէ ժամանակի մոլորութեանց մէջ ընկըմուած հոգեորականութեան հօկողութիւնը և ստացւում էր բարոյապէս մաքրուր և հզօր ընտանիք, որն իրօք ընդունակ էր շարունակելու մարդուս վրայ զրուած պարտականութիւնը՝ միշտ գէպի կատարելութիւն ձգտելու՝ թէ բարոյապէս և թէ մտաւորապէս:

Բայց անցան դարեր, թուելացաւ մարդկային կամքը, խզին փոխարինեց օրէնքն ու դատարանը և ստեղծուեց այն անգուստ և այլանդակ կրքների թագաւորութիւնը, որում մենք ենք ապրում:— Խորտակւում: Մարդիկ կանդնած են իրար հանգէպ իրրեաւ աւաղակներ, անբարոյական կապիկներ և եթէ չի ստեղծուել փողոցային՝ հրապարակական չութիւն ու աւաղակութիւն, դա ոչ թէ արդիւնք է գարուս կուլտուրայի, մտաւոր գարգացման, այլ հէնց միմիայն այլպիսի տեղերում հսկելու միայն ընդունակ օրէնքի և ոստիկանութեան: Ճիշտ է, մենք միմիթարում ենք մեզ. մեր կուլտուրականութիւնն ապացուցանելու համար մատնանիշ լինում զանազան ապաստարանների, անասուններին հովանաւորող, կապոյտ խաչի,

կարմիր խաչի, բարեգործական, աղքատախնամ և այլ ընկերութիւնների վրայ, բայց չենք ուզում ըմբանել, որ հէնց գրանց գոյութիւնը պարզ ապացոյց է յանցագործութեանց բազմանալու, մեր կեանքի և խղճի պահանջների միջի սարսափելի հակասութեան և մեր բարոյական անկման: Կայ մանուկների մսուր, ուրեմն կան և անբարոյական կապակցութիւնից առաջացած մանուկներ, որոնց մի հարիւրեկորդն անգամ խնամել չենք կարողանում: Կայ կապոյտ խաչի ընկերութիւն, ուրեմն կայ և այն էլ սոսկալի չափերով հարբեցութիւն և անբարոյականութիւն, և ընկած՝ անտէրութեան մատնուած կանայք, որոնց երկու տոկոսն անգամ փրկել չենք կարողանում մեր հիմնարկութիւններով, և այլն և այլն: Եւ երբ ստեղծած բացասական երեսյների երկու տոկոսը միայն գարմանելու միջոց և հնարաւորութիւն ենք զտնում ժամանակիս կրքամոլոր հասարակութեան մէջ, արդեօք ինչքան ենք առաջ դնացել մեր խալուսիկ քաղաքակրթութեամբ, վիալով և բարեկեցութեամբ:

Արգեօք այս խնդրի ամենաուղիղ լուծումն քրիստոնէական վարդապետութեան համեմատ մեր խիղճը կրթելու մէջ չէ: Արգեօք այն չէ միակ բանալին, որը արուեց մեզ Գողգոթայի ճանապարհին և Պաղեստինէի անսպատաներում: «Արքայութիւն երկնից ի ներքս ի մէջ ձեր է»: Այս, մեր մէջն է արքայութեան բանալին, մեր մէջն է այն սրատես դատաւորն ու ոստիկանը, որը միայն ընդունակ է շղթայելու մեր կրքերն ու մեր ձեռքերի աղահութիւնը, և նրա կրթութեան և մաքրութեան

վրայ պէտք է լինի կեղբոնացած ամբողջ մարդկութեան ուշադրութիւնը։ Այդ բանալին է մեր խիղճը և Աւետարանի գծած ուղին։ Այդ երկու գործոնների միացեալ ջանքը երկինք կը ստեղծի երկրիս վերայ և օրհնեալ լինին այն բազուկներն ու ճակատ, որոնք այդ միակ ուղիղ ճանապարհով կաշխատեն բժշկել մոլորուած մարդկութիւնը։ Այսպիսի հոկայական մեծութիւն է Լ. Ն. Տօլստոյը ժամանակակից բարոյախօսների և հեղինակների շարքում։

Ե. Ճ. Վ. Մ.



ԿՐԵՅՑԵՐԻ—ՍՈՒՍՏԸ

Եթէ մէկը ցանկութեան միտումով նայեց կնոջ երեսին, նա արդէն մեղանչեց նրա հետ իւր սրտում։

Վաղ գարնանն էր այդ։ Երկրորդ օրն էր, որ մենք ճանապարհ էինք գնում։ Վագօն էին մոնում ու գուրս գալիս կարձ տարածութիւն գնացողներ, իսկ ճանապարհորդներից երեք հոգի՝ ինչպէս և ես, գնում էինք գնացքի սկզբից։ Դրանցից մինը տղեղ և ոչ էլ այնքան մատաղահաս մի ծխող կին էր՝ տանջւած դէմքով, տղամարդու վերարկուի նման վերարկոյով և գլխարկով, միւսը՝ նրա ծանօթ մօտ քառասուն տարեկան խօսասէր մի պարոն էր՝ մաքուր և կանոնաւոր իրերով, իսկ երրորդն՝ իրեն առանձնացած պահող ցածրահասակ մի մարդ էր անսովոր փայլուն և ցատկրտող աչքերով ու գանգուր մազերով, որոնք սպիտակել էին ժամանակից առաջ, որովհետեւ նա այնքան էլ ծեր չէր։ Նա հագել էր մի հինգ լաւ վարպետի կարած վերարկու՝ գառան մորթէ օձիքով և գլխին դրել նոյնպիսի մորթուց մի բարձր գլխարկ։

Վերարկուի կոճակնակներն արձակած ժառանակ տակից երևում էր բաձկոն և ոռոսական ձեռվ կարած շապիկ։ Այդ պարոնի առանձնայատելութիւնը նրանումն էր, որ նա երբեմն տարօրինակ ձայներ էր հանում, որոնք նման էին կամ հաղի, կամ ուկած և ընդհատուած ծիծաղի։

Այդ պարոնն իւր ճանապարհորդութեան ամբողջ ժամանակ խուսափում էր միւս ուղեկիցների հետ որ և է յարաերբութիւն ունենալուց։ Հարեանների խօսքերին պատասխանում էր հակիրճ և խիստ, և կամ կարգում էր, կամ ծխում ու լուսամուտից գուրս նայում, կամ հանում էր իւր հին պարկից ուտելու պաշարեղէն և թէյ էր խմում կամ նախաճաշում։

Ինձ թւում էր, որ նա իւր միայնութիւնից ճանձրանում էր և մի քանի անգամ ցանկացայ խօսակցել նրա հետ, բայց իւրաքանչիւր գէպքում հէնց որ մեր հայեացքներն հանդիպում էին իրար, իսկ այդ պատահում էր շատ յաճախ, որովհետեւ մենք նստած էինք իրար հանդէպ, նա երես էր դարձնում և կամ գիրք էր վերցնում ձեռքը, կամ պատուհանից նայում դէպի գուրս։

Երկրորդ օրուայ իրիկնադէմին, մի մեծ կայարանի մօտ կանգնած ժամանակ, այդ ջզային պարոնն իջաւ վագօնից տաք ջուր վերցնելու և թէյ պատրաստեց, իսկ նոր և կանոնաւոր իրեր ունեցող պարոնը, ինչպէս վերջն իմացայ, իրաւաբանը՝ իւր հարեանուհու՝ ծխող և տղամարդու թէյ խմելու համար կայարան մտան։

Տիկնոջ հետ եղող պարոնի բացակայութեան ժամանակ վագօն մտան մի քանի նոր անձինք և նրանց թւում բարձրահասակ, երեսն ածիլած, կնճոսու մի պարոն՝ աքիսեայ քուրքով, մահութէ գլխարկով և մեծ պահպանակով (կիզորոկով), ըստ երեսիթին վաճառական։

Նա նստեց տիկնոջ և իրաւաբանի տեղին հանդէպ և խկոյն սկսեց խօսակցել երիտասարդ գործակատարի հետ, որը նոյն կայարանումն էր վագօն մտել։

Ես նստած էի նրանց գիմացի մի անկիւնում և որովհետեւ գնացքը կանգնած էր, այն բոպէներին, երբ ոչ ոք չէր անցնում, ընդհատումներով կարողանում էի լսել նրանց խօսակցութիւնը։ Վաճառականը նախ և առաջ յայտնեց, որ գնում է իւր մի կայարան հետու գանուող կալուածքը, յետոյ ինչպէս միշտ լինում է, խօսացին գների, առևտրի մասին, խօսում էին, թէ այժմս Մոսկվան ինչպէս է առետուր անում և աղա անցան Նիժեգորոդեան տօնավաճառին։ Գործակատարն սկսեց պատմել երկուսին էլ ծանօթ մի ինչ որ հարուստ վաճառականի քէֆերի մասին տօնավաճառում, բայց ծերունին թոյլ չըտուաւ վերջացնել պատմութիւնը և ինքն սկսեց այն անցեալ քէֆերի մասին կունաւինում, որոնց անձամբ մամնակցել էր, նա ըստ երեսիթին պարծենում էր այդ մասնակցութիւններով և առանձին բաւականութեամբ պատմում էր, թէ ինչպէս այդ նոյն ծանօթ պարոնի հետ միասին՝ միանգամ հարբած ժամանակ կունաւինում այնպիսի բան էին արել, որ հար-

կաւոր եղաւ պատմել շշուկով, որից գործակատարը բարձրածայն քրքջաց, իսկ ծերուկն էլ ծիծաղեց՝ կրճացնելով իւր երկու դեղին առամշերը:

Որևէ հետաքրքիր բան լսելու յոյս չունենալով, ևս վերկացայ և ուղում էի անցնել կայարանի տանեստանով մինչեւ զնացքը կը մեկնէր։ Դուան մէջ ինձ հանդիպեցան փաստաբանն ու տիկինը, որոնք վագօն էին մտնում տաք վիճարանելով։

—Զէք համնիլ. —ասաց ինձ մտերմաէր փաստաբանը. —իսկոյն երկրորդ զանգը կը լինի։

Եւ իրօք, ևս գեռ վագօնների ծայրին չէի հասել, որ լսուեց զանգի ձայնը. Երբ ևս վերադարձայ, տիկինն ու փաստաբանը գեռ շարունակում էին իրենց տաք խօսակցութիւնը. Ծեր վաճառականը լուռ նատած էր նրանց հանդէս, խիստ նայում իրեն առաջ և երբեմն անհաւանութեամբ շարժում ատամները։

—Յետոյ կինը բացէ ի բաղ յայտնեց իւր ամուսնուն, ժպտալով ասում էր փաստաբանն, երբ ևս անցնում էի նրանց մօտով, որ չի կարող և չի ցանկանում ապրել նրա հետ, որովհետեւ...

Եւ նա սկսեց շարունակել իւր պատմութիւնը, որն ևս լսել չէի կարողանում. իմ ետեից անցան կրկին ձանապարհորդներ, անցաւ կօնդութառը, ներս վազեց բեռնակիր բանուորը և բաւական երկար ժամանակ աղմուկ էր, որի պատճառով խօսակցութիւնը չէր լսում. Երբ ամեն ինչ հանդարտուեց, ևս կրկին լսեցի փաստաբանի ձայնը։

Երեսում էր, որ խօսակցութիւնը մասնաւոր դիպւածից անցել էր ընդհանուր դիտողութիւնների։

Փաստաբանը խօսում էր, թէ ինչպէս ապահարզանի խնդիրը զբաղեցնում է Եւրոպայի հասարակական կարծիքը, և թէ ինչպէս մեզ մօտ հետզհետէ աւելի և աւելի յաճախ հանդէս էին գալիս նոյնանման դէպքեր. Նկատելով, որ միմիայն իւր ձայնն է լսում, փաստաբանն ընդհատեց իւր խօսակցութիւնն ու դարձաւ ծերունուն.

—Հին ժամանակ այդ չէր պատահում, այնպէս չէ. ասաց նա հաճելի ժպիտով։

Ծերունին կամենում էր ինչ որ պատասխան տալ, բայց զնացքը շարժուեց և նա վերցնելով զլխարկը, սկսեց երեսը խաչ հանել և ազօթք մրմինջալ. Փաստաբանն իւր հայեացքն ուրիշ կողմ դարձրած՝ քաղաքավարութեամբ սպասում էր. Վերջացնելով ազօթքն ու երկը անգամ երեսը խաչակնքելով, ծերունին խորունկ և ուղիղ ծածկեց զլխարկը, ուղղւեց իւր տեղում և սկսեց խօսել.

—Պարօն, պատահում էր և առաջ, միայն աւելի սակաւ. Նայելով ներկայ ժամանակներին, այդ չի կարող տեղի չունենալ, որովհետեւ շատ ենք լուսաւորուել։

Գնացքն աւելի և աւելի արագ շարժուելով, դղրդում էր ձողակապերի վրայով և ևս դժուարութեամբ էի լսում նրանց խօսակցութիւնը. բայց որովհետեւ շատ հետաքրքիր էր այն, ուստի վերկացայ և աւելի մօտ նստայ. Հարեանս՝ փայլուն աչքերով ջղային պարոնն՝ ըստ երեսյթին նոյնպէս

հետաքրքրուեց և առանց տեղից վերկենալու՝ ականջ էր գնում:

—Լուսաւորութիւնն ինչպէ է վատ, հազիւ նկատելի ժամփառվ ասաց տիկինը:—Միթէ հին ձեռվ ամուսնանալն աւելի լաւ էր, երբ փեսան ու հարաբ իրար երեսը տեսած չէին լինում, շարունակեց նա, պատասխանելով ոչ թէ խօսակցի հարցին, այլ այն խօսքերին, ինչ որ ենթադրում էր, թէ կասի նա, ճիշտ այնպէս, ինչպէս որ սովորութիւն ունին տիկիններից շատերը:

—Չըդիտէին, սիրում են, կամ կարող են արգեօք սիրել թէ ոչ և ամուսնանում էին առաջին հանդիպողի հետ և ամբողջ կեանքն անց էին կացնում տանջանքով, ուրեմն ձեր կարծիքով այդպէս աւելի լաւ է:—ասում էր նա, երեխ խօսքն ուղղելով ինձ, փաստարանին և առաւելապէս ծերունուն, որի հետ և խօսակցում էր:

—Չէ, արդէն շատ են լուսաւորուել, —կրկնեց վաճառականը, անարգարար նայելով տիկինով:—Թողնելով նրա հարցն առանց պատասխանի:

—Յանկալի է դիտենալ, թէ դուք ինչպէս էք բացատրում լուսաւորութեան և ամուսնական անհամաձայնութեան միջի կապը, —ասաց փաստաբանն հազիւ նկատելի ժպիտով:

Վաճառականն ուզում էր ինչ որ բան ասել, բայց տիկինն ընդհատեց նրան:

—Ո՛չ, այդ ժամանակն արդէն անցել է, —ասաց նա, բայց փաստարանը կանգնեցրեց նրան:

—Ոչ, թոյլ տուէք, որ նա իւր միտքը յայտնի:

—Յիմարութիւնները լուսաւորութիւնիցն են, —վճռականորէն ասաց ծերունին:

—Ամուսնացնում են այնպիսիններին, որոնք իրար չեն սիրում և յետոյ զարմանում են, որ նրանք անհամերաշխ են ապրում, —շտապ ասում էր տիկինը՝ հայեացք դգելով ինձ, փաստարանի և նոյն իսկ գործակատարի վրայ, որը տեղից վեր էր կացել, կրթնել նստարանի մէջքին և ժամալով լսում էր մեր խօսակցութիւնը:

—Միայն անասուններին կարելի այնպէս զուգաւորել, ինչպէս որ տէրն է ցանկանում, իսկ մարդիկ իրենց հակումներն ու կապերն ունին, —ասում էր տիկինը, յայտնապէս ցանկանալով վաճառականին խայթել:

—Ի զուր էք այդպէս ասում, տիկին, —ասաց ծերը, —կենդանիներն անասուն են, իսկ մարդկանց օրէնք է տրուած:

—Բայց ինչպէս կարելի է ապրել չըսկրած մարդու հետ, —կրկին շտապում էր յայտնել իւր կարծիքները, որոնք երեխ շատ նոր էին թւում նրան:

—Առաջ այդ չէին քննում, —ազդու եղանակով ասում էր ծերունին, —այդ միայն նորերս լոյս ընկաւ: Հէնց որ մի բան է պատահում, կինն ասում է իսկոյն, «Ես քեզանից կը հեռանամ»: Գիւղացիքն ինչ են, նոյն իսկ գիւղացիների մէջն էլ նոյն մօդան է մտել: «Ա՛ռ, ասում է, ահա քո շապիկներն ու վարտիկները, իսկ ես կերթամ Յովհաննիսի հետ, նա քեզանից աւելի դանդուր է»:

Դէհ, արի ու բան հասկացրու։ Այն ինչ, կնոջ
մէջ ամենից առաջ երկիւղ պէտք է լինի։

Գործակատարը նայեց թէ տիկնոջ, թէ փաս-
տաբանին և թէ ինձ, պարզապէս զսպելով իւր
ժաման ու միանդամայն պատրաստ թէ ծաղրելու
և թէ գովելու վաճառականի խօսքերը՝ նրանց
գտած ընդունելութեան համաձայն։

—Ի՞նչ երկիւղ, —ասաց տիկինը։

—Այն երկիւղը, թէ «կինն երկնչցի յառնէ
իւրմէ»։ այ ինչ երկիւղ։

—Եհէ, այդ ժամանակն արդէն անցել է, տէր
իմ, նոյն իսկ որոշ բարկութեամբ ասաց տիկինը։

—Ո՛չ, տիկին, այդ ժամանակն անցնել չի
կարող. Եւան ինչպէս որ ստեղծուած էր իւր
ամուսնու կողից, այնպէս էլ կը մնայ մինչեւ աշ-
խարհի վերջը. —ասաց ծերուկը և այնպիսի խստու-
թեամբ և յաղթանակով ցնցնց իւր դլուխը, որ
գործակատարն իսկոյն վճռեց, թէ յաղթութիւնը
վաճառականի կողմն է և բարձրածայն ծիծաղեց։

—Այն, տղամարդիկդ այդպէս էք դատում,
ասաց տիկինը, չընկճուելով և մեկ նայելով։ Դուք
ձեզ աղատութիւն էք տուել, իսկ կանանց ուզում
էք բանտարկուած պահել։ Ձեզ լաւ էք ամեն բան
թոյլ տալիս։

—Ոչ ոք թոյլ չի տալիս, միայն թէ տղամար-
դուց տանը ոչինչ չի աւելանայ, իսկ կինը փիրուն
անօթ է, —շարունակում էք ծերունին։ Երեսում էք,
վաճառականի պազու ձայնը յաղթահարում էք
լսողներին և նոյն իսկ տիկինն զգում էք իւր յաղ-

թուած լինելը, միայն թէ չէր կամենում անձնա-
տուր լինել։

—Բայց ես կարծում եմ, դուք էլ կը համա-
ձայնուիք, որ կինն էլ մարդ է և նոյնպիսի զգաց-
մունքներով, ինչպէս և այր մարդը։

Նա ինչ կարող է անել, երբ մարդուն չի
աիրում։

—Զի սիրում. —խստութեամբ կրկնեց վա-
ճառականը, կիտելով յոնքերն ու շրթունքները. —
մի վախիլ, կը սիրի։ —Այս անսպասելի բանաձեն
անչափ դուր եկաւ գործակատարին և նա քաջա-
լերական բացականչութիւն արաւ։

—Ո՛չ, չի սիրիլ. —խօսեց տիկինը. —իսկ եթէ
մէջ տեղը սէր չկայ, հօ դրա համար բռնի ստիպել
չի կարելի։

—Բայց եթէ կինը դաւաճանի ամուսնուն,
այն ժամանակ ինչպէս անել. —ասաց փաստաբանը։

—Այդ արդէն չի կարելի. —ասաց ծերուկը. —
այդ բանի վրայ պէտք է հակել։

—Իսկ եթէ պատահի, այդ դէպքում ինչպէս
վարուել. չէ որ պատահում է։

—Որտեղ ուզում է պատահի, բայց մեզ մօտ
չի լինում. —ասաց ծերուկը։

Ամենքը լսեցին։ Գործակատարը շարժուեց,
մի քիչ քաշուեց և ուրիշներից յետ չը մնալու հա-
մար՝ սկսեց։

—Այն, մեր դօչաղի հետ էլ մի փորձանք
պատահեց։ Նոյնպէս շատ դժուար է հասկանալ.
Նոյնպէս պատահեց մի այնպիսի կին, որ անբարո-
յական էր, եւ սկսեց իւր բանը։ Իսկ երիտասարդը

ծանրաբարոյ և զարգացած էր: Առաջ հաշուասպահի հետ էր: Ամուսինը նոյնպէս համոզում էր խաղաղ դութեամբ: Խելքի չեկաւ: Ամսն տեսակ խայտառակութիւններ էր անում: Սկսաւ գողանալ նրա փողերը: Ամուսինը ծեծում էր: Նա աւելի էր վառ տանում: Չըմկրտուած հրէայի հետ անդամ, անվայել խօսքէ, բայց սկսեց իւր խորամանկութիւնները: Ի՞նչ անէր երիտասարդը: Զգեց բոլորովին: Այժմս նա միայնակ է ապրում, իսկ կինը քաշ է դալիս:

—Որովհետեւ նա յիմար է.—ասաց ծերուսնին:—Եթէ նա սկզբից թոյլ չըտար կնոջը և կարդին զսպէր, մի վախիր, կանոնաւոր կապրէր: Սկզբից չը պէտքէ ազատութիւն տալ: «Մի վրատահիր ձիուն դաշտում, իսկ կնոջը՝»—տանը:

Այդ միջոցին ներս մտաւ կօնդուքտօրը մօտակայ կայարանի տոմսակներն հարցնելու: Ծերուսնին տուաւ իւր տոմսը:

—Այն, առաջուց պէտք է զսպել կանացի սեռը, ապա թէ ոչ, ամեն ինչ կորած է:

Հապա դուք ի՞նչպէս էիք պատմում հէնց այժմս, որ ամուսնացած մարդիկ տօնավաճառի ժամանակ կունաւինում քէֆեր են անում:—ասացի ես չը համբերելով:

—Դա այլ ինդիր է.—ասաց վաճառականը և խորը մտածմունքի մէջ ընկաւ:

Երբ սուլոցը լսուեց, վաճառականը վերկացաւ, հանեց իր պարկը նատարանի տակից, կոճկեց վերարկուն և գլխարկը վեր բարձրացնելով: Դուրս գնաց նախասենեակ:

Հենց որ ծերուսին գնաց, իսկոյն մի քանի հոգի սկսան խօսել միասին:

—Հին աղաթի մարդ է հայրիկը.—ասաց գործակատարը:

—Այ տնարան, ասաց տիկինը:—ինչ վայրեանի հասկացութիւն կնոջ և ամուսնութեան մասին:

—Այն, մենք դեռ նեռու ենք ամուսնութեան մասին երրոպական հայեացը ունենալուց,—ասաց փաստաբանը:

—Բայց զլիսաւոր բանը, որ այդ մարդիկ չեն հասկանում, այն է, որ ամուսնութիւնն առանց սիրոյ՝ ամուսնութիւն չէ,—ասաց տիկինը:—միայն սէրն է սրբագործում ամուսնութիւնը և ձշմարիտ ամուսնութիւնն այն է, որը սիրովն է սրբագործուած:

Գործակատարը լսում ու ժամանում էր, ցանկանալով որքան կարելի է շատ բան միաբ պահել այդ խելօք խօսակցութիւններից՝ ապագայում գործածելու համար:

Տիկնոջ ճառի կիսին իմ ետեկց լսուեց ընդհատուած ծիծաղի կամ հեկեկանքի նման մի ձայն և յետ նայելով, տեսանք հարեւանիս՝ ալեոր և մէնասէր, փայլուն աչքերով պարոնին, որն երեխիրեն հետաքրքրող խօսակցութեան ժամանակ աննկատելի մօտեցել էր մեզ: Նա ձեռքերը նստարանի մէջքին դրած՝ կանգնած էր և վրդովուած էր երեւում: Նրա դէմքը կարմրել էր և այտի մկանը ցնցւում էր:

—Եյդ ի՞նչ սէր է ... սէրը ... սրբագործում է
ամուսնութիւնը.—ասաց նա հեալով:

Տեսնելով խօսակցի վրդովուած զրութիւնը,
տիկինն աշխատեց պատասխաննել նրան որքան
կարելի է մեղմիւ և մանրամասն:

—Ճմարիտ սէրը ... եթէ մարդու և կնոջ մէջ
կայ այդ սէրը, ապա ուրեմն և ամուսնութիւնը
հնարաւոր է,—ասաց տիկինը:

—Այս, բայց ի՞նչ հասկանանք ճշմարիտ սէր
ասելով, անյարմար ժպիտով և վախվիսնելով ասաց
փայլուն աչքերով պարոնը:

—Ամսնան էլ զիտեն, թէ ի՞նչ է սէրը.—ասաց
տիկինը, պարզապէս ուզենալով ընդհատել խօսակ-
ցութիւնը նրա հետ:

—Իսկ ես չը գիտեմ, —ասաց պարոնը: —Պէտք
է որոշել, թէ դուք ի՞նչ էք հասկանում

—Ի՞նչպէս. շատ պարզ է: —ասաց տիկինը,
բայց մտածմունքի մէջ ընկաւ: —Ալքը, սէրը մի
բացառիկ նախապատութիւն է դէպի մի մարդ
կամ մի կին՝ միւս բոլորի համեմատութեամբ: —
ասաց նա:

—Նախապատութիւն, քանի ժամանակով.
մի ամսով, երկուսնով, թէ կէս ժամով, —ասաց ձեր-
մակած պարոնն ու ծիծաղեց:

—Ո՛չ, սղասեցէք, ակներեւ է, որ դուք նոյն
բանի մասին չեք խօսում:

—Նրանք ասում են, —միջամտեց փաստա-
բանը, տիկնոջ վրայ ցոյց տալով, որ ամուսնու-
թիւնը հետեանք պէտք է ի՞նի փոխադարձ մտեր-
մական կապի, սիրոյ՝ եթէ ուղում էք, —եթէ այդ

բանը դոյութիւն ունի, այդ դէպում միայն
ամուսնութիւնը ներկայանում է իբրհ մի՝ եթէ
կարելի է այսպէս ասել, սրբազն բան: Սրանից
յետոյ ամնայն ամուսնութիւն, որի հիմքը չի
կազմում բնական կապակցութիւնը, սէրը՝ եթէ
կամնում էք այդպէս ասել, ապա ուրեմն իւր
մէջ բարոյապէս պարագիր ոչ մի բան չի բովան-
դակում: Ուղիղ է արդիօք հասկացած: —հարցրեց
նա տիկնոջը:

Տիկինը զլիսի շարժուածքով հաւանութիւն
արտայատեց իւր մտքի բացատրութեան համար:

—Այսուհետեւ ... շարունակեց ճառել փաստա-
բանը, բայց ջղային պարոնը, որի աչքերն այժմս
կրակ էին կարել, հազիւ էր կարողանում համբե-
րել և չը թողնելով, որ փաստաբանը վերջացնի
իւր խօսքը, սկսեց:

—Ո՛չ, ես կնոջ և մարդու նոյն նախապատ-
ութեան մասին եմ միայն հարցնում: Այդ նա-
խապատութիւնը որքան ժամանակով հասկանալ:

—Որքան ժամանակով. երկար, ամբողջ կեան-
քի ընթացքում: —ասաց տիկինը, ուսերը վեր
բարձրացնելով:

—Բայց չէ որ այդ միայն վէպերի մէջն է,
իսկ կեանքում՝ երբէք: Կեանքի մէջ այդ նա-
խապատութիւնը միւսների դէմ լինում է տա-
րիներով, որ շատ հազուագիւտ է, աւելի յաճախ
ամիսներով, նոյն իսկ շաբաթներով, օրերով և
ժամերով միայն: —ասում էր նա, երեխ գիտենա-
լով, որ իւր այդ կարծիքով զարմացնում է բո-
լորին և գոհ հէնց այդ բանի համար:

— 0', ինչ էք ասում: Ո'չ, թոյլ տուէք խնդրեմ...—միաձայն ասացինք երեք էլ, նոյն իսկ գործակատարը ինչ որ ձայն հանեց:

— Այն, ես հասկանում եմ. դուք խօսում էք այն բանի մասին, ինչ որ կարծում էք, թէ դոյլթիւն ունի. իսկ ես ասում եմ այն ինչ որ իսկապէս հայ: Այդ մարդկանցից իւրաքանչիւրն այն է զգում դէպի ամեն մի գեղեցիկ կինն, ինչ որ դուք սէր էք անուանում:—դոչում էք նա, խլացնելով բոլորին ձայնը:

— Ա՛խ, այդ ասուկալի է. ինչ էք ասում: Հէ որ մարդոց մէջ կայ այն զգացմունքը, որը սէր է կոչում և տրւում է ոչ թէ ամիսների և տարիների՝ այլ ամբողջ կեանքի համար:

— Ո'չ, չկայ: Եթէ անգամ ենթադրենք, որ տղամարդը կանանցից մինին գերադաս համարի իւր ամբողջ կեանքի ընթացքում, այդ դէպրում կինը՝ ամենայն հաւանականութեամբ կը գերադասի մի ուրիշին և այդպէս էլ եղել է ու կինի միշտ աշխարհիս վրայ:—ասաց նա և հանելով ծխախոտառիք, սկսեց պապիրոս ծխել:

— Բայց կարող է լինել և փոխադարձ:—ասաց փաստաբանը:

Ո'չ, չի կարող լինել:—պատասխանեց նա, — չի կարող լինել ճիշտ այնպէս, ինչպէս որ մի սայլ սիսենի մէջ երկու որոշ հատիկներ չեն կարող տեղ մի անհաւանականութիւն կայ: Երեխ յագեցի մի նոյն կամ մի մարդու, նոյն է թէ ասենք, որ

մի և նոյն մոմել կը վասուի ամբողջ կեանքի ընթացքում,—ասում էր նա՝ ադահութեամբ ներս քաշելով ծխախոտի ծուխը:

— Բայց դուք միայն մարմնական սիրոյ մասին էք խօսում: Միթէ չէք ընդունում գաղափարակցութեան, հոգեսոր միութեան վրայ հիմնուած սէրը:—ասաց տիկինը:

— Հոգեսոր միութիւն, գաղափարակցութիւն:— կրկնեց նա, սովորական ձայն հանելով:— Եթէ այդպէս է, պէտք է միասին չը պառկել. խնդրեմ ներէք անքաղաքավարութեան: Սպա թէ ոչ, գաղափարակցութեան համար մարդիկ պառկում են միասին քնելու:— ասաց նա և ջղածգարար ծիծաղեց:

— Բայց թոյլ տուէք, — ասաց փաստաբանը, փաստերը ձեր ասածներին հակասում են: Մենք տեսնում ենք, որ ամուսնութիւնը գոյութիւն ունի, որ ամբողջ մարդկութիւնը, կամ մարդկութեան մեծամասնութիւնը ամուսնական կեանքով է ապրում և շատերն աղնիւ կերպով անց են կացնում իրենց երկարատև ամուսնական կեանքը:

Ալեսոր պարոնը կրկնեց ծիծաղեց:

Երբեմն ասում էք, որ ամուսնութիւնը հիմնուած է սիրոյ վրայ, երբեմն էլ, երբ ես կասկած եմ յայտնում սիրոյ գոյութեան մասին բացի զգայականից, դուք նրա գոյութիւնն ապացուցանում էք նրանով, որ ամուսնութիւնները գոյութիւն ունին: Բայց ամուսնութիւնները ներկայումս միմիայն խարէութիւն են:

—Ո՛չ, ներողութիւն,—ասաց փաստաբանը.—
ևս ասում եմ միայն, որ գոյութիւն ունէին և ու-
նին ամուսնութիւններ:

—Գոյութիւն ունին. բայց արդեօք ինչո՞ւ
գոյութիւն ունին: Նրանք գոյութիւն ունէին և
ունին միայն այն մարդկանց համար, որոնք ամուս-
նութեան մէջ խորհրդաւորութիւն են տեսնում:
Խորհուրդ, որ Աստուծոյ առաջ պարտաւոր է կա-
ցուցանում նրանց: Այդպիսիների համար, այն,
ամուսնութիւնը գոյութիւն ունի: Մեղանում մար-
դիկ ամուսնանում են զուգաւորութիւնէց զատ
ուրիշ ոչինչ չը տեսնելով ամուսնութեան մէջ, և
դուրս է գալիս կամ խարէութիւն և կամ բռնու-
թիւն: Այր և կինը միայն խարում են մարդկանց,
ցոյց տալով, որ իրենք միամուսին են, այն ինչ՝
իրենք ապրում են բազմայր և բազմակին: Այդ
զգուելի է, բայց էլի մի կերպ եօլա են գնում, իսկ
երբ նրանք արտաքուստ ամբողջ կեանքում միա-
սին ապրելու պարտաւորութիւն են յանձն առել,
այն ինչ՝ երկրորդ ամուսնից արդէն ատումնեն
իրար, ուղում են բաժանուել, բայց կրկին միասին
են ապրում, զրանից առաջ է գալիս այն դժոխա-
յին կացութիւնը, որի պատճառաւ սկսում են զի-
նեմութիւն, անձնասպանութիւն են զործում,
սպանում և թունաւորում են իրար.—ասում էր
նա արագ, ոչ ոքի թոյլ չը տալով միջամտել և
հետզհետէ աւելի և աւելի տաքանալով: Անյար-
մար դրութիւն էր:

—Այն, անկասկած, կրիտիքական կեանքում,—ասաց փաս-

տաբանը, կամնալով ընդհատել անքաղաքավարի
տաք խօսակցութիւնը:

—Դուք, ինչպէս տեսնում եմ, ձանաչեցիք՝
թէ ես ով եմ,—մեղմ և հանգիստ ասաց ալեոր-
պարոնը:

—Ո՛չ, ես ձեղ ձանաչելու բախտ չունիմ:

—Մեծ բախտ չէ: Ես Պողոնիշևն եմ, նա,
որի հետ պատահեց այն կրիտիքական արկածը,
որի վրայ դուք ակնարկեցիք. այն, որ նա սպա-
նեց իւր կնոջը,—ասաց նա, արագ նայելով մեղա-
նից իւրաքանչիւրին:

Ո՛չ ոք ասելու բան չը դտաւ. ամենքը լուս էին:

—Է՛հ, միենոյն է.—ասաց նա՝ սովորական
ձայն հանելով:

—Այսուամենայնիւ ներեցէք ինդրեմ. ես
ձեզ չեմ ձանձրացնիլ:

—Ա՛հ, ոչ, ներեցէք.—ասաց փաստաբանն,
ինքն էլ չը դիտենալով, թէ ինչ պէտք էր ներել.
բայց Պողոնիշևը՝ նրան ականջ չը դնելով, արագ
յետ դարձաւ դէպի իւր տեղը:

Պարսն ու տիկինը փափսում էին: Ես նըս-
տած էի Պողոնիշևի կողքին և ասելու բան չը դըտ-
նելով, լուս էի: Կարդալու համար մութն էր. այդ
պատճառով էլ ես ծածկեցի աչքերս և ձեացրի, թէ
քննել եմ ցանկանում: Այդպէս լուս մենք անցանք
մինչև հետեւեալ կայարան:

Այդ կայարանում պարոնն ու տիկինն ան-
ցան մի այլ վագօն, որի մասին դեռ առաջ էլ խօ-
սակցում էին կօնդութաօրի հետ: Գործակատարը
տեղ չինեց նստարանի վրայ ու քննեց, իսկ Պողո-



Հ 7.62-55

Նիշել ծխում էր անընդհատ և խմում կայարաւ
նում գցած թէյը:
Երբ աչքս բացի ու նայեցի նրան, յանկարծ
վճռականութեամբ և վրդովուած զիմնց ինձ:
— Գիտենալով, թէ ևս ով եմ, գուցէ ձեզ
համեմի չէ ինձ հետ նստելը: Այդ դէպքում ես
այստեղից կը հեռանամ:
— Ո՞, ՞չ, քաւ լիցի:
— Ե՞, թէյ չէք կամենում. միայն մի փոքր
թունդ է:
Նա ինձ համար թէյ լցրեց:
— Երանք խօսում են և միշտ ստում
ասաց նա:

— Դուք ինչի մասին էք խօսում. — հարցրի ես:
— Նոյն բանի, նրանց սիրոյ մասին և թէ
ինչ է այդ սէրբու Ձեր քունը չի տանում:
— Բոլորովին ՞չ:
— Եթէ ուզում էք, ես կը պատմեմ ձեզ, թէ
ինչպէս հէնց նոյն սիրով ես հասայ այն բանի, ինչ
որ ինձ հետ պատահեց:
— Այն, եթէ միայն ձեզ համար ծանր չէ:
— Ինձ համար լուեն է ծանր, թէյ խմեցէք
խնդրեմ կամ գուցէ թունդ է: — Թէյն իսկապէս
գարեջրի նման էր, բայց ես մի բաժակ խմեցի:
Այդ միջոցին կօնդութառն անցաւ: Նա դաժան
հայեցքով լուռ հետեց նրան և սկսեց պատմել
միայն այն ժամանակ, երբ նա վագոնից դուրս

III

— Որ այդպէս է, ես կը պատմեմ ձեզ բայց
գուք իսկապէս ցանկանում էք:
— Ես կրկնեցի, որ շատ եմ ցանկանում: Նա
փոքր ինչ լսեց, ձեռքով շփեց երեսն ու սկսեց:
— Եթէ պատմում եմ, պէտք է պատմեմ բո-
լորն սկզբից. պէտք է պատմել, թէ ինչու և ինչ-
պէս ամուսնացայ և ինչ էի ամուսնութիւնից
առաջ:

— Ամուսնութիւնից առաջ ես ապրում էի
այնպէս, ինչպէս որ ապրում են բոլորը. այսինքն
մեր շրջանում ի հարկ է: Ես կալուածատէր եմ.
համալսարանի թեկնածու (կանդիտատ) և եղել եմ
աղնուականների պարագլուխ: Ամուսնութիւնից
առաջ ես ապրում էի ինչպէս և բոլորը ... այսինքն
անառակ և մեր շրջանի մարդկանց նման ես էլ
անառակ կեանք վարելով, կարծում էի, թէ ապ-
րում եմ, ինչպէս որ պէտքն է: Իմ մասին այն
կարծիքին էի, որ միանգամայն բարոյական և
գողարիկ մարդ եմ: Ես գայթակղեցնող չէի, ան-
քնական ճաշակ չեմ ունեցել, կեանքիս զլիսաւոր
նապատակն այդ չեմ դարձել, ինչպէս որ հասա-
կակիցներս էին անում և անառակութիւն էի
անում լրջօրէն, վայելուչ կերպով, առողջութեան
համար: Ես խուսափում էի այն կանանցից, որոնք
գաւակ բերելով, կամ սիրոյ կապերով կարող էին
կաշկանդել ինձ: Ո՞ գիտէ, գուցէ կային գաւակ-
ներ, կային և սիրոյ կապեր, բայց ես նրանց չե-

զած էի ընդունում: Եւ այդ ոչ միայն բարոյական էի համարում, այլև գորանով պարձենում էի

Նա կանդ առաւ, սովորական ձայն հանեց, ինչպէս միշտ անում էր, երբ մի նոր միտք էր ծագում նրա մէջ:

—Բայց չէ՞ որ նէնց դրանումն է զլխաւոր ապականութիւնն ու պղծութիւնը, —գոչեց նա: —Անառակութիւնը հօ փիզիքական որևէ բանի մէջ չէ: Փիզիքական որևէ խայտառակութիւն հօ չէ անառակութիւնը. ոչ, այլ մեզ հետ կենակցող կնոջ վերաբերութեամբ ամեն տեսակ բարոյական պարտականութիւններից մեզ աղատ համարելն է խական անառակութիւնը: Խոկ այդպիսի աղատութիւն ես մեծ արժանիքս էի համարում:

Յիշում եմ, թէ ես միանգամ որքան էի տանջւում, երբ չը կարողացայ վճարել մի կնոջ, որը՝ հաւանականորէն սիրելով ինձ, անձնատուր էր եղել, և միայն այն ժամանակ հանգստացայ, երբ փող ուղարկեցիր դրանով ցոյց տալով նրան, որ ես ինձ բարոյական ոչ մի կապով կապուած չեմ համարում նրա հետ:

Գլուխներդ այնպէս մի շարժէք, կարծէք թէ ինձ հետ համաձայն լինիք, —յանկարծ գոչեց նա վրաս: —Չէ՞ որ ես զիտեմ այդ ձեզ: Բոլորդ և դուք մասնաւորապէս, եթէ միայն հաղուագիւտ բացառութիւն չէք կազմում, նոյն հայեացքներն ունիք, ինչ որ ես ունէի: Բայց միենոյն է, ներեցէք ինձ, —շարունակեց նա: —բայց բանը նրանումն է, որ այդ սարսափելի է, սարսափելի և սարսափելի:

—Ի՞նչն է սարսափելի. —հարցրի ես:

—Սարսափելին մոլորութեանց այն անդունդն է, որի մէջ ընկել ենք մենք կանանց և նրանց հետ ունեցած յարաբերութիւնների վերաբերութեամբ: Այն, ևս այդ մասին հանգիստ չեմ կարող խօսել ոչ թէ նրա համար, որ ինձ հետ տեղի ունեցաւ այն արկածը, ինչպէս նա էր ասում, այլ այն պատճառով, որ երբ այդ գէպքը պատահեց, բացուեցին աչքերս և ես ամեն ինչ ուրիշ գոյնով տեսայ: Ամեն ինչ ընդհակառակն, թարս կողմից նա ծխախոտ կացրեց և ծնկներին յենուելով, սկսեց խօսել:

Մթութեան մէջ ևս չէի տեսնում նրա գէմքը, միայն լսում էի նրա աղջու և գուրեկան ձայնը վագօնի գուգաոցի միջից:

IV

Այն, տանջուելով ինչպէս որ ես տանջուեցի և միմիայն չնորհիւ այդ բանի՝ ես ըմբռնեցի, թէ որտեղ է բոլորի արմատը, հասկացայ ինչ որ պէտք է լինի և այդ պատճառով տեսնել կարողացայ ներկայիս ամբողջ արհաւիրքը:

Ուշադրութեամբ նկատեցէք ինդրեմ, թէ Երբ և ինչպէս ակսուեց այն, ինչը որ ինձ յայտնի գէպքի հասցրեց: Սկսուեց այդ այն ժամանակ, երբ ես տասնեւեցերորդ տարումն էի: Այդ պատահեց, երբ ես զիմնաղիօնումն էի, խոկ մեծ եղբայրս համարաբանի առաջին լսարանի ուսամնող: Ես գեռ կանանց չը գիտէի, բայց մեր շրջանի բոլոր գժբախտ մասնելիքի նման ես էլ այլիս ան-

մեղ տղայ չէի. Երկրորդ տարին էր արդէն, որ ևս փչացած էի տղաներից: Արդէն կինը, ոչ թէ որևէ է, այլ կինն առհասարակ, իրքեւ մի քաղցր բան, կինը, ամենայն կին ու կանացի մերկութիւն տանջում էր ինձ: Իմ առանձնութիւններս անմաքուր էին: Ես տանջում էի, ինչպէս տանջում է մեր տղաների 99 տոկոսը: Ես սարսափում էի, չարչարում, աղօթում էի և ընկնում: Ես փչացած էի երեակայութեամբ և իրականապէս, բայց վերջին քայլը գեռ չէի արել: Ես կորչում էի միայնակ, բայց մարդկային ուրիշ գոյութեան վրայ գեռ ձեռք չէի բարձրացրել: Բայց ահա եղբօրս ընկերը, զուարձամաէր ուսանողը, այսպէս կոչուած՝ ազնիւ պատանին, այսինքն ամենամեծ անդգամը, որը սովորեցրեց մեղ խմել և թուղթ խաղալ, կոնծարանութիւնից յետոյ համոզեց մեղ դնալ այստեղ: Մենք գնացինք: Եղբայրս էլ անմեղ էր և միայն նոյն դիշերն ընկաւ: Եւ ես, տասն և հինգ տարեկան անպիտանս, պղծեցի ինձ և օժանդակեցի մի կնոջ պղծուելուն, չը հասկանալով այն, ինչ որ անում էի: Զի՞ որ մեծերից ոչ մէկից չէի լսել, որ արածս վատ բան էր: Այժմս էլ ոչ ոք այդպիսի բան չի լսիլ: Ճիշտ է, այդ կայ տասը պատգամների մէջ, բայց չի՞ որ պատգամները միմիայն նրա համար են, որ քննութեան ժամանակ տէրտէրին պատախանենք, դեռ այն ժամանակն էլ այնքան պէտք չէ, որքան սէ վերջաւորութեան գործածութեան կանոնը պայմանական նախադասութիւնների մէջ:

Այսպէս ահա, այն բոլոր մեծերից, որոնց

կարծիքն ես յարգում էի, ոչ մէկից չէի լսել, որ այդ վատ բան էր: Ընդհակառակն, յարգածս մարդկանցից ես լսել էի, որ դա լաւ է: Ես լսել էի, որ պայքարս ու տանջանքներս կը սփոփուխն դրանցից յետոյ, ես այդ լսել էի և կարդացել, լսել էի մեծերից, որ դա առողջութեան համար լաւ է, իմ ընկերներից էլ՝ որ դրանումն է քաջութիւնն ու տղամարդութիւնը: Այսպէս որ, ընդհանուր առմամբ, բացի լաւ բանից, ուրիշ ոչինչ չէր սպասւում: Հիւանդութիւնների երկեւզը: Բայց չի՞ որ այդ էլ նախատեսնուած է: Խնամատար կառավարութիւնն հոգում է այդ մասին: Նա հետեւում է անառականոցների կանոնաւոր գործունէութեան և ապահովում է անառակութիւնը դիմապիօնի աշակերտների համար: Բժիշկներն էլ որոշ վարձատրութեամբ (ոսձկոյ) հսկում են այդ բանի վրայ: Հէնց այդպէս էլ պէտք է: Նրանք հաստատում են, որ անառակութիւնն օգտակար է լինում առողջութեան համար և հէնց նրանք էլ հիմնում են կանոնաւոր՝ իսկական անառակութիւն: Ես մայրեր գիտեմ, որոնք այդ մաքով հոգում են զաւակների առողջութեան համար: Եւ գիտութիւնը նրանց անառականոցներ է ուղարկում:

Գիտութիւնն ինչու, — ասացի ես:

— Հապա բժիշկներն ինչ են: Գիտութեան քուրմերը: Ո՞վ է անբարոյականացնում պատանիներին, սննդելով, որ այդ առողջութեան համար հարկաւոր է: Ի հարկէ, նրանք:

Իսկ եթէ այն բոլոր ճիգերի մի հարիւրերորդ մասը, ինչ որ սիֆիլիս ոչնչացնելու համար է գործ

դրում, գործ դրուէք անառակութիւնն արմատախիլ անելու վրայ, սիֆիլիսի անունն անգամ չէր մնալ: Բայց այդ չէ խնդիրը: Բանը նրանումն է, որ ինձ հետ էլ, ինչպէս և ոչ թէ միայն մեր գասակարդի $\frac{9}{10}$ մասի, այլ և գիւղացիների հետ, պատահեց այն սոսկալի բանը, որ ևս ընկայ ոչ թէ յայտնի կնոջ գեղեցկութեան հրապոյրին ենթարկուելով, ոչ, ոչ մի կին ինձ չի գայթակղեցրել. այլ ևս ընկայ նրա համար, որ ինձ շրջապատող միջավայրն այդ անկման մէջ աենում էր—մի մասը՝ ամենաօրինական և առողջութեան համար անհրաժեշտ գործողութիւն, իսկ միւսներն՝ ամենաբնական և ոչ միայն ներելի, այլ և երիտասարդ մարդու համար անմեղ զուարձութիւն: Ես նոյն իսկ չէի հասկանում, որ այս բանն անկումն է. ևս պարզ ի պարզոց սկսայ անձնատուր լինել այն մասամբ հաճոյքներին և մասամբ էլ կարիքներին, որոնք, ինչպէս ինձ ներհնչել էին, յատուկ են որոշ հասակի. ևս սկսեցի ծխել ու խմել և անձնատուր լինել այդ անառակութեան: Բայց այնուամենայնիւ այդ առաջին անկման մէջ մի առանձին սրտաշարժ բան կար: Յիշում եմ, որ ևս իսկոյն՝ հէնց նոյն տեղը, սենեակից զեռ դուրս չեկած, տիրեցի և տիրեցի այնպէս, որ ուզում էի լաց լինել: Լալ անմեղութեանո խորտակման և կնոջ հետ ունենալիք յարաբերութեանս յաւիտենական կործանման համար: Այն, կնոջ հետ բնական, պարզ յարաբերութիւնը կործանուած էր յաւիտեան: Այնուհետեւ կնոջ հետ մաքուր յարաբերութիւն չեմ ունեցել և չէի կարող ունենալ: Ես դարձայ այն, ինչ որ կոչ-

ւում է անառակ: Իսկ անառակ լինելը փիզիքական այնպիսի դրութիւն է, որը նման է մօրֆինսիսի, հարբեցողի և ծխողի դրութեան: Ինչպէս որ մօրֆին գործածողը, հարբեցողն ու ծխողն այլ ևս նորմալ՝ առողջ մարդ չէ, նոյնպէս էլ իւր բաւականութեան համար մի քանի կանանց գիտող մարդն այլ ևս անսօրմալ և յաւիտեան փչացած անառակ մի մարդ է. ինչպէս որ հարբեցողին և մօրֆին գործածողին կարելի է իսկոյն ձանաչել գէմքից ու շարժուածքից, նոյն ձևով կարելի է ձանաչել և անառակին: Անառակը կարող է համբերել, դիմադրել, բայց պարզ, մաքուր և եղբայրական յարաբերութիւն ունենալ կնոջ հետ՝ երբէք չի կարող: Մատաղահաս կանանց նայելու և գիտելու ձեից անառակին կարելի է իսկոյն ձանաչել: Եւ ևս դարձայ անառակ, մնացի այդպէս և հէնց զա կործանեց ինձ:

V

—Այդպէս էր ահա: Յետոյ աւելի և աւելի առաջ գնացի և սկսուեցին ամեն տեսակ զեղծումներ: Տէր Աստուած, երբ յիշում եմ այդ ուղղութեամբ արած բոլոր անպիտանութիւններս, ուղղակի սարսափում եմ: Դեռ իմ մասին այսպէս եմ յիշում, մինչդեռ ընկերներս անմեղութեան համար էին ծաղրում ինձ: Իսկ երբ լաւում ես ուկէ երիտասարդութեան, զինուորականութեան և փարիզիների մասին: Եւ այդ բոլոր պարոններն՝ ինչպէս և ես, մենք 30 տարեկան անառակիներս, որոնց հոգում

հարիւրաւոր ամենատեսակ սարսափելի ոճիրներ՝
կային ծածկուած կանանց վերաբերութեամբ, մենք
30 տարեկան անսառակներս մաքուր լուացուած,
ածիլած երեմներով, հոտաւէտ իւղերով օծուած,
մաքուր սպիտակեղենով, ֆրակով կամ համազգես-
տով մտնում էինք. հիւրասենեակ կամ պարահան-
դէս—իբր մաքրութեան հոմանիշ—հրաշալիք:

Դուք մէկ մտածեցէք, թէ ի՞նչ պէտք է լինի
և այժմս ի՞նչ է: Երբ հասարակութեան մէջ՝ քրոջա-
կամ աղջկանս մօտենար այդպիսի մի պարոն, ևս,
գիտենալով նրա կեանքը, պէտք է մօտենայի նրան,
կանչէի մի կողմ և ցածրածայն ասէի. —ըարեկամ,
չը որ ևս գիտեմ, թէ դու ի՞նչպէս ես ապրում,
ում հետն ես զիշերներն անցկացնում և ի՞նչպէս.
Տեղդ այստեղ չէ: Այստեղ մաքուր և անմեղ օրի-
որդներն են: Հեռացիր այստեղից: Այսպէս պէտք է
լինէր ահա, բայց հակառակն է. այն է, որ երբ
այդպիսի մի պարոն յայտնում է և պարում քրոջա-
կամ աղջկաս հետ՝ գրկելով նրանց, մենք ցնծում
ենք, մանաւանդ եթէ նա հարուստ է և որոշ կա-
պեր ունի: Երեկի նա պայտից յետոյ աղջկաս էլ
կարժանացնի: Եթէ անզամ հիւանդութեան հետ-
քեր են մնացել, վնաս չունի: Այժմս լաւ են բը-
ժըկում: Հապա, ևս ճանաչում եմ բարձր դա-
սակարգի մի քանի օրիորդներին, որսնց ծնողներն
ուրախութեամբ են տուել յայտնի հիւանդութիւ-
նով վարակուածներին: Ո՞հ, .. անսպիտանութիւն է:
Երեկի կը գայ ժամանակ, երբ կը խայտառակուի այդ
կեղան ու կեղծիքը:

Նա նորից մի քանի անգամ տարօրինակ

ձայներ հանեց և սկսեց թէյ խմել: Թէյը չափա-
ղանց թունդ էր, խառնելու տաք չուր չկար:
Չգում էի, որ ինձ զրգուում էր խմածս երկու
բաժակը: Երեկի նրա վրայ էլ էր ազդում, որով-
հետև նա հետզհետէ աւելի և աւելի էր զրգուում:
Նրա ձայնը դառնում էր ներդաշնակ և արտայայ-
տիչ: Նա անընդհատ փոխում էր իւր դիրքը, եր-
բեմն վերցնում էր զիսարկն, երբեմն ծածկում և
գէմքը զարմանալի փոփոխում էր, չը նայեած որ
մենք նստած էինք կիսախաւարում:

—Ահա հէնց այդպէս էի ապրում մինչև 30
տարիս, ամուսնանալու, մաքուր ընտանեկան կեամնք
սկսելու միաքս երբէք չը թողնելով: Սյդ նպատա-
կաւ էլ որոնում էի համապատասխան մի օրի-
որդ. —շարունակեց նա:

Ես մխուածէի անբարոյականութան տղմի մէջ
և մինոյն ժամանակ զնուումէի իրենց մաքրու-
թեամբ ինձ արժան օրիորդներին:

Շատերին ես այն պատճառաւ չէի հաւա-
նում, որ նրանց բաւականաչափ մաքուր չէի զըտ-
նում ինձ համար: Վերջապէս ես գտայ մէկին, որ
ինձ արժանի համարեցի: Դա Պենզայի մի ժամա-
նակ հարուստ, բայց այժմս չըաւոր ազնուականի
երկու աղջիկներից մինն էր:

Մի երեկոյ, նաւակով զբօնելուց յետոյ, երբ
մենք լուսնեակ զիշերով տուն էինք դառնում, երբ
ես նստած էի նրա կողքին և հիանում էի ջերախ
մէջ ձգուած նրա բարեկազմ իրանով և գեղեցիկ
գանգուրներով, յանկարծ վճռեցի, որ որոնածս
հէնց դա է: Այդ երեկոյ ինձ թուաց, որ նա հաս-

կանում է այն բոլորը, ինչ որ ևս մտածում ու զգում եմ, և որ մտածում ու զգում եմ ամենավեմ բաներ: Այն ինչ, բանն իսկապէս նրանումն էր, որ ջերսին և դանդուրները նրան սազում էին և նրա մօտ անցկացրած օրուանից յետոյ, աւելի ևս մօտ լինել ցանկացայ:

Զարմանալի բան, որքան լիսկատար է լինում այն պատրահքը, որ գեղեցկութիւնը առաքինութիւնն է համարում: Գեղեցիկ կինը յիմար բաներ է խօսում, բայց դու յիմարութեան փոխարէն խելացին ես լսում: Նա խօսում է, զգուելի բաներ է անում, իսկ դու ինչ որ նազելի բաներ ես տեսնում: Իսկ երբ նա չի ասում ոչ յիմարութիւններ և ոչ էլ զգուելի բաներ, բայց գեղեցիկ է, իսկոյն համոզւմ ես, որ նա հրաշալի խելքի և բարոյականութեան տէր է:

Ես հիացած առն գարձայ և վճռեցի, որ նա բարոյական կատարելութիւն է և հէնց այդ բանի համար կինս լինելու արժանի: ուստի և հետեւալ օրն առաջարկութիւն արի:

Բայց այս ինչ խառնաշփութութիւն է: Հազար ամուսնացող երիտասարդներից և այն էլ ոչ թէ միայն մեր չըջանում, այլ և ժողովրդի մէջ, հաղիւ գանուի մէկը, որը Դօն-Ժուանի նման մի տասն անգամ ամուսնացած չինի դեռ պատկուելուց առաջ:

Այժմս կան մաքուր երիտասարդներ, այդ ես լսում ու դիտում եմ, որոնք զգում են և դիտեն, որ դա հանաք չէ, այլ շատ մեծ բան է:

Թող Աստուած օդնի նրանց, բայց իմ ժա-

մանակ տասը հազարի մէջ այդպիսի մէկն էլ չէր գտնւում: Ամենքն էլ գիտեն այս, բայց այնպէս են ձեւացնում, իբրև թէ չը գիտեն: Բոլոր վէպեւրում մանրամասնօրէն նկարագրուած են հերոսների զգացմունքներ, լճակներ և թփեր, որոնց մօտ նրանք ման են գալիս, բայց նկարագրելով նրանց գէպի մի օրիորդն ունեցած մեծ սէրը, ոչինչ չի գրւում այլ ես, թէ այդ հետաքրքիր հերոսն առաջ ինչպէս էր: ոչ մի խօսք չի ասւում նրա կասկածելի աներին արած այցելութիւնների մասին, աղախինների, խոհարարուհինների և այլոց կանանց մասին: Եթէ անգամ զոյութիւն ունին այդ ձեր անպատշաճ զրուածքներ, այդպիսինները չեն տրւում նրանց, որոնք ամենից առաջ պէտք է դիտենան այդ, այն է՝ օրիորդներին:

Օրիորդների մօտ սկզբում կեղծում ենք, որ այն անրարոյականութիւնը, որով լի է մեր քաղաքների և զիւղերի կեանքի կէսը, որ այդ անքարոյականութիւը բոլորովին գոյութիւն չունի: Յետոյ այդ կեղծիքին այնպէս ենք ընտելանում, որ անզլիացինների նման ինքներս էլ սկսում ենք հաւատալ, որ բոլորս բարոյական մարդիկ ենք և ասպրում ենք բարոյական աշխարհում: Օրիորդներն, այդ խեղճներն հաւատում են այս բանին բոլորովին լուրջ կերպով: Այդպէս հաւատում էր և դժբախտ կինս: Յիշում եմ, թէ ինչպէս դեռ փեսացու ժամանակս ցոյց տուի նրան յիշատակարանս, որից նա կարող էր իմանալ անցեալս՝ թէ և շատ քիչ բան, բայց զիսաւորապէս վերջին կապս: Դրա մասին նա կարող էր իմանալ և ուրիշներից և ահա

հէնց այդ պատճառով էլ կարիք էի զգում ասել
նրան: Յիշում եմ նրա սարսափը, յուսահասու-
թիւնն ու շփոթութիւնը, երբ իմացաւ և հասկա-
ցաւ այդ: Ես նկատեցի, որ գեռ այդ ժամանակ
նա ցանկանում էր թողնել ինձ: Եւ ինչո՞ւ չը թո-
ղեց:

Նա հանեց իւր սովորական ձայնը, մի կում
թէյ խմեց ու փոքր ինչ լոեց:

VI

—Ո՛չ, այսպէս աւելի լաւ է, աւելի լաւ.—
բացականչեց նա:—Տեղն է ինձ: Բայց բանն այդ
չէ: Ես ուզեցի ասել, որ այստեղ չէ որ միայն
օրիորդներն են խարուած:

Մայրերն այդ գիտեն, մանաւանդ ամուսին-
ներից կրթուած մայրերն այդ շատ լաւ գիտեն:
Եւ կեղծելով, թէ հաւատում են տղամարդկանց
մաքրութեան, իրականութեան մէջ բոլորովին հա-
կառակն են անում: Եռքա գիտեն, թէ ինչպիսի
կարթով պէտք է որսալ տղամարդկանց՝ թէ աղջ-
կերանց և թէ իրենց համար:

Չէ որ միայն մենք՝ տղամարդիկս չը գիտենք
և չը գիտենք, որովհետեւ գիտենալ չենք ուզում,
իսկ կանագը շատ լաւ գիտեն, որ ամենավսեմ,
ինչպէս մենք անուանում ենք, բանաստեղծական
աէրը ոչ թէ բարոյական արժանաւորութիւններից
է կախուած, այլ ֆիզիքական մերձաւորութիւ-
նից, սանրուածքից, գոյնից և հանդերձի ձերց
Ասացէք փորձուած կոկտուհուն, (նազկթող կնոջը),

որն: իրեն նպատակ է զրել մարդկանց յափշտա-
կելը, թէ նա ինչն աւելի կը գերազապի, այն որ
յափշտակել կամեցած մարդու առաջ բռնութ ստե-
լիս, անզթութեան, նոյն իսկ անբարոյականու-
թեան մէջ, թէ նրա ներկայութեամբ վատ կար-
ուած և տղեղ չորերով երեալը և նրանցից իւրաքան-
չիւրն առաջինը կընարի: Նա գիտէ, որ վսեմ զգաց-
մունքների մասին ճառելիս տղամարդը միշտ ստում
է. գիտէ, որ նրան միմիայն մարմին է հարկա-
ւոր և այդ բանի համար էլ ամենայն խայտառակու-
թիւն կըների, իսկ տձեւ, անձաշակ և վատ շորեր
հագնելը չի ներիլ:

Նազկթողն այդ հասկանում է գիտակցօրէն.
իւրաքանչիւր անմեղ օրիորդն այդ գիտէ անզի-
տակցաբար, հէնց այնպէս, ինչպէս այդ գիտեն
անասունները:

Ահա դրա համար են այդ զգուելի ջերսէ-
ները, տուանիւրները, մերկ ուսերն ու թերքը,
համարեա թէ կուրծքը: Կանացը, մանաւանդ նրանք,
որոնք անցել են տղամարդկանց գպրոցը, շատ լաւ
գիտեն, որ վսեմ առարկաների մասին խօսակցու-
թիւնն իւր կարգին, բայց տղամարդուն հարկա-
ւոր է մարմինն ու այն ամենը, ինչը որ հանդէս է
դնում այդ մարմինն ամենախարուսիկ, բայց զրա-
ւիչ կերպով. և հէնց այդ է անում:

Եթէ դէն ձգենք մեր՝ դէպի այդ այլանդա-
կութիւնն ունեցած սովորութիւնը, որ երկրորդ
ընաւորութիւն է դարձել մեղ համար և գիտենք
մեր բարձր գասակարգերի կեանքն, ինչպէս որ
նա կայ իւր ամբողջ անամօթութեամբ, դա մի

մեծ անառականոց է ... Դուք համաձայն չեք: Թոյլ տուէք, ևս կապացուցանեմ.—ասաց նա, ընդհատելով ինձ:

—Դուք ասում էք, որ մեր հասարակութեան մէջ կանայքն այլ շահերով են ապրում քան անառականոցներում, իսկ ևս ասում եմ, որ ոչ, և կապացուցանեմ: Եթէ մարդիկ տարբեր են իրենց կեանքի նպատակներով, կեանքի ներքին բովանդակութեամբ, այդ գէպում տարբերութիւնն անպատճառ կարտայայտուի և արտաքինով. և արտաքինը տարբեր կլինի: Բայց նայեցէք այն թշուառ անարդուածներին և ամենաբարձր գասակարդի աշխարհիկ կանանց.—նոյն գարգեր, նոյն ձեզ, նոյն օճանելիք, թեների, ուսերի և կրծքի նոյնաձեւ մերկացումն, զուրս ընկած՝ քիփ ձգուած տուռնիւրը, միանման մոլութիւն գէպի թանկագին քարեր և փայլուն իրեր. նոյն զուարձութիւններ, պարեր, երաժշտութիւն և երգեցողութիւն: Ինչպէս առաջիններն են զրաւում այդ բոյոր միջոցներով, այնպէս էլ՝—սոքա:

VII

—Այդպէս ահա, այդ ջերսէնները, մազերն ու տուռնիւրները բռնեցին ինձ: Ինձ բռնելը դժուար չէր, որովհետեւ ես դաստիարակուած էի այն պայմաններում, որոնց միջից սիրահարուող երիտասարդները ջերմանոցի վարունկների նման են բունում: Զէ՞ որ ֆիզիքական կատարեալ անդործութեան ժամանակ մեր ընդունած առատ սնունդը

ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրքերի սիստեմատիք բորբոքումն: Կուղեք զարմացէք կուղեք—նչ, բայց այդպէս է: Զէ՞ որ ես ինքս էլ մինչև վերջին ժամանակներս ոչինչ չէի նկատում: Խակ այժմս տեսայ: Հէնց զրա համար եմ աւելի տանջւում, որ ոչ ոք այդ չը գիտէ, բայց խօսում են այնպիսի յիմարութիւններ, ինչպէս այն տիկինը:

Այն, գարնան ժամանակ մեզանից մօտիկ երկաթուղու լիցքի վրայ գիւղացիք էին աշխատում: Երիտասարդ գիւղացու սովորական կերակուն է՝ հաց, կվաս և սոխ. նա ապրում է, առոյգ է, առողջ և կատարում է դաշտային թեթև աշխատանք: Ես մտնում է երկաթուղու գծի վրայ աշխատելու և ստանում օրական մի ֆունտ միս և կորկոտ (խաչիլ): Բայց զրա փոխարէն նա այդ մի ֆունտ միսն ու խաչիլը սպառում է տասնեւեց ժամուայ աշխատանքի վրայ՝ Յոթ վիճանոց սայլակը ձեռին: Եւ նրան հէնց այդպէս էլ պէտք է: Խակ մինք, որ երկու ֆունտ միս, որսի թռչուններ և ձկներ ենք ուտում, ամեն տեսակ զրգուիչ անուշեղին և խմիչքներ ենք գործածում, ինչի վրայ ենք ծախսում այդ բոլորը: Միմիայն զգայական կրքերին յագուրդ տալու վրայ: Եւ եթէ վատնուում է այդ բանի վերայ, բաց է փրկարար փականքն, այդ գէպօւմ ամեն ինչ կարգին է. բայց ծածկեցէք գոնակն՝ ինչպէս ես էի փակում ժամանակաւորապէս և խակոյն առաջ է գալիս զրգիո, որը թափանցելով մեր անընական կեանքի պրիզմայի (հատուածակողմի) միջով, կարտայայտուի ամենամաքուր տեսակի և երբեմն նոյն իսկ պլատօնական

սիրահարութեամբ: Եւ ես սիրահարուեցի, ինչպէս
որ սիրահարում են ամենքը:

Ամեն բան կար՝ յափշտակութիւն, հիացմունք
և բանաստեղծութիւն: Բայց էականապէս այդ սէրն
արտադրութիւն էր մի կողմից մօրս և գերձակների
գործունէութեան, միւս կողմից՝ ընդունածս առատ
մնունդի և վարածս անդործ կեանքի: Եթէ չինէին
մի կողմից նաւակով զբօսանքներ, գերձակուհիներ
իրաններով և այլն, և կինս հազած ունենար պարզ
կրկնոց (դէյրա) և նստէր տանը, միւս կողմից էլ
եթէ ևս լինէի բնական պայմանների մէջ, այնքան
մնունդ ընդունող մի մարդ, որքան որ հարկաւոր
էր աշխատանքիս համար և փրկարար դռնակս էլ
բաց լինէր, այն ինչ նա այդ միջոցներին պատահ-
մամբ փակուել էր, ես չէի սիրահարուիլ և ոչինչ
չէր պատահիլ:

VIII

— Իսկ այստեղ ամեն բան նպաստեց, և կա-
րողութիւնս, և շորերը լաւ էին, և նաւակով զրօ-
սանքն յաջողուեց: Քսան անդամ չէր յաջողում,
իսկ այստեղ յաջողուեց: Ուղիղ թակարդի նման:
Ես լուրջ եմ ասում: Զէ որ ամուսնութիւններն
այժմս թակարդների նման են սարքում: Ի՞նչպէս
է բնականը: Աղջիկն հասունացել է, պէտք է մար-
դու տալ: Որքան հասարակ բան է, երբ օրիորդն
այլանդակ չէ և կան ամուսնանալ ցանկացող երի-
տասարդներ:

Հին ժամանակներում հէնց այդպէս էլ լիւ-

նում էր: Երբ օրիորդը հասունանում էր, ծնող-
ներն ամուսնացնում էին: Այդպէս էր լինում և
լինում է այժմս էլ ամբողջ մարդկութեան մէջ՝
չինացիների, հնդկացիների, մահմէդականների և
մեր ժողովրդի մէջ. այդպէս է լինում մարդկային
ցեղի՝ գոնէ նրա 0,99 ի մէջ: Միայն մենք՝ մի հա-
րիւրերորդ մաս կազմող կամ դեռ դրանից էլ սա-
կաւ անառակներս գտանք, որ այդ լաւ չէ և նոր
բան հնարեցինք: Բայց ինչ է այդ նորը: Նորն
այն է, որ օրիորդները նստած են, իսկ տղամար-
դիկ չըցում են ինչպէս շուկայում և ընտրում:
Օրիորդներն էլ թէն չեն կարողանում բաց ասել,
բայց նստած մտածում են. պարհն, ինձ, հչ, ինձ:
Դորան չէ, այլ ինձ, տես ես ինչպիսի թեեր և այն
ունիմ: Իսկ մենք տղամարդիկս անցնում ենք նա-
յում և շատ գոհ ենք: «Ճանաչում եմ, չեմ խար-
ուիլ»: Տղամարդիկ անցնում են, դիտում և շատ
գոհ են, որ այդ բոլորն իրենց համար է սարքուած:

Տես, չըզգուշացաւ և թոփիկ, բռնուեց:

— Հապա ինչպէս անել.—առացի ես.—կինն
առաջարկութիւն անի ինչ է:

— Ես չը գիտեմ, թէ ինչպէս. միայն՝ եթէ
հաւասարութիւն է, հաւասարութիւն պէտք է լինի:
Եթէ գտան, որ խնամախօսութիւնը ստորացնող
բան է, սա ըստ իս 1000 անդամ աւելի վատ է:
Այնունզ իրաւունքներն ու հաւանական շահերը
հաւասար են, իսկ այստեղ կինը կամ շուկայ տա-
րուած ստրուկ է, և կամ թակարդի ակնատ:

Փորձեցէք ճշմարտութիւնն ասել մայրերից
որ և է մէկին, կամ հէնց իրեն օրիորդին, որ նա

միայն փեսացու որսալով է զբաղուած. Տէր Առատուած, որպիսի վիրաւորանք կը համարեն; Բայց չէ որ նրանք բոլորն էլ նոյնն են անում և ուրիշ անելու բան չունին: Բայց սարսափելին այն է, որ մի և նոյն բանով զբաղուած ենք տեսնում երեխն մատղաշ, խեղճ և անմեղ երեխաներին: Եթէ այդ բոլորն աշկարա (բացայայտ) անէին, գեռ էլի ոչինչ, բայց բոլորը խարէութիւն է:

Ա՛խ, որքան հետաքրքիր է կենդանիների տեսակների ծագումը: Ա՛խ, լէլին նկարչութեամբ շատ է հետաքրքրուում: Իսկ գուշ ցուցաննդէս կերթաք: Ո՞րքան կրթիչ է: Իսկ սայլակների վրայ, ներկայացումները, սիմֆոնիան: Ա՛խ, ինչ նշանաւոր է: Լէլիի խելքը զնում է երաժշտութեան համար: Իսկ ինչո՞ւ գուշ չէք ընդունում այդ համոզմունքները: Իսկ նաւակների վրայ» . . . իսկ միտքը նոյնն է: «Վերցրու ինձ, իմ լէլիին. Ո՞չ ինձ. գոնէ փորձիր» . . . Ո՞հ, պղծութիւն ու ստութիւն է.—Եղբափակեց նա և խմելով վերջին բաժակ թէյը, սկսեց ժողովել ամաններն ու բաժակները:

IX

—Բայց գուշ անշուշտ զիտէք կանանց այն տիրապետութիւնը, որից աշխարհս տանջւում է.— ասաց նա, տեղաւորելով թէյն ու շաքարը պարկի մէջ.—այս բոլորը նրանից է առաջ գալիս:

—Ի՞նչպէս թէ կանանց տիրապետութիւն.— ասացի ես: Իսկապէս իրաւանց զերազանցութիւնը տղամարդկանց կողմն է:

—Այն, հէնց այդ, այդ նոյն բանը,—ընդհաւաեց նա ինձ:—Հէնց այդ էի ուղում ձեզ ասել. հէնց դրանով է բացատրում այն անսովոր երեսյթը, որ կինը մի կողմից իրօք հասցըած է ամենաստոր աստիճանի, իսկ միւս կողմից՝ նա իշխում է: Ճիշտ հրէաների պէս, ինչպէս որ հրէաներն իրենց հալածանքի փոխարէն հատուցանում են դրամական իշխանութեամբ, այնպէս էլ կանայքն են անում: «Հ՞ը, գուշ կամենում էք, որ մենք միայն առետրական լինինք: Բարի: մենք առետրականներս կը աիրենք ձեզ:—ասում են հրէայք: Հ՞ը, գուշ ուղում էք, որ մենք միայն տրփանքի առարկայ լինինք, լաւ. մենք, իբրև տրփանքի առարկաներ՝ կըսարկացնենք ձեզ».—ասում են կանայք: Կանանց իրաւոնքներից զուրկ լինելը հօ նրանում չէ, որ նրանք քուէ տալ կամ զատաւոր ընտրուել չեն կարող: Այդ գործերով պարապելը ոչ մի իրաւոնք չի կազմում, այլ այն բանում, որ սեռական յարաբերութեանց մէջ տղամարդուն հաւասար լինին. իրաւոնք ունենան տղամարդով օգտուելու, նրանից զուսպ մնալու իրենց ցանկութեան համաձայն, ոչ թէ ընտրուած լինելու, այլ անձամբ տղամարդ ընտրելու: Դուք ասում էք, որ այս խայտառակ բան է: Լաւ: Եթէ այդպէս է, թող տղամարդն էլ չունենայ այդ իրաւոնքը: Այն ինչ, այժմս տղամարդն ունի, իսկ կինը զրկուած է այդ իրաւոնքից: Եւ ահա այդ իրաւոնքը փոխարինելու համար նա ներգործում է մարդուս զգայականի վերայ և զգայականութեան միջոցով այնպէս է նուածում նրան, որ վերջինս ընտրում է

միմիայն ձեւականօրէն, այլ իսկական ընտրողն աղջիկն է: Եւ այդ իրաւունքին միանգամ տիրանաւուց յհառյ, նա ի չարն է գործ դնում այդ միջոցը և ձեռք է բերում մարդկանց վրայ սարսափելի իշխանութիւն:

— Իսկ որտեղ է այդ առանձին իշխանութիւնը. — Հարցրի ես:

— Ո՞րտեղ է այդ իշխանութիւնը: Ամեն տեղ, ամեն բանում:

Անցէք իւրաքանչիւր մեծ քաղաքի վաճառանոցներով: Միլիօններ կան այնտեղ, նոյն իսկ զնահատել չես կարողանալ մարդկանց գործ դրած աշխատանքը: Բայց նայեցէք այդ վաճառականների 0,9 ին, արդիօք մի բան կայ տղամարդու գործածութեան համար: Կեանքի ամբողջ շռայլութիւնը պահանջւում և պահպանւում է միմիայն կանանց շնորհիւ:

Համարեցէք բոլոր գործարանները. Նրանց մեծագոյն մասը պատրաստում է անօգուտ զարդեր, կառքեր, կարասիք և խաղալիքներ կանանց համար: Միլիօննաւոր մարդիկ, ստրուկների ամբողջ սերունդներ են ոչնչանում գործարանական այդ տաժանակիր աշխատանքից և այդ միմիայն կանանց քմահաճութեան համար: Կանայք, թագուհիների նման, ստրկութեան և գերութեան մէջ են պահում մարդկութեան 0,9 մասը: Իսկ այդ բոլոր նրանից է, որ կանանց ստորացրել են, զրկել տղամարդկանց հաւասար իրաւունքներից: Եւ ահա նրանք վրէժինդիր են լինում՝ ներդործելով մեր զգայականութեան վրայ և որսալով իրենց ցանցե-

քում: Այն, բոլորը դրանից է:

Կանայք մեր զգայականութեան վրայ ներգործելու այնպիսի մի բան են շինել իրենցից, որ տղամարդը խաղաղ չի կարող կնոջ հետ որ և է գործ ունենալ:

Հէնց որ տղամարդը մօտենում է նրանց, իսկոյն հարբում է նրանց ոգիով և ապուշ կտրում: Առաջ էլ միշտ գժուար էր և քաշւում էի պարերեկոյթի շորերով զարդարուած կնոջից, իսկ այժմս ուղղակի սարսափում եմ. ես ուղղակի վտանգաւոր և օրէնքի հակառակ բան եմ անմում այդ բանում տղամարդկանց համար և քիչ է մնում ոստիկանութիւն կանչեմ, օգնութիւն աղաղակիմ այդ վտանգի դէմ, պահանջեմ որ ուղ անեն, հեռացնեն այդ երկիւլալի առարկան:

Բայց դուք ծիծադրում էք. գոչեց նա ինձ վրայ, սակայն ասած բոլորովին հանաք չէ: Ես հաւատացած եմ, որ կը գայ ժամանակ և գուցէ շատ շուտ, երբ մարդիկ կը հասկանան այս և կը զարմանան, թէ ինչպէս էր կարողանում գոյութիւն ունենալ մի հասարակութիւն, որի մէջ թոյշատրուամ էր հասարակաց հանգստութիւնը խանգարող այնպիսի վարմունք, ինչպիսիք են զգայականութիւն առաջ բերողները և որոնք թոյշատրուամ են կանանց՝ այն է մարմիններ զարդարելը:

Զէ որ այդ զրօսատեղերում և շաւիղներին ամեն տեսակ թակարդներ լարելուց և շարելուց գեռ աւելի վտանգաւոր բան է: Ինչու մեծագումար յանդուզն թղթախաղն արգելուած է, իսկ

գրգոռդ և գգայականութեան վրայ աղգող հանգերձներով կանայքն արգելուած չեն: Դրանք հազար անդամ աւելի վտանգաւոր են:

X

Ահա հէնց այդպէս ինձ էլ որսացին: Ես այն գրութեան մէջն էի, որը սիրահարութիւն է կոչւում: Ես նրան երեակայում էի ոչ թէ կատարելութեան տիպար, այլ ո ինձ նոյն իսկ փեսացութեան այդ շրջանում կատարելութեան տիպար էի համարում: Աշխարհիս երևին չկայ մի անպիտան, որը փոքր ինչ որոնելով՝ իրենից աւելի անպիտաններ չը գտնի և այդպիսով չը պարծենայ և իրենով գոհ չը լինի: Այդպէս էլ ես. փողի համար չէի ամուսնանում, շահախնդրութիւնը գործ չունէր այստեղ, ոչ այնպէս, ինչպէս ծանօթներից շատերը, որոնք փողի և որոշ կապերի համար ամուսնացան.—Ես հարուստ էի, նա աղքատ: Այս մէկը երկրորդ, որով ես հպարտանում էի, այն էր, որ ուրիշներն ամուսնացան այն յայտնի դիտարութեամբ, որ ամուսնութիւնից յետոյ էլ նոյն ձեռվ բազմակին ապրին, ինչպէս ամուսնութիւնից առաջ. իսկ ես վճռել էի ամուսնութիւնից յետոյ միակին լինել և այդ պատճառով հպարտութիւնս սահման չունէր հէնց ինձ համար: Այն ես սարսափելի խոզ էի, բայց ինձ հրեշտակ էի երեակայում:

Նշանուած երկար չը մնացի: Ես այժմս չեմ կարող առանց ամօթի յիշել փեսայութեանս այդ շրջանը: Ի՞նչ զգուելի բան է: Զէ որ ենթադրում

է հոգեսոր՝ և ոչ թէ զգայական սէր: Ուրեմն եթէ սէրը հոգեսոր է, հոգիների միութիւն, ապա ուրեմն բառերով, խօսակցութեամբ և զրոյցներով էլ պէտք է արտայայտուի այդ հոգեսոր միութիւնը: Բայց այդպիսի ոչ մի բան չկայ: Երբ միայնակ էինք մնում, խօսելը գժուարանում էր: Դա ինչ որ ախղիքնան աշխատանք էր: Հազիւ կը գտնես, թէ ինչ պէտք է ասել, կասես և կրկին պէտք է լսել, կրկին մտաբերել: Ինչ որ կարելի էր ասել մեր ապագայ կեանքի, սարքուելու, ծրագիրների մասին, վաղուց ասուած վերջացած էր. իսկ այնուհետեւ: Եթէ մենք անասուն լինէինք, այդպէս էլ կը զիտենայինք, որ խօսել չի կարելի. իսկ այստեղ ընդհակառակն՝ պէտքէ խօսել, բայց խօսելու բան չկայ. որովհետեւ մեզ այն չի գրաղեցնում, ինչ որ խօսակցութեամբ պէտք է լուծել: Սորա հետ միացը եք նաև քաղցրաւենիք տանելու յիմար սովորութիւնը, շաքարեղէնի շատակերութիւնը և հարսանեաց զգուելի պատրաստութիւնները՝ զրոյցներ բնակարանի, ննջարանի, անկողնի, գէրաների, խալաթների, սպիտակեղէնի, արդ ու զարդի մասին: Համաձայնուեցէք, որ եթէ ամուսնանում են նահապետական ձեռվ ինչպէս այն ծերունին էր ասում, այդ գէպքում բմբուէ բարձերը, բաժինքն ու անկողնը միմիայն ամուսնութեան խորհրդի անհրաժեշտ պարագաներն են: Իսկ մեզ մօտ, երբ տասն ամուսնացողներից իննը ոչ միայն չեն հաւատում ամուսնութեան խորհրդին, այլ նոյն իսկ չեն հաւատում, որ իրենց արածը մի որոշ պարտաւորութիւն է, երբ հարիւր տղամարդուց

հաղիւ գտնուի մէկը, որ ամուսնութիւնից առաջ մի յիսուն անգամ ամուսնացած չինի, որն առաջուց պատրաստուելիս չը լինի դաւաճանելու կնոջը առաջին յարմար առիթ ներկայացած դէպքում, երբ մհծամամսնութիւնը եկեղեցի գնալը միայն մի միջոց է համարում յայտնի կնոջ տիրանալու համար, մտածեցէք, թէ այդ դէպքում ինչ սոսկալի նշանակութիւն են ստանում հարսանեաց այդ բոլոր մանրամասնութիւնները: Դուրս է գալիս, որ բանը միայն նրանումն է: Վաճառման նման մի բան է ստացւում: Անբարյական մարդուն վաճառում են մի անմեղ օրիորդի և այդ վաճառումը ապրում որոշ ձեականութիւններով:

IX

Այդպէս են ամուսնանում բոլորը, այդպէս ամուսնացայ և ես, և սկսուեց փառաբանուած մեղրամիսը: Դեռ միայն անունը տեսէք, թէ որքան ստոր է, չարութեամբ ճշաց նա:—Մի անգամ Փարիզում ես այցելում էի տեսարաններ և ներս մտայ ցուցանակի համեմատ միրուքով կին և ջրային շուն տեսնելու: Բանից երեաց, որ այդ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ կրծքաբաց կանացի չորով մի պարոն և սովորական շուն՝ (մօրժի) ծովացուի կաշուի մէջ խցկած, որը լողում էր ջրով լի տաշտի մէջ: Տեսածս ոչ մի հետաքրքրական բան չէր ներկայացնում, բայց երբ ես գուրս էի դալիս, քաղաքավարութեամբ ճանապարհ դրեց ցոյց տուող պարոնը և դառնալով մուտքի մօտ հաւաքուած

ժողովրդին, ասում էր.—«Ահա, հարցրէք այս պարոնից, տեսնելն արժէ, թէ ոչ: Համեցէք, մտէք, մարդագլուխ մի ֆրանկ»: Ես ամաչեցի ասել, որ տեսնել չարժէ և ցայց տուող պարոնն էլ երեխ գիտէք այդ: Հաւանականօրէն նոյն բանն է լինում և նրանց հետ, որոնք փորձել են մեղրամսի ամբողջ կեղաստութիւնը և ուրիշներին էլ չեն հիասթափեցնում: Ես էլ ոչ ոքի չը հիասթափեցրի, բայց այժմս չը գիտեմ թէ ինչո՞ւ չասել ճշմարտութիւնը: Ես նոյն իսկ անհրաժեշտ եմ համարում այդ բանի մասին ճշմարտութիւնն ասելը: Դժուար է, ամօթէ, զգուելի և խղճալի, և որ զիխաւորն է՝ տխուր է, չափազանց տխուր: Այդ նոյնն է, ինչ որ ես զգում էի ծխել սովորելու ժամանակ, երբ սիրտ խանուում էր և փալինքս թափուում, բայց կուլ էի տալիս և ձեացնում էի թէ հաճելի է ինձ: Ծխելուց, ինչպէս և այս բանից՝ եթէ պէտք է բաւականութիւն ստացուի, այդ լինելու է յետոյ միայն, զորա համար ամուսինը պէտք է կըթի իւր կնոջ մէջ այդ արատը, որպէս զի վերջը բաւականութիւն ստանայ:

—Ինչպէս թէ արատ.—ասացի ես.—չն որ դուք խօսում էք մարդուս ամենաբնական յատկութեամն մասին:

—Բնական:—ասաց նա:—բնական: Ո՛չ, ես ընդհակառակն՝ կասեմ ձեղ, որ ես ինչպէս համոզուեցի, զա անբնական է: Այն, միանգամայն ան.... բնա...կան: Հարցրէք մանուկներից, հարցրէք չը փչացած օրիորդներից: Դուք ասում էք, որ բնական է:

Բնական է ուտելը: Եւ ուտելը հաճելի, հեշտ,
ախորժելի է և հենց սկզբից ամօթ չէ, իսկ այստեղ
զգուելի է, ամօթալի և ցաւալի: Ո՞չ, այդ անբնաւ-
կան է: Եւ չը փչացած օրիորդը, ես համոզուեցի,
որ այդ միշտ ատում է:

—Ի՞նչպէս, —ասացի ես. —հապա ի՞նչպէս կը
շարունակուէր մարդկային ցեղը:

Հա, որպէս զի մարդկային ցեղը չը կորչի. —
ասաց նա չարախնդացութեամբ, կարծէք առաջուց
սպասելով այդ իրեն ծանօթ անբարեխլիք պա-
տասխանի: Որպէս զի անդիմական լորդերը շա-
տակերութեան միջոց ունենան, նրանց կարելի է
քարոզել, որ զաւակներ ունենալուց զգուշանան:
Այդ բանից աւելի մեծ բաւականութիւն ստանա-
լու համար կարելի է քարոզել, որ զաւակարե-
րութիւնից զգուշանան, բայց համարձակութիր ծըպ-
տուն հանել, որ յանուն բարոյականութեան զգու-
շանան զաւակարերութիւնից և տէր իմ, որպիսի
աղմուկ է բարձրահոււ՞։ Մարդկային ցեղը կա-
րող է ոչնչանալ և այդ նրանից, որ մարզս ուզում
է խոզ լինելուց զադարել: Սակայն ներեցէք: Այս
լոյսն ինձ հաճելի չէ. —կարծող եմ ծածկել. —հարց-
րեց նա, ցոյց տալով լապտերը: Պատասխանեցի,
որ ինձ համար մի ենոյն է և նա շտապաւ, ինչ-
պէս որ ամեն բան էր անում, բարձրացաւ նստա-
րանի վրայ և լապտերը ծածկեց բրդէ վարագոյ-
քով:

—Այնու ամենայնիւ եթէ՝ այդ օրէնք հա-
մարուի բոլորի կողմից, մարդկային ցեղը կընդ-
հատուի. —ասացի ես: Նա իսկոյն չը պատասխանեց:

—Դուք ասում էք, թէ մարդկային ցեղն
ի՞նչպէս կը շարունակուի. —ասաց նա, կրկին նըս-
տելով իմ հանդէպ, բանալով ուներն ու կրթնելով
ձեռքերի վերայ: —ինչ կարիք կայ, որ նա՝ այդ
մարդկային ցեղը շարունակուի. —ասաց նա:

—Ի՞նչպէս թէ, այլապէս մենք չէինք լինիլ:

—Մեր լինելն ինչու համար է:

—Ի՞նչպէս թէ ինչու: Ապրելու համար:

—Իսկ ապրելն ինչու համար է: Եթէ ոչ մի
նպատակ չկայ, եթէ կեանքը կեանքի համար է
մեզ արուած, ապա ուրեմն ապրելը զուր է: Եւ
եթէ այդպէս է, ապա ուրեմն Շօպէնգառուէրները,
Գարտմաններն ու բոլոր հուգգայականները միան-
գամայն նշմարիտ են: Իսկ եթէ կայ կեանքի նպա-
տակ, ապա ուրեմն պարզ է, որ երբ նպատակին
կը հասնեն, կեանքը կընդհատուի: Այդ է պարզ
հետեանքը. —Նկատելի վրդովմամբ ասում էր նա,
երեկ մեծապէս գնահատելով իւր միտքը: Այդպէս
էլ դուրս է գալիս:

Նկատեցէք ինդրեւ ... եթէ մարդկութեան
նպատակը բարութիւն է, առաքինութիւն և սէր,
եթէ մարդկութեան նպատակն այն է, ինչ որ
մարդարէութիւնների մէջն է ասուած, որ բոլոր
մարդիկ սիրով կը միանան, որ տէզերից մանգաղ
կը շինեն և այն, ապա ուրեմն մեզ ինչն է խան-
գարում այդ նպատակին հասնելու գործում. խան-
գարում են մեր կրքերը: Իսկ կրքերից ամենաու-
ժեղը, չարը և տեսականը մարմնական սէրն է և այդ
պատճառով, եթէ ոչնչանան մեր կրքերն ու մա-
ստանդ նրանցից ամենաուժեղը՝ մարմնական

սէրը, ուրեմն կը կատարուի մարդարէութիւնը, մարդիկ կը միանան, մարդկութեան նպատակին հասած կլինինք և նա այլ նու ապրելու բան չի ունենալ, իսկ քանի որ մարդկութիւնն ապրում է, նրա առաջ զրուած է իդէալ և ի հարկէ ոչ թէ ձագարների և խոզնրի նման որքան կարելի է շատ բազմանալու, ոչ թէ կապիկների և փարիզիների նման սեռական կրքերով նրբաձն օգտուելու, այլ բարւոյ իդէալ, որին կարելի է հասնել ժուժկաւ լութեամբ և մաքրութեամբ: Միշտ նրան են ձգտել և ձգտում են մարդիկ: Եւ տեսէք ինչ է դուրս գալիս:

Այն է դուրս գալիս, որ մարմնական սէրը մի փրկարար դանակ է: Ներկայումս ապրող մարդկային ցեղն եթէ նպատակին չը հասաւ, այդ նրանից է, որ նա կրքեր ունի և նրանցից ամենաուժեղը՝ սեռականը: Իսկ երբ կայ սեռական կիրք, կայ և նոր սերունդ, հետեւապէս և նոր հնարաւորութիւն հետեւալ սերնդի ժամանակ նպատակին հասնելու: Նա էլ չը հասաւ, կը գայ հետեւալը և այդպէս մինչ այն ժամանակ, երբ կը հասնեն նպատակին, կը կատարուի մարդարէութիւնն ու մարդիկ կը միանան: Ապա թէ ոչ, ինչ դուրս կը գայ: Եթէ ընդունենք, որ Աստուած մարդկանց ստեղծել է որոշ նպատակին հասնելու և ստեղծէր նրանց կամ մահկանացու՝ առանց սեռական կրքի և կամ անմահ: Եթէ նրանք լինեն մահկանացու, բայց առանց սեռական կրքի, ինչ կը պատահէր. կը պատահէր այն, որ նրանք կը մեռնէին առանց նպատակին հասնելու և Աստուած հարկադրուած պէտք

է լինէր նպատակին հասնելու համար նոր մարդիկ ստեղծել: Եթէ նրանք յաւիտենական լինէին (թէ և սխալներն ուղղելն ու կատարելութեան մօտենալը մի և նոյն մարդկանց համար շատ աւելի դժուար է, քան նոր սերունդների համար) առենք շատ հազար տարիներից յետոյ կը հասնէին նպատակին, բայց այնուհետեւ իրանք ինչացու էին: Ո՞ւր գնային իրենք: Ներկայումս եղածն ամենից լաւն է: ... Բայց ձեզ գուցէ այս բանաձեռ դուր չի գալիս և էվոլյուցիօնիստ էք: Այդ դէպքումն էլ նոյն բանն է տեղի ունենում: Կենդանիների ամենակատարեալ տեսակը մարդկայինն է. որպէս զի կարողանայ զիմանալ ուրիշ կենդանիների դէմ եղած կուռում, պէտք է միանալ մեղուների փեթակի նման և ոչ թէ անվերջ բազմանալ, պէտք է մեղուների նման սեռական կրքերից ազատ մի մաս պատրաստել. այսինքն ձգտել ժուժկալութեան և ոչ թէ կրքեր բորբոքել, որին ուղղուած է այժմս մեր կեանքի ամբողջ կազմը: Նա լոեց: Մարդկային ցեղը կընդհատուի: Բայց միթէ կը գտնուի մէկը, որ ինչ կարծիք էլ ունենայ աշխարհի մասին, կասկածի այդ բանում: Զէ որ այդ նոյնքան անկասկած է, որքան և մահը: Զէ որ եկեղեցական բոլոր վարդապետութիւնների համաձայն՝ կը գայ աշխարհի վերջը. գիտնական բոլոր վարդապետութիւնների համաձայն էլ՝ նոյնն անխուսափելի է:

XII

— Մեր աշխարհում ուղիղ հակառակն է կատարւում, եթէ անգամ ամուրի ժամանակ մարդա

մտածում է ժուժկալութեան մասին, ամուսնաշնալուց յետոյ ամեն ոք ընդունում է, որ ժուժկալութիւնն այլ ևս աւելորդ է: Չէ որ նորապահիների ճանապարհորդութիւնները, ծնողներից թոյլատրած առանձնացումները ուրիշ բան չեն, եթէ ոչ անառակութեան թոյլատրութիւն: Բայց բարոյական օրէնքն ինքն է հատուցանում, երբ խախտում են նրան: Ինչքան էլ աշխատում էի մեղրամիս սարքել ինձ համար, ոչինչ չէր գուրս գալիս: Ամբողջ ժամանակ զղուելի, ամօթալի և տիրալի էր: Բայց շատ շուտ աւելի տաժանելի գարձաւ: Սկսուեց այդ շատ շուտ: Կարծեմ երրորդ՝ թէ չորրորդ օրն ես կնոջս տիսուր գտայ և հարցրի պատճառը, սկսայ գրկել, որն ըստ իս նրա ամենացանկացած բանը պէտք է լինէր, բայց նա հեռացրեց ձեռքերս ու լացեց: Թէ ինչու համար, նա չը կարողացաւ ասել: Բայց նրա համար ծանր էր, նա տիսուր էր: Երեկ նրա տանջուած նեարգելու թելազրեցին նրան մեր յարաբերութիւնների գարշելիութիւնը. միայն նա ասել չը կարողացաւ: Ես սկսեցի հարցաքննել, նա ինչ որ բան ասաց, կարծեմ ասաց որ առանց մայրիկի տիսուր է: Ինձ թուաց, որ դա ճշմարիտ չէր: Ես սկսայ համոզել նրան՝ լոելով մօր մասին: Ես չը հասկացայ, որ նրա համար ուղղակի ծանր էր, իսկ մայրը միմիայն մահանայ: Բայց նա խոյս վիրաւորուեց, որ ես մօր մասին բան չասացի, կարծէր իրան չը հաւատալով: Ասաց ինձ, որ տեսնում է, թէ ինչպէս չեմ սիրում իրեն: Ես յանդիմանեցի կամակորութեան համար և յանկարծ նրա դէմքը բոլորովին փոխուեց, տիրութեան փո-

խարէն բարկութիւն նկարուեց և նա ամենաթուշնաւոր խօսքերով սկսեց յանդիմանել ինձ եսականութեան և անդութեան մէջ: Նայեցի նրան: Նրա ամբողջ դէմքն արտայայտում էր դէպի ինձ սառնութիւն, թշնամութիւն և ատելութիւն: Յիշում եմ, թէ այդ տեսնելիս ինչպէս սարսափեցի: Ի՞նչ, ինչպէս. մտածում էի ես: Սէրը—հողիների կապակցութիւնը—բայց զրա փոխարէն այ թէ ինչ է: Այդ չի կարող լինել. այս նա չէ: Ես փորձեցի, փորձեցի մեղմացնել նրան, բայց այնպիսի սառնութեան, թշնամութեան և պաղպանիչի հանդիպեցի, որ յետ նայելու միջոց էլ չունեցայ: Ես էլ լցուեցի բարկութեամբ և մենք իրար վրայ անախորժութիւնների մի կոյտ թափեցինք: Այդ առաջին վէճի տպաւորութիւնը սոսկալի էր: Ես այդ վէճ անուանեցի, բայց դա վէճ չէր, դա երեան հանեց այն անջրպետը, որը ձբդուած էր մեր մէջ: Զգայականութեանը յագուրդ տալուց յետոյ՝ սիրահարութիւնը սպասուեց և մենք մնացինք իրար հանդէպ մեր խակական յարաբերութեամբ, այսինքն երկու բոլորովին օտար եսական անձինք, որոնք կամենում էին որքան կարելի է մեծ հաճոյք ստանալ իրարից: Ես՝ մեր մէջ տեղի ունեցածը վէճ անուանեցի, բայց դա վէճ չէր, այլ հետեանք զգայականութեան ընդհատման, որն երեան հանեց մեր խակական յարաբերութիւնը: Ես չէի հասկանում, որ այդ սառը թշնամական վերաբերմունքը մեր խակական յարաբերութիւնն էր, այդ չէի հասկանում, որովհետեւ առաջին անգամ նա շուտով չքացաւ մեր մէջ նո-

թէն արթնացած թորիչ զգայականութեամբ, այս
ինքն սիրահարութեամբ:

Ես կարծում էի, որ մենք վիճեցինք և հաշու-
ռեցանք, որ այդ այլ ևս տեղի չի ունենալ: Բայց
հէնց այդ առաջին մեղրամսին նորից հասաւ յա-
գեցման միջոցը:

Մենք կրկին դադարեցինք իրար հարկաւոր
լինելուց և նորից կոփւ պատահեց: Այս երկրորդ
վէճն ինձ աւելի զարմացրեց ու խոցեց, քան առա-
ջինը:—Կը նշանակի, որ առաջին վէճը պատահա-
կան չէր և այդ այցպէս էլ պէտք է լինէր ու կը
լինի, —մտածում էի ես: Երկրորդ վէճն ինձ աւելի
խոցեց նրա համար, որ նա ամենաանհնարին պատ-
ճառից առաջ եկաւ: Կարծեմ ինչ որ փողի համար,
որն ես երբէք չէի խնայում և չէի կարող խնայել
կնոջ համար: Միայն յիշում եմ, որ նա այնպիսի
ուղղութիւն տուեց խնդրին, որ իմ մի նկատո-
ղութիւնս նրան թուաց իրը փողերի միջոցաւ նրա
վրայ իշխելու ցանկութեանս արտայայտութիւն,
փողերի, որոնցով իրը թէ ես ուղում էի հիմ-
նել իմ բացասիկ իրաւունքս: Մի խօսքով անհնա-
րին, անմիտ, սաոր և անբնական բան՝ թէ ինձ և
թէ նրա համար: Ես վրդովուեցայ, սկսեցի յան-
դիմանել նրան այդպիսի անքաղաքավարութեան
համար, նա ինձ—և նորից սկսուեց: Նրա թէ
խօսքերի և թէ դէմքի և աչքերի արտայայտու-
թեան մէջ ես տեսայ այն դաժանութիւնը, սառ-
նութիւնն ու թշնամութիւնը, որն ինձ այնքան
զարմացրեց առաջին անգամ: Յիշում եմ, որ եղ-
քօրս, հօրս և բարեկամներիս եւս ևս վիճել եմ,

բայց մեր մէջ երբէք գոյութիւն չի ունեցել առանձ-
նակի այն թունաւոր չարութիւնը, որն այստեղ
արտայայտուեց: Բայց մի քանի ժամանակից յե-
տոյ այդ փոխադարձ ատելութիւնը կրկին անցայ-
տացաւ մեր սիրահարութեան, այսինքն զգայակա-
նութեան նորին և ես ինձ միսիթարում էի, մտա-
ծելով, որ կոռուի այդ երկու գէպեկը մի սխալմոնք
էին, որ կարելի էր ուղղել: Բայց ահա տեղի ու-
նոցան երբորդ և չորրորդ վէճերն, և ես հասկա-
ցայ, որ այդ պատահական բան չէր, որ դա այդ-
պէս պէտք է լինի, և կլինի և գլխիս գալիքներից
սարսափեցի: Միաժամանակ ինձ տանջում էր այն
սոսկալի միտքը, որ միայն ես եմ այդպէս՝ սպա-
սածիս հակառակ, վատ ալրում կնոջս հետ, մինչ-
դեռ այլոց ամուսնութեան մէջ այդպիսի բան չի
լինում: Ես դեռ այն ժամանակ չը գիտէի, որ դա
ընդհանրութեան բաժինն է, որ ամենքն էլ ինձպէս
կարծում են, թէ դա իրենց բացառիկ դժբախ-
տութիւն է. և այդ իրենց ամօթալի դժբախտու-
թիւնը ծածկում են ոչ թէ այլոց աչքից, այլ և
իրենցից և երբէք չեն խոստովանուում այդ բա-
նում:

Սկսուեց առաջին օրերից և անդինատ շա-
րունակուեց հետզետէ աւելի սաստիկ ու կատա-
ղիւ Հոգոյս խորքում հէնց առաջին շաբաթներից
զգացի, որ ես կորայ, որ սպասածս չեղաւ, որ
ամուսնութիւնը ոչ միայն դժբախտութիւն է, այլ
մի ինչ որ ծանր բան. բայց այլոց նման, ես էլ
չուզեցի խոստովանուել. (Ես այժմս էլ չէի խոս-
տովանուիլ, եթէ չը լինէր վերջաւորութիւնը), ես

այդ ծածկում էի ոչ թէ միայն ուրիշներից, այլ և ինձանից։ Այժմ ևս զարմանում եմ, թէ ինչպէս ևս չէր տեսնում իսկական կացութիւնս։ Այդ կարելի էր տեսնել միայն այն բանից, որ մեր կուռները սկսում էին չնչին առիթներից։ այնքան չնչին, որ վերջը նոյն իսկ անհնարին էր լինում որոշել, թէ ինչու կուռեցինք։ Գիտակցութիւնը նոյն իսկ չէր կարողանում կեղծել մեր մշտական թըշնամութեան և կուռների առիթները։ Բայց աւելի զարմանալի էին հաշտուելու շարժառիթները։ Երբեմն լինում էին բառեր, բացարութիւններ, նոյն իսկ արցունքներ, բայց երբեմն ... օն, նոյն իսկ յիշելը զգուելի է այժմ։ — ամենախիստ բառերով իրար վիրաւորելուց յետոյ, յանկարծ լուս հայեցքներ, ժպիտներ, համբոյրներ և զրկախառնութիւններ։ Ֆու, խայտառակութիւն։ Ի՞նչպէս չէր կարողանում տեսնել ևս ոյդ բոլորի գարշելութիւնը։

XIII

Մասն երկու ճանապարհորդներ և սկսան տեղաւորուել հետո նստարանի վրայ։ Նա լուս էր մինչև նրանց տեղաւորուելիլ, բայց հէնց որ նրանք խաղալուեցին, իսկոյն շարունակեց՝ երբեք չը կորցնելով պատմութեան թելը։

— Բայց զլիաւորապէս ինչն է պիղծ։ — սկսեց նա։ — տեսականորէն ենթադրւում է, որ սէրը մի ինչ որ իդէալական վսեմ բան է, իսկ իրականութեան մէջ չը որ սէրը խողային մի այնպիսի

դգուելի բան է, որի մասին յիշելն ու խօսելը ամօթէ է և խայտառակութիւն։ Բնութիւնը հօ զուր չէ ստեղծել այդպէս ամօթալի և խայտառակ, իսկ եթէ խայտառակ և ամօթալի է, այդպէս էլ պէտք է հասկանալ։ Այն ինչ, ընդհակառակն, մարզիկ ձեւացնում են, որ այդ խայտառակ և ամօթալի բանը վսեմ է և գեղեցիկ։ Որո՞նք էին սիրուս նշանաները։ Այն, որ ես անձնատուր էի լինում անառնական անզուսակ կրքերի, ոչ միայն առանց ամաչելու, այլ նոյն իսկ պարծենալով ֆիղիքական այդ անզուսակ յարաբերութիւնների թուով, բոլորովին չը մտածելով նրա ոչ թէ հոգեկան, այլ և ֆիղիքական կեանքի մասին։ Ես զարմանում էի, թէ թէ որտեղից է առաջ գալիս մեր փոխադարձ զայրոյթը։ մինչդեռ շատ պարզ է, որ նա մարդկային բնութեան բողոք էր անասնականի դէմ, որը ճընշում էր, ընկճում նրան։

Ես զարմանում էի մեր փոխադարձ ատելութեան վրայ, բայց չը որ այդ այլապէս լինել չէր կարող։ Այդ ատելութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի և նոյն յանցանքին մասնակցող անձանց փոխադարձ ատելութիւն—թէ գրգման և թէ յանցագործութեան համար։ Միթէ յանցանք չէր, երբ նա, խեղճը, յղացաւ հէնց առաջին ամսին, իսկ մեր խողային կապը շարունակւում էր։ — Դուք կարծում էր, որ ես պատմութիւնիցս չեղւում եմ, ոչ երբէր։ Այսպիսով ես ձեզ պատմում եմ, թէ ինչպէս սպանեցի կնոջս։ Դատարանում ինձ հարցուում էին՝ թէ ինչպէս և ինչով սպանեցի նրան։ Յիմարներ։ կարծում են, որ ես այն ժամանակ

սպանեցի նրան՝ հոկտեմբերի 5 ին: Ո՞չ, ևս այն
ժամանակ չեմ սպանել կնոջս, այլ շատ առաջ:

Ուղիղ այնպէս, ինչպէս սպանում են ամենա-
քը .. բոլորը, բոլորը

— Բայց ինչո՞վ.—հարցրի ես:

— Հենց զարմանալին այդ է, որ ոչ ոք չի
ուզում գիտենալ այն, ինչ որ պարզ և ակներե է.
այն, ինչ որ պէտք է գիտենան և քարոզեն բժիշկ-
ները և որի մասին նրանք լուսում են: Բայց խըն-
դիրը չափազանց պարզ է: Մարդ ու կինը ստեղծ-
ուած են կենդանիների նման, այնպէս որ՝ մարմ-
նական սիրուց յետոյ սկսում է յզութիւն և ապա
գիեցումն. այնպիսի զրութիւններ, երբ կնոջ, ինչ-
պէս և մանկան համար մարմնական սէրը վնասա-
կար է: Դրանից ինչ է հետևում: Կարծեմ պարզ է:
Մեծ իսաստութիւն պէտք չէ այստեղից այն եղ-
րակացութիւն համելու, ինչ որ անսասուններն են
հանում, այն է ժուժկալութիւն: Բայց ոչ, գիտու-
թիւնն այնքան առաջ գնաց, որ գտաւ լեկոցիտ-
ներ, որոնք վագում են արեան մէջ և ամեն տե-
սակ անկարենոր յիմարութիւններ, իսկ այդ հա-
սարակ բանը հասկանալ չը կարողացաւ: Գոնէ չի
լաւում, որ նա խօսի այդ բանի մասին:

Եւ ահա կնոջ համար միայն երկու ելք կայ.—
առաջինը՝ այլանդակել իրեն, ոչնչացնել իւր մէջ
և ոչնչացնել ընդ միշտ կարեուսթեան չափով կին
լինելու՝ այսինքն մայր լինելու ընդունակութիւն-
ները և այդ նրա համար, որ տղամարդը հանդիսա-
ւ միշտ զուարձանակ կարողանայ. կամ երկրորդ
ելք, նոյն իսկ ոչ թէ ելք, այլ բնական օրէնք-

ների ուզզակի պարզ և կոպիտ խախտումն, որ
տեղի ունի մեր՝ այսպէս կոչուած՝ պատուաւոր
ընտանիքներում. այն, որ կինը՝ հակառակ իւր
բնութեան՝ միաժամանակ և յդի պէտք է լինի և
զիեցնող և սիրեկան, պէտք է ստորանայ այն չա-
փով, ինչ չափով չի ստորանում ոչ մի անասուն:
Ուժերն իսկ բաւական չեն լինիլ: Եւ հէնց դրանից
են առաջ գալիս մեր ժամանակի նեարդային հի-
ւանգութիւններ, իստերիքաններ, իսկ հասարակ
ժողովրդի մէջ էլ դիւանարութիւն: Նկատեցէք,
որ մարուր օրիորդներն երբէք զիւռա չեն լինում,
այլ կանայք և այն էլ այր մարդկանց հետ ապրող
կանայք: Ինչպէս մեզ մօտ՝ նոյնպէս և Եւրո-
պայում բոլոր հիւանդանոցները լի են խստերի-
քական կանանցով, որոնք խսիսել են բնական
օրէնքը: Իսկ չը որ դիւանարուներն ու Շարկօյի հիւ-
անդները բոլորովին այլանդակ բան են: Իսկ այ-
լանդակ կանանցով լի է աշխարհա: Միայն մտա-
ծեցէք, թէ ինչ մնձ և խորհրդաւոր բան է կատար-
ում կնոջ մէջ, երբ նա յդացել է և կամ զիեց-
նում է ծնուած երեխային: Անում է նա, ով չա-
րունակում է և փոխարինում մեզ: Եւ այդ սուրբ
գործն ինչո՞վ է խանգարում: Նոյն իսկ մտածելն
անգամ սարսափելի է:

Եւ խօսում են աղատութեան, կանանց իրա-
ւունքների հաւասարութեան մասին: Այդ նոյնն է
թէ մարդակերները զիրացնէին ստրուկներին ու-
տելու համար և միենոյն ժամանակ հաւատաց-
նէին, որ նրանց աղատութեան համար են հոգում:
Այդ բոլորը նորութիւն էր և զարմացրեց ինձ:

—Հապա ինչպէս եթէ այդպէս է.—ասացի ես, ուրեմն զուրս է զալիս, որ կնոջը կարևի է սիրել երկու տարեն մի անգամ, իսկ տղամարդը....

—Տղամարդուն անհրաժեշտ է. դարձեալ զիտութեան սիրելի քուրմերը հաւատացրին բոլորին: Ներչնչեցէք մարդուն, որ օղին, ծխախոտն ու ափիճն անհրաժեշտ են նրան և այդ բոլորը նրան անհրաժեշտ կինի. Բանից զուրս է զալիս, որ Աստուած չի հասկացել ինչ որ պէտք էր և գիտութեան քուրմերից չը հարցնելով, վաստ է ստեղծել: Բարեհանձեցէք նկատել, որ բանը չի յարմարւում: Տղամարդուն պէտք է և անհրաժեշտ յագուրդ տալ իւր կրքերին, վճռեցին նրանք, իսկ այստեղ մէջ է ընկել յղութիւնն ու մանկան զիեցնելը, որոնք խանգստում են կրքերին յագուրդ տալը: Ի՞նչպէս անել: Պէտք է դիմել կրկին մոռգերին, նրանք մի բան կը հնարեն: Եւ նրանք հնարեցին: Օ՛հ, երբ պէտք է թագաղուրկ լինին այդ մողերն իրենց խաբէութիւններով հանդերձ: Արդէն ժամանակ է: Տեսէք ինչ աստիճանի է հասել. իսկելագարուում են, անձնասպանութիւն են զործում և այդ բոլորը միմիայն նրանից: Ուրիշ ինչ կարող է լինել: Անասունները կարծես գիտեն, որ սերունդն է պահպանում իրենց ցեղը և այդ բանում հետեւում են որոշ օրէնքի: Միայն մարդն է, որ այդ չը գիտէ և զիտենալ չի ցանց կանում:

Նա միայն այն հոգսի մէջ է, որ որքան կարելի է շատ զուարձանալ կարողանայ: Եւ այդ ովք բնութեան թագաւորը, մարդը: Ի նկատի առէք,

որ անասուններն այն ժամանակն են զուզաւորւում, երբ միայն կարող են սերունդ արտադրել, իսկ բնութեան այդ պիտի թագաւորը—միշտ, միայն թէ հաճոյք ստանայ: Դեռ այդ քիչ է. կապկային այդ զբաղմունքն համարւում է ստեղծագործութեան մարդարիտ՝ սէր և յանուն այդ սիրոյ, այսինքն կեղասութիւնն՝ կործանւում է մարդկային ցեղի կըսը: Նա՝ բոլոր կանանց, որոնք պէտք է օգնական լինին մարդկային յառաջադիմութիւնն ոչպի բարին ու ճշմարիտը, իւր բաւականութիւնն համար ոչ թէ օգնական, այլ թշնամի է դարձնում: Նայեցէք, ինչն է կասեցնում մարդկային յառաջադիմութիւնը: Կանայք: Բայց ինչո՞ւ են նրանք այդպէս: Միմիայն նրա համար: Այն, այն,—կրկնեց նա մի բանի անգամ, սկսեց շարժուել, ծխախոտ հանեց—և սկսաւ ծխել՝ երեկի փոքր ինչ հանդարտուելու համար:

XIV

—Ահա այդպիսի խողային կեանք էի վարում.—շարունակեց նա, նախկին եղանակով: Բայց ամենից վասն այն էր, որ այդպիսի կեղասու կեանքով ապրելով, ես երեակայում էի, թէ որովհետեւ կանանցով չեմ յափշտակեւում, այդ պատճառով ապրում եմ մաքուր ընտանեկան կեանքով, որ ես բարոյական մարդ եմ և ոչ մի բանում մեղաւոր չեմ, իսկ եթէ մեր մէջ պատահում են վէճեր, զրանում նա է մեղաւոր, նրա բնաւորութիւնը:

Այն ինչ մեղաւորն ի հարկէ նա չէր: Նա այնպէս էր, ինչպէս և բոլորը, մեծամասնութիւնը նա այնպէս էր դաստիարակուած, ինչպէս որ պատհանջում է կոոջ զրութիւնը մեր հասարակութեան մէջ և ինչպէս էլ որ կրթուում են ապահովուած շրջանի բոլոր կանայքն առանց բացառութեան, որոնք և չեն կարող կրթուիլ այլապէս: Խօսում են կանանց ինչ որ նոր ձեի դաստիարակութեան մասին: Դատարկ խօսքեր են. կոոջ դաստիարակութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս որ պէտք է լինի նրա մասին զոյսութիւն ունեցող հասարակական ճշմարիտ և անկեղծ կարծիքի համաձայն:

Եւ կոոջ կրթութիւնը միշտ համապատասխան կլինի նրա մասին տղամարդկանց ունեցած հայեացքին: Զէ որ բոլորս գիտենք, թէ մարդիկ ինչպէս են նայում կանանց. »Wéin, Wein und Gesang« և այսպէս բանաստեղծներն են ասում իրենց ոտանաւորներում: Վերցրէք ամբողջ բանաստեղծութիւնը, նկարչութիւնը, քանդակործութիւնը՝—սկսած սիրային ոտանաւորներից, մերկ վեներաներից, ֆրինաներից. գուք տեսնում էք, որ կինը զուարճութեան գործիք է: Նա այդպէս է և Տրուբէյում և Գրաչովկա գիւղում և նրբաճաշակ երեկոյթում: Եւ տեսէք սատանայական կեղծաւորութիւնը. երբ զուարճութիւն է, վայելք, այդպէս էլ պէտք է գիտենալ, որ վայելչութիւն է, որ կինը համեղ պատառ է: Ո՞չ, սկզբում ասպետներն հաւատացնում էին, որ սատուածացնում են կոոջը (աստուածացնում, բայց նայում իրեն զուար-

ճութեան առարկայի վրայ): Իսկ այժմս հաւատացանում են, որ կոոջը յարգում են: Մի քանիսը զիջանում են տեղը, միւսները բարձրացնում են նրանց թաշկինակները, երրորդներն ընդունում են, որ նրանք իրաւունք ունին ամեն տեսակ պաշտօններ վարելու, կառավարութեան գործին մասնակցելու և այն և այն:

Այս բոլորն անում են, իսկ հայեացքը նրանց մասին մնում է նոյնը: Նա զուարճութեան առարկայ է: Նրա մարմինը վայելքի միջոց է: Եւ նա գիտէ այս: Ճիշտ սարկութեան նման է: Զէ որ սարկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի քանիսի այլոց՝ շատերի աշխատանքով օգտուիլը: Եւ որպէս զի սարկութիւն չինի, մարդիկ պէտք է չը ցանկան օգտուիլ այլոց բանի կատարած աշխատանքից և այդ մեղք և ամօթ համարեն: Թէ չէ, ոչնչացնում են սարկութեան արտաքին ձեերը, այնպէս են անում, որ չի կարելի սարուկների վաճառաման թղթեր զրել և երեակայում ու հաւատացնում են իրենց, որ այլ ես սարկութիւն չկայ: Հեն տեսնում և տեսնել չեն ուղում, որ սարկութիւնը շարունակում է իւր զոյսութիւնը. որպէս հետեւ մարդիկ առաջուայ նման սիրում և լաւ ու արդար բան են համարում ուրիշների աշխատանքից օգտուիլը: Իսկ քանի որ նրանք այդ լաւ են համարում, միշտ կը գտնուին ուրիշներից խորամակ և ուժեղ մարդիկ, որոնք և կը կարողանան այդ անել: Նոյն բանն է կանանց էմանսիպացիայի խնդրում: Կոոջ սարկութիւնը միայն նրանում է, որ մարդիկ կամենում և լաւ բան են համարում

օդառուիլ նրանից՝ ինչպէս վայելչութեան առարկայից։ Ազատում են կնոջը, տալիս են նրան տղամարդուն հաւասար ամեն տեսալ իրաւունքունք, բայց չարունակում են նայել նրան իրեն գուարձութեան առարկայի. այդպէս են կրթում նրան թէ մանկութեան ժամանակ և թէ հասարակական կարծիքով։ Եւ ահա նա միշտ նոյն ստորացրած և անբարոյականացրած ստրկուհին է, և տղամարդը նոյնատեսակ անբարոյական ստրկատէր։

Ազատում են կանանց լսարաններում և ժողովներում և նայում նրանց իրեն զուարձութեան առարկայի։ Սովորեցրէք նրան, ինչպէս մեղ մօտ սովորեցնում են այժմ, այդպէս նայել իւր վրայ և նա միշտ ստորին կարդի արարած կը մնայ։ Նա կամ կը զգուշանայ յղանալուց անզգամ բժիշկների միջոցաւ, այսինքն կլինի կատարեալ անառակ. ոչ միայն անասնի աստիճանին, այլ անշունչ իրի հասած, կամ կը լինի այն, ինչ որ լինում է մեծաւ մասամբ—հոգեպէս հիւանդ, զղացին, դժբախտ՝ ինչպէս որ նրանք են, առանց հոգեպէս զարդանալու հնարաւորութեան։

Գիմնազիօններն ու լսարանները չեն կարող փոխել այդ։ Այդ կարելի է փոխել միմիայն տղամարդու հայեացքը փոխելով կնոջ մասին և կնոջ հայեացքն՝ իրեն մասին։ Իսկ այդ այն ժամանակ կը փոխուի, երբ կինը այլանդակ չէ, այսինքն ինքն է դիեցնում իւր երեխաններին։ Բայց այստեղ էլ կրկին բժիշկներ։ Կինս կամենում էր կերակրել և անձամբ կերակրեց հետեւեալ հինգ զաւակներին, բայց առաջին երեխան հիւանդացաւ։ Այն բժիշկները, որոնք ցինիկաբար մերկացնում և չօշափում էին նրան ամեն տեղից, և որի համար ես պարտաւոր էի չնորհակալութիւն յայտնել և վարձատրել, այդ սիրելի բժիշկները դժան, որ նա երեխային ծիծ չը պէտք է տայ և նա սկզբում մի առժամանակ զրկուած էր այն միակ միջոցից, որով կարող էր փրկուիլ կոկէտու-

որ որքան կարելի է շատ արուներ գրաւել կարողանայ, որպէս զի ընտրութիւն անելու հնարաւորութիւն ունենայ։

Իսկ այն, որ մինը մի քիչ աւելի մատեմաթիկայ զիտէ, իսկ միւսը նուազում է քնարի վերայ, դա ոչինչ չի փոխիլ։ Կինը բախտաւոր է և իւր բոլոր ցանկացածների համար է միայն այն ժամանակ, երբ կախարդում է տղամարդուն։ և այդ պատճառով կնոջ ամենազլիաւոր ինդիբը տղամարդկանց կախարդել զիտենալն է։ Այդ այդպէս է եղել և կլինի միշտ, մեր աշխարհում այդպէս է օրիորդի կեանքում և նոյն ձեռվ շարունակում է ամուսնանալուց յետոյ։ Օրիորդական կեանքում այդ հարկաւոր է ընտրութեան համար, իսկ ամուսնանալուց յետոյ՝ մարդու վրայ իշխելու համար։

Միայն զաւակներն են, որ կարողանում են ժամանակաւորապէս ընդհատել կամ ձնչել այդ, և այդ այն դէպքում, երբ կինն այլանդակ չէ, այսինքն ինքն է դիեցնում իւր երեխաններին։ Բայց այստեղ էլ կրկին բժիշկներ։ Կինս կամենում էր կերակրել և անձամբ կերակրեց հետեւեալ հինգ զաւակներին, բայց առաջին երեխան հիւանդացաւ։ Այն բժիշկները, որոնք ցինիկաբար մերկացնում և չօշափում էին նրան ամեն տեղից, և որի համար ես պարտաւոր էի չնորհակալութիւն յայտնել և վարձատրել, այդ սիրելի բժիշկները դժան, որ նա երեխային ծիծ չը պէտք է տայ և նա սկզբում մի առժամանակ զրկուած էր այն միակ միջոցից, որով կարող էր փրկուիլ կոկէտու-

թիւնից (նաղկթելուց): Կերակրում էր դայեակը, այսինքն մենք օգուտ քաղեցինք մի կնոջ տգիտութիւնից, կարիքից և աղքատութիւնից, հրապուրելով հեռացրինք նրան իւր երեխայից և զրա համար արէզներով կոտ հաղցրինք, բայց խնդիրն այդ չէր: Բանը նրանումն էր, որ հէնց այդ յղութիւնից և երեխային կերակրելուց աղատ ժամանակաշրջանում առանձին ուժով արտայայտուեց նրա մէջ թուլացած այդ նաղկթանքը: Դրա համեմատ էլ իմ մէջ առանձին ուժով երեան եկան խանդուտեան տանջանքներ, որոնք անընդհատ դիշատում էին ինձ ամուսնական կեանքիս ամբողջ ընթացքում այնպէս, ինչպէս որ նրանք չեն կարող չը տանջել այն բոլոր ամուսիններին, որոնք իրենց կանանց հետ այնպէս են ապրում, ինչպէս—ես, այսինքն անբարոյական:

ХV

Ամուսնական կեանքիս ամբողջ ընթացքում ես ինձ երբէք աղատ չեմ զգացել խանդուտեան տանջանքներից: Բայց լինում էին շրջաններ, երբ ես դրանով աւելի սաստիկ էի տանջում: Եւ այդ շրջաններից մինն էլ այն ժամանակն էր, երբ առաջին զաւակից յետոյ բժիշկներն արգելեցին կնոցս անձամբ սնուցանել երեխային: Այդ ժամանակ ես առանձնակի խանդուտ էի դէպի կինս նախ նրա համար, որ նա մայրերին յատուկ մի անհանգստութիւն էր զգում, որն առանց որ և է

պատճառի առաջ պէտք է բերէր կանոնաւոր կեանքի խանդարումն, երկրորդ՝ նրա համար, որ տեսանելով, թէ որպիսի հեշտութեամբ դէն ձգեց նամօր բարոյական պարտականութիւնները, ես թէն անգիտակցաբար, բայց արդարացի կերպով եղրակացրի, որ նա նոյնպիսի հեշտութեամբ կարող է վարուել նաև դէպի ամուսնական պարտականութիւնները, մանաւանդ որ՝ բոլորովին առողջ էր և չը նայելով պատուական բժիշկների արգելքներին, հետեւել զաւակներին ինքն էր կերակրում: և շատ սքանչելի կերպով:

Ո՞րքան չը սիրում բժիշկներին.—ասացի ես, նկատելով նրա ձայնի դաժանութիւնն իւրաքանչիւր անգամ, երբ միայն նրանց մասին յիշում էր:

—Այստեղ սիրելու կամ չը սիրելու բան չկայ: Նրանք կործանեցին կեանքս, ինչպէս ոչնչացնում են հաղարաւոր և հարիւր հաղարաւոր մարդկանց կեանքը, իսկ ես չեմ կարող չը կապել հետեանքը պատճառների հետ: Ես հասկանում եմ, որ նրանք էլ իրաւաբանների պէս ուղում են փող վաստակել և սիրով կը տայի եկամուտիս կէսը և իրաքանչիւրն էլ նոյնը կանէր, և թէ հասկանար նրանց արածը, միայն թէ նրանք չը խառնուէին մեր ընտանեկան կեանքին, մի խօսքով չը մօտենային մեզ: Ես հօ տեղեկութիւններ չեմ ժողովել բայց և այնպէս տասնեակ դէպքեր դիտեմ, իսկ անթիւ են այն դէպքերը, երբ նրանք սպանել են մանկան մօր արդանդում, հաւատացնելով, որ մայրն աղատուիլ չի կարող, իսկ մայրն յետոյ

ազատում էր շատ սիրուն.—Կրբեմն էլ մայրերին՝ ինչ որ անդամահատութեան պատրուակաւ։ ԶԵ որ ոչ ոք չի հաշւում այդ սպանութիւններն, ինչպէս չէին հաշւում և ինկվիզիցիայի կատարածները, որովհետեւ կարծում էին, թէ այդ մարդկութեան երջանկութեան համար է։

Նրանց կատարած ոճիրները հաշուել անդամ չի կարելի։ Բայց դրանք դեռ ոչինչ են նիւթապաշտութեան առաջ բերած այն բարոյական քայլայման համեմատութեամբ, որ նրանք մտցնում են կեանքի մէջ, մանաւանդ կանանց միջոցաւ։

Ես դեռ չեմ խօսում, որ եթէ հետեւնք նրանց ցուցումներին, այն ժամանակ ամեն տեղ և ամեն բանում զոյսութիւն ունեցող վարակումների պատճառով, մարդիկ ոչ թէ մինութեան պէտք-է դիմէին, այլ բաժան կեանքի և նրանց ուսման համեմատ իւրաքանչիւրը պէտք է նստէր առանձին և բերանից չը հանէր կարօլեան թթւուտի սրբակիչը. (ի գէպ.՝ գտել են, որ նա էլ պէտքական չէ)։ Բայց այդ էլ ոչինչ։ Մարդկանց, մանաւանդ կանանց անբարոյականացնելու մէջ գլխաւորը թոյնն է։

Այժմս այլ ես չի կարելի ասել. «գու վատ ես ապրում, լաւ ապրիր» այդ չես կարող ասել ոչ քեզ և ոչ ուրիշներին։ Եթէ վատ ես ապրում, դրա պատճառը նեարդային համակարգութեան անկանոն գործունէութիւնն է և այն և այն։ Պէտք է գնալ նրանց մօտ. կը գրեն ծծ կոպէկի գեղ, կառնէր և կընդունէք։ Դուք աւելի էք վատանում. այդ գէպքում կրկին բժիշկներ, կրկին դեղեր, մի խօսքով հիանալի բան է։

Բայց սրանումն էլ չէ բանը։ Ես միայն ասում եմ այն, որ կինս շատ գեղեցիկ կերպով կերակրում էր անձամբ իւր զաւակներին և միայն յղութիւնն ու մանկանց կերակրելն էր ազատում ինձ խանդոսութեան տանջանքներից։ Եթէ այդ չը լինէր, ամեն ինչ շատ աւելի շուտ կը պատահէր։ Զաւակներս թէ ինձ էին փրկում և թէ նրան։ Ութ տարուայ ընթացքում նա հինգ երեխայ բեռաւ և բացի առաջինից՝ բոլորին անձամբ կերակրեց։

—Այժմս նրտեղ են ձեր զաւակները. — հարցուի ես։

— Զաւակներս, վախեցած հարցրեց նա իւր կողմից։

— Ներեցէք ինձ, գուցէ ձեղ համար դժուար է նրանց յիշելը։

— Ո՛չ, ոչինչ։ Զաւակներիս տարել են քենիս և նրա եղբայրը։ Ինձ չը տուին նրանց։ ԶԵ որ ես խելազարի պէս մի բան եմ։ Այժմս այն տեղից եմ գալիս։ Ես տեսայ նրանց, բայց ինձ չեն տալ, որպէսետեւ ես նրանց այնպէս կը դաստիարակեմ, որ իրենց ծնողներին նման չեն լինիլ։ Այն ինչ, հարկաւոր է, որ նրանց պէս լինին։ Ե՞ն ինչ արած։ Հասկանալի է, որ նրանց ինձ չեն տալ, չեն հաւատալ։ Ես աւերակ եմ, այլանդակ։ Իմ մէջ մի բան կայ։ Ես գիտեմ։ Եւ այդ ուղիղ է։ այն ուղիղ է, որ ես գիտեմ այն, ինչ որ դեռ շուտ չեն իմանալ ամենքը։

Այս, մանուկներս ողջ են և այնպիսի վայրենիներ են մեծանում, ինչպէս նրանց շրջապատ-

տողներն են: Ես տեսայ նրանց, երեք անգամ տեսայ: Ես նրանց համար ոչինչ չեմ կարող անել: Ոչինչ: Այժմս գնում եմ տուն՝ դէպի հարաւ. Այնտեղ ես մի փոքրիկ այգի և անակ ունիմ:

Սյուն, մարդիկ դեռ շուտ չեն իմանալ այն, ինչ որ ես գիտեմ: Արեի մէջ արդեօք շատ երեկաթ կայ, ուրիշ էլ ինչ մետաղներ կան արեի և աստղերի վրայ, այդ կարելի է շուտ իմանալ բայց իմանալ այն, ինչ որ մերկացնում է մեր խոզութիւնը, դա դժուար է, սարսափելի դժուար: Դուք գոնէ լսում էք ինձ, ես դրա համար էլ չնորհակալ եմ ձեզանից:

XVI

Զաւակների մասին յիշեցրիք դուք: Զաւակների մասին էլ դարձնալ ինչպէս են ստում: Զաւակներն Աստուածային օրհնութիւն են, զաւակներն ուրախութիւն են: Չէ որ այս բոլորը կեղծ է: Մի ժամանակ իրօք այդպէս էր, բայց այժմս այդպիսի բան չկայ: Զաւակները առնջանք են և ուրիշ ոչինչ: Մայրերից շատերն ուղղակի այդպէս են զգում և երեմն էլ ուղղակի այդպէս ասում: Հարցրեք մեր շրջանի մարդկանց մայրերից միծ մասի և նրանք կասեն, որ զաւակների մահուան երկիւղից իրենք չեն ուզում զաւակ ունենալ, եթէ արդէն ծնել են, չեն ուզում կերակրել, որպէս զի չը սիրեն և չը տանջուին: Այն հաճոյքը, որը պատճառում է նրանց մանուկն իւր գեղեցկութեամբ, թաթիկներով, տոտիկներով և փափլիկ մարմնով,

որ մանկան պատճառած հաճոյքը քիչ է նրանց այն տանջանքից, որը զգում են միմիայն մտածելուց, թէ նրանք կարող են հիւանդանալ և մեռնիլ: Կշռելով օգուան ու վեաը, դուրս է գալիս, որ շահաւէտ չէ և այդ պատճառով զաւակ ունենալը պէտք չէ: Նրանք այդ ասում են ուղիղ և համարձակ, երեակայելով, որ դա առաջ է գալիս զաւակասիրութեամ զգացմոնքից: Լաւ և գովելի զգացմոնք, որով նրանք պարծենում են. նրանք չեն նկատում, որ այդպիսի դատողութիւնով մերժում են սէրը և հաստատում իրենց նսականութիւնը: Նոքա աւելի քիչ բաւականութիւն են ստանում մանկան զեղեցկութիւնից, քան տանշանք՝ նրա մասին տածած երկիւղից և այդ պատճառով պէտք չէ այն երեխան, որին նրանք կը սիրեն: Այսպիսով ոչ թէ իրենց են զոհում սիրած էակի համար, այլ լինելիք սիրած էակը զոհում են իրենց:

Պարզ է, որ այս ոչ թէ սէր է, այլ նսականութիւն: Բայց զրանց, հարուստ բնտանիքների այդ մայրերին դատապարտելու համար ձեռք չի բարձրանում, երբ յիշում ես այն բոլոր չարչարանքը, որ նրանք կը քաշեն մանուկների առողջութեան պատճառով՝ դարձեալ նոյն բժիշկների չնորհիւ: Նոյն իսկ այժմս էլ, երբ միայն յիշում եմ կնոջա դրութիւնն առաջներում, երբ երեք չորս զաւակ ունէինք և նա ամբողջապէս նրանցով էր զբաղուած, ուղղակի սարսափում եմ: Մեր կեանքը կեանք չէր: Դա մի ինչ որ յաւիտենական վտանգ էր, նրանից փրկուելու ջանքը. նոր վտանգ, նորից

յուսահատական ճիգեր և նորից վտանգ, մշտական այնպիսի դրսւթեան մէջ էինք, ինչպէս որ լինուում են խորտակուող նաւի վրայ: Ինձ երբեմն թւում էր, որ այդ դիտամաբ էր կատարւում, որ դա ինձ յաղթահարելու համար էր և նա այդ նպաստակաւ էր զաւակների համար անհանդստացող ձեռանում: Այդ հանգամանքը շատ գրաւիչ կերպով էր լուծում բոլոր ինդիբները նրա օգտին: Ինձ թւում էր, որ նրա բոլոր արածներն ու ասածներն այդպիսի դէպքերում—դիտաւորեալ էին: Բայց ոչ, նա ինքն էլ սոսկալի տանջւում էր և նահատակւում երեխաների հետ՝ նրանց թէ առողջ և թէ հիւանդ ժամանակ: Դա մի տանջանք էր թէ նրա և թէ ինձ համար:

Եւ նա չէր կարող չը տանջուել: Չէ որ հաւկումն գէպի մանուկներ, նրանց կերակրելու կենադանական կարիքը, նրանց գգուելու և պաշտպանելու ծարաւն, ինչպէս որ բոլոր կանայքն ունին, այնպէս էլ նա ունէր: Բայց չունէր այն, ինչ որ բոլոր կենդանիքն ունին, այն է նա երեխակայութիւնից և դատողութիւնից զուրկ չէր: Հաւը չի վախում այն բանից, ինչ որ նրա ձագերի հետ կարող է պատահել: Չը դիտէ այն բոլոր հիւանդութիւնները, որոնցով նրանք կարող են հիւանդանակ, չը դիտէ այն բոլոր միջոցները, որոնցով մարդիկ կարծում են, թէ կարող են փրկել հիւանդութիւններից և մահուանից: Եւ ձագերը հաւի համար տանջանք չեն: Զագերը հաւի համար ուշախութիւն են:

Երբ ձագը սկսում է հիւանդանակ, նրա հոգ-

սերը շատ որոշ են. նա տաքացնում և կերակրում է նրան: Այդ անելով՝ հաւն զգում է, որ անում է այն բոլորն, ինչ որ պէտք է: Երբ սատկում է ձագը, նա իրան չի հարցնում, թէ ձագն՝ ինչու է սատկել, ուր զնաց. մի փոքր կչէչում է, ապա զաղարում է և շարունակում ապրել առաջուայ պէս: Բայց մեր դժբախտ կանանց՝ ինչպէս և կնոջս համար այդպէս չէր: Դեռ չը խօսելով հիւանդութիւնների, նրանց բժշկելու, մեծացնելու և գատիարակելու եղանակի մասին, նա ամեն կողմից լսել և կարդացել էր բազմատեսակ և միշտ փոփոխուող կանոններ այդ բանի վերաբերութեամբ: Այսպէս կերակրել, այս ինչ բանով, ոչ, այսպէս չէ, այս ինչով չէ, այլ ահա այսպէս: հազցնել, խմացնել, լողացնել, պառկեցնել, քնացնել, զբօանել, օդը և այլն. ահա այս բոլորի մասին մենք և մահաւանդ նա զլիսաւորապէս՝ իւրաքանչիւր շաբաթիմանում էր նորանոր կանոններ: Կարծէք թէ երեկուանից սկսած լինէին որդենութիւնը: Ա՛հ, այնպէս չէք կերակրել, լաւ չէք լողացրել, անժամանակ է եղել և երեխան հիւանդացել է, և բանից գուրս էր գալիս, որ մեղաւորը մենք ենք եղել, որովհետև այնպէս չենք արել, ինչպէս որ պէտք է:

Այդ տանջանքը զեռ առողջ ժամանակն էր, բայց եթէ երեխան հիւանդանար, վերջացած բան էր: Կատարեալ դժոխք էր դառնում: Ենթադրում է, որ հիւանդութիւնը կարելի է բժըշկել, որ այդպիսի գիտութիւն կայ և զոյութիւն ունին մարդիկ—բժիշկներ և նրանք գիտեն այդ: Ամենքը ոչ, բայց ամենալաւերը գիտեն: Եւ ահա,

մանուկը հիւանդ է և պէտք է գտնել այդ ամենաւ-
լաւին, նրան, որը փրկում է և այդ դէպքում միայն
երեխան կը փրկուի: Իսկ եթէ չը գտնես և չը բե-
րես նրան, կամ այնտեղ չես ապրում, որտեղ այդ
բժիշկն է, երեխան կորած է: Եւ այս ոչ թէ միայն
կնոջս բացառիկ հաւատն էր, այլ նրա շրջանի բո-
լոր կանանց և նա ամեն կողմից լսում էր միայն
հետեւալը.—կատարինէ Սիմօնեանի երկու երե-
խայք մեռան, որովհետե Յովհաննէս Զաքարեա-
նին չը հրաւիրեցին, իսկ Մարիամ Յովհաննի-
սեանի մեծ աղջկան Յովհաննէս Զաքարեանը փըր-
կեց. իսկ ահա Պետրոսեանները բժշկի խորհրդով
ցրուեցան հիւրանոյներն ու կենդանի մնացին,
չը ցրուեցան և երեխանները մեռան: Ֆլանը թու-
լակազմ երեխայ ունէր, բժիշկների խորհրդով փո-
խադրուեցին հարաւ և փրկեցին երեխայի կեանքը:
Ի՞նչպէս կարելի է չը տանջուել, ամբողջ կեանքի
ընթացքում չը վըդովուել, երբ մանուկների կեան-
քը, որոնց հետ նա իւր գոյութեամբ կապուած է,
նրանից է կախուած, ինչ որ նա ժամանակին կե-
մանայ Յովհաննէս Զաքարեանից: Իսկ թէ ինչ
կասի բժիշկ Յովհաննէս Զաքարեանը, այդ ոչ
ոք չը գիտէ և ամենից քիչ գիտէ ինքը՝ Յովհան-
նէս Զաքարեանը, որովհետե նա շատ լաւ իմա-
նում է, որ ինքը ոչինչ չը գիտէ և ոչ մի բանում
օգնել չի կարող և միայն խարխրում է, որպէս զի
չը դադարեն հաւատալուց՝ որ նա մի բան գիտէ:
Զէ որ, եթէ նա բոլորովին անսուն լինէր, այդ-
պէս չէր տանջուիլ, եթէ կատարեալ մարդ լինէր,
կը հաւատար Աստուծուն և կասէր ու կը մտածէր,

ի՞նչպէս որ այդ ասում են հաւատացող մարդիկ.
«Աստուծած տուեց և Աստուծածն էլ տարաւ. Աս-
տուծուց չես փախչիր»:

Ամբողջ կեանքը երեխանների հետ կնոջս՝ և
այդ պատճառով էլ ինձ համար—ոչ թէ ուրախու-
թիւն էր, այլ տանջանք: Ի՞նչպէս չը տանջուել:
Եւ նա տանջուում էր միշտ: Պատահում էր, որ
հազիւ կը հանգստանայինք խանդութիւն որ և է
տեսարանից կամ կոռւից և կը մտադրուէինք ապ-
րել, կարգալ, մտածել: Մի որ և է գործի ձեռք կը
զարկէինք թէ չէ, յանկարծ լուր կը բերէին, որ
Բարսնողի սիրալ խառնուում է, որ Մարիամն արիւ-
նով է գուրա գնացել, կամ Անդրէսսի մարմինը
գուրս է տուել և բանը պրծած էր. էլ հանգստու-
թիւն չկար: Ո՞ւր վաղել, որ բժիշկների ետեից,
ուր ուղարկել: Եւ սկսում էին գրեիններ, ջեր-
մութիւն չափելը, դեղերն ու բժիշկները: Մինը
չը պրծած, սկսում էր միւսը: Կանոնաւոր և հաս-
տատուն ընտանեկան կեանքը գոյութիւն չունէր:
Այլ ինչպէս ասացի ձեզ՝ երեակայական և իսկական
վտանգներից փրկուելու մի անընդհատ կոիւ էր:
Զէ որ ընտանիքներից մեծ մասում այժմս այդ-
պէս է: Իսկ ընտանիքիս մէջ գա աւելի խիստ էր:
Կինս որդեսէր էր և զիւրանաւատ:

Այսպիսով զաւակների ներկայութիւնը ոչ
թէ լաւացնում էր մեր կեանքն, այլ թունաւու-
րում: Բացի զրանից զաւակները մեզ համար
կուելու նոր առիթ էին: Նրանք ոչ միայն թըշ-
նամանքի առարկայ էին, այլ և մարտնչելու դոր-
ծիք: Մենք կարծես մանուկներով էինք կուում

իրար գէմ: Մեզանից իւրաքանչիւրն իւր մանուկն ունէր կուռի զործիք: Ես կուռում էի մեծով՝ բարս սեղով, իսկ նա Եղիսաբէթով: Բացի զրանից՝ երբ մանուկներն սկսան մեծանալ և նրանց բնաւորութիւնները որոշուեցին, նրանք դաշնակիցներ դարձան, որոնց մեզանից իւրաքանչիւրն իւր կողմն էր զբաւում: Այդ բանից խեղճերը սաստիկ տանջուում էին, բայց մենք մեր անվերջ պատերազմի ընթացքում ժամանակ և միջոց չունեինք նրանց ըստածելու: Աղջիկս իմ կողմն էր, իսկ մեծ տղաս, որը նման էր նրան և նրա սիրելին, ինձ համար յաճախ ատելի էր:

XVII

Ահա այդպէս էլ ապրում էինք: Մեր յարաբերութիւնները դառնում էին աւելի թշնամական:

Վերջապէս այն աստիճանի հասան, որ ոչ թէ անմիաբանութիւնն էր թշնամութիւն առաջ բերում, այլ թշնամութիւնն էր անմիաբանութիւն առաջ բերողը. նա ինչ էլ ասելու լինէր, ևս առաջուց անհամաձայն էի. ի հարկ է նոյնն էր և նա:

Չորրորդ տարում երկու կողմից էլ վճռեցինք, որ իրար հասկանալ, իրար հետ համաձայնութիւն կարող: Մենք դադարեցինք նոյն իսկ վերջ նականապէս բացատրուելուց: Ամենահասարակ բաներում, մանաւանդ զաւակների մասին մեզանից իւրաքանչիւրն իրեն կարծիքին էր մնում: Այժմս որքան յիշում եմ իմ պաշտպանած կար-

ծիքները, նրանք այնքան էլ թանկ չէին ինձ համար, որ ևս զիջել չը կարողանայի. բայց նա հակառակ կարծիքին էր և զիջանել՝ նշանակում էր զիջանել նրան: Իսկ այդ ես չէի կարող անել: Նա նոյնպէս: Նա իրեն միշտ համարում էր երկի միանգամայն արդարացի, իսկ ես՝ ըստ իս սուրբ էի նրա առաջ: Երկուսով եղած ժամանակ մենք հարկադրուած էինք լոել կամ միայն այնպիսի բաներ ասել իրար, որ՝ հաւատացած եմ, անառառներն էլ կարող են ասել: «Ո՞ր ժամն է. ժամանակ է քննելու: Այսօր ճաշին ինչ ունինք: Ո՞ր գնանք. լրադիրներում ինչ կայ: Ուզարկել բժշկի հետեխց, թէ ոչ: Մարիամի կոկորդը ցաւում է:» Բաւական էր մաղաչափ շեղուել մեր խօսակցութեան այս աւելի քան նեղ շրջանակից, որ բարեկութիւնը բորբոքուէր: Տեղի էին ունենում ընդհարումներ և ատելութեան արտայայտութիւններ սուրձի, սիսոցի, կառքի, թղթախաղի ընթացքի պատճառաւ՝ այնպիսի զործերի, որոնք ոչ մէկ և ոչ էլ միւս կողմի համար նշանակութիւն ունենալ չէին կարող: Իմ մէջ գոնէ երբեմն սոսկալի ատելութիւն էր եռում նրա դէմ: Երբեմն նայում էի, թէ նա ինչպէս է թէյ լցնում, շարժում ոտքը, մօտեցնում գգալը բերանին, խրպշտում՝ թէյ ներս ծծելիս և այդ բաների համար նրան ատում էի ինչպէս ամենավատ վարմունքի համար: Այն ժամանակ ես զեռ չէի նկատում, որ չարութեան շրջաններն առաջ եկան իմ մէջ բոլորովին կանոնաւոր և այն շրջանների համապատասխան, որ մենք սէր էինք կոչում: Սիրոյ շրջանը չարութեան

շրջան է, սիրոյ եռանդուն շրջանը՝ չարութեան-
տեղ շրջան և սիրոյ աւելի թոյլ արտայայտու-
թիւնը՝ չարութեան կարծատես շրջան։ Այն ժա-
մանակ մենք չէինք հասկանում, որ այդ սէրն ու
չարութիւնը մի և նոյն անասնական զգացմունքն
էր, միայն զանազան ծայրերից։ Եթէ մենք մեր դրու-
թիւնն հասկանայինք, սարսափելի կլինէր այդպէս
ապրելը, բայց մենք ոչ տեսնում և ոչ էլ հասկա-
նում էինք այն։ Հէնց սրանումն է մարդուս թէ
փրկութիւնը և թէ պատիժը. որովհետեւ երբ նա-
անկանն է ասլում, կարող է իրեն մթնացնել՝
չը տեսնելու իւր դրութեան թշուառութիւնը։

Հէնց այդպէս էլ մենք էինք անում։ Նա աշ-
խատում էր ցրուել միշտ լարուած, միշտ շտապ
տնտեսական գործերով, կահաւորութեամբ, իւր և
մանուկների հագուստներով, նրանց ուսմամբ ու
առողջութեամբ։ Ես էլ իմս ունէի. — ծառայութիւն,
հարբեցութիւն, որսորդութիւն, թղթախալ։ Եր-
կուսս էլ միշտ զբաղուած էինք։ Երկուսս էլ զգում
էինք, որ որբան շատ ենք զբաղուած, այնքան
աւելի չար կարող ենք լինել իրար համար։ «Քեզ
հաճելի են ծամածութիւնները, մտածում էի ես,
գու ինձ ամբողջ գիշեր տանջեցիր քո տեսարան-
ներով, իսկ ես նիստ ունիմ։» Քեզ համար լաւ է,
ոչ միայն մտածում, այլ և ասում էր նա, «իսկ ես
երեխայիս պատճառով ամբողջ գիշեր չեմ քնել։»
Հիպնոզի, հոգեկան հիւանդութիւնների և խսերի-
քայի այդ բոլոր նոր տեսութիւնները ոչ թէ հա-
սարակ, այլ և վնասակար և զգուելի յիմարութիւն-
ներ. նն։ Կնոջս մասին Շարկօն անպատճառ կա-

սէր, որ իստերիքական էր, իսկ իս մասին՝ որ
ցնորուած եմ և հաւանականօրէն կը սկսէր բժշկել։
Այն ինչ, այստեղ բժշկելու բան չկար:

Ահա այսպէս մենք ապրում էինք մշտական
խաւարում և չէինք նկատում այն դրութիւնը, որի
մէջ մենք էինք գտնւում։

Եւ եթէ չը պատահէր այն, ինչ որ պատա-
հեց և ես այդպէս ապրէի մինչեւ ծերութիւնս,
մեռնելիս այնպէս կը կարծէի, որ ես լաւ կեանք
եմ վարել, ոչ այնպան լաւ, բայց ոչ էլ վատ-
այնպէս, ինչպէս բոլորը ես չէի հասկանալ և ճա-
նաչիլ դժբախտութեան այն վիճը, այն զգուելի
կեղծիքը, որի մէջ ես թշուառում էի։

Մենք՝ երկու իրար ատող, իրար կեանքը
թունաւորով, մի կոճղից և մի և նոյն շղթայով շըզ-
թայուած կալանաւորներ էինք, որոնք տեսնել չէին
ուզում այդ։ Ես այն ժամանակ գեռ չը զիտէի, որ
ամուսիններից 99 տոկոսը նոյն դժոխքումն էին
ապրում, ինչպէս որ ես և որ այդ այլապէս չէր
կարող լինել։ Այն ժամանակ ես գեռ չը զիտէի
այդ ոչ իմ և ոչ ուրիշների վերաբերութեամբ։

Զարմանալի է, թէ որպիսի զուգաղիպու-
թիւններ կան թէ կանոնաւոր և թէ անկանոն
կեանքում։ Երբ որ ծնողների համար անտանելի է
գառնում կեանքն իրարից, հէնց այդ ժամանակ
անհրաժեշտ են լինում քաղաքային պայմաններ
գաւակների գաստիարակութեան համար և կարիք
է զգացւում քաղաք փոխադրուելու։

Նա լոեց և երկու անգամ հանեց իւր տար-
օրինակ սովորական ձայնը, որն այժմս նման էր
զսպուած հեկեկանքի: Մենք մօտենում էինք կա-
յարանին:

—Ո՞ր ժամն է.—հարցրեց նա:

Ես նայեցի, ժամի երկուան էր:

—Դուք չը յոդնեցաք.—դիմոց նա:

—Ո՞չ, բայց դուք յոդնել եք:

—Ես խեղաւում եմ: Թոյլ տուէք, ես կանց-
նեմ և ջուր կը խմեմ:

Եւ նա օրօրուելով անցաւ վագօնի միջով:
Ես նստած քննում էի նրա ասածներն և այնպիսի
մտածմունքի մէջ ընկայ, որ նոյն խել չը նկատեցի,
թէ նա ինչպէս վերադարձաւ վագօնի միւս դանից:

XVIII

—Բայց ես միշտ ոգերըւում եմ.—սկսեց նա:
Շատ բանի մասին փոխեցի միտքս: Շատ բանի
վրայ ես այժմս ուրիշ կերպ եմ նայում և այդ
բոլորն ուզում եմ ասել: Մենք սկսանք ապրել
քաղաքում: Մարդս կարող է հարիւր տարի անց-
կացնել քաղաքում և չիմանալ, որ ինքը վազուց
մեռել փտել է: Իրեն մասին հաշիւ տալու և բան
հասկանալու ժամանակն անգամ չկայ. այնքան
շատ է զբաղմունքը: Գործեր, հասարակական կա-
պեր, առողջութիւն, գեղարուեստ, զաւակների
առողջութիւնը, նրանց դաստիարակութիւնը: Պէտք
է ընդունել երբեմն սրան, երբեմն նրան, գնալ
սրանց կամ նրանց մօտ, տեսնել այս ինչի խաղը,

լսել այս ինչ երգչին կամ երգչուհուն: Զէ որ
քաղաքում իւրաքանչիւր բողէին կայ մէկ, եր-
բեմն էլ երկու, երեք հռչակաւորներ, որոնց աչ-
քաթող անել չի կարելի: Երբեմն հարկաւոր է
բժշկուել կամ բժշկել սրան կամ նրան, երբեմն
ուսուցիչներ, դաստիարակունիներ, խել կեանքը
կատարեալ գատարիւթիւն է: Այդպէս էլ ապ-
րում էինք և կմակցութեան ցաւն աւելի քիչ
էինք զգում: Բացի զրանից սկզբում հրաշալի
զբաղմունք ունէինք՝ քաղաքից գիւղն անցնելն
ու գիւղից քաղաք գալը, նոր քաղաքում, նոր
բնակարանում տեղաւորուիլը:

Անցուցինք մի ձմռու, խել երկրորդում պա-
տահեց հետեւեալ աննկատելի և բոլորովին չնչին
երեցող մի հանդամանք, որն առաջ բերեց այն,
ինչ որ յետոյ պատահեց:

Նա տեկար էր: Բժիշկները հրամայեցին չը
ծնել և միջոց սովորեցրին: Այդ ինձ համար զգուելի
էր: Ես մարտնչում էի դրա գէմ, բայց նա հաս-
տատուն կամակորութեամբ պնդեց իւր ասածի
վրայ և ես ընկճուեցի: Խորային կեանքն արդա-
րացնելու վերջին միջոցը՝ զաւակները խլուած էին
և կեանքն աւելի աղտոտ գարձաւ:

Աշխատաւոր գիւղացուն զաւակներ պէտք
են. թէն նրա համար գտուար է նրանց մեծացնելը,
բայց և այնպէս՝ նրանք հարկաւոր են և այդ պատ-
ճառով նրանք ամուսնական յարաբերութիւններն
արդարացնելու հող ունին: Խել մեզ, զաւակ ու-
նեցուներիս, այլ ևս զաւակներ հարկաւոր չեն,
նրանք զուր հոգս, ծախս ու ծանրութիւն են և

աւելորդ ժառանգակից: Եւ մեր խողային կեանքն արդարացնելու այլ ևս ոչինչ չի մնում: Մենք կամ արհեստական կերպով ենք ազաւում նրանցից, կամ, որ աւելի զգուելին է, նրանց վրայ նայում իբրև դժբախտութեան և անզգուշութեան հետեանքի վերայ:

Արդարանալու հնար չկայ: Բայց մենք բարոյապէս այնքան ենք ընկել, որ արդարանալու կարիքն իսկ չենք զգում:

Այժմեան լուսաւորեալ աշխարհի մեծամասնութիւնն անձնատուր է լինում այդ անառակութեան՝ առանց խզի խայթն անդամ զգալու:

Նոյն իսկ խայթելու բան չի մնացել, որովհետեւ բացի հասարակական կարծիքի և քրէական օրէնքի խղճից, եթէ միայն կարելի է այդպէս ասել, ուրիշ ոչինչ չի մնում . . .

Իսկ այստեղ ոչ մինն է խախտում և ոչ միւսը, որովհետեւ ամենքն էլ նոյնն են անում և Մարիամ Պօղոսեանը և Յովհաննէս Զաքարեանը: Ի՞նչ կարիք կայ աղքատներ շատացնելու, կամ հասարակական կեանքին մասնակցելու հնարաւորութիւնից զրկուելու:» Քրէական օրէնքից ամաչելու կամ վախնալու կարիք չկայ: Այդ անպիտան քածերն ու զինուորները երեխաներին ձգում են ջրհորների և լճակների մէջ, նրանց հասկանալի բան է, որ պէտք է բանտ նստացնել, իսկ մեզ մօտ ամենինչ կատարւում է ժամանակին և մաքուր:

Այդպէս ապրեցինք մենք կրկին երկու տարի: Անզգամ բժիշկների միջոցն ըստ երեսյթին ներգործում էր, նա փիղիքապէս լցուեց և ամառուաց

վերջին գեղեցկութեան նման լաւացաւ: Ինքը զգում էր այդ և զբաղւում դրանով: Նրա մէջ ծնունդ արաւ մի ինչ որ հրաւիրող՝ իրեն ձգող գեղեցկութիւն, որն անհանգիստ էր անում մարդկանց: Նա 30 տարեկան չը ծնող, գիրացրած և գրգուած կնոջ ամենաուժեղ աստիճանի վրայ էր: Նրա տեսքն անհանգստութիւն էր պատճառում: Երբ անցնում էր տղամարդկանց միջից, նա քարշում էր նրանց հայեացքները: Այն, նա նման էր երկար հանգստացրած, լաւ զիրացրած և լծուած ձիուն, որից սանձը հանել էին: Մեր կանանց 90 տոկոսի նման նա էլ ոչ մի սանձ չունէր: Ես այդ զգում էի և սարսափում:

XXIX

Նա յանկարծ վերկացաւ և նստեց լուսամուտք առաջ:

—Ներեցէք ինձ,—չնջաց նա և հայեացքը դէպի լուսամուտն ուղելով, մնաց այդպէս երկը բոսէի չափ: Յետոյ ծանր շունչ քաշեց և նստեց զիմացս: Նրա դէմքը բոլորովին փոխուեց, աչքերը խեղճացան. ինչ որ մի տարօրինակ ժպիտ կընձում էր նրա շրթունքները:—Ես մի փոքր յոդնեցայ, բայց կը պատմեմ:

—Նա լցուեց այն օրուանից, երբ դադարեց որդենութիւնից և այդ կերպ զաւակների համար տանջուելու հիւանդութիւնն անցաւ. ոչ թէ անցաւ, այլ նա կարծէք սթափուեց հարբած դրութիւնից, ուշքի եկաւ և տեսաւ, որ աստուածաւ

ստեղծ մի ամբողջ աշխարհ կայ իրեն ուրախութիւններով, որոնց մասին նա մոռացել էր և որի մէջ ապրել չը գլուէր: Արար աշխարհ, որը նա քոլորովին չէր հասկացել: «Ձեռքիցս չը փախցնեմ. ժամանակը կանցնի և էլ յետ չես դարձնիլ» ինձ թւում է, որ նա այդպէս էր մտածում, կամ աւելի շուտ, այդպէս էր զգում և այլ կերպ զգալ չէր կարող: Նրան կրթել էին այնպէս, որ աշխարհին երեսին ուշադրութեան արժանի մի բան կայ միայն՝ սէրբ: Եա մարդու գնաց, այդ սիրուց փոքր ինչ բան ստացաւ, բայց ոչ երբէք այն, ինչ որ խօստացւում էր, սպասւում: այն ինչ ունեցաւ նաև շատ հիասթափութիւն, նեղութիւն և մի և նոյն ժամանակ անսպասելի տանջանք—այդքան երեխաներ: Այդ տանջանքը սպասեց նրան: Եւ ահա ծառայութեան միջտ պատրաստակամ բժիշկ՝ ների չնորհիւ նա իմացաւ, որ կարելի է առանց երեխաների եօլա գնալ. ուրախացաւ, փորձեց այդ և վերակենդանացաւ իւր դիտցած բանի՝ սիրոյ համար:

Բայց սէրը խանդուտութեամբ և ամեն տեսակ չարութեամբ ապականուած ամուսնու հետ այն չէր: Նա սկսեց պատկերացնել մի ինչ որ այլ մաքուր, նոր սէր: Գոնէ ևս այդպէս էի մտածում նրա մասին: Նա սկսեց նայել իւր շուրջը՝ կարծես մի բանի սպասելիս լինէր: Ես այդ տեսնում էի և չէի կարող անհանգիստ չը լինել: Պատահում էր շատ յաճախ, իւրաքանչիւր քայլափոխում, որ նա ինչպէս միշտ, խօսելով ինձ հետ ուրիշների միջոցաւ, այսինքն այլոց հետ խօսելով, բայց

խօսքն ինձ ուղղելով, համարձակ ասում էր և շատ լուրջ կերպով, թէն մի ժամ առաջ ուրիշ բան էր ասել, որ չարմէ կեանքը զո՞նել զաւակների համար. որ մայրական հոգսը խաբէութիւն է, որ կայ երիտասարդութիւն և կարելի է կեանքով զուարժանալ:

Նա զաւակներով աւելի սակաւ էր զբաղւում և ոչ այնպիսի յուսահատութեամբ՝ ինչպէս առաջ. բայց աւելի շատ զբաղւում էր իւր անձով, իւր արտաքինով ու զուարձութիւններով, նոյն իւկ իրեն կատարելագործելով. թէն նա ծածկում էր այդ: Նորից նուանդով ձեռք զարկեց դաշնամուրի, որ մինչ այդ անուշադրութեան էր մատնել և ահա այդ տեղից էլ սկսուեց ամեն ինչ:

Նա նորից դարձեց իւր յոգնած աչքերը դէպի պատուհան, բայց իսկոյն, երեխ որոշ ջանք գործ դնելով իւր վրայ, կրկին շարունակեց:

— Այն, յայտնուեց այն մարդը: Նա կմ՛կմաց. դէմ ընկաւ և քթով երկու երեք անդամ որոշ ձայներ հանեց:

Ես տեսնում էի, որ նա տանջւում է ասել այդ պարոնի անունը, յիշել և խօսել նրա մասին: Սակայն որոշ ճիգ գործ դրեց և կարծես պատուելով արգելքը, վճռաբար շարունակեց:

— Իմ հայեացքովս ու զնահատութեամբս՝ նա վատ մարդ էր: Եւ այս այն նշանակութեան համար չեմ ասում, ինչ որ նա ունեցաւ իմ կեանքում, այլ նա իրօք այդպէս էր: Բայց այն հանգամանքը, որ նա վատ էր, ծառայում էր իրեւ ապացոյց, թէ կիսս ինչ արտառոց վիճակումն էր:

Նա չը լինէր, մի ուրիշը կը գտնուէր, բայց այդ պէտք է լինէր:—Նա կրկին լոեց:—Այս, նա երաժիշտ էր, ջութակահար. ոչ թէ մասնագիտօրէն, այլ միայն կիսով չափ, կիսահասարակական մարդէր:

Նրա հայրը կալուածատէր էր և հօրս հարեան: Նա վկասուեց, փչացաւ, և զաւակներն, որոնց երեքը տղայ էին. մի կիրակ տեղաւորուեցան, միայն երրորդը՝ կրտսէրը Փարիզ ուղարկուեց իւր քաւորուում մօտ: Այնտեղ նրան տուին երածըշտութեան դպրոց (կօնսերվատօրիա), որովհետեւ երաժշտական ձիրք ունէր և նա ջութակահար եղաւ և նուագում էր կօնցերատներին: Նա—ըստ երեոյթին ուղենալով նրա մասին ինչ որ վատ բան ասել, զսպեց իրան և արագ շարունակեց. Էհ, ևս չը դիտեմ, թէ նա ինչպէս էր ապրում, այլ այն զիտեմ, որ նա այդ տարի Ռուսաստան եկաւ և յայտնուեց մեղ մօտ:

Նա նշաճեւ աչքեր ունէր, կարմիր ժպտացող շրթունքներ ու բզած փոքրիկ բեղեր, վերջին ձեխ սանրուածք և գեղեցիկ ու սառը դէմք. այն, ինչ որ կանայք անուանում են «վատ չէ.» Բոյլ, թէն ոչ տղեղ կազմով և կնոջ՝ կամ ինչպէս ասում են, հոտէնտօտի նման զարգացած քամակով: Ասում են, որ իրենք էլ երաժշտական են: Հնարաւորութեան չափ մտերիմ երեալու ձգտող, բայց ուշիմ և ամենափոքր ընդդիմադրութեան հանդիպած ժամանակ կանգ առնելու միշտ պատրաստ, արտաքին արժանապատութիւն պահպանող, Փարիզի հետքը կրող կոճակաւոր կիսակօշիկներով, պայծառ

փողկապով և այլն. ինչ որ օտարները սովորաբար իւրացնում են Փարիզում և որոնք իրենց նորաձեռութեամբ միշտ աղդում են կանանց: Զեերի մէջ արհեստական՝ արտաքին ուրախութիւն. ամեն բանի մասին կցկատուր և ակնարկներով խօսելու ձևեր, կարծէք թէ զուր այդ բոլորը գիտէք, յիշում էք և ինքներդ կարող էք լրացնել:

Ահա հէնց նա էր բոլորի պատճառն իւր երաժշտութեամբ: Իսկ դատարանում գործն այնպէս էր ներկայացուած, որ իրեն թէ այդ բոլորը պատահեց խանդուութիւնից: Ո՛չ երբէք. այսինքն ոչ թէ այդպէս չէր, այլ և այդպէս էր և այդպէս չէր: Դատավարութեան ժամանակ այդպէս էլ վճռեցին, որ ես խաբուած ամուսին էի և սպանեցի պաշտպանելով արտաւորած պատիւս. (կարծեմ նրանք այդպէս են կոչում): Դորա համար էլ ինձ արդարացրին: Ես աշխատում էի պարզել գործի էութիւնը գատարանում, իսկ նրանք այնպէս հասկացան, որ ես ուղում եմ վերականգնել կնոջս պատիւը:

Կնոջս յարաբերութիւններն այդ երաժշտի հետ, ինչպէս էլ լինէին նրանք, ոչ ինձ համար ունէին նշանակութիւն և ոչ էլ իրեն համար: Այլ նշանակութիւն ունի այն, ինչ որ ես պատմեցի ձեզ, այսինքն խոզութիւնս: Բոյրն այն պատճառով տեղի ունեցաւ, որ մէր մէջ գոյութիւն ունէր պատմածս անդունդը, փոխագարձ ատելութեան այն սարսափելի լարուած դրութիւնը, որի ժամանակ հէնց առաջին առիթը բաւական էր կրիզիս (տագնապ) յառաջ բերելու: Վերջին ժամանակ մեր

մէջ տեղի ունեցած խռովութիւնները սարսափելի էին դառնում և որ զարմանալին է, տեղի էին տալիս անասնական աւելի լարուած կրքերի:

Եթէ նա չգար, կը դար մի ուրիշը: Եթէ խանդութեան պատճառ չը լինէր, կլինէր մի ուրիշը: Ես միայն պնդում եմ այն, որ ինձ նման ապրող ամուսինները կամ անառակութիւն պէտք է անեն, կամ բաժանուին, կամ անձնասպան պէտք է լինին և կամ սպանեն իրեն կանանց՝ ինչպէս որ ես սպանեցի: Եթէ որ և է մէկի հետ այդ չի պատճել, դա մի առանձնակի հաղուագիւտ բացառութիւն է: Զէ որ ես, նախքան այն ձեռվ վերջացնելն՝ ինչպէս որ վերջացրի, մի քանի անդամ մօտ էի անձնասպանութեան, իսկ նա էլ թունաւորում էր:

XX

Ճիշտ այդպէս էր և գէպքից առաջ:

Մենք կարծէք հաշտ էինք ապրում և խաղաղութիւն խանդարելու ոչինչ պատճաներ չկային, բայց յանկարծ սկսում է խօսակցութիւն և ես ասում եմ, որ մի շուն ցուցահանդիսում չքաղրամ է ստացել: Նա ասում է, որ ոչ թէ շքադրամ, այլ — գովասանական թերթ: Սկսում է վէճը, սկսում է մի խնդրից միւսին ցատկելը և յանդիմանութիւններ, ոլու, այդ վաղուց յայտնի է. միշտ էլ այդպէս է»: «Դու ստացիր» ..., «՞չ, ես չեմ ասել». կը նշանակի, ես ստում եմ: «Չդում ես, որ ահա, հէնց իսկոյն կը սկսուի այն սարսափելի վէճն, երբ ուզում ես սպանել թէ քեզ և թէ նրան, գիտես, որ իսկոյն կը սկսուի և դրանից վախում ես ինչպէս

կրակից, այդ պատճառով էլ ուզում ես զսպել քեզ, բայց բարկութիւնը լցնում է ամբողջ էութիւնդ: Նա մի ևնոյն և գեռ աւելի վատ զրութեան մէջն է, ծուռ մեկնութիւն է տալիս իւրաքանչիւր խօսքիդ, նրա իւրաքանչիւր բառը լի է թոյնով, որտեղից համոզուած է, որ ինձ աւելի կը խոցի, այնտեղիցն է խոցում: Հետզինետէ սաստկանումէ: Ես գոռում եմ. լոիր, կամ սրա նման մի բան:

Նա գուրս է փախչում սենեակից և մտնում մանկանոց: Ես աշխատում եմ պահել նրան, որ խօսք վերջացնեմ և հակառակն ապացուցանեմ և զրա համար բռնում եմ թերթ: Նա ձեացնում է, որ թերթ ցաւացրի և աղաղակում. «Երեխսերը, ձեր հայրը ծեծում է ինձ»: Ես գոռում եմ. «Առաջ մի խօսիր»—«Այս հօ առաջին անգամը չէ»: ասում է նա, կամ սրա նման մի բան է աղաղակում: Երեխսայք թափւում են նրա մօտ Նա հանդստացնում է նրանց: Ես ասում եմ. «մի կեղծիր»: Նա պատասխանում է. «քեզ համար ամեն ինչ կեղծաւորութիւն է. դու մարդ կը սպանես և զարձեալ կամես, որ նա կեղծում է: Այժմս ես հասկացայ քնդ, դու հէնց այդ ես ուզում»: «Օ՛հ, երբ պէտք է սատկես»: գոռում եմ ես: Յիշում եմ, թէ ինչպէս սարսափեցրին ինձ այդ սոսկալի խօսքերը: Ես երբէք չէի սպասում, որ կը կարողանամ այդպիսի սարսափելի կոպիտ բառեր ասել և զարմանում եմ, թէ նրանք ինչպէս դուրս թռան բերանիցս: Աղաղակում եմ այդ սարսափելի բառերն ու վաղում առանձնասենեակ, նստում եմ ու ծխում:

Լսում եմ, որ նա գուրս է գալիս նախասեւ

նեակ և պատրաստում գնալու։ Ես հարցնում եմ,
ուր Նա չի պատասխանում։ «Դրողը Նրա հետո։
ասում եմ ինքս ինձ և վերադառնալով առանձնա-
սենեակս, կրկն պառկում եմ ու ծխում։ Հաղա-
բաւոր զանազան ծրագիրներ են անցնում մտքով։
թէ ինչպէս վրէժինդիր լինել և ազատուել նրա-
նից, ինչպէս ուղղել այդ բոլորն և այնպէս անել,
իբրև թէ ոչինչ չի պատահել։ Ես մտածում եմ այս
բոլորն ու ծխում ու ծխում։ Մտածում եմ փախչել
նրանից, թագնուել, գնալ Ամերիկա։ Համնում եմ
այն աստիճանի, որ երազում եմ, թէ ինչպէս կա-
զատուիմ նրանից և որքան գեղեցիկ կլինի այդ,
թէ ինչպէս կը միանամ մի այլ՝ բոլորովին նոր և
գեղեցիկ կնոջ հետ։ կազատուիմ նրանով, որ նա
կը մնանի, կամ կը բաժանուիմ նրանից և մտա-
ծում եմ, թէ այդ ինչպէս կանեմ։ Տեսնում եմ,
որ շփոթում եմ, որ այն չեմ մտածում, ինչ որ
պէտք է և ծխում եմ։

Իսկ կեանքը շարունակում է տան մէջ։
Գալիս է դաստիարակչունին և հարցնում։ «Ո՞ր-
տեղ է տիկինը. Երբ կը վերադառնայ»։ Մտան
հարցնում է. թէյ բերել, թէ ոչ։ Մտնում եմ սե-
ղանատուն, երեխաները, մանաւանդ նրանցից մեծը՝
Եղիսաբէթը, որն արդէն հասկանում է այդ, հար-
ցական և անհաւան հայեացքով նայում է ինձ։
Լուռ թէյ ենք խմում։ Նա դարձեալ չկայ։ Անց-
նում է ամբողջ երեկոյ, նա կրկն չկայ և երկու
զգացմունք փոփոխակի արծարծւում է հոգուս մէջ՝
—բարկութիւն դէպի նա, նրա համար, որ նա իւր
բացակայութեամբ չարչարում է ինձ և զաւակնե-

քիս և որ այդ կը վերջանայ նրա վերադարձով։ Կ
երկիւզ, որ նա չի դալ և զլխին սի փորձանք կը
բերի։ Ես կերթայի նրա ետեից, բայց ուր փընտ-
ուել. քրնջ մօտ։ Սակայն գնալ և հարցնել, դա շատ
յիմար բան է։ Զանը դուրս գայ, երբ ուզում է
տանջնել, թող ինքը տանջուի։ Թէ չէ, նա հէնց
դորան է սպասում։ Հետեւեալ անգամ աւելի վատ-
թար կլինի։ Իսկ եթէ նա քրոջ մօտ չը լինի և
իրեն զլխին մի փորձանք է բերում, կամ արդէն
բերել է.... Ժամի տասն և մէկն է, տասներկուս։
Ես ննջարան չեմ գնում, յիմար բան է այնտեղ
միայնակ պառկեն ու սպասելը. Ես պառկում եմ
հէնց առանձնասենեակում։ Ուզում եմ զբաղուել
որև է բանով, նամակ գրել, կարգալ, բայց ոչինչ
չեմ կարողանում անել։ Սենեակումս միայնակ
նստած, տանջւում եմ, զայրանում և ականջ գնում։
Ժամը երկն է, չորսը. — Նա չկայ։ Առաւոտեան
դէմ բնում եմ։ Զարթնում. — Նա գարձեալ չկայ։

Տան մէջ ամեն ինչ հին կարգովն է ընթա-
նում, բայց ենթազրելով, որ այդ ինձանից է, բո-
լորն էլ չուարած, դժգոհ ու հարցական հայեաց-
քով նայում են ինձ։ Իսկ իմ մէջ նոյն ներքին
կոիւն է. զայրոյթ, որ նա ինձ չարչարում է, և
անհանգստութիւն նրա համար։ Ժամի 11 ին մօտ
կառքով գալիս է նրա քոյրը՝ որպէս պատգամա-
ւոր և սկսում սովորական բանաձելը. — Ես սոս-
կալի զրութեան մէջ է։ Ախար այս ինչ բան է։
Զէ որ ոչինչ չի պատահել։ Ես խօսում եմ նրա
անտանելի բնաւորութեան մասին և ասում, որ
ինքս բան չեմ արել։

—Զէս որ այդ չի կարող այդպէս մնալ. —
ասում է քոյրը:

—Բոլորը նրանիցն է և ոչ ինձանից, —ասում
եմ ես: —Ես առաջին քայլը չեմ անիլ: Բաժան-
ւում է, թող բաժանուի:

Քենիս վերադառնում է առանց որե է հե-
տեանքին համելու: Ես համարձակ ասացի, որ
առաջին քայլը չեմ անիլ, բայց հէնց որ նա գնաց
և ես գուրս եկայ ու տեսայ երեխաներիս խեղճ-
խեղճ ու վախեցած, արդէն պատրաստ էի առա-
ջին քայլն անել: Եւ ուրախութեամբ կանէի
այդ, բայց չը գիտէի թէ ինչպէս: Դարձեալ ման
եմ գալիս, ծխում, խմում եմ նախաճաշի ժամա-
նակ օղի ու գինի և լինում է այն, ինչ որ ան-
զիտակցարար կամենում եմ: —Վիճակիս ստո-
րութիւնն ու յիմարութիւնն այլ ես չեմ նկա-
տում:

Ժամի երեքին մօտ նա գալիս է: Ինձ հան-
դիպելիս բան չի խօսում: Ես ենթադրում եմ, որ
նա հաշտուել, մեղմացել է: Սկսում եմ, որ նա
ինքը պատճառ դարձաւ, որ ես հարկադրուած էի
նրա նախատինքներից: Նա նոյն խիստ և տանջ-
ուած դէմքով պատասխանում է, որ բացատրու-
թեան համար չի եկել, այլ երեխաներին տանեւ-
լու, որովհետեւ մենք մրամին ապրել չենք կարող: Սկսում
եմ խօսել, որ մեղաւորն ես չեմ, որ նա
ինձ համբերութիւնից հանեց: Նա խիստ և հան-
դիսաւոր կերպով նայում է ինձ և ասում: «Էլ մի
խօսիր. գու կը փօշմանես»: Ես պատասխանում
եմ, որ կոմէզիաներ տանել չեմ կարող: Այդ մի-

չոյին նա ինչ որ անհասկանալի բան է աղաղա-
կում և վազում իւր սենեակը:

Լաւում է բանալիի զանգոցը. նա փակւում է
սենեակում: Ես հոսում եմ գուրը, պատասխան
չկայ, բարկացած նուանում եմ. կէս ժամից յետոյ
եղիսաբէթը լալով գալիս է: —«Ի՞նչ է, բան է
պատհել:

—Մօրս ձայնը չի լաւում. զնում ենք: Ես
ամբողջ ուժովս շարժում եմ գուրը. կողափակը
լաւ չի կցուած և երկու վեղկերն էլ բացում
են: Ես մօտենում եմ մահճակալին: Նա ներքնա-
զգեատով և բարձր կօշիկներով անպատշաճ պար-
կած է մահճակալի վրայ: Սեղանի վրայ դրուած է
ափիօնի դատարկ սրուակը:

Ուշքի ենք բերում: Արցունքներ և վերջա-
պէս հաշտութիւն: Ո՛չ, հաշտութիւն չէ. իւրա-
քանչիւրի հոգու խորքում նոյն հին չարութիւնն
ու զայրոյթն է, ինչ որ պատճառել է այս կոխւն
և որը մենք իրար ենք վերագրում: Սակայն չէ որ
մի կերպ պէտք է վերջացնել այս բոլորը. և կեան-
քը շարունակում է հին կարգով: Այսպէս ահա,
սոյնանման և զետ սրանից էլ աւելի վատ կախւ-
ներ էին տեղի ունենում անընդհատ երբեմն շա-
բաթը միանգամ, երբեմն ամսէն միանգամ և եր-
բեմն էլ՝ ամենայն օր: Եւ միշտ մի և նոյնը: Մի
անգամ նոյն իսկ արտասահմանեան անցագիր
վերցը՝ կոխւը շարունակում էր երկու օր: Բայց
յետոյ տեղի ունեցան կիսաբացատրութիւններ,
կիսահաշտութիւն և ես մնացի:

XXI

Ահա այսպիսի յարաբերութեանց մէջն էինք,
երբ յայտնուեց այն մարդը: Այն, Մոսկվա ժամա-
նեց նաև և եկաւ ինձ մօտ:—նրա ազգը Տրուխա-
չեսկի էր: Առաւօտ էր: Ես ընդունեցի նրան: Մի-
ժամանակ մենք եղակի դէմքով էինք խօսում: Նա
փորձեց երբեմն եղակի և երբեմն էլ յոդնակի դէմ-
քով խօսելով՝ պահապանել խօսակցութեան եղակի
ձեր, բայց ևս սկսեցի յոդնակի ձեռվ և նա իսկոյն
հպատակուեց: Հէնց առաջին հայեացքից նա ինձ
սարսափելի դուր չեկաւ: Բայց, զարմանալի է. մի
ինչ որ տարօրինակ և ճակատագրական ոյժ հար-
կագրում էր ինձ չը վանել, չը հեռացնել, այլ ընդ-
հակառակն՝ մօտեցնել նրան: Ի՞նչը կարող էր
աւելի հեշտ լինել, քան խօսել նորա հետ սառն-
և մնաս բարեաւ ասել, առանց կնոջս հետ ծանօ-
թացնելու: Բայց ոչ, կաթէք թէ դիտմամբ ես
խօսացի նրա խաղի մասին և աւելացրի, որ ինձ
ասել են, իբր թէ նա թողել է ջութակը: Տրու-
խաչեակին պատասխանեց, որ ընդհակառակն՝ այժմս
առաջուանից շատ է նուագում: Յիշեց, որ առաջ
ևս էլ նուագում էի: Պատասխանեցի, որ ես թո-
ղել եմ, բայց կիսս լաւ նուագում է: Զարմանալի
քան: Իմ յարաբերութիւններս նրա հետ հէնց
առաջին օրում, մեր տեսութեան առաջին ժամում
այնպէս էին, ինչպէս կարող էին լինել միայն այն
բոլորից յետոյ, ինչ որ պատահեց: Մի ինչ որ
լարուած բան կար նրա հետ ունեցածս յարաբե-
րութեան մէջ: Ես նկատում էի նրա կամ իմ

ասած ամեն մի բառը, ամեն մի արտայայտու-
թիւնը և նրանց առանձին նշանակութիւն էի տալիս:
Ես ներկայացրի նրան կնոջս: Իսկոյն խօսակ-
ցութիւն սկսուեց երաժշտութեան մասին և նա
առաջարկեց իւր ծառայութիւնները—կնոջս հետ
նուագելու: Այս վերջին ժամանակներս՝ ինչպէս
միշտ, այնպէս էլ այս անդամ կինս շատ վայելուչ
և անհանգստացնելու չափ գեղեցիկ էր: Բայց երե-
ւոյթին նա էլ դուր եկաւ կնոջս: Բացի զրանից
կինս աւելի ուրախացաւ այն պատճառով, որ բախտ
կունենայ ջութակի ընկերակցութեամբ նուագելու,
մի բան, որ չափազանց սիրում էր, նոյն իսկ
այնքան, որ երբեմն վարձում էր թատրոնի ջու-
թակահարներից: Բայց ինձ տեսնելով, նա իսկոյն
հասկացաւ զգացածս, փոխեց իւր դէմքի արտա-
յայտութիւնը և սկսուեց փոխադարձ խաբէութեան
խաղը: Ես հաճելի կերպով ժպտում էի, ձեւացնե-
լով, որ այդ դուր է գալիս ինձ: Նա՝ նայելով
կնոջս՝ ինչպէս որ բոլոր անբարոյական մարդկէկ
նայում են գեղեցիկ կանանց, աշխատում էր ցոյց
տալ, որ իրն հետաքրքրում է միմիայն խօսակ-
ցութեան առարկան, այսինքն այն, ինչ որ նրան
բոլորովին չէր հետաքրքրում: Կինս էլ աշխատում
էր անտարբեր երեալ, բայց իմ նրան ծանօթ
խանդուութեան ժպիտն ու պարոնի վաւաշոտ
հայեացքը զրդում էին նրան: Ես նկատեցի, որ
հէնց առաջին տեսակցութիւնից նրա աչքերն ա-
ռանձնակի փալեցին և երեի խանդուութեանս
պատճառով նրանց մէջ գոյացաւ ելէքտրական հո-
սանք, որն առաջ էր բերում հայեացքների, ար-

տայայտութեան և ժալիտների նոյնութիւն։ Կարսմրում էր կինս, կարմրում էր և նա։ Ժալտում էր կինս, Ժալտում էր և նա։ Խօսացին երաժշտութեան, Փարիզի և ամեն տեսակ գատարկ բաների մասին։ Նա վեր կացաւ գնալու և զիխարկը ցընցող ազդրին կպցնելով, կանգնած էր, երբեմն նայելով ինձ և երբեմն նրան, կարծէք սպառելով, թէ մենք ինչ կանենք։ Ես այդ ըստէն առանձնապէս յիշում եմ, որովհետեւ այդ միջոցին ես կարող էի չը հրաւիրել նրան և ոչինչ չէր պատահիլ։ Բայց ես նայեցի նրան, նայեցի կնոջ։ «Բոլորովին մի կարծիր, որ խանգոտ եմ գէպի քեզ, — կամ վախում եմ քեզանից»։ մտքումս ասացի և պարոնին հրաւիրեցի մի երեկոյ բերել իւր ջութակն ու նուագել կնոջս հետ։ Կինս զարմացած նայեց ինձ, կարմրեց և կարծէք վախենալով սկսեց մերժել, յայտնելով, որ ինքը բաւականաշափ լաւ չի նուագում։ Նրա այդ մերժումն ինձ աւելի զարպացրեց և ես աւելի էի պնդում։ Յիշում եմ այն տարօրինակ զգացմունքը, որով նայում էի նրա ծոծրակին, սպիտակ վզին, որն աչքի էր ընկնում երկու կողմ սանրուած ու մազերի միջից, երբ նա թոշկոտող, թոշնային քայլուածքով դուրս էր զնում մեր տնից։ Ես չէի կարող չը խոստովանուել, որ այդ մարդու ներկայութիւնն ինձ տանջում էր։ Ինձանից է կախուած սրան տեսնել կամ երբէք չը տեսնելը, մտածում էի ես։ Սակայն անել այդպէս, նշանակում էր խոստովանուել, որ նրանից վախում էի։ Ոչ, ես նրանից չեմ վախենում։ Այդ չափազանց ստորա-

ցուցիչ կլինէր։ ասում էի ինքս ինձ։ Եւ հէնց այդաեղ, նախասենեակում, գիտենալով, որ կինս լսում է ինձ, ես համողեցի նրան, որ նոյն օրն երեկոյեան մեզ մօտ գայ իւր ջութակով։ Նա խոստացաւ և գնաց։

Երեկոյեան նա եկաւ ջութակով և երկուսով նուագեցին։ Սակայն խաղն երկար չէր յաջողւում։ չը կային հարկաւոր նօտաներ, իսկ եղածներն էլ կինս չէր կարողանում առանց պատրաստուելու նուագել։

Երաժշտութիւն ես շատ էի սիրում և համակիր էի նրանց խաղին։ սարքում էի գրակալ և դարձնում երեսներ։ Նրանք մի քանի բան նուագեցին, ինչ որ երգեր առանց բառերի և Մօցարտի Սօնատան։ Նա շատ սիրուն էր նուագում։ Նրա նուագածութիւնը վերին աստիճանի եղանակաւոր էր։ Բացի գրանից նա ունէր նուրբ և ազնիւ ձաշակ, որը բոլորովին յատուկ չէր նրա բնաւորութեան։ Նուագելում նա կնոջիցս անկասկած շատ ուժեղ էր, օգնում էր նրան և մի և ոյն ժամանակ քաղաքավարութեամբ գովում նրա խաղը։ Նա շատ լաւ էր պահում իրան։ Կինս երեսում էր միմիայն երաժշտութեամբ հետաքրքրուած և շատ պարզ ու բնական էր։ Ես էլ, թէ ինձ ձեացնում էի երաժշտութեամբ հետաքրքրուած, բայց այնու ամենայնիւ ամբողջ երեկոյ խանգոտութեամբ էի տանջուում։

Հէնց առաջին վայրկեանից, երբ նրա և կնոջս հայեացքներն իրար հանդիպեցին, ես տեսայ, որ նրանց երկուսի մէջ էլ նոտած գաղանը՝ հակառակ

գիրքի և աշխարհիկ բոլոր պայմանների՝ հարցրեց «կարելի է»։ և պատասխանեց. «Օ՛, ի հարկէ, շատ ես նկատեցի, որ նա երբէք չէր սպասում դժոնել կնոջս՝ Մոսկվայի տիկնոջ մէջ այդքան դրաւչութիւն և այդ պատճառու շատ ուրախ էր, որովհետեւ կնոջս համաձայնելու մասին ոչ մի կասկած չունէր։ Ամբողջ հարցը նրանումն էր, որ անտառնելի ամուսինը չը խանդարէր։ Եթէ ինքս մաքուր լինէի, այդ չէի հասկանալ, բայց ես էլ ամուսնութիւնից առաջ մեծամասնութեան նման էի մտածում կանանց մասին և այդ պատճառով կարողանում էի կարդալ նրա մտքինը գրածի նման։ Ես գլխաւորապէս նրանից էի տանջւում, որ կինս բացի մշտական զայրոյթից ուրիշ ոչ մի զգացմունք չէր տածում դէպի ինձ և այդ ընդհատում էր միմիայն սովորական զգայականութեանց ժամանակ, իսկ այդ մարդն իւր էլէգան (չքեղ) արտաքինով, նորութեամբ, գլխաւորապէս երաժշտական անժխտելի մեծ տաղանդով և այն մերձաւորութեամբ, որն հարկաւոր էր միասին նուագելիս, այն ազգեցութեամբ, որ երաժշտութիւննունենում է զգայուն բաւորութիւնների վերայ, մանաւանդ ջութակով, նա ոչ թէ միայն պէտք է դուր գար կնոջս, այլ առանց ամենափոքր կասկածի՝ պէտք է յաղթէր, ընկճէր, ոլորէր և թոկ շինէր նրանից. անէր նրան այն ամենը, ինչ որ կը կամնար։ Ես չէի կարող չը տեսնել այդ և սոսկալի տանջւում էի։ Սակայն չը նայեած այս բոլորին, կամ գուցէ թէ հէնց այդ պատճառով, մի ինչ որ ոյժ ստիպում էր ինձ՝ կամքիս հակառակ-

քաղաքավարի և փաղաքական լինել։ Զը գիտեմ այդ կնոջս համար էր, նրան համար, որ ցոյց տամ, թէ նրանից չեմ վախում, թէ ինձ համար, որ ինձ խարել կարողանայի. չը գիտեմ, միայն թէ հէնց սկզբից նրա հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ չը կարողացայ պարզ լինել։

Դրանից երեք թէ չորս օր յետոյ ցուցահանդիսից տուն եմ գառնում, մտնում նախասենեակ և զգում մի ինչ որ ծանր բան. քարի նման ընկնում ծանրանում է սրտիս և չեմ կարողանում հայւու տալ, թէ այդ ինչ բան է։ Այդ նրանից էր, որ նախասենեակով անցնելիս տեսայ մի իր, որ նրան էր յիշեցնում։ Առանձնասենեակում միայն ես կարողացայ ինձ հաշիւ տալ և կրկին նախամենեակ վերադարձայ տեսած ստուգելու համար։ Սիսարուած չէի, գա նրա վերաբկուն էր, (վարապան)։ Անշուշտ գիտեք այդ նորաձև վերնազգեստը, (ինչ որ նրան էր վերաբերում, ես անսովոր ուշագրութեամբ նկատում էի, առանց պատճառը փնտուելու)։ Հարցնում եմ. ուղիղ այդպէս է. այստեղ է նա։ Դահլիճ եմ գնում ոչ թէ հիւրասենեակով, այլ մանուկների դասարանի միջով։ Եղիսաբէթը նստած կարդում է, իսկ դայեակն ու փոքր երեխան պատահնում են մի ինչ որ խիփիկ Դահլիճ տանող գուոր ծածկած է. բայց լսում եմ հաւասարաչափ արպէջիօ և երկուսի ձայնը։ Ականջ եմ գնում, բայց ջոկել չեմ կարողանում։

Երեսում է, որ գաշնամուրի ձայները նրանց խօսքերը, գուցէ և ... համբոյըները ծածկելու համար են։ Տէր Աստուած, ինչ կատարուեց իմ մէջ։

Երբ յիշում եմ այն գաղանի մասին, որն ապրում էր իմ մէջ այդ ժամանակի, ուզզակի սարսափում եմ: Սիրոս յանկարծ սխմուեց, կանգ առաւ և ապա սկսեց բաբախել մուրճի նման:

Գլխաւոր զգացմունքս՝ ինչպէս և բոլոր բարկութեանց ժամանակ, խղճահարութիւն էր դէպի ինձ: Երեխաների, դայեակի առաջ... մտածում էի ես: Այդ միջոցին պէտք է որ սարսափելի լինէի, որովհետև Եղիսաբէթն ինձ տարօրինակ հայեացքով էր նայում: Ի՞նչ անեմ. հարց տուի ինձ: «Մանեմ: Չեմ կարող, ես ո՛ գիտէ, թէ ինչ կանեմ, բայց և չեմ կարող հեռանալ: Դայեակն ինձ այնպէս էր նայում, որ կարծէք հասկանում էր դրութիւնս: Սակայն չի կարելի չը մըտնել, ասացի ինձ և արագութեամբ բացի դուռը: Նա նստած էր գաշնամուրի առաջ և նուագում էր այդ արպէջիօներն դէպի վեր ճկուած մեծ և սպիտակ մատներով: Կինս կանգնած էր գաշնամուրի անկիւնում և նայում բաց նոտաներին: Նա առաջ տեսաւ կամ լսեց և նայեց ինձ: Արգեօք վախսցաւ և կեղծեց, թէ խսկապէս չը վախսեցաւ, չը գիտեմ: Բայց չը ցնցուեց և տեղից չը շարժուեց, այլ կարմըեց և այն էլ յետոյ միայն:

—Ո՞րքան ուրախ եմ, որ դու եկար. մենք չենք վճռել, թէ կիւրակէ ինչ նուագենք.—ասաց կինս այնպիսի եղանակով, որով չէր խօսել, և թէ մենք միայնակ լինէինք: Այդ և այն հանգամանքը, որ նա ասաց մենք՝ նրա և իրեն համար, վրդովեց ինձ: Ես լուռ բարեեցի նրան:

Նա սղմեց ձեռքս և խսկոյն սկսեց ժպտալով

(որ ինձ ծաղր թուաց) բացատրել, որ բերել է նօտաներ կիւրակէ օրուան համար պատրաստունլու, բայց իրենք համաձայնիլ չեն կարողանում, թէ ինչ նուագեն. աւելի դժուարին կլասիքական մի բան, այն է Բէթհովենի Սօնատան ջութակով, թէ մանրիկ բաներ: Այս բոլորն այնքան բնական էր ու պարզ, որ կոռու պատճառ գտնելու բան չէր մնում, բայց ես մի և նոյն ժամանակ հաւատացած էի, որ բոլորը սուտ է և թէ նրանք խօսք են կապել, թէ ինձ ինչպէս խարեն:

Խանդուս մարդկանց ամենատանջող յարաբերութիւններից զլիաւորներն են (իսկ մեր հասարակական կեանքում բոլորն էլ խանդուս են) աշխարհիկ կեանքի այն որոշ պայմանները, որոնց ժամանակ թոյլ է տրւում կնոջ և մարդու ամենամեծ և ամենավանդաւոր մերձակայութիւնն ծաղրի առարկայ կը դառնանք, եթէ արգելենք այդ մերձակայութիւնը պարերեկոյթներին, ինչոյքներում, բժշկի և հիւանդ կնոջ մէջ, գեղարուեստներու և երաժշտութեամբ պարապելիս: Դրանց համար հարկաւոր է որոշ մօտկութիւն, որը դատապարտելու ոչինչ չունի և միայն յիմար ու խանդուս ամուսինը կարող է այսպիսի դէպերում ոչ ցանկալի բան տեսնել:

Այն ինչ, ամենքը զիտեն, որ հէնց այդպիսի պարապմունքների, մասնաւանդ երաժշտութեան շնորհիւն է տեղի ունենում չութեանց մեծ մասը մեր հասարակութեան մէջ: Ես երեխ շփոթեցի նրանց այն վրդովմամբ, որն արտայայտում էր իմ մէջ. ես երկար ոչինչ ասել չը կարողացայ:

Նմանում էի չուռ տուած շի, որից՝ շատ լցուած վինելու պատճառով՝ ջուր չի թափում: Ես ուղում էի խայտառակել, դուրս վանդել նրան, բայց զգում էի, որ պարտաւոր եմ սիրալիր և քաղաքավարի լինել նրա հետ: Հէնց այդպէս էլ արի: Այնպիսի տեսք ընդունեցի, որ իրը թէ հաւանութիւն եմ տալիս այդ բոլորին և այդ չնորհիւ այն տարօրինակ զգացման, որն ստիպեց ինձ նոյնքան քաղաքավարի լինել և քաղյր վարուել, որքան տանջող էր նրա ներկայութիւնն ինձ համար: Ասացի, որ ես նրա ճաշակին եմ թողնում ընտրութեւնն և նոյնն էլ կնոջս խորհուրդ տուի: Նա մնաց կրկին որքան որ պէաք էր յանկարծ և վախեցած դէմքով ներս մտնելովս ու լսելովս գործած անհածոյ տպաւորութիւնն հարթելու համար և գնաց կեղծելով, իրը թէ վճռեցին թէ ինչ նուագն կիւրակէ օրը: Իսկ ես միանդամայն համոզուած էի, որ նրանց զբաղեցնող խնդրի համեմատութեամբ՝ այն հարցը, թէ ինչ նուագն, երկրորդական բան էր և ոչ մի նշանակութիւն չունէր նրանց համար:

Ես առանձին քաղաքավարութեամբ ճանապարհ որի նրան մինչև նախասենեակ. (ինչպէս ճանապարհ չը դնել մի մարդու, որն եկել է մի ամբողջ ընտանիքի անդորրութիւնն ու բաղդաւորութիւնը ոչնչացնելու դիտաւորութեամբ): Ես սեղմեցի սպիտակ ու փափուկ ձեռքն առանձին քնքչութեամբ:

XXII

Այդ օրն ամբողջ ես չը խօսացի կնոջս հետ. չէի կարողանում: Նրա ներկայութիւնն այնպիսի ատելութեամբ էր լցում ինձ դէպ իրեն, որ ես ինձանից վախենում էի: Երեխաների ներկայութեամբ ճաշի ժամանակ նա հարցրեց, թէ ես երբ եմ մեկնում: Հետեւեալ շաբաթ գաւառ պէտք է գնայի նատաշրջանին մասնակցելու: Ասացի թէ երբը ձանապարհի համար ոչինչ պատրաստել պէտք չէ.—հարցրեց նա: Ես ոչինչ չը պատասխանեցի: լուռ նատայ մինչև վերջն ու լուռ էլ վերկացայ ու մատայ առանձնասենեակի: Վերջին ժամանակները նա երբէք սենեակս չէր մտնում, մանաւանդ այդ ժամին: Պառկած եմ առանձնասենեակում և զայրանում: Յանկարծ լուռ եմ ծանօթ քայլուածք: Գլխիս մէջ սարսափելի և կեղտուս միտք է ծագում. մտածում եմ, որ նա Ուրիայի կնոջ նման կամենում է ծածկել իւր կատարած մեղքը և հէնց այդ բանի համար այսպիսի անսովոր ժամին է ինձ մօտ գալիս: Միթէ իրաւ ինձ մօտ է գալիս.—մտածում էի ես, լսելով նրա մօտեցող քայլերի ձայնը: Եթէ ինձ մօտ է գալիս, ուրեմն սխալուած չմի:—Եւ հոգուս խորքում անսակելի ատելութիւն է փոթորկում դէպի նա: Քայլերն հետզետէ մօտենում են: Միթէ մօտով չի անցնի՝ դէպի դահլիճ: Ո՛չ, դուռը ճռաց և նա՝ բարձրահասակ ու գեղեցիկ երեաց դռան մէջ, իսկ դէմքի վրայ և աչքերի մէջ նկարուած էր երկիւղ և պա-

դատանք, որն աշխատում էր ծածկել ինձանից, բայց տեսնում և հասկանում էի նշանակութիւնը: Այնքան երկար էի շունչս պահել, որ քիչ մնաց շնչառառ լինէի. և շարունակելով դիտել նրան, իսկոյն ծխախոռ վերցրի և սկսայ ծխել:

—Այդ ի՞նչ բան է, կը գամ քեզ մօտ նըստելու, իսկ զու ծխում ես: Նա նստեց ինձ մօտ՝ գահաւորակի վրայ և յենուեց կողքիս: Ես քաշուեցի, որ նրան չը դիտչեմ:

—Տեսնում եմ, դժգոհ ես, որ ես կիւրակէ օրն ուղում եմ նուռագել. —ասաց նա:

—Յոլորովին դժգոհ չեմ... ասացի ես:

—Միթէ չեմ տեսնում:

—Որ այդպէս է, չորհաւորում եմ տեսնելուդ համար:

Իսկ ես ոչինչ չեմ տեսնում՝ բացի նրանից, որ դու նազկթողի նման ես քեզ պահում... քեզ ամեն մի ստորութիւն հաճելի է, իսկ ինձ սարսափելի:

—Եթէ դու ուղում ես կառապանի նման հայհոյել, ես կիրթամ:

—Գնա, միայն իմացիր, որ եթէ քեզ համար թանկ չէ ընտանիքի պատիւը, դուն էլ ինձ համար թանկ չես. (գրողը քեզ հետ) բայց ընտանիքի պատիւը....

—Ի՞նչ, ի՞նչ:

—Հեռացիր, ի սէր Աստուծոյ, հեռացիր:

—Արդեօք նա ձեւացնում էր, որ չի հասկանում, չը դիտեմ, բայց վիրաւորուեց, բարկացաւ

և չդնաց, այլ կանգնեց սենեակի մէջ տեղում:

—Դու բոլորովին անտանելի ևս դարձել. —սկսեց նա:

—Դա մի այնպիսի բնաւորութիւն է, որի հետ հրեշտակն էլ չի կարող ապրել. —և ինչպէս միշտ՝ այս անգամն էլ ցանկանալով որքան կարելի է խոր խոցել ինձ, նա լիշնցրեց քրոջս հետ ինձ թոյլ տուած վարմունքս: (Դա մի գէպը էր, երբ ես համբերութիւնից զուրս եկած, հաղար ու մի կոսպիտ բանն ինձ տանջում է և հէնց դրանով խոցեց ինձ:

—Սրանից յետոյ ի՞նչ էլ անեք, էլ ինձ ոչինչ չի զարմացնիլ. —ասաց նա:

«Այն, վիրաւորել, ստորացնել, խայտառակել և հէնց ինձ մեղաւոր համարել»: ասացի ինքս ինձ և այնպիսի զայրոյթով լցուեցի դէպի նա, որի նմանն երբէք չէի զգացել:

Այդ առաջին անգամն էր, որ ես ցանկութիւն զգացի ֆիզիքապէս արտայայտելու բարկութիւնս: Վեր թռայ և դիմեցի դէպի նա, բայց յիշում եմ, որ վեր թռչելու վայրկեանին զիտակցեցի չարութիւնս և հարց տուի ինձ, արդեօք լաւ բան է այդ զգացմունքիս անձնատուր լինելը և իսկոյն պատասխանեցի, որ լաւ է այդ, որ դա կը վախեցնի նրան և փոխանակ այդ զայրոյթին դիմագրելու, ես աւելի բորբոքեցի իմ մէջ և սկսայ ուրախանալ, որ նա բորբոքում է:

—Կորիր, թէ չէ կը սպանեմ. —զոռացի ես և մօտենալով բռնկցի թեփց: Ես՝ այդ ասելիս՝ զիտակցաբար ուժեղացնում էի ձայնիս չարութեան

ելեհջը: Եւ կրիի սարսափելի էի, որովհետեւ նա այնպէս խեղճացաւ, որ նոյն իսկ հսուանալու ոյժ չունէր և միայն արտասանեց. «Բարսեղ, ինչ բանի ես, քեզ ինչ է պատահել:

— Հետացիր, զոռացի ես աւելի բարձրաձայն, որու միայն կարող ես ինձ կատաղութեան հասցնել: Ես ինձ համար չեմ երաշխաւորում:

Ըսթացք տալով կատաղութեանս, ևս արքենում էի նրանով և կամենում էի այնպիսի արտասովոր բան աննել, որ իմ կատաղութեան ամենաբարձր աստիճանը ցոյց տալ կարողանար: Ես սոսկալի ցանկանում էի ծեծել, սպանել նրան, բայց դիտէի, որ այդ չի կարելի, և ահա որպէս զի այնուամենայնիւ ընթացք տայի կատաղութեանս, վերցրի մամուլը սեղանից, կորիր, զոռացի կրկն և շպրտեցի մամուլը յատակին՝ նրա մօտով: Ես շատ լաւ նշան էի զրել նրա մօտով նեանոււ: Դրանից յետոյ նա գուրս զնաց սենեակից և կանգնեց դռան մէջ: Եւ հէնց իսկոյն, քանի որ նա տեսնում էր, (իսկ ես այդ անում էի, որ նա տեսնէր), սկսայ վերցնել սեղանից աշտանակ, թանաքաման և այլ իրերն ու թափել յատակին՝ շարունակելով գոռալ. «Գնա, կորիր, ես ինձ համար չեմ երաշխաւորում»: Նա գնաց և ես իսկոյն դադարեցի: Մի ժամից յետոյ դայեակն եկաւ մօտ և յայտնեց, որ կնոջս հետ իստերիքա է պատահել ես գնացի մօտը: Նա լալիս էր, ծիծաղում, ոչինչ չէր կարողանում խօսել և ամբողջ մարմնով ցնցւում էր: Նա չէր կեղծում, այլ իրօք հիւանդ էր:

Առաւօտեան դէմ նա հանդստացաւ և մենք հաշտուեցինք այն զգացմունքի ազդեցութեամբ, որը մենք սէր էինք անուանում:

Առաւօտեան, երբ հաշտութիւնից յետոյ ես խոստովանուեցի, որ կասկածում էի նրա և Տրուխաչնեկու մասին, նա բոլորովին չը շփոթուեց և ծիծաղեց ամենաբնական կերպով: Այդքան տարօրինակ էր թւում նրան այդպիսի մարդով յափշտակուիլը:

— Միթէ կանոնաւոր կինը կարող է որևէ բան ասածել զէպի այդպիսի մի տղամարդ, բացի երաժշտութեան պատճառած բաւականութիւնից: Եթէ կամենում ես, նոյն իսկ պատրաստ եմ երբէք չը տեսնել նրան:

Նոյն իսկ կիւրակէ օրուայ համար՝ թէն բոլորին հրաւիրել ես, բայց զրիր, որ ես տկարացայ և վերջացաւ: Մի բան միայն վասէ, որ ո և է մէկը, կամ հէնց նա, կարող է մտածել, որ ինքը վտանգաւոր է: Իսկ ես աւելի քան հպարտ եմ և չեմ կարող թոյլ տալ, որ այդպիսի բան մտածեն:

Եւ հօ չէր ստում, նա հաւատում էր իւրասաներին և այդ խօսքերով յոյս ունէր ատելութիւն զուրս կոչել իւր մէջ զէպի նա և այդ բանով պաշտպանուել նրանից, բայց այդ չը յաջողուեց: Ամեն ինչ ուղղուած էր նրա զէմ և մանաւանդ այդ անիծեալ երաժշտութիւնը: Այդպէս էլ վերջացաւ բոլորը. կիւրակէ հիւրերն հաւաքուեցին և նրանք նուաղեցին:

XXIII

—կարծեմ աւելորդ է ասել, որ ևս չափա-
ղանց անափառ էի. ևթէ մեր սովորական կեան-
քում մնափառ չը լինինք, չը որ ապրելու բան չի
մնալ: Եւ ահա կիւրակէ ևս առանձին ձաշակում
պատրաստութիւն տեսայ ձաշի և երաժշտական
երեկոյթի համար: ձաշի համար ևս ինքս զնեցի
ինչ որ պէտք էր և հրաւիրեցի հիւրերին:

Հիւրերս հաւաքռուեցան ժամի վեցին մօտ և
նա էլ եկաւ ֆրակով ու ազամանդնայ վատ ձեր
կոճակներով: Նա իրան պահում էր ազատ, բոլոր
հարցերին պատասխանում էր հասկանալու և հա-
մաձայնութեան ժպիտով. Գիտէք, այն առանձին
արտայայտութեամբ, որով կարծէր ուզում են ցոյց
տալ, որ ձեր բոլոր ասածներն ու արածներն հենց
իրենց սպասածն է: Այն բոլորն, ինչ որ նրա մէջ
անկարգ էր, ևս այժմս նկատում էի առանձին
գոհունակութեամբ, որովհետեւ այդ ամսնը պէտք է
հանդստացնէր ինձ և ցոյց տար, որ կնոջու համար
նա այնքան ցածր աստիճանին էր կանգնած, ինչ-
քան, որպէս ինքն էր ասում, երբէք կիսս չերլ
կարող ստորանալ: Ես այժմս խանդոտութիւն թոյց
չը տուի ինձ, նախ որ այդ տանջանքով շատ էի
տանջուել և ինձ հանգստութիւն էր հարկաւոր և
երկրորդ՝ ուզում էի հաւատալ կնոջս հաւաստիա-
ցումներին և հաւատում էի: Սակայն չը նայիած,
որ չի խանդուում, այնուամենայնիւ ևս թէ ձաշի
ժամանակ և թէ երեկոյի կիսին բնական չի նրան-

ցից ոչ մինի հետ և մինչև երաժշտութեան սկիզբը
հետեւում էի երկուսի շարժումներին ու հայեացը-
ներին: ձաշը սովորական ձաշերի պէս էր՝ տիուր-
ու կեղծ: Երաժշտութիւնը սկսուեց բաւականին
վաղ: Ո՞հ, որքան լաւ եմ յիշում ես այդ երեկոյ-
թի մանրամասնութիւնները. յիշում եմ, թէ նա
ջութակին ինչպէս բնրեց, բացեց արկղը, վերցրեց
վրայից մի տիկնոջ կարած ծածկոցը, հանեց ջու-
թակը և սկսեց լարել: Յիշում եմ, թէ ինչպէս
նստեց կիսս կեղծ անտարբերութեամբ, որի տակ
ծածկուած էր մեծ անվատահութիւն դէպի իւր
գիտութիւնը. — կեղծ արտայայտութեամբ նաև սկսեց
գաշնամուրի մօտ և սկսուեց սովորական (1a) լա-
նոտան գաշնամուրի վրայ, ջութակ լարելն ու նո-
տաներ տեղաւորելը: Յետոյ յիշում եմ, թէ ինչ-
պէս իրար նայեցին, դիտեցին նստողներին, ինչ
որ բան ասացին մէկմէկու և սկսուեց: Նա վերց-
րեց ասացին ակորդներ: Նրա գէմքը լուրջ, խիստ
և համակրելի տեսք ընդունեց և ականջ դնելով
իւր ձայներին, զզոյց մատներով զարկեց լարերին:
Գաշնամուրը պատասխանեց նրան: Եւ սկսուեց...:

Պօղոնիշնը կանգ առաւ և մի քանի անգամ
սովորական ձայն հանեց: Ուղեց խօսքը շարունա-
կել, բայց քթով գնչեց և նորից լսեց:

— Նոքա նուազում էին Բէթհովէնի կրեյցերի
Սօնատը. — շարունակեց նա: — Դուք գիտէք նրա
առաջին յորդորակը, զիտէք, գոչեց նա. — ու... ու...
ու... Սոսկալի բան է այդ Սօնատը, մանաւանդ
այդ մասը: Ընդհանրապէս սարսափելի բան է
երաժշտութիւնը: Այդ ինչ բան է: Ես չեմ հաս-

կանում: Ի՞նչ է երաժշտութիւնը: Ի՞նչ է նա: Ասում են, որ երաժշտութիւնն աղջում է հոգու վրայ վսեմ կերպով. դատարկ խօսք է, առւտ է: Նա աղջում է, սարսափելի աղջում, բայց ոչ ոգին վսեմացնող կերպով, այդ ես գոնէ կասեմ իմ վերաբերութեամբ: Նա ոչ թէ վսեմացնող, այլ սոսրացնող կերպով է աղջում մարդուս հոգու վրայ և զրգում նրան: Ի՞նչպէս բացատրեմ ձեզ: Երաժշտութիւնն հարկադրում է մոռանալ ինձ, մոռանալ իսկական դրութիւնս, նա ինձ փոխադրում է մի ինչ որ անսովոր դրութեան. Երաժշտութեան աղջեցութեան ներքոյ ինձ թւում է, որ զգում եմ այն, ինչ որ չեմ զգում, հասկանում, ինչ որ չեմ հասկանում և կարող եմ անել այն, ինչ որ իսկապէս անել չեմ կարող: Ես այդ նրանով եմ բացատրում, որ երաժշտութիւնն աղջում է յուրանջելու և ծիծաղի նման: Քունս չի տանում, բայց յորանջում եմ նայելով յորանջողներին: ծիծաղելու ոչինչ չկայ, բայց ծիծաղում եմ, լսելով ծիծաղի ձայնը: Երաժշտութիւնն յանկարծ և անմիջապէս փոխադրում է ինձ այնպիսի մի հոգեկան դրութեան, որի մէջ գանուել է հեղինակն այդ նոյն երաժշտութիւն զրելիս: Ես հոգով միանում եմ նրա հետ և մի դրութիւնից փոխադրում միւսը. բայց թէ ինչու եմ այդ անում, չը գիտեմ: Սակայն չէ որ Կրէցցերի Սօնատի հեղինակը զիտէր, թէ ինչու համար էր որոշ դրութեան մէջ գտնուում. այդ դրութիւնը նրան հասցըեց որոշ վարմունքի և այդ պատճառով այդ կացութիւնը նրա համար միտք ունէր, իսկ ինձ համար ոչ մի

միտք չունի: Այդ պատճառով երաժշտութիւնը միմիայն գրգում է, չի վերջացնում: Օրինակ՝ կը նուազեն (զինուուրական) սաղմական քայլերգը, զինուորները կանցնեն այդ քայլերգով և երաժշտութիւնը վերջացաւ. կը նուազեն պարերգը, ևս կը պարեմ և երաժշտութիւնը կը վերջանայ, իսկ այն միմիայն գրգումն է, իսկ ինչ որ պէտք է անեք այդ գրգումն ժամանակ՝ չկայ: Ահա այդ պատճառով է, որ երաժշտութիւնն այդքան սոսկալի, այդչափ սարսափելի է ներգործում: Զինաստանում երաժշտութիւնը պիտական գործ է: Եւ այդ այդպէս էլ պէտք է լինի: Միթէ կարելի է թոյլատրել, որ ամեն մի ցանկացնող հիպնոսացնի մէկին կամ շատերին և յետոյ իրեն ուզածն անի նրանց հետ: Եւ որ գլխաւորն է, այդ հիպնոսացնողը լինի հէնց առաջին հանուխող անրարոյական մարդը:

Իսկ այդ ում ձեւին էլ լինի, սարսափելի միջոց է: Օրինակ հէնց այդ կրէցցերի Սօնատը, սաւածին յորդորակը, միթէ կարելի է նուազել այն թվականը տիկինների առաջ: Նուազել այդ յորդորակը, ծափանարել, ատա պաղպաղակ ուտել և խօսել վերջին բամբասանքների մասին: Այդ բաները կարելի է նուազել որոշ հանգիսաւոր և նշանաւոր հանգամանքներում և այն ժամանակ, երբ պէտք է երաժշտութեան համապատասխան մի գործ կատարել: Նուազել և անել այն, ինչ բանի որ երաժշտակթիւնը արամադրեց: Ապա թէ նչ, տեղին և ժամանակին անհամապատասխան էներգիա և ոչնչով չարտայայտուած զգացմունք

առաջ բերելը չի կարող կործանիչ ազդեցութիւն չունենալ: Օրինակ ինձ վրայ այդ բանը սոսկալի ազդեց: Ինձ համար պարզուցին կարծես բոլորովին նոր զգացմունքներ և նոր հնարաւորութիւններ, որոնց մասին մինչ այդ ես ոչինչ չը դիտէի: Այ ինչպէս, բոլորովին այնպէս չէ, ինչպէս որ ես էի կարծում ու ապրում, այլ ահա այսպէս, զգում էի ես հոգոյս խորքում: Թէ ինչ էր այդ նորը, որը ես իմացայ, ինձ հաշիւ տալ չէի կարողանում, միայն թէ այդ նոր զրութեան զգացմունքը շատ ուրախացնող էր: Մինոյն անձննք, նրանց թւում կին և նա՝ բոլորովին այլ կերպ էին նայում ինձ:

Այդ յորդորակից յետոյ նրանք նուագեցին գեղեցիկ և սովորական անգանտը (ծանր մասը) անպիտան երեխներով և միանդամայն թոյլ վերջանուադը: Յետոյ՝ հիւրերի ինդրանօք նուագեցին էրնասի ողբը, և այլ բաներ: Այդ բոլորը լաւ էր, բայց ինձ վերայ առաջնի թողած տպաւորութեան 0,01 ի չափ ներգործութիւն չունեցաւ: Այս բոլորն արդէն այն տպաւորութեան ֆօնի վրայ էր կատարուում, ինչ որ առաջնն էր դորձել:

Ես թեթև և ուրախ էի ամբողջ երեկոյ. իսկ կոչս երբէք այդքան լաւ չէր տեսել: Այդ վայրուն աչքերն, այդ խստութիւնն ու արտայայտութեան լրջութիւնը նուագած միջոցին և նրա հաւաքում մի տեսակ խեղճ և երանելի—դրութիւնը վերջացնելուց յետոյ: Ես այդ բոլորը տեսնում էի, բայց ուրիշ ոչ մի նշանակութիւն չէի տալիս, բացի նրանից, որ նա նոյն բանն էր զգում, ինչ որ—ես, որ նրա համար էլ յայտնուեցին, յիշողութեան մէջ

արթնացան նոր՝ չը վործած զգացմունքներ: Երեւելոյթը վերջացաւ անփորձ և ամենքն էլ ցրուեցան:

Գիտենալով, որ ես երկու օրից յետոյ պէտք է մեկնէի նստաշրջանին մասնակցելու, Տրուխաչնելին մնաս բարեւափ ժամանակ ասաց, որ յոյս չունի, թէ իւր երկրորդ գարձին կը կրկնի այս երեկոյի զուարձութիւնը: Դրանից ես կարող էի եղարկացնել, որ նա հնարաւոր չի համարում առանց ինձ մեզ մօտ զնալ զալը և այդ համելի էր ինձ:

Բանից զուրս էր գալիս, որ որովհետեւ ես չէի կարող վերադառնալ մինչև նրա մեկնիլը, ուրին նրա հետ այլ ես չէինք տեսնուելու:

Ես միայն այստեղ առաջին անգամ առանձին բաւականութեամբ սկզբնեցի նրա ձևոքն ու չորհակալութիւն յայտնեցի մեզ պատճառած բաւականութեան համար:

Նա կոչս էլ նոյնպէս վերջնական մնաս բարեւաւ ասաց: Նրանց մնաս բարեւաւ ինձ ամենաբական և վայելուչ բան թուաց: Ամեն բան հրաշալի էր: Մենք երկուս էլ՝ թէ ես և թէ կինս շատ գոհ էինք երեկոյթով:

XXIV

Երկու օր յետոյ՝ կոչս մնաս բարեւաւ տնելով՝ ես գնացի գաւառ ամենալաւ և խաղաղ տրամադրութեան ներքոյ:

Գաւառումն էլ միշտ բազմաթիւ գործեր էին լինում, բոլորովին առանձին աշխարհ: Երկու օր՝ տասնական ժամ ես անց էի կացնում ատեանում:

Հետեւեալ օրն ինձ հէնց ատեանում կնոջիցս նա-
մակ բերին: Ես հէնց այդտեղ կարգացի այն: Նա
դրում էր մանուկինքի, քեռու, աղախնի, զնած-
բաների մասին և ի միջի այլոց հազորդում էր
իրքը մի ամենասովորական բանի մասին, որ Տրու-
խաչեսկին եղել էր մեղ մօտ, բերել էր ասած նօ-
տաներն ու խօստացել կրկին նուագել, բայց ինքը
մերժել էր:

Ես չէի յիշում, որ նա նօտաներ խօստացած
լինէր. ինձ թւում էր, որ նա այն երեկոյին վերջ-
նականապէս հրամեցտ տուաւ և այդ հանդամանքն
անախորդ կերպով ազդեց ինձ: Բայց այնքան անե-
լու զործ կար ձևսիս, որ մտածելու ժամանակ
չունէի և միմիայն երեկոյեան տուն դառնալուց
յետոյ՝ նամակը նորից կարգացի:

Բացի այն, որ Տրուխաչեսկին իմ բացակա-
յութեանս ժամանակ կրկին էր եղել մեղ մօտ.
Նամակի ամբողջ ձևն ինձ երեաց քաշքուած:
Խանդոտութեան կատաղի գազանը նորից մանչաց
իւր որջում և ուղում էր գուրս ցատկել, բայց ես
փախենում էի այդ գազանից և իսկոյն փակեցի
նրան: «Ի՞նչ գարշելի զդացմոնք է այդ խանդո-
տութիւնն». ասացի ինձ: — Ի՞նչ կարող է աւելի
բնական լինել քան նրա գրածը:

Մտայ անկողին և սկսայ մտածել առաջիկայ
գործերից վազուեանի մասին: Այդ նստաշրջան-
ների ժամանակ, նոր աւելում՝ սովորաբար քնել
չէի կարողանում, բայց այստեղ շատ չուտ քնեցիւ
Եւ ինչպէս այդ լինում է միշտ, գիտէք յանկարծ
ելքարական ցնցում և գարթնում էք, ճիշտ այդ-

պէս էլ ես զարթեղի՝ մտածելով ինոջս, մարմնա-
կան սիրոյս, Տրուխաչեսկու և այն բանի մասին,
որ նրանց մէջ ամեն ինչ վերջացած է: Սարսափն
ու զայրոյթը կուրծքս սղմեցին. բայց ես սկսաց
համոզել ինձ. «Ինչ յիմարութիւն է, ասում էի ես,
ոչ մի հիմք չկայ և ոչինչ չի եղել: Եւ ինչպէս եմ
ինձ թոյլ տալիս այդքան ստորացնել թէ կնոջս և
թէ ինձ՝ ենթադրելով այդպիսի զարհուրելի բա-
ներ: Ինչ որ վարձկան ջութականարի նման մէկը,
յայանի իրքն փչացած մարդ և յանկարծ պատկա-
ռելի մի տիկին, ընտանիքի յարգուած մայրը՝ կինս:
Ի՞նչ անմտութիւն է»: Պատկերանում էր ինձ մի
կողմից: Ի՞նչպէս կարող է չը լինել այդ ամենա-
հասարակ և հասկանալի բանը, որի համար ես
կենակցում էի, ինչ որ միայն պէտք էր ինձ,
ուրիշներին և այդ երաժշտին: Նա ամուրի է,
առողջ (յիշում և՛մ, թէ նա ինչպէս էր ժարժա-
տում ողնաշարով և բանում բաժակը կարմիր
շրթունքներով), կուշա, գիրուկ և ոչ թէ միայն
ասանց սկզբանքների, այլ պատահած վայելչու-
թիւնից օգտավելու մկանունքներով և նրանց մէջ
տոփամութեան ամենանուրը՝ երաժշտութեան
կապը: Ի՞նչը կարող է զսպել նրան: Նա ով-
է: Նա գազանիք է, այնպէս, ինչպէս և առաջ էր:
Ես չը գիտեմ նրան: Ես նրան գիտեմ որպէս ա-
նասաւնի: Խոլ անասունը ոչինչ չի կարող անել,
չի կարող արգելք գնել:

Այժմս միայն յիշեցի ես նրանց արտայաց-
տութիւնը, երբ այն երեկոյին կրէցերի Աօնատից
յետոյ նուագեցին մի ինչ որ սիրազեղ՝ կրքու

կտոր, որը չեմ յիշում, թէ ում հեղինակութիւնն էր, մի՞ անպարկեշտութեան չափ տռվական պիէս: «Ես ինչպէս կարողացայ մեկնիր».—ասում էի ինձ, յիշելով նրանց գէմքերը: Միթէ պարզ չէր, որ նրանց մէջ ամեն ինչ կատարուեց հէնց այդ երեկոյեան, մըթէ պարզ չէր, որ այդ երեկոյին նրանց մէջ այլ ևս ոչ մի արգելք չկար և նրանք միայն ամաչում էին այն բոլորից յետոյ, ինչ որ կատարուեց նրանց մէջ: Յիշում եմ, թէ ինչպէս կինս թոյլ, խոզալի և երջանիկ ժպտում էր, որրելով քրտինքը կարմրած երևից, երբ ևս գաշնամուրին մօտեցայ: Նրանք գեռ այն ժամանակ խուսափում էին իրար նայելուց և միայն ընթրիքի ժամանակ, երբ նա ջուր էր լցնում կնոջո համար, նրանք իրար նայեցին և կամաց ժպտացին: Ես այժմ սարսափահար յիշեցի որսացած այդ հայեցքն հաղիւ նկատելի ժպիտով: «Այս, ամեն ինչ վերջացած է»,—ասում էր ինձ մի ձայն, իսկ միւսն՝ իսկոյն ուրիշ բան էր ասում.—«Այդ չի կարող լինել, քնզ բան է պատահել»: Ես դժուարացայ պառկած մնալ միւսթեան մէջ, լուցի վասեցի և վախեցայ այդ գեղին պասատներ փակցրած սենեակում: Ես սկսայ ծխել, և ինչպէս միշտ պատահում է, երբ պատում ես նոյն չը լուծուող հակասութիւնների շրջանակում, ծխում էի անընդհատ՝ միւսը միւսի հետելից, որպէս զի բթացնէի ու մշնացնէի ինձ և հակասութիւններ չը տեսնէի:

Ամբողջ գիշեր այլ ևս չը քնեցի և հինգ ժամին վճռելով, որ այդպէս լարուած մնալ չեմ կարող և իսկոյն կերթամ, վերկացայ, զարթեցրի ինձ

ծառայող պահապանին և ուղարկեցի ձիաների: Խորհրդին էլ տոմսակով յայտնեցի, որ արտակարգ գործով կանչուած եմ Մոսկվա և այդ պատճառով խնդրեցի, որ ինձ փոխարինի անդամը: Ժամի 8 ին ես կառը նստայ և մեկնեցի:

XXV

Մտաւ կոնդուքտօրը՝ և նկատելով, որ մեր մոմն այրուել էր, հանգըրեց այն և նորը տնկեց: Արդէն սկսում էր լուսանալ: Պօղդնիշել լուս էր քանի որ կոնդուքտօրը չէր գուրս գնացել և միայն ծանր հառաչում էր: Նա իւր պատմութիւնը շարունակեց միայն այն ժամանակ, երբ կոնդուքտօրը գուրս գնաց և կիսախաւար վագօնում լսուեց ապակիների գողողն ու գործակատարի միակերպ չնշառութիւնը: Արշալոյսի կիսախաւարում Պօղդնիշեն ինձ այլ ևս չէր երեսում: Լսում էր միայն նրա հետզհնեաէ աւելի վրդովուած և տանջուած ձայնը:

Երեսուն և հինգ վերսա պէտք էր զնալ ձիաներով, իսկ 8 ժամ էլ երկաթուղու գնացքով: Զիով ճանապարհորդութիւնն հիանալի էր: Աշնան ցուրտն էր: Գիտէք, այն ժամանակը, երբ անիւների երկաթեայ շրջանակները տպւում են ճարպոտանման ճանապարհի վերայ: Ճանապարհները կոկ են, լոյսը պայծառ և առողջացնող: Տարանտասով գնալը հաճելի էր: Երբ լուսացաւ և ես ճանապարհ ընկայ, թեթեսութիւն զգացի: Զիաներին, զաշտերին և հանդիպողներին նայելով, ես

մոռանում էի ուր գնալս: Երբեմն ինձ թւում էր, որ զուր էի զնում և այն, ինչի համար որ զնում էի, աւելի չը ունեցել: Եւ ես առանձնակի ուրախ էի մոռադութեանս համար: Իսկ երբ յիշում էի ուր գնալս, ասում էի ինձ. «Մի մատիր, յետոյ կերեայ: Բայց դրանից ճանապարհի կիսին մի արկած պատահեց, որը պահեց ինձ և աւելի զբաղեցրեց. տարանտասս կոտրուեց և հարկաւոր եղաւ նորոգել տալ այն: Այդ կոտրուին ահազին նշանակութիւն ունեցաւ նրանով, որ ես Մոսկվա հասայ ոչ թէ ժամի հինգին՝ ինչպէս որ կարծում էի, այլ տասն և երկուսին և տասն և կայ ժամի մէկին, որովհետեւ արագընթաց գնացքին չը հասայ և ստիպուած էի մարդատարով մնկնիլ: Այլակի համար զնալը, նորոգութիւնը, վճարումը, ճանապարհորդական բակում թէյ խմելն ու գանապանի հետ խօսակցութիւնս աւելի զբաղեցրեն ինձ: Մթան գէմ ամեն ինչ պատրաստ էր և ես կրկին ճանապարհ ընկայ: Գիշերուայ ճանապարհորդութիւնը ցերեկուանից լաւ էր: Նորալուսին էր, փոքր ինչ ցըւրտ, աւելի լաւ ճանապարհ, ուրախ կառապան. ես գնում էի ու դմայլում, բոլորովին չը մտածելով, թէ ինձ ինչ էր սպասում, կամ գուցէ նրա համար աւելի էի զմայլում, որ զիտէի, թէ ինչ էր սպասում ինձ և մնաս բարեաւ էի ասում կեանքի ուրախութիւններին: Բայց այդ խաղաղ տրամադրութիւնս ու զգացմունքս ճընշելու հնարաւորութիւնը վերջացաւ ձիով ճանապարհորդութեան հետ: Հէնց որ վագօն մտայ, սկսուց բոլորովին ուրիշը: Վագօնով այդ 8 ժամ-

ուայ վորխագրութիւնս սարսափելի բան էր, որն ես երբէք չեմ մոռանալ ամբողջ կեանքում: Սրդոք նրանիցն էր, որ ես վազօն նստելուց յետոյ ինձ արդէն հասած համարնեցի, թէ երկաթուղին լնդհանրապէս զրգորչ ազդեցութիւն է ունենում մարդուս վրայ, չը զիտեմ, միայն թէ վազօն մըտնելուց յետոյ՝ երբ իշխել չէի կարողանում երեակայութեանս վերայ, նա անդադար և արտասովոր պայծառութեամբ սկսեց նկարել իրար ետից խանդուութիւնս զրգուզ պատկերներ այն բանի մասին, ինչ որ այնտեղ կատարուում էր բացակայութեանս ժամանակ, ինչպէս նա գաւաճանում էր ինձ: Ես քննելով այդ պատկերները, զայրոյթից, ատելութիւնից և մի ինչ որ ինձ ստորացնող զգացմունքից կրակ էի կրակ, ևս չէի կարողանում պոկ գալ, չը նայել, ջնջել, չը պատկերացնել նրանց: Այդ գեռ քիչ է. որքան աւելի էի զննում այդ երեակայական պատկերներն, այնքան աւելի էի հաւատում նրանց իրական լինելուն: Այն պայծառութիւնը, որով այդ պատկերները ներկայանում էին ինձ, կարծէք իրրե ասլացոց էր ծառայում, որ երեակայածս իրականութիւն էր: Ինչ որ մի չար սովի, կարծես կամքիս հակառակ, հնարում և թելադրում էր ինձ ամենասոսկալի համեմատութիւններ: Յիշեցի Տրուխաչսկու եղբօր հետ վազուցուայ խօսակցութիւնս և առանձին հիացմունքով քրքրում էի սիրտս այդ խօսակցութեամբ՝ փոխանցելով այն կնոջս և Տրուխաչսկու վրայ:

Դա վաղուց պատահած բան էր, բայց և

այնպէս յիշեցի: Յիշում եմ, որ Տրուխաչևսկու եղբայրն իմ հարցիս, թէ նա որոշ անհրն այցելում է արգեօք, պատասխանեց, որ կարդին մարդն այնպիսի անդերն երբէք չի երթալ, որտեղ կարելի է հիւմնդանալ և ուր բացի զգուանքից և կեղտուառթիւնից ուրիշ ոչինչ չկայ, մանաւանդ որ միշտ կարելի է կարգին կին դանել: Եւ ահա նրա եղբայրը գաւաւ կնոջաւ ձիչտ է նա շատ դեռահաս չէր, կողքից մի ասում չունէր և մի տեսակ վփռւած էլ էր, մտածում էի ևս նրա վուխարէն, բայց ինչ արած, պէտք է եղածով օգտուել: Այն, նա զիջումն է անում կնոջաւ, որ նրան սիրուհի է վերցնում, ասում էի ինձ: Միհնոյն ժամանակ նա անվտանգ է Ո՞չ, այդ անկարելի է, սարսափած ասում էի ինձ: Այդպիսի բան չկայ, երբէք: Նոյն իսկ հիմք չկայ այդպիսի բան ենթադրելու: Կինս չէր, որ ինձ ասաց թէ նրան և Տրուխաչևսկուն խանդառութեամբ նայելու միտքն անդամ ստորացուցիչ կինէք: Այն, բայց նա ստում է, միշտ ստում, աղաղակում էի ևս և սկսում էր նորից ... Մեր վագօնում միմիայն երկու ճանապարհորդ կար՝—մի պառաւ կին ու իրեն ամուսինը, որոնք բնաւ չին խօսում. երկուսն էլ դուրս եկան մօտակայ կայարան և ևս միայնակ մնացիչ ես վանդակում վակուած գաղանի նման էի, երբեմն վեր էի թոչում, մօտենում պատուհաններին, երբեմն սկսում էի երերուելով քայլել՝ աշխատելով արագացնել վագօնը, բայց նա իւր բոլոր գարակներով ու աղակիներով հէնց այնպէս էր ցնցւում, ինչպէս մեր այս վագօնը ...

Եւ Պօղոնիշելը վեր թռաւ, մի քանի քայլ արեց ու կրկին նստեց:

— Օ՛խ, երկաթուղու վագօննելից ևս վախում եմ, վախում, ինձ վերայ սարսափ է գալիս: Այն, սարսափելի է.—շարունակեց նա:— Ուրիշ բանի մասին կը մտածեմ, ասում էի ինքս ինձ. օրինակ թէկուզ հէնց ճանապարհորդական բակի տիրոջ մասին, որի մօտ ևս թէյ խմեցի: Ահա երեակայութեանս մէջ վերարտադրում է երկարամօրուս դռնապանն ու նրա թռոլ, որը Բարսեղիս չափ է: Բարսեղս, նա կը տեսնի, թէ ինչպէս երաժիշտն համբուրում է իւր մօրը: Ի՞նչ կը կատարուի նրա խղճուկ հոգում: Բայց կնոջս ի՞նչ փոյթ. նա սիրում է Եւ կրկին սկսում էր նոյնը: Ո՞չ, ոչ ... կը մտածեմ հիւմնդանոցի վերագննութեան մասին: Այն, թէ ինչպէս հիւմնդն երեկ գանգատում էր բժշկից: Իսկ բժշկը Տրուխաչևսկու նման բեղեր ունէր: Եւ ողքան ստոր կերպով նա ... նրանք երկուսն էլ խաբում էին ինձ, երբ ասում էր, որ ինքը քաղաքից մեկնում է: Եւ կրկին սկսում էր: Այն ամենը, ինչի մասին էլ որ մտածում էի, նրա հետ կապ ունէր: Ե՞ս տանջում էի սոսկալի կերպով: Գլխաւոր տանջանքս առաջ էր գալիս չը գիտենալուց, կասկածներից և երկութիւնից. նրանից, որ ևս չէի իմանում կնոջս պէտք է սիրել, թէ ատել: Տարօրինակ զգացմունք էր, տանջանքս և ատելութիւնս առաջ էր գալիս մի կողմից ստորացումս և միւս կողմից նրա յաղթանակը զիտակցելուց, բայց գէպի կինս սոսկալի ատելութիւն էի զգում: «Զի

կարելի անձնասպանութիւն գործել, իսկ նրան թողնել, հարկաւոր է, որ նա էլ որոշ չափով առածի, վեասուի, գոնէ հասկանայ, որ ևս տանջուում էի. ասում էի ևս: Դուքս էի գալիս բոլոր կայարաններում, որպէս զի ցրուէի մտքերս: Կայարաններից մինի ձաշարանում տեսայ, որ խմում են և խորյն ինքս էլ օդի խմեցի: Իմ կողքիս կանգնած էր մի հրէայ և նոյնպէս խմում էր: Նա սկսեց խօսել և ևս վագօնումս միայնակ չը մնալու համար գնացի նրա կեղտու, ծխակալած և արեածաղկի սերմի կեղեսվ լցուած երբորդ կարգի վագօնը: Այստեղ ևս նստեցի նրա կողքին և նա ինչ որ շատախօսում էր ու անեկտօտներ պատմում: Ես լսում էի նրան, բայց պատմածը չէի հասկանում, որովհետեւ շարունակում էի մտածել գործիս մասին: Նա նկատեց այդ և պահանջնեց ուշաղիք լինել: Ես վերկացայ և կրկին գնացի վագօնս: «Պէտք է խորհնել» ասում էի ինձ, «ուղիղ է արդեօք ինչ որ ևս ևմ մտածում և հիմունք կայ տանջուելու, թէ ոչ: Յանկանալով հանգիստ խորհրդածել, ևս նստայ, բայց փոխանակ խաղաղ մտածմունքի, իսկոյն սկսուեց մինսոյնը. փոխանակ դատողութեան—պատկերներ և տեսարաններ: «Բանի անգամ ևս այգովէս տանջուել», — ասում էի ինձ. (Ես յիշում էի խանդոսութեանս անցեալ գէաքերը), բայց ամեն ինչ վերջացել է ոչնչով: Այդովէս էլ հիմայ կարող է պատահել և հաւանականորէն ևս կը գտնեմ նրան հանգիստ քնած, նա կարթնանայ, կուրախանայ դաւնալուս համար, և խօսքերից ու հայեացքից ևս կը զգամ, որ ոչինչ

չի եղել և որ այս բոլորը յիմարութիւն է: «Բայց նչ, այդ շատ յաճախ էր լինում, իսկ այժմս այլիս այդպիսի բան չի լինիք. առում էր ինձ մի ինչ որ ձայն և նորից սկսում էր:

Այ թէ որպես էր պատիմը: Ես երիտասարդ մարդուն կնոջից վանելու համար ոչ թէ սիֆիլիտիքական հիւանդանոց կը տանէի, այլ կը մտցնէի հողուս խորքերը՝ տեսնելու այնտեղ բուն զրած այն գեերին, որոնք քրքրում էին նրան: Սոսկալին այն էր, որ նորա մարմնին տիրելու բացառիկ և լիակատար իրաւունքն ես ինձ էի վերազրում, կարծէք թէ գա մարմնս լինէր, և մինոյն ժամանակ զգում էի, որ չեմ կարող այդ մարմնին տիրել, որ նա իմս չէր և որ կինս կարող էր վարուել նրա հետ լինչպէս ինքն էր ուզում, իսկ ուզում է վարուել ոչ ուզածիս պէս: Եւ ևս բան չէի կարող անել ոչ կնոջս և ոչ նրան: Նա՝ ինչպէս գոնապան Յովհաննէսը, կախազանի առաջ երդ կը երգի, թէ ինչպէս էր պաչպչում քաղցր շըրթունքներին և այն: Յաղթութիւնը նրանն է: Իսկ կնոջս աւելի քիչ բան կարող եմ անել: Եթէ նա դեռ չի արել, բայց ցանկանում է, իսկ ևս գիտեմ որ ցանկանում է, աւելի վատ: Լաւ կլինէր, եթէ արած լինէր և ևս զիտենայի, գոնէ անորոշութիւն չէր լինիլ: Ես չի կարող հասկանալ, թէ ինչ էի ուզում իսկապէս: Ես կամենում էի, որ նա չը ցանկանար այն, ինչ որ իսկապէս պէտք է ցանկանար: Դա կատարեալ խելազարութիւն էր:

XXVI

Նախավերջին կայարանում, երբ կոնդուքտորն եկաւ տոմսակներ ժողովելու, ես հաւաքեցի իրեւս, դուրս եկայ նախասենեալ և այն զիտակցութիւնը, թէ վճիռն արգէն մօտ է, աւելի սաստկացրեց վրդովմունքս: Ես մրսեցի և այնպէս դողդողացին ծնուներս, որ ատամներս չխէչխկացին: Ես մեռքենայարար դուրս եկայ կայարանից ամրոխի հետ, կառք վերցրի, նստայ ու գնացի:

Ես գնում էի՝ զիտելով սակաւթիւ անցորդներին, դոնապաններին և լապտերների ու կառքիս երբեմն առաջից և երբեմն հետեւց ձգած ստուերները՝ ոչ մի բանի մասին չը մտածելուի: Կէս վերստ հեռանալուց յետոյ՝ ոտներս մրսեցին և ես մտարերեցի, որ վագօնում հանել էի բրդէ տաք դուլպաներս և զրել ճամբրուկիս մէջ. իսկ հազդաս ուր է:

Այստեղ է: Իսկ ուր է կողովս: Յիշեցի, որ ծանրոցս բոլորովին մոռացել էի, բայց գտնելով ու հանելով ապահովագիրը, վճուեցի որ զրա համար վերադառնալ չարժէ և ճանապարհս շարու նակեցի:

Այժմս ինչքան էլ աշխատում եմ, չեմ կարողանում յիշել իմ՝ այն ժամանակուայ տրտմադրութիւնս. ինչ էի մտածում, կամ ինչ էի ուղում, ոչինչ չդիտեմ: Յիշում եմ միայն, որ ես զիտակցում էի, որ պատրաստում էր կեսանքիս մէջ ինչ որ սարսափելի՝ վտանգաւոր բան: Ար-

գեօք այդ նշանաւոր բանը պատահեց, որ ես այդպէս էի մտածում, թէ նրա համար, որ նախադպում էի, չը զիտեն: Կարող է լինել և այն, որ պատահած դէսքից յետոյ՝ նրա նախորդ բուլոր բոլիչները յիշազութեանս մէջ այդպէս տխուը գոյն ստացան: Ես հասայ մեր տան մուտքին: Ժամի մէկն էր: Մի քանի կառապաններ կանգնած էին մուտքի մօտ և պատուհանների լուսաւորուած լինելու պատճառով՝ սպասում էին գնացողների, (լուսաւորուած էին մեր տան դահլիճի և հիւրասենեակի պատուհանները): Ես ինձ հաշիւ չը տալով, թէ ինչու այդքան ուշ լոյս կայ մեր պատուհաններում, նոյն՝ սարսափելի բան սպասող տրամադրութեամբ, բարձրացայ սանդուխտով և զանդանարեցի: Ծառաս՝ բարի, աշխատասէր և շատ անմիտ եզրոր գուռս բացեց: Առաջին բանը, որ ընկաւ աչքիս, այդ ուրիշ շորերի հետ նախասենեակի կախարանից կախուած նրա վարապանն էր (չինել), ես պէտք է զարմանայի, բայց չը զարմացայ, որովհետեւ այդ բանին սպասում էի արգէնք չէնց այդպէս է. առաջի ինձ: Երբ ես եզրորից հարցրի, թէ նվ կայ այստեղ և նա տուեց Տըուխաչներու անունը, ես կրկին հարցրի. Էլ ուրիշ մարդ կայ. նա պատասխանեց. — ոչ որ: Յիշում եմ, նա այնպիսի եղանակով պատասխանեց այդ, որ կարծէք ուղում էր ուրախացնել ինձ և ցրուել կասկածներս այլոց լինելու մասին: «Եյդպէս, այդպէս», կարծէք ասում էր իսկ ինձ: — Իսկ երեխանները: — Փառք Աստուծոյ, առողջ են: Վաղուց քնած են: Ես չը կարողացայ շունչ քաշել և կանգնեց-

Նել գողացող ծնուաներս: Կը նշանակի այնպէս չէ, ինչպէս որ կարծում էի, առաջները ևս կարծում էի, որ մի գժրախտութիւն պատահած կլինի, բայց դուրս էր գալիս, որ լաւ էր և ամեն ինչ իւր հին կարգով էր ընթանում: Իսկ այժմս հին կարգով չէ, այլ ահա այն բոլորն, ինչ որ երեակայում էի և մտածում, ինչ որ երեակայում էի, ահա բոլորն իրականապէս Ա.Յ. քեզ բոլորը

Քիչ էր մնում, որ հեծկլապայի, բայց իմ մէջ նստած զեն իսկոյն չչնջաց. «Դու լաց եղիր, զգայութիւնք արա, իսկ նրանք հանդիսա կը հնուան մէկ մէկուց, հետքեր չես ունենալ և յաւետեան կը կասկածես ու կը տանջուիս: Իսկոյն յուզմունքս անցաւ և առաջ եկաւ ուրախութեան տարօրինակ մի զգացմունք, ուրախութեան՝ այն բանի համար, որ այժմս կը վիրջանայ տանջանքս, որ ահա այժմ ևս կարող եմ պատմել, կարող եմ ազատուիլ նրանից, կարող եմ ընթացք տալ զայրոյթիս: Եւ ես ազատութիւն առւի զայրոյթիս ու գաղան զարձայ, կատաղի և խորամանկ զաղան: «Պէտք չէ, պէտք չէ, ասացի Եղորին, որն ուզում էր հիւրասենեակ մտնել. դու աւելի լաւ կանեա, որ չուտով կառք վերցնես ու կայարան գնասիրես ստանալու. առ, ահա անդորրագիրը: Գնան նա անցաւ նախասենեակով և զնաց իւր վերարկուն վերցնելու: Վախսենալով, որ նա կը խրտնեցնի նրանց, ևս ուզեկցեցի Եղորին դէպի իւր խցին ու սպասեցի մինչև որ հագնուեց: Հիւրասենեակից մի սենեակ այն կողմ լուռմ էր խօսակցութիւն. և ամաների ու դանակ—պատառաքաղի»

Հիսկէնկող: Նրանք ընթրում էին և չը լսեցին դանագի ձայնը: «Միայն թէ այժմս դուրս չդան»: մտածում էի ևս Եղորը հագաւ Ասարախսանի զառան մարթիով վերարկուն ու զնաց: Ես դուրս թողի նրան, եակեց զուռը փակեցի և երբ զգացի, որ միայնակ եմ մնացել ու պէտք է գործել իսկոյն, վախսեցայ: Ես չի իմանում, թէ ինչպէս պէտք էր զործել: Ես միայն դիտեի, որ այժմս ամեն ինչ վերջացած է, որ նրա մնացաւորութեան մասին այլ ես կասկած չկայ և որ իսկոյն կը պատժեմ նրան՝ խղելով բոլոր յարարերութիւններս:

Առաջներում ես զեռ տատանւում էի և ասում ինձ. «Դուցէ այդ սասպէ չէ, գուցէ սիսլւում եմ.» այժմս այլ ես այդպիսի բան չկար: Ամեն ինչ վճռուած էր անդառնալի կերպով: Ինձանից գաղանի, զիւրը, նրա հետ միայնակ: այդ նշանակում է ամեն բան մոռանալ: Կամ աւելի վաս, այդպիսի համարձակութիւնն ու յանդզնութիւնը յանցագործութեան ժամանակ զիտմամբ է, որպէս զի այդ յանդզնութիւնն իբրև անմեղութեան նշան ծառայի: Պարզ է բոլորը: Կասկած չկայ այլ ես և միայն մի բանիցն էի վախսենում, որ նրանք չը փախչեն, մի նոր իսարէութիւն չը հնարեն և զրանով չը զրկեն ինձ վաստերի ակներե լինելուց և ապացուցանելու հնարաւորութիւնից: Եւ որպէս զի աւելի շուտ վրայ հասնէի նրանց, ևս ուսներիս ծայրերի վրայ զիմեցի զէպի դահլիճ, որտեղ նրանք նստել էին, ոչ թէ հիւրասենեակով, այլ սրահի և մանկանոցի միջավ:

Առաջին մանկանոցում աղաները քնած էին.

Երկրորդգում՝ դայենակը չարժուեց և ուղեց արթ-
նանալ. ևս երեսակայեցի, թէ նա ինչ կը մտածի
այս բոլորն խմանալուց յետոյ և այնպիսի խղճա-
հարութիւն զգացի գէպի ինձ, որ չը կարողացաց
զսպել արցունքներո և երեսաներին չը զարթեց-
նելու համար պիճեղներիս վրայ դուրս փախայ
գէպի սրահն և այնտեղից առանձնաւենեակ, ըն-
կայ գահաւորակի վրայ և փղձկացի:

Ես մի ազնիւ մարդ, ծնողներիս հարազատ զաւակ, ես—որ ամբողջ կեանքում երազում էի ընտանեկան երջանկութեան մասին, ես—մի տղամարդ, որ երբէք չի գաւաճանել նրան և ահա, հինգ զաւակ ունի և զրկում է երաժշտին, որովհետո նա կարմիր շրթունքներ ունի:

Ո՞չ, նա մարդ չէ, նա շան քած է, կեզառս
քած: Կից այն երեխանների սենեակին, որոնց սի-
րեւը նա կեզծում էր ամբողջ կեանքի ընթացքում:
Իսկ գրելիս ինձ Բնչեր էր գրում: Եւ այդպէս
ստոր կախուել առաջին հանդիպողի վզից: Բայց
ես ինչ գիտեմ. զուցէ միշտ էլ այդպէս էր: Գուցէ
նա շատ վաղուց ծառաներից վաստակեց այն բո-
լոր երեխաններին, որնք իմս են համարւում:

Վազն ևս կը գայի և նա իւր սահրուածքով,
իւր իրանով, սիդաճեմ շարժումներով, (ես տեսայ
նրա գրաւիչ ատելի գէմքը), կը հանդիպէր ինձ և
խանդութեան այդ գաղանը յաւիտեան նստած
պէտք է մնար սրտում և զիշատէր այն: Ի՞նչ կը
մտածի գայեակը ... Եգորը . . . և փոքրիկ խցճուկ
Եղիսաբէթը: Նա ինչ որ բան էր հասկանում ար-
դէն: Եւ այդպիսի լրբութիւն, այդքան ստութիւն

այդ անասնական զգայականութիւնը, որ ես այդ-քան յաւ դիտեմ.. ասում էի ինձ:

Ես ուզում էի վեր կենալ, բայց չը կարողացաց: Սիրտս այնպէս էր բարախում, որ ես չը կարողացաց կանգնած մնալ: Այն, ես կաթուածից կը մեռնամ: Նա կը սպանի ինձ: Նրան հէնց այդ է պէտք: Նրա համար սպանելն ինչ է որ: Ո՞չ, այդ արդէն շատ ձեռնտու կլինէր նրա համար, ես այդպիսի բերկրանք չեմ պատճառիլ նրան: Այն, ես հստած եմ, իսկ նրանք այնտեղ ուտում, ծիծառում և Այն, նա թէն առաջին երիտասարդական թարմութիւն չունէր, բայց վատ չէր, նա չարհամարհեց նրան՝ մանաւանդ որ նրա թանկագին առողջութեան համար անվանուի էր: Եւ ինչո՞ւ ես չը խեղդեցի նրան հէնց այն ժամանակ, ասացի ինձ, յիշելով այն բոպէն, երբ ես մի շաբաթ առաջ գուրս վանդեցի կնոջս առանձնանահնեակից և յետոյ իրեր կոտրատեցի: Ես պարզ յիշեցի այն տրամադրութիւնը, որի մէջ այն ժամանակ դանւում էի: և ոչ թէ միայն յիշեցի, այլ և ջարդելու և ծեծելու նոյնանման կարիք դդացի: Յիշում եմ, թէ ինչպէս գործել ցանկացաց և բոլոր մտածմունքներս՝ բացի գործելու համար անհրաժեշտ մաքերից, իսկայն յօդա ցնդեցին: Ես զաղանի կամ մարդու այնպիսի կացութեան մէջ ընկայ, որպիսին ինչում է երկիւղից առաջ եկած ֆիզիքական գրգռուած դրութեան ժամանակ, երբ մարդու գործներով ու միշտ մի որոշ նպատակով: Կեան չը կորցնելով ու միշտ մի որոշ նպատակով:

սլաներով մօտենյայ դահաւորակին կից սլատին,
որից զէնքերս ու դաշոյններս էին կախուած և
վերցրի կանացի կեռ դաշոյնս, որն երբէք բանաց-
րած չէր և շատ սուր էր: Հաննեցի իսկոյն պա-
տեանից: Պատեանը գահաւորակի ետեից ցած ըն-
կաւ և յիշում եմ, որ ասացի ինձ, յետոյ սկէտք է
գանել այն, ապա թէ ոչ, կը կորչի: Դրանից յե-
տոյ հաննեցի վերարկուա, որը գեռ հազիս էր և
սուսիկ քայլելով միայն դուլպաներով, դնացի
այնաեղ:

XXVII

Գաղտազողի մօտենալով, յանկարծ դուռը-
բացի: Յիշում եմ նրանց դէմքերի արտայայտու-
թիւնը: Ես այդ արտայայտութիւնն յիշում եմ
նրա համար, որովհետեւ նա ինձ մի դասն ուրա-
խութիւն պատճառեց: Դա սարսափելի արտայայ-
տութիւն էր: Ինձ հէնց այդ էր պէտք: Ես երբէք
չեմ մոռանալ սոսկալի սարսափի այն արտայայ-
տութիւնը, որն ինձ տեսնելիս՝ նկատուեց նրանց
դէմքերին. Նա, կարծեմ սեղանի մօտ էր նստած,
բայց տեսնելով կամ լսելով ինձ, վեր թռաւ և
կանգնեց պահարանի մօտ: Նրա դէմքին միմիայն
սարսափի անկատկած արտայայտութիւն կար:
Կնոջս դէմքին էլ նոյն բանն էր, բայց կար նրա
հետ և մի ուրիշ արտայայտութիւն: Եթէ միայն
առաջինը լինէր, գուցէ ոչինչ չը պատահէր, բայց
նրա դէմքի արտայայտութեան մէջ կար նաև,
գոնէ ինձ այդպէս երեաց առաջին վայրկեանին,

վիշտ և գժզոհութիւն, որ խանգարեցին իրեն
սիրային յախտակութիւնն ու նրա հետ ունեցած
երջանկութիւնը: Նրան կարծես ուրիշ ոչինչ պէտք
չէր, բացի այն, որ իրեն չը խանգարէին բախտա-
ւոր լինել այժմու: Այս և միւս արտայայտութիւնը
միայն մի վայրկեան մեաց նրանց դէմքերին: Տրու-
խաչնկու դէմքի սարսափի արտայայտութիւնն
իսկոյն փոխուեց հարցականի՝ կարելի է արգեօք
ստել: Եթէ կարելի է, ուրեմն պէտք է սկսել:
Եթէ ոչ, մի ինչ որ ուրիշ բան կըսկսուի: Բայց
ինչ... նա հարցական նայեց կնոջս: Վշտի և զայ-
րոյթի արտայայտութիւնը կնոջս դէմքին փոխուեց
նրա մասին հոգածութեան: Այդ ևս նկատեցի,
երբ նա նայեց Տրուխաչնկում:

Մի վայրկեան ևս կանգ առի դռան մէջ,
թագցնելով գաշոյնն իմ ետես:

Հենց այդ վայրկեանին նա ծիծաղելիութեան
չափ անտարելը տօնով ժալտաց և ասաց: — իսկ
մենք երտէշտարանում էինք....

— Այ չէի սպասում, — սկսեց իսկոյն կինս,
նրա ձիին ենթարկուելով: Բայց ոչ մէկն և ոչ
միւսը չաւարտեցին իրենց խօսքը: Մի շաբաթ
առաջ զգացած կատաղութիւնը նորից տիրեց
ինձ: Ես նորից կարիք զգացի քանդելու, բանա-
նալու, զգացի կատաղութեան ցնծութիւն և անձ-
նատուր եղայ նրան: Երկուսն էլ խօսքը չը վեր-
ջացրին: Ես յարձակուեցայ կնոջո վրայ՝ դազտուկ
պահելով դաշոյնը, որպէս զի Տրուխաչնկու չը
խանգարէր ինձ նրա կողքին՝ ուղիղ կրծքի տակ
խփելու: Ես այդ տեղն հինց սկզբից էի ընտրել:

Այն բոպէին, երբ ես կնոջու վրայ յարձակուեցի,
նա տեսաւ և մինչդեռ ես չէի սպասում նրանից,
բանեց թես և աղաղակեց. «խելքի եկէք, ինչ բանի
էք, մարդիկ»....

Ես լուս աղատեցի ձեռքս և յարձակուեցայ
նրա վերայ: Մեր աչքերն իրար հանգիպեցին, նա
յանկարծ քաթանի նման գունատուեց մինչև
շրթունքները, աչքերն առանձնակի փայլեցին, նա
սողաց դաշնամուրի տակ և այնտեղից ծկուեց
դէպի դուռը, որ ես նոյնպէս չէի սպասում: Ես
ընկայ նրա ետեից, բայց ձախ թերից ծանրու-
թիւն կախուեցաւ, այդ կինս էք: Ես թափ տուի,
նա աւելի ծանր կախուեց և բաց չէր թողնում
ինձ: Այդ անսպասելի արգելքն ու նրա զզուելի
չփումն ինձ աւելի բորբոքնց: Զգում էի, որ բո-
լորովին կատաղած եմ և անշուշտ սարսափելի
պիտի լինիմ և այդ բանի համար ուրախանում էի:

Ես ամենայն ուժով թափ տուի ձախ ձեռքս
և արմունկով խփեցի ուղիղ նրա երեսին: Նա
ճշաց և ձեռքս բաց թողեց:

Ես ուղում էի վագել պարոնի ետեից, բայց
յիշեցի, որ չատ ծիծաղելի կլինի կնոջու սիրականի
ետեից գուլպաներով վագելը, մինչդեռ ես՝ ոչ թէ
ծիծաղելի, այլ ուղում էի զարհուրելի լինել: Զը
նայեած այն սոսկալի կատաղութեան, որի մէջ
ես էի գտնուում, այնուամենայնիւ յիշում էի, թէ
ինչ տարաւորութիւն եմ գործում միւսների վրայ
և մասամբ այդ էր ինձ դեկալարողը: Ես դարձայ
դէպի կինս, նա ընկաւ թափափ վրայ և բանելով
վիրաւորուած աչքերը, նայում էր ինձ: Երա դէմքն

արտալայտում էր երկիւղ և ատելութիւն դէպի
ինձ, միշտ այնպէս, ինչպէս այդ լինում է մկան-
հետ, երբ բարձրացնում են այն թակաըզը, որի
մէջ նա ընկել է. գոնէ ես բացի այդ երկիւղից-
և ատելութիւնից դէպի ինձ, ուրիշ բան չէի տես-
նում նրա մէջ: Այդ այն երկիւղն ու ատելու-
թիւնն էր, որը սէր պէտք է ծնեցնէր դէպի ու-
րիշները, Բայց գուցէ գեռ էլի ինձ զսպել կարո-
ղանայի և չանէի այն, ինչ որ արի, եթէ նա-
լուս մնար, բայց յանկարծ սկսեց խօսել և բանեց-
ձեռքս, որով զաշոյն էի բանել:

— Ուշքի եկ, ինչ բանի վրայ ես, քեզ
ինչ է պատահել: Բան չկայ, ոչինչ, ոչինչ: Երդ-
ւում եմ:

Ես էլի կը սպասէի, բայց նրա այդ վերջին
խօսքերն, որոնցից ես հակառակ եղրակացութիւն-
դուրս բերի, պատասխան էին պահանջում: Եւ
պատասխանը նման պէտք է լինէր այն տրամա-
դրութեան, որի մէջ ես զրել էի ինձ և որն հետ-
զհետէ սաստկանում էր և այդպէս էլ պէտք է
շարունակէր բարձրանալ: Կատաղութիւնն էլ իւր
օրէնքներն ունի:

— Մի ստիր, անզգամ,— ճշացի ես և ձախ-
ձեռքովս բռնեցի նրա թերից, բայց նա դուրս-
ովրծաւ: Այդ ժամանակ դաշոյնը ձեռիցս չը թող-
նելով, ձախ ձեռքով բռնեցի նրա թիւց, վայր
զլորեցի երեսն ի վեր և սկսայ խեղտել: Որքան
ամուր վիզ էր ... Նա երկու ձեռքով բռնեց թես
և աշխատում էր կոկորդից հեռացնել այն, բայց
ես կարծէք հէնց դորան էի սպասում. ամբողջ

ուժովս խմիկի գաշոյնով նրա ձախ կողքին՝ ուշ դիզ կողերից ցած:

Երբ մարդիկ առում են, որ նրանք կատաւ դութեամբ բանուած ժամանակ չեն յիշում իրենց արածը, զատարկ բան է, սուտ է այդ: Ես ամեն բան յիշում էի և ոչ մի վայրկեան յիշելուց չեմ դադարել:

Որքան աւելի մեծ ուժով էի բարբարում իմ մէջ կատաղութեան զոլորշիներն, այնքան էլ աւելի պայծառ բանկում էր իմ մէջ զիտակցութեան լոյսը, որի տակ չէի կարող չը տեսնել բոլոր արածու: Ես զիտէի թէ ինչ էի անում և իւրաքանչ չիւր վայրկեանին արածու յիշում էի:

Չեմ կարող առել, որ ես առաջուց զիտէի, թէ ինչ կանեմ, բայց այն վայրկեանին, երբ անում էի և կարծեմ դեռ մի քիչ էլ առաջ, ես զիտէի թէ ինչ եմ անում, կարծէք նրա համար, որ առ պաշխարելու հնար լինէր, որպէս զի կարողանայի ինձ առել, որ կարող էի կանգ առնել: Ես զիտէի, որ կը խիեմ նրան կողերից ցած և դաշոյնը կը խրուի: Այդ արած բոպէին ես զիտէի, որ սոսկալի բան եւ անում, այնպիսի բան, որի նմանն երբէք չէի արել և որը սարսափելի հետեանքներ կունենայ: Բայց այդ զիտակցութիւնը կայծակց փայլակի նման և իսկոյն հետեւց գործը: Վարժունքս արտակարդ պայծառութեամբ էի հասկանում: Լսեցի և յիշում եմ կօրսէտի վայրկենական զիմաղութիւնը, էլ մի ինչ որ բանի և յետոց դաշոյնի կակուղ բանում խրուիլը Նա բանեց

գաշոյնը, վիրաւորեց իւր ձեռքերը, բայց պահել չը կարողացաւ:

Ես յետոյ, բանտում եղած ժամանակս, երբ իմ մէջ բարոյական յեղակուսութիւն տեղի ունեցաւ, երկար մասմաս էի այդ բոպէի մասին, յիշում, ինչ որ միայն կարող էի և քննում: Յիշում եմ գործողութիւնից մի վայրկեան, միմիայն մի վայրկեան առաջ ունեցած այն սոսկալի զիտակցութիւնը, որ ես սպանում եմ և սպանեցի մի կնոջ, անպաշտպան կնոջս, իմ կողակցիս: Այդ զիտակցելու սարսափս ես յիշում եմ և զրա համար էլ եղբակացնում և ազօտ կերպով յիշում, որ դաշոյնը խրեցի և իսկոյն դուրս քաշեցի, ցանկանալով ուղղել արածս և կանգնեցնել այն: Մի վայրկեան ես անշարժ կանգնել էի, սպասելով թէ ինչ կլինի և արդեօք կարելի չէր ուղղել:

Կինս վեր թռաւ ու կանչեց: «Դայեակ, նա սպանեց ինձ»:

Դայեակն աղմուկից արգէն կանգնած էր գուան մէջ: Ես շարունակում էի կանգնած մնալ, սպասելով և չը հաւատալով: Բայց նրա կօրսէտի տակից դուրս ցայտեց արիւն և միայն այդ ժամանակ ես հասկացայ, որ ուղղել չի կարելի և իսկոյն վճռեցի, որ պէտք չէ, որ հէնց այդ էր ուղածս և հէնց այդ պէտք է անէի: Սպասեցի մինչե որ նա վայր ընկաւ և դայեակն աղաղակելով մօտ վազեց: Տէր իմ, ես այդ ժամանակ միայն մի կողմ շպրտեցի դաշոյնս և սենեակից դուրս գնացի:

«Վարդովուել պէտք չէ, պէտք է զիտենալ թէ ես ինչ եմ անում, ասացի մտքումս, նրան և

դայեակին նայելով։ Դայեակն աղաղակում և առախնում օգնութեան էր կանչում։ Ես սրահովեց անցաց և աղախնին ուղարկելով՝ մտայ սենեակս։ Այժմ ինչ պէտք է անել. հարցրի ինձ և իսկոյն հասկացայ, թէ ինչ։

Առանձնասենեակ մտնելով, ես մօտեցած պատին, վերցրի ատրճանակս, զննեցի, տեսայ, որ լցուած է և դրի սեղանիս վրայ։ Յետոյ հանեցի գաշոյնի պատեանը գահաւորակի տակեցն ու նստայ։

Երկար նստած էի այդպէս։ Ես բան չէի մտածում և ոչինչ չէի յիշում։ Միայն լսում էի, որ այնտեղ իրարանցման մէջ էին։ Լսում էի ինչ-պէս առաջ մինն եկաւ, յետոյ էլի մէկը, յետոյ լսեցի ու տեսայ, թէ ինչպէս Եգորն առանձնասենեակ ներս տարաւ բերած կողովը, կարծէք թէ նա մէկին հարկաւոր լինէր։

— Լսեցիր, թէ ինչ պատահեց. ասացի ես.— գոնապանին ասա, որ ոստիկանութեան իմաց տայ։ Նա բան չասաց ու դուրս գնաց։ Ես վեր կացայ, փակեցի դուռը, հանեցի ծխախոտն ու լուցկին և սկսայ ծխել։ Դեռ պապիրոսս չը վերջացրած, քնէածութիւն եկաւ վրաս ու քնեցի։ Ես երկու ժամուայ չափ քնած էի։ Տեսայ երազում, որ մենք իրար հետ հաշտ ենք, որ կոռւեցինք, բայց հաշտում ենք, որ մի բան փոքր ինչ խանգարում է, բայց մենք բարեկամ ենք։ Ինձ արթնացրեց գռան թրսկոցը։ «Այդ ոստիկանութիւն է»։ մտածեցի ես՝ արթնանալով. «կարծեմ ես նրան սպանեցի»։ Բայց այդ դուցէ կինս է

և ոչինչ չի պատասխանեցի և այն խնդիրն էի վճռում. «տեղի ունեցաւ այն, թէ չէ»։ «Այս, տեղի ունեցաւ»։ Ես յիշեցի. Կօրսէտի դիմագրութիւնը, դաշոյնի իրուիլը և սարսուռ անցաւ մարմնովս։ «Այս, տեղի ունեցաւ»։ Այժմս պէտք է ինձ էլ, ասացի ես։ Բայց այդ ասում էի և գիտէի, որ ինձ չեմ սպանիլ։ Այնուամենայնիւ ես վերկացայ և վերցրի ատրճանակս։ Սակայն զարմանալի է. յիշում եմ, թէ ինչպէս էի առաջ անձնասպանութեան հասած լինում. ինչպէս նոյն իսկ այն օրն—երկաթուղու վրայ, և այդ ինձ հեշտ էր թւում՝ երբ մտածում էի, թէ ինչպէս կապչեցնեմ նրան։ Այժմս ես էի, թէ ինչպէս կապչեցնեմ նրան։ Այժմս ես ոչ միայն ինձ սպանել, այլ նոյն իսկ դրա մասին մտածել անգամ չէի կարողանում։ «Ո՞նչու պէտք է անեմ այդ», հարցրի ինձ և պատասխան չկար։ Դուռս կրկին թակեցին։ Նախ և առաջ պէտք է թուռս ով է թակում, էլի ժամանակ կունենամ։ Ես վայր դրի ատրճանակն ու լրացրով ծածկեցի։ Ապա մօտեցայ և բացի դուռը։ Եկողը քնիս էր, բարի, բայց անմիտ այրին։ Բարսեղ, այս ինչ է, ասաց նա և միշտ պատրաստ արցունքները թափուեցին նրա աչքերից։

— Ի՞նչ էք ու զում։ կոպտութեամբ հարցրի

ես։ Տեսնում էի, որ նրա հետ կոպիտ վարուելու

պատճառ չկար, բայց ուրիշ եղանակ չէի զըտ-

նում։

— Բարսեղ, նա մետում է. նոր Յովհաննէս Զաքարեանն ասաց։ Դա նրա բժիշկն էր, նրա խորհրդատուն։ Նա միթէ այստեղ է. հարցրի

ես և կնոջս դէմ ունեցած ամբողջ զայրոյթս նուրէն բորբոքուեց:

—ի՞նչ է որ:—Բարսեղ, գնան նրա մօտ: Ա՛յս, նրան սարսափելի է, ասաց նա: «Գնալ նրա մօտ» հարց տուի՞ ինձ և իսկոյն պատասխանեցի, որ պէտք է գնալ, որ հաւանականօրէն միշտ այդպէս է լինում, այսինքն, որ երբ ամուսինն ինձպէս սպանել է լինոջը, անպատճառ պէտք է գնայ նրա մօտ: «Եթէ այդպէս է լինում, ուրեմն պէտք է գնալ», ասացի ինձ: «Եւ եթէ այն էլ հարկաւոր կը լինի, միշտ էլ ժամանակ կունենամ».» ասացի ես անձնասպանութիւն զործելու մտադրութեանն մասին և գնացի քենուա ետեից: «Այժմս կը կառւին (դատարկ խօսքեր), ծամածոռութիւններ, բայց ես նրանց չեմ ենթարկուիլ», ասացի ինձ: «Սպասիր, յիմար բան է առանց կօշիկների գալը, թոյլ տուր գոնէ փափուճներս հագնեմ», ասացի քենուա:

XXVIII

—Եւ զարմանալի բան է. կրկին երբ ես գուրս եկայ և անցայ սովորական սենեակներով, իմ մէջ նորից յոյս ծագեց, որ ոչինչ չի եղել, բայց բժշկական գարշելի միջոցների՝ հօգօֆօրմի և կարբօւան թթւուտի հուն ապշեցրեց ինձ: Ո՛չ, ամեն ինչ եղել է: Սրահով՝ մանուկների մօտովն անցնելիս ես տեսայ եղիսաբէթիկիս: Նա ինձ նայում էր վախեցած աչքերով: Ինձ թուաց, որ բոլոր հինգ երեխաներն էլ այդտեղ էին և ամենքն

էլ ինչ էին նայում: Ես մօտեցայ դռանը: Աղամինը նկրսից դուռը բացեց և ինքը դուրս եկաւ: Առաջին նկատածս բանը նրա բաց մոխրագոյն պարեգոսն էր աթոսի վրայ, որ արիւնից բոլորովին սեացել էր: Մեր՝ երկուսիս անկողնի վրայ՝ իսկապէս անկողնիս վրայ, որին մօտենալն աւելի հեշտ էր, պառկած էր նա բարձրացրած ծնկներով: Ես պառկած էր միմիայն բարձերի վրայ, շատ թեք և հազին ունէր քոթանակ, (կոֆտա), որի կոճակները բաց էին: Վէրքի վրայ ինչ որ բան էր դրած: Սենեակը բանել էր եօգօֆորմի ծանր հոտը: Նախ և ամենից աւելի զարմացրեց ինձ նրա աչքի տակ ուռած ու կապտած երեսը, այտն ու քթի մի մասը: Դա արմունկով տուածս հարուածի հետեանքն էր, երբ նա ուզում էր ինձ բանել: Ոչ թէ գեղեցկութիւն չէր մնացել, այլ ինչ որ զզուելի բան տեսայ նրա մէջ: Ես կանգնեցի չէմքի մօտ:—Մօտեցիր, մօտեցիր նրան.—ասում էր քոյրը: Երեի նա ուզում է (ապաշխարել) խոստովանուել, մտածեցի ես: «Ներել». մտածում էի ես, աշխատելով մեծահոգի լինել: Ես բոլորովին մօտեցայ: Նա դժուարութեամբ ուզզեց աչքերը, որոնցից մինը ջարդուած էր, դէսի ինձ և հազիւանքալով ասաց:

—Նպատակիդ հասար, սպանեցիր ... և նրա գէմքին Փիզիքական տանջանքների և մերձաւոր մահուան միջից նոյն հին և ինձ ծանօթ անասնական պաղ ատելութիւնն արտայայտուեց:—Զաւակներս ... ես այսուամենայնիւ ... քեզ չեմ տալ... նա կը տանի ... (իրեն քոյրը.)

իսկ այն, ինչ որ ինձ համար զլիաւոր էր,
իրեն յանցանքն ու դաւաճանութիւնը. նոյն իսկ
յիշելու արժան չը համարեց:

—Այն, հիացիր արածովդ, —ասաց նա, դէպի
դուռը նայելով և փղձկաց: Դուան մէջ կանգնած
էր քոյրն՝ երեխաների հետ: —Այ թէ ինչ արիր:

Ես նայեցի մանուկներին, նրա ջարդուած
ու կապտած դէմքին և առաջին անդամ մոռացայ
ինձ, իմ իրաւունքներս, հպարտութիւնս. առաջին
անդամ ես մարդ արարած տեսայ նրա մէջ: Եւ
այնքան չնչին երեաց այն բոլորն, ինչ որ վիրա-
ւորում էր ինձ—ամբողջ խանդուութիւնս, իսկ
արածս այնքան նշանաւոր, որ ես ուզում էի ընկ-
նել երեսովն նրա ձեռքի վրայ և գոչել. ներիր,
քայց չէր համարձակւում:

Նա խիել էր աչքերն ու լուռ էր, երեի ոյժ
չունենալով խօսակցութիւն չարունակելու: Յետոյ
նրա այլանդակած դէմքը դողաց և կճռուառեց: Նա
թոյլ հրեց ինձ:

—Ինչո՞ւ համար էր այս բոլորն, ինչո՞ւ:

—Ներիր ինձ, ասացի ես:

—Ներիր, այս բոլորը յիմար բան է ...միայն
թէ չը մեռնեմ... կանչեց նա, վիր բարձրացաւ և
նրա աենդային աչքերն ուղղուեցին ինձ: —Այն,
դու քոնն արիր . . . Սառում եմ . . . Այ, ախ . . .
երեի զառանցանքի մէջ որևէ բանից վախենա-
լով, աղաղակեց նա:

—Արձակիր: Ես չեմ վախենում Միայն
բոլորին սպանիր գնաց գնաց

Զառանցանքը շարունակւում էր ամբողջ

ժամանակ: Ոչ ոքին այլ ես չէր ճանաչում: Նոյն
օրը կէս օրին մօտ նա մեռաւ: Ինձ դեռ նրանից
առաջ՝ ժամի 8 ին տարան սստիկանատուն և այն-
տեղից էլ բանտ: Դատի սպասելով, ես այնտեղ
մնացի տասն և մէկ ամիս: Ես քննեցի ինձ, ամ-
բողջ անցեալս և հասկացայ այն: Երբորդ օրուա-
նից ես սկսայ հասկանալ: Երբորդ օրն ինձ տա-
րան այնտեղ

Նա ուզում էր բան ասել, բայց, չը կարու-
զանալով զապել հեկեկանքը, կանգ առաւ: Փոքը
ինչ ոյժ առնելով, նա չարունակեց:

—Ես սկսայ հասկանալ միայն այն ժամա-
նակ, երբ նրան տեսայ դագաղի մէջ ...

Նա փղձկաց, բայց իսկոյն շտապով շարու-
նակեց:

—Միայն այն ժամանակ, երբ տեսայ նրա
մեռած դէմքը, ես հասկացայ բոլոր արածս: Հաս-
կացայ, որ ես սպանեցի նրան, ինձանից պատա-
հեց այն, որ նա կենդանի, տաք և շարժուն էր,
իսկ այժմս դարձաւ անչարժ, մեղրամոմի նման,
պաղ, և որ այդ երբեք, ոչ մի տեղ և ոչ մի բա-
նով ուղղել չի կարելի: Ով այս անձամբ չի փոր-
ձել, երբէք չի կարող հասկանալ այդ . . . ու . . .
ու . . . ու . . . աղաղակեց նա մի քանի անդամ և
դադարեց:

Մենք երկար լուռ նստած էինք: Նա հեկե-
կում էր և լուռ ցնցւում իմ առաջս: Նրա դէմքը
դարձաւ նուրբ, երկար և բերանը ձգուեց դէմքի
ամբողջ լայնութեամբ:


—Այն, յանկարծ ասաց նա, եթէ ես զի-

տենայի, ինչ որ այժմս զիտեմ, բոլորովին ուրիշ
բան կլինէր: Ես երբէք չէի ամուսնանալ նրա
հետ. ոչ մի կերպ չէի ամուսնանալ:

Մենք կրկին երկար ժամանակ լուռ էինք:
— Ե՞ն, ներկցէք ... Նա չուռ եկաւ, պառկեց
նոտարանի վրայ և ծածկուեց պլէդով: Այն կա-
յարանում, որտեղ ես պէտք է դուրս դայի ժամի
8 ին, մօտեցայ նրան մնաս բարեաւ ասելու: Քնած
էր արգեօք նա, թէ միայն ձեացնում էր, չը գի-
տեմ. միայն թէ չէր շարժւում: Ես ձեռքով շար-
ժեցի նրան: Նա բացեց երեսը և երեսում էր, որ
չէր քնած:

— Մնաք բարեաւ, — ասացի ես, ձեռք տալով
նրան, Նա ձեռք տուեց ինձ և թեթև ժպտաց,
բայց այնքան խղճալի կերպով, որ ես ուղեցի լաց-
լինել:

— Այն, ներկցէք. — կրկնեց նա նոյն խօսքը,
որով և փակեց ամբողջ վէպը:



ԿՐԵՅՑԵՐԻ ՍՕՆԱՏԻ

ՎԵՐՋԱԲԱՆԸ

Ես ինձ անծանօթ անծերից ստացայ եւ ստա-
նում եմ բազմաթիւ նամակներ, որոնցով ինդրում են
պարզ եւ հասկանալի բառերով բացատրել այն, ինչ որ
ես մտածում էի «Կրէյցերի Սօնատ» վերնագրով վէպիս
նպատակի մասին, որ փորձեմ անել այդ, այսինքն կար-
մառօտ արտայատել, որքան այդ հնարաւոր է, այն
բանի էութիւնն, ինչ որ կամենում էի ասել այդ վէպի
մէջ եւ այն եղբակացութիւնները, որ իմ կարծիքով
կարելի է հանել նրանից:

Նախ եւ առաջ ես ուղում էի ասել, որ մեր
հասարակութեան մէջ արմատացել է բոլոր դաշ-
սակարգերի համար ընդհանուր և կեզծ գիտու-
թեան պաշտպանած այն համոզմունքը, որ ար-
տաքոյ ամուսնութեան սեռական յարաբերութիւն-
ները, որոնք բայց դրամական վճարից՝ ուրիշ ոչ
մի պարտականութիւն չեն դնում աղամարդու-
վրայ, շատ բնական բան են և արժանի քաջալե-
րութեան: Այդ համոզմունքն այնքան է ընդհան-
րացել և արմատացել, որ ծնողները բժիշկների

Խորհրդով անառակութիւն են սարքում իրենց գաւակների համար. կառավարութիւնները, որոնց գոյութեան էութիւնը նրանումն է, որ հոգան իրենց քաղաքայիների բարոյական բարեկեցութեան մասին, անառակութիւն են սարքում. այսինքն կազմակերպում են կանանց մի ամբողջ գասակարդ, որոնք պարտաւոր են խորտակութիւն մարմնապէս և հոգիապէս տղամարդկանց կեղծ պահանջներին յափուրդ տալու համար և ամուրի մարդիկ միանդամայն անդորր խղճով անձնատուր են լինում անառակութեան:

Եւ ահա ես ուզեցի ասել, որ այդ լաւ չէ, որովհետեւ չի կարող լինել, որ մարդկանց մի մասի առողջութեան համար հարկաւոր լինի կործանել մարմինն ու հոգին, ինչպէս և չի կարող լինել, որ մարդկանց մի մասի առողջութեան համար հարկաւոր լինի խմել միւսների արիւնը:

Իսկ եղրակացութիւնը, որ ինձ թւում է թէ բնականաբար կարելի է հանել սրանից, այն է, որ այդ մոլորութեան ու խարէութեան անձնատուր լինելը պէտք չէ: Իսկ անձնատուր չը լինելու համար նախ չը պէտք է հաւատալ անրարոյական վարդապետութիւններին՝ ինչ կեղծ գիտութիւններով էլ նրանք պաշտպանութիւն գտնէին. և երկրորդ՝ հասկանալ, որ այնպիսի սեռական յարաբերութիւն ունենալը, որի ժամանակ տղամարդիկ աղատում են իրենց նրա հետեանքներից՝ զաւակներից, կամ այդ վերջինների ամբողջ ծանրութիւնը գցում են կնոջ վերայ և կամ նրանց ծնուելու հնարաւորութեան առաջն են առնում, որ այդպիսի սե-

ռական յարաբերութիւնը ոճրագործութիւն է բարյական ամենահասարակ պահանջի գէմ, որ դա ստորութիւն է և որ այդ պատճառով ատոր ապրելու ցանկութիւն չունեցող ամուրի մարդիկ չը պէտք է անեն այդ:

Իսկ ժուժկալ լինել կարողանալու համար՝ նրանք բացի այն, որ պէտք է բնական կեանքովն ապրեն, չը պէտք է խմեն, շատակեր չը լինեն, միա չուտեն և աշխատանքից փախուստ չը տան. ոչ թէ մարմնամարդութիւնից, այլ յոզնեցնող և ոչ խաղալիքանման աշխատանքից)՝ նոյն իսկ մտքով չանցկացնեն ուրիշների կանանց մերձենալու մտածմունքն անգամ. ճիշտ այնպէս, ինչպէս իւրաքանչիւր մարդ թոյլ չի տալիս այդ՝ իւր և մօր մէջ, քիւր մարդ թոյլ չի տալիս այդ՝ իւր և մօր մէջ, քրոջ, ազգականների և բարեկամների կանանց մէջ:

Իսկ որ ժուժկալութիւնը հնարաւոր է և առողջութեան համար աւելի պակաս վտանգաւոր՝ քան անժուժկալութիւնը, իւրաքանչիւր մարդ հէնց իւր կողքին հարիւներով կարող է գտնել զրա ապացոյցները:

Այս առաջն:

Երկրորդն այն, որ մեր հասարակութեան մէջ, չորհիւ այն հայեացքի, որ սիրային յարաբերութիւնը ոչ թէ միայն առողջութեան անհրաժեշտ պայման, ոչ միայն զուարծութիւն է համարւում, այլ և կեանքի բանաստեղծական և վաւել երջանկութիւն (բարիք), ամուսնական անհաւատարմութիւնը հասարակութեան բոլոր խաւերում (մանաւանդ գիւղական ազգաբնակութեան մէջ՝ չորհիւ զինորագրութեան) դարձել է ամենասովորական երևոյթ:

Եւ ես կարծում եմ, որ այդ լաւ չէ: իսկ սրանից բխող եղբակացութիւնն այն է, որ չը պէտք է անել այդ:

Իսկ այս չանելու համար՝ հարկաւոր է փոխել մարմնական սիրոյ մասին գոյութիւն ունեցող հայեացքը, որպէս զի տղամարդիկ և կանայք այնպէս կրթուին աներում և հասարակական կարծիքով, որ նրանք ամուսնութիւնից առաջ և յետոյ սերահարուելու և նրա հետ կապուած մարմնական սիրոյ վրայ չը նայեն ինչպէս այժմս՝ իրեն միքանատսեղծական զրութեան վրայ, այլ մարդուահամար իրեն ստորացնող և անասնական զրութեան վրայ և որ ամուսնութեան ժամանակ տրուած խոստման խախտումն հասարակական կարծիքով պատժուի գոնէ այնպէս, ինչպէս որ պատճումն զրամական պարտաւորութիւնների խախտումներն ու առեարական խարէութիւնները և ոչ թէ փառարանուին վէպերում, ոտանաւորներում, երգերում, օպէրաներում և այն, ինչպէս որ այժմս է:

Այս երկրորդ:

Երբորդն այն՝ որ մեր հասարակութեան մէջ՝ չնորհիւ մարմնական սիրուն վերազրուած սիսալնշանակութեան, որդեննութիւնը կորցրել է իւր նշանակութիւնը և փոխանակ ամուսնական յարաբերութիւնների նպատակն ու արդարացնող միջոց վինելու, դարձել է խոչնոտ սիրային յարաբերութիւններ շարունակելու զէմ և այդ պատճուի թէ ամուսնութեան միջոցին և թէ արտաքոյ ամուսնութեան բժշկական զիտութիւններին

ծառայողների չնորհիւ սկսել է տարածուել այնպիսի միջոցների գործածութիւնը, որոնք զրկում են կանանց որդեննութեան հնարաւորութիւնից, կամ սկսել է սովորական դառնալ այն, ինչ որ գեռմինչեւ այժմս էլ գոյութիւն չունի նահագլուտական ընտանիքներում՝ յղութեան և դիեցման ժամանակ ամուսնական յարաբերութիւններ շարունակելը: Եւ ես կարծում եմ, որ այդ լաւ չէ:

Որդեննութեան դէմ որոշ միջոցների գործածութիւնը վատ է նախ նրա համար, որ նա մարդկանց աղատում է մանուկների համար հարկաւոր հոգսերից ու աշխատանքից, մինչդեռ նրանք են կաղմում մարմնական սիրոյ քաւութիւնը. և երկրորդ նրա համար, որ գա մարդկային խղճին միշտ հակառակ գործողութեան՝ մարդասպանութեան նման մի բան է: Յղութեան և դիեցման ժամանակ անժուժկալ լինելը նրանով է վատ, որ կործանում է կոնջ թարմնական և զլիսաւորապէս հոգեկան ոյժերը: Իսկ սրանից բխող եղբակացութիւնն այն է, որ այդ չը պէտք է անել: Իսկ այդ չանելու համար՝ պէտք է հասկանալ, որ ամուսիտեան ժամանակական անհրաժեշտ պայման կազմող ժուժկալութիւնն առաւել պարտաւոր է ամուսնութեան ժամանակ:

Այս երրորդ:

Չորրորդն այն, որ մեր հասարակութեան մէջ զաւակները կամ վայելչութեան խոչնոտ են համարւում, կամ դժբախտ պատահար և կամ միտեստակ երջանկութիւն, երբ նախապէս որոշ թուով են ծնւռում: Այդ զաւակները ոչ թէ մարդկային

կեանքի այն իմղիրների համար են կրթւում, որոնք սպասում են նրանց իրեն խելացի և սիրող էակների, այլ միայն այն բաւականութիւնների համար, որ կարող են պատճառել իրենց ծնողներին։ Այս պատճառով մարդոյ որդիք դաստիարակւում են անասունների որդոց նման։ այնպէս որ՝ ծնողների գլխաւոր հօգոսը ոչ թէ նրանց մարդավայել գործունէւթեան պատրաստելու համար է, այլ նրա համար (ինչի համար որ ծնողները պաշտպանութիւն են գանում բժշկականութիւն կոչուած կեղծ գիտութիւնից), որ որքան կարելի է լաւ անդեռն, մեծացնեն նրանց հասակը, դարձնեն նրանց սպիտակ, մաքուր, դիրուկ ու գեղեցիկ։ Եթէ սոորին խաւերում այդ չեն անում, այդ միայն հարկից ստիպուած, իսկ հայեացքը նոյն է։ Եւ քնքչացրած մանուկների՝ ինչպէս և բոլոր զիցացրած անասունների մէջ, բնականից շուտ է զարդանում անյաղթելի զգայականութիւնը, որ և այդ մանուկների պատճնեկական հասակում սոսկալի տանջանքների պատճառ է դառնում։ Զարգեր, ընթերցանութիւն, տեսարաններ, երաժշտութիւն, պարեր, քաղցր անունգ, կեանքի ամբողջ սարք ու կարգը՝ փոքրիկ արկղիկների նկարներից միսած մինչև վէտերն ու պատմաւածքները, աւելի շատ են բորբոքում այդ զգայականութիւնը և ահա սեռական ամենասոսկալի յանցանքներն ու հիւանդութիւնները գառնում են երկու սեռի մանկանց մեծանալու սովորական պայմաններ և յաճախ մնում նաև չափահաս վիճակում։

Եւ ես կարծում եմ, որ այդ վատ է։ իսկ

սրանից բխող եղբակացութիւնն այն է, որ պէտք է դադարել մարդոց զաւակներին անասունների որ դոց նման մեծացնելուց և բացի գեղեցիկ և գըգուած մարմնից՝ դնել ուրիշ նպատակներ։

Այս չորրորդ:

Հինգերորդն այն, որ մեր հասարակութեան մէջ, որտեղ երիտասարդ մարդու և կնոջ մէջ սիրահարութիւնը, որի հիմքն այնուամենայնիւ մարմական սէրն է կաղմում, դարձրած է մարդկային ձգտումների բարձր բանաստեղծական նպատակ, որին իրքի ապացոյց ծառայում է մեր հասարակութեան ամբողջ զեղարուեստն ու բանաստեղծութիւնը։ Երիտասարդ մարդիկ իրենց կեանքի ամենալաւ մասը նուիրում են՝ տղամարդիկ զիտում, որոնում են և աշխատում սիրային կատար կամ՝ ամուսնութեամբ տիրելու սիրոյ ամենաապով կամ կանայքն ու օրիորդները՝ տղամարդկանց զրաւելու, յափշտակելու և նրանց հետ կապուելու կամ ամուսնանալու։

Եւ այս պատճառով մարդկանց ամենալաւ ուժերը վատնուում են ոչ թէ ապարդիւն, այլ վնասակար աշխատանքի վրայ։ Դորանից է առաջ գալիս մեր կեանքի անմիտ շռայլութեան մեծագոյն մասը, զրանից է մարդկանց անդորձութիւնն ու կանանց անամօթութիւնը, որոնք չեն (ամաշում) արհամարհում կանխապէս յայտնի անբարոյական կանանցից վուխ առած տարագներով հանգէս հանելու իրենց մարմնի զգայականութիւն գրգռող մասերը։

Եւ ես կարծում եմ, որ այդ վատ է։

Այդ վատ է նրա համար, որ թէ ամուսութեան ժամանակ և թէ նրանից գուրս սիրոյ առարկայի հետ զուգաւորութեան նպատակին համեսլը, ինչքան էլ նա բանաստեղծականացրած լինի, այնուամենայնիւ մարդուս արժանի նպատակ չէ, ճիշտ այնպէս, ինչպէս և քաղցր ու առատ մնունդ ձեռք բերելու ձգտումը, որը չատ մարդկանց բարձրագոյն բարիք է թւում:

Իսկ այն եզրակացութիւնը, որը կարելի է հանել սրանից, այն է, որ չը պէտք է կարծել, թէ մարմնական սէրը մի առանձին վանմ բան է, այլ պէտք է հասկանալ, որ մարդուն արժանի նպատակը—թէ մարդկութեան, թէ հայրենիքին, թէ գիտութեան, թէ գեղարուեստին ծառայելը, էլ չը խօսելով Ասաուծուն ծառայելու մասին) և թէ ինչ էլ լինի, եթէ միայն մննք այն համարում ենք մարդուն արժանի, ոչ թէ սիրոյ առարկայի հետ ամուսնութեամբ կամ արտաքոյ ամուսնութեան զուգակցելով է ձեռք բերելում, այլ ընդհակառակն, սիրահարուելն ու սիրոյ առարկայի հետ միանալը (ինչքան էլ աշխատեն հակառակն ապացուցանել ոտանաւոր և արձակ զրուածքներով) երբէք չի հետացնում մարդուս արժանի նպատակին հասնելու գործն, այլ միշտ գտուարացնում է այն:

Այս հինգերորդ:

Ահա այն էական բանն, ինչ որ ևս մտածում, կամենում էի ասել և ասացի վէպիս մէջ: Ինձ թւում էր, որ կարելի է դատել, թէ ինչպէս ուղղել այն չարիքը, որի վրայ մատնացոյց էին լինում այդ զրութիւնները,—որի մասին չը հա-

մահացնել չի կարելի: Ինձ թւում էր, որ չի կարելի չը համաձայնիլ այդ զրութեանց հետ, նախ նրա համար, որ այդ զրութիւնները միանդամայն համերաշխ են մարդկային յառաջադիմութեան, որը սանձարձակութիւնից դիմում է աւելի և աւելի ժուժկալութեան, և հասարակութեան բարոյական գիտակցութեան—մեր խղձի հետ, որը միշտ զնահատում է ողջախոհութիւնն ու դատապարտում է անբարյականութիւնը. և երկրորդ՝ նրա համար, որ այդ զրութիւններն անխուսափելի եղբակացութիւն են Աւետարանական վարդապետութեան, որը մննք գաւանում ենք, կամ գոնէ, թէկուզ անզիտակցաբար, ընդունում ենք հիմունք մեր բարյական հասկացողութեան:

Բայց այդպէս չեղաւ:

Ճիշտ է, ոչ ոք չի մերժում, որ ամուսնութիւնից առաջ չը պէտք է անառակութիւն անել, չը պէտք է անել և ամուսնութիւնից յետոյ, որ արհեստական միջոցներով չը պէտք է ոչնչացնել որգեծնութիւնը, որ գաւակներից զուարձալիք չը պէտք է չինել և սիրային զուգաւորութիւնը մնացած բոլոր բաներից բարձր գասել.—մի խօսքով, ոչ ոք չի վիճում, որ ժուժկալութիւնը սանձարձակութիւնից լաւ է: Բայց ասում են. «Եթէ ամուրիութիւնն ամուսնութիւնից լաւ է, ապա ուրեմն ակներև է, որ մարդիկ պէտք է այն անեն, ինչ որ լաւ է: Իսկ եթէ մարդիկն այդ անեն, այն ժամանակ մարդկային ցեղը կընդհատուի, այդ պատճառով էլ մարդկային ցեղի համար իրեն ոչնչացումը չի կարող իդէալ լինել: Չը խօսելով,

որ մարդկային ցեղի ոչնչանալու գաղափարը նոր հասկացողութիւն չէ մեր աշխարհի մարդկանց համար. այլ նա հաւատացողների համար հաւատոյ հանդանակն է, իսկ զիտնականների համար արեի պաղումն զիտելու անմիջական և անխուսափելի եղբակացութիւն. այդ բանաձեի մէջ կայ մի մեծ, տարածուած և հին թիւրիմացութիւն։ Ասում են. «Եթէ մարդիկ հասնեն կատարեալ ողջախոհութեան իդէալին, իրանք ոչնչանում են և այդ պատճառով այդ իդէալը ուզիղ չէ»։ Բայց այսպէս խօսողները զիտակցաբար կամ անդիտակցաբար՝ երկու բան շփոթում են իրար հետ՝ այն է կանոն կամ առաջադրութիւն և իդէալ։

Ողջախոհութիւնը կանոն կամ առաջադրութիւն չէ, այլ իդէալ, կամ աւելի շուտ՝ նրա պայմաններից մէկը։ Իսկ իդէալն այն ժամանակն է իդէալ, եթե նրան իրականացնելը հնարաւոր է գաղափարապէս, մաքի մէջ, երբ նա հասանելի է համարւում միմիայն անհունութեան մէջ և այդ պատճառաւ նրան մօտենալու հնարաւորութիւնն— անհուն է։ Եթէ իդէալին հասնելը ոչ թէ հնարաւոր լինէր, այլ մենք կարողանայինք նոյն իսկ երեակայել նրա իրականացումը, նա կը դադարէր իդէալ լինելուց։ Այդպէս է Քրիստոսի իդէալը՝ երկրիս վրայ Աստուծոյ արքայութիւնն հաստատելը. գեռ մարդարէներից գուշակուած իդէալ, որ կը գայ ժամանակ, երբ բոլոր մարդիկ իմաստ, նացած կլինին Աստուածանից, կը կոփեն սրերը խոփի և տէգերից կը շինեն մանգաղ։ Առիւծը գառան հետ կը պառկի և բոլոր կենդանիք կապ-

ուած կլինին սիրով։ Մարդկային կեանքի ամբողջ էութիւնը այս իդէալի ուղղութեամբ ընթանալու մէջն է կայանում և այդ պատճառաւ իւր ամբողջութեամբ քրիստոնէական իդէալին՝ և մասնաւորապէս ողջախոհութեան ձգտելը՝ որպէս քրիստոնէական կամ նրա պայմաններց մինին, ոչ թէ չի մերժում կեանքի հնարաւալութիւնն, այլ ընդհակառակն քրիստոնէական այդ իդէալի բացակայութիւնը կը ոչնչացնէր յառաջադիմութիւնը, հետեապէս և կեանքի հնարաւորութիւնը։

Այն դատողութիւնը, որ եթէ մարդիկ ամբողջ ուժով ողջախոհութեան ձգտեն, մարդկային ցեղը կը ոչնչանայ, նման է նրան (որ և անում են) եթէ ասեն, որ մարդկային ցեղը կը ոչնչանար, եթէ գոյութեան կառուի փոխանակ նրանք ամբողջ ուժով աշխատէին իրականացնել ընկերութեան գաղափարը դէպի բարեկամներ, գէպի թշնամիք և գէպի բոլոր կենդանիք։ Այսպիսի դատողութիւններն առաջ են դալիս բարոյական զեկավարութեան երկու եղանակները չը հասկանալուց։

Ինչպէս որ ճանապարհորդին ճանապահն ցոյց տալու երկու եղանակ կայ, այնպէս էլ ճշմարտութիւն վնասող մարդու համար բարոյական զեկավարութեան երկու եղանակ կայ։ Մի եղանակն այն է, երբ ճանապարհորդին պատմում են այն առարկաների մասին, որոնք պէտք է հանդիպեն նրան և նա գնում է այդ ուղղութեամբ։

Երկրորդ եղանակը նրանումն է կայանում, որը մարդուա արւում է մի որոշ ուղղութիւն, որը

Կողմացոյցով նա միշտ կրում է իրեն հետ և որի վրայ նա տեսնում է միշտ միենայն անփոփոխ ուղղութիւնը, և հետեապէս իւր բոլոր շեղումները նրանից:

Բարոյական դեկալարութեան առաջին եղանակը արտաքին կանոններով արուած որոշումների եղանակն է. մարդուն տրում են վարժուելների համար որոշ նշաններ, որպիսիք նա պէտք է անի կամ չանի:

«Շաբաթը սուրբ պահիր, թլպատուիր, մի չնար, մի գոզանար, հարբեցուցիչ խմբչքներ մի գործածիր, մի սպանանէր, տուր տասանորդդ աղքատներին, լուացուիր և աղօթիր օրական հինգ անդամ և այլն»: Այսպէս են բրահմայական, բուդդայական, մահմէդական, հրէական և այլոց արտաքին կրօնական վարդապետութիւնների որոշումները:

Երկրորդ եղանակն այն է, երբ մարդուս ցոյց է տրում իրեն համար յաւէտ անհասանելի կատարելութիւն, դէպի որը նա ձգտումն է զգում իւր մէջ. մարդուս ցոյց է տրում իդէալ, որից շեղուելու աստիճանը միշտ կարող է տեսնել:

Սիրիր քո Տէր Աստուծուն ամբողջ սրտով, ամբողջ մարմնովդ և ամբողջ մաքովդ, և ընկերոջդ —ինչպէս որ քեզ ես սիրում: —Կատարեալ եղէք, ինչպէս որ կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը:

Այսպէս է Քրիստոսի վարդապետութիւնը:

Կրօնական արտաքին վարդապետութիւններն իրագործելու ստուգութիւնը կայանում է մարդուս գործերի և այդ վարդապետութիւնների որոշում:

Ների համերաշխութեան մէջ. և այդ համերաշխութիւնը հնարաւոր է:

Քրիստոսի վարդապետութեան պահանջների կատարման ստուգութիւնը կայանում է իդէալական կատարելութեան չը համապատասխանելու աստիճանը դիտակցելու մէջ: (Մերձենալու աստիճանը չի երևում, երեւմ է միմիայն կատարելութիւնից շեղուելու աստիճանը):

Արտաքին օրէնքներ դաւանողը նման է այն մարդուն, որը կանգնած է մի հաստատուն սիւնից կախուած լավտերի լուսոյ մէջ: Քանի որ նա կանգնած է այդ լավտերի լուսոյ տակ, նրա համար լոյս է և հեռու գնալու տեղ չունի: Քրիստոսի վարդապետութիւն դաւանողը նման է այն մարդուն, որն իւր լավտերը փոքր իշատէ երկար ձողի վրայ ամրացրած՝ տանում է իւր առաջից. լոյսը միշտ նրա առաջիցն է և միշտ դրդում է հետեւել իրեն. առաջից նորէն բայ է անում լուսաւորուած տարածութիւն, որը և գրաւում է դէպի իրեն:

Փարիսեցին գոհանում է Աստուածանից, որ ինքը կատարում է բոլորը:

Հարուստ պատանին էլ մանկութիւնից ի վեր կատարել է բոլորը և չի հասկանում, թէ ի՞նչը կարող է նրան պակաս լինել: Եւ նրանք այլապէս չեն կարող մտածել. նրանց առաջ չկայ այն, որին շարունակ ձգտել կարողանային: Տասանորդը տրուած է, շաբաթը պահուած, ծնողները պատուած են, շնութիւն, գողութիւն և սպանութիւն—չկայ: Ել ի՞նչն է պէտք: Իսկ քրիստոնէական վար-

դապետութիւն դաւանողի համար՝ կատարելու-
թեան իւրաքանչիւր աստիճանին հասնելն առա-
ջացնում է աւելի բարձր աստիճանին հասնելու
ձգտումն և այդպէս անվերջ։ Քրիստոսի օրէնքը
դաւանողը միշտ մաքսաւորի դրութեան մէջն է։
Նա միշտ անկատար է զգում իրեն, չը նկատելով
անցած և յետ թողած ճանապարհը, իսկ առաջից
միշտ տեսնելով այն, որը պէտք է անցնել, բայց
նա գեռ չի անցել։

Սրանումն է կայանում Քրիստոսի վարդա-
պետութեան տարբերութիւնը կրօնական միւս
բոլոր վարդապետութիւններից. տարբերութիւն,
որը ոչ թէ պահանջների զանազանութեան մէջն է
կայանում, այլ մարդկանց զեկավարելու եղանակի
տարբերութեան մէջ։ Քրիստոս կեանքի համար
ոչ մի որոշումն չէր տալիս, նա ոչ մի հիմնարկու-
թիւն չի սահմանել, երբէք չի սահմանել նաև
ամուսնութիւնը, Բայց արտաքին վարդապետու-
թիւններին սովոր և քրիստոնէականի առանձնա-
յատկութիւնը չը հասկացող մարդիկ, որոնք կա-
մենում էին փարիսեցու նման արդար զգալ իրենց
հակառակ քրիստոնէական վարդապետութեան
ոգու, տառից ստեղծեցին կանոնների արտաքին
վարդապետութիւն և այդպէս նենդելով փո-
խեցին Քրիստոսի վարդապետութեան իդէալը։

Որովհետեւ քրիստոնէական ճշմարիտ վար-
դապետութեան մէջ ոչ մի հիմք չկայ ամուսնու-
թիւն հաստատելու, այդ պատճառով տեղի ունե-
ցաւ այն, որ մեր աշխարհի մարդիկ մի ափից հե-

տացան և միւսին չը մօտեցան, այսինքն չեն հա-
ւատում ամուսնութեան վերաբերութեամբ եկե-
ղեցու արած որոշումների էութեան և միւնոյն
ժամանակ իրենց առաջ չը տեսնելով Քրիստոսի
իդէալը՝ ձգտումն զէպի կատարեալ ողջախոհու-
թիւն, ամուսնութեան վերաբերութեամբ մնումնն
առանց որ և է ձեռնարկի։ Հենց զրանից է առաջ
գալիս սկզբից տարօրինակ թուացող այն երես-
թը, որ քրիստոնէական վարդապետութիւնից աւելի
նսեմ վարդապետութեան հետևող հրէաների, մահ-
մէդականների, լամայականների և այլոց մէջ,
որոնք ամուսնութեան մասին արտաքին որո-
շումներն ունին, ընտանեկան սկզբունքն ու ա-
մուսնական հաւատարմութիւնն անհամեմատ աւե-
լի հաստատուն է, քան թէ քրիստոնեայ կոչ-
ուածների մէջ։

Նրանք ունին յայտնի հարձութիւն, բազմա-
կնութիւն և բազմայրութիւն, որոնք սահմանա-
փակուած են որոշ սահմաններով։ Այն ինչ, մեզ
մօտ գոյութիւն ունի կատարեալ սանձարձակու-
թիւն, որն ենթարկուած չէ ոչ մի որոշումների և
վարդապետած է երեակայական միակնութեան քօ-
ղով։

Եւ որովհետեւ զոյգերի մի մասի դլիսին հո-
գեսրականութիւնը կատարում է որոշ ծէս, այդ
պատճառով մեր աշխարհի մարդիկ պարզամտու-
թեամբ կամ կեղծաւորութեամբ երեակայում են,
որ միակին են ապրում։

Քրիստոնէական իդէալը Աստծուն և մերձա-

ւորին սիրելն է, Աստծուն և մերձաւորին ծառաշյելու համար անձնականից հրաժարուելն է. իսկ մարմնական սէրը, ամուսնութիւնը մեր անձին ծառայելն է և հետեւապէս արգելք է Աստուծուն և մարդկանց ծառայելու, այդ պատճառով էլ քրիստոնէական տեսակէտից անկումն է և մեղք:

Ամուսնանալը չի կարող նպաստել Աստուծուն և մարդկանց ծառայելու գործին նոյն իսկ այն դէպում, երբ ամուսնացողները նպատակ ունին շարունակելու մարդկային ցեղը: Այդպիսի մարդիկ փոխանակ զաւակներ արտադրելու համար ամուսնանալու, թող պաշտպանեն և փրկեն այն միջինաւոր մանկանց կեանքը, որոնք կոտորւում են մեր չուրջը նիւթական սնունդ չունենալուց. ևս էլ չեմ խօսում հոգիոր կերակրի մասին:

Քրիստոնեան առանց անկման և մեղքի զգացման կարող է ամուսնանալ միայն այն ժամանակ, երբ տեսնի և զիտենայ, որ բոլոր մանուկների կեանքն ապահովուած է արդէն:

Կարելի է Քրիստոսի վարդապետութիւնը չընդունել, չընդունել այն վարդապետութիւնը, որով համակուած է մեր կեանքը և որի վրայ հիմնուած է մեր բարոյականութիւնը, բայց երբ ընդունում ենք այդ վարդապետութիւնը, չի կարելի չը հասկանալ և չը ճանաչել, որ նա մեզ ցոյց է տալիս ողջախութեան իդէալ:

Աւետարանի մէջ չի որ շատ պարզ և առանց ծուռ մեկնութեան հնարաւորութիւն տալու առուած է—նախ՝ որ ամուսնացածը մի ուրիշն առնելու համար կնոջից չը բաժանուի, այլ պէտք է

տպրի նրա հետ, որի հետ միանգամ միացել է: (Մատթէոս գ. V 31. 32, XIX 8). Երկրորդ, որ ինչպէս ամուսնացած, այնպէս և ամուրի մարդու համար մեղք է նայել կնոջը իրեն տարփանքի առարկայի: (Մատթէոս V 28—29) և երրորդ՝ որ լաւ է չամուսնանալ, այսինքն լինել բոլորովին՝ ողջախոն: (Մատթէոս XIX 10—12):

Շատ շատերին այս մտքերը տարօրինակ և նոյն իսկ հակասական կը թուին: Եւ նրանք իրօք հակասում են ոչ թէ իրար, այլ մեր ամբողջ կեանքին. և ակամայից հարց է ծագում, թէ ով է արդար, այդ մտքերը, թէ միլիօնաւոր մարդկանց և իմ կեանքը: Ես ամենասուժեղ կերպով նոյն բանն էի զգում, երբ համուտմ էի այն համոզմունքներին, որ այժմս արտայայտում եմ: Եւ երբէք չի սպասում, որ մտքերիս թերը վերջ ի վերջոյ կը հասցնի ինձ այն բանին, ինչին որ հասայ: Ես սարսափում էի եղբակացութիւններիցս, չի ուզում նրանց հաւատ ընծայել, բայց չը հաւատալու հնար չկար: Եւ որքան էլ այդ մտքերը հակասում են մեր կեանքի ամբողջ կազմին, որքան էլ նրանք հակասում են այն բանին, ինչ որ ես առաջ մտածում ու արտայայտում էի, ևս պարտաւոր էի ընդունել նրանց:

Բայց այդ բոլորն ընդհանուր խորհրդածութիւններ են, որոնք գուցէ և արդարացի են, բայց վերաբերում են քրիստոնէական վարդապետութեան և պարտադիր են նրանց համար, որոնք դաւանում են այն, բայց կեանքը կեանք է և քրիստոնէական անհասանելի իդէալի վրայ միայն մատ-

Նացոյց լինելով, չի կարելի մարդկանց թողնել մի ամենայրող, բնդհանուր և ամենամեծ թշուառութիւն առաջ բերող խնդրում միմիայն այդ իդէալով, առանց որ և է ձեռնարկի:

Երիտասարդ կրքու մարդը սկզբում իդէալով կը յափշտակուի, բայց չի դիմանալ, կընկնի և չը գիտենալով ու չընդունելով որ և է կանոններ, կընկդուի անառակութեան մէջ:

Սուլորաբար այսպէս են դատում:

«Քրիստոսի իդէալն անհասանելի է. այդ պատճառով էլ մեզ համար կեանքի ձեռնարկ լինել չի կարող: Նրա մասին կարելի է խօսել, երագել, բայց կեանքի համար նա անդործնական է, այդ պատճառով էլ պէտք է թողնել այն: Մեզ ոչ թէ իդէալ է պէտք, այլ կանոն, ձեռնարկ, որը մեր ուժերին համապատասխան լինէր և մեր հասարակութեան բարոյական ոյժերի միջակ մակերեսի համեմատ՝ եկեղեցական ազնիւ ամուսնութիւն, երբ ամուսնացողներից մինն, ինչպէս մեզ մօտ տղամարդն, արդէն կենակցել է շատ կանանց հետ, կամ գոնէ ապահարզանի իրաւունք, կամ քառարայի ամուսնութիւն, կամ (նոյն ճանապարհով առաջ գնալով) եապօնական՝ որոշ ժամանակով. — այս ձեռի ինչո՞ւ չը հասնել նոյն իսկ առականողների»:

Ասում են, որ դա փողոցային անառակութիւնից լաւ է: Հէնց գրանումն է դժբախտութիւնը, որ թոյլատրելով մեզ ստորացնել իդէալը մեր թուլութեան համաձայն, չի կարելի գտնել այն սահմանը, որտեղ որ պէտք է կանգ առնել:

Բայց չէ որ այդ տեսակ դատողութիւնն հէնց ակզրից ուղիղ չէ. ուղիղ չէ ամենից առաջ այն, որ իբր թէ անվերջ կատարելութեան իդէալը չի կարող մեր կեանքի ուղեցոյցը լինել, որ նրան նայելով, հարկաւոր լինէր կամ մերժել այն՝ ասելով, թէ նա ինձ պէտք չէ, որովհետեւ երբէք նրան չեմ համարի, կամ ստորացնել իդէալն այն աստիճանի, որի վրայ թուլութիւնս կուղենար կանգնած մնալ:

Դատել այսպէս, մինոյն է թէ ծովագնացն ասէր իրեն՝ որովհետեւ ևս չեմ կարող գնալ այն գծով, որը կողմնացոյցն է ցոյց տալիս, ուստի զէն կը ձգեմ, կամ կը գաղարեմ այդ կողմնացոյցին նայելուց, այսինքն կը հեռացնեմ իդէալը, կամ կամրացնեմ կողմնացոյցի ալաքն այնտեղից, որը ներկայ բովէյում համապատասխան կլինի նաւիս ընթացքին, այսինքն՝ թուլութեանս համեմատ կը ստորացնեմ իդէալը: Քրիստոսի տուած կատարելութեան իդէալը ցնորք կամ ճարտառանական քարոզների նիւթ չէ, այլ մարդկային բարոյականութեան ամենանհրաժեշտ և բոլորին մատչելի ուղեցոյց է, ինչպէս կողմնացոյցը անհրաժեշտ և մատչելի գործիք է ծովագնացի համար. միայն թէ պէտք է հաւատալ ինչպէս մէկին, այնպէս էլ միւսին: Մարդուն, ինչ զրութեան մէջն ել միւսին: Մարդուն, ինչ զրութեան մէջն ել նա գտնուելիս լինի, միշտ բաւական է Քրիստոսի տուած իդէալի վարդապետութիւնը, որ նա իւր վարմունքների վերաբերութեամբ ամենաուզիղ ցուցումներ ստանայ, թէ նրանցից որը պէտք է անել և որը — չի կարելի: Բայց այս վարդապե-

տութեան պէտք է հաւատալ բոլորովին, միմիայն այս վարդապետութեան պէտք է հաւատալ և դադարել մնացածներին հաւատալուց, ուղիղ այն պէս, ինչպէս որ ծովագնացը պէտք է հաւատայ կողմնացոյցի և դադարի այն բաներին նայելուց ու հաւատալուց, ինչ որ այս ու այն կողմից երեւում է նրան: Քրիստոնէական վարդապետութեամբ պէտք է զեկավարուիլ դիտենալ ուղիղ այնպէս, ինչպէս պէտք է դիտենալ և կողմնացոյց ցով առաջնորդուիլը, իսկ այդ բանի համար պէտք է հասկանալ մեր գրութիւնը, չը վախենալ ձշտութեամբ որոշելու մեր շեղումները իդէալական որոշ ուղղութիւնից: Մարդս ինչ աստիճանի վրայ էլ կանգնած լինի, միշտ հնարաւորութիւն ունի այդ իդէալին մօտենալու և նրա համար չի կարող լինել ոչ մի գրութիւն, որ նա չը կարողանայ ասել, թէ հասել է և չը կարողանայ ձգտել իդէալին աւելի ևս մօտենալու: Այդպէս է մարդուս ձըգտում գէպի քրիստոնէական իդէալն ընդհանրաւ պէս և գէպի ողջախուռութիւնը մասնաւորապէս: Եթէ պատկերացնենք մարդկանց զանազան գրութիւնները սեռական խնդրի նկատմամբ, նկած անմեղ մանկութիւնից մինչեւ ամուսնութիւնը, որի ժամանակ ժուժկալութիւն չի պահպանում, այդ երկու գրութեանց միջի իւրաքանչիւր աստիճանին քրիստոնէութիւնն իւր հանդէս բերած իդէալով՝ միշտ կը ծառայի իրեն որոշ ձեռնարկ՝ թէ այդ աստիճաններից իւրաքանչիւրի վրայ ինչ պէտք է անել և ինչը չանել:

Ի՞նչ պէտք է անի մաքուր պատանին, օրիորդը:

Մաքուր պահել իրենց գայթակղութիւններից և որպէս զի կարողանան ամբողջ կեանքն Աստուծուն և մարդկանց ծառայելուն նուիրել, ձգտել մաքերի և ցանկութիւնների աւելի մեծ ողջախուռութեան:

Ի՞նչ պէտք է անեն գայթակղուած պատանին ու օրիորդը, որոնք ամբողջ մտքով նուիրուած են անսահման սիրուն, կամ դէպի մի անձն ուղղուած սիրուն, որոնք այդ պատճառով կորցրել են Աստուծուն և մարդկանց ծառայելու հնարաւորութեան որոշ մասը: Դարձեալ նոյնը՝ չը իրախուսել իրենց այդ անկման գրծում, զիտենալով, որ այդպիսի զանցառութիւնը ոչ թէ գայթակղութիւնից չի փրկիլ, այլ կը սասակացնի այն. միշտ և հանապաղ ձգտել աւելի և աւելի մեծ ողջախուռութեան, որպէս զի հնարաւորութիւն ունենան Աստուծուն և մարդկանց առաւել մեծ չափով ծառայելու:

Ի՞նչ պէտք է անեն այն մարդիկ, որոնք յաղթանակել չը կարողացան և ընկան: Չը նայել իրենց անկման՝ որպէս օրինական վայելչութեան, ինչպէս անում են ներկայումս, երբ նա արգարացուում է ամուսնական ծիսակատարութեամբ, չը նայել նաև իրեն պատահական զուարձութեան վերայ, որը կարելի է կրկնել ուրիշների հետ էլ, չը նայել նաև որպէս գժբախտութեան վրայ, երբ այդ անկումը տեղի է ունեցել անհաւասարի հետ և առանց ծիսակատարութեան, այլ այդ առաջին անկումն ընդունել իրեն միակ և որպէս անխղելի ամուսնութիւն:

Ամուսնութիւնն իւր անմիջական հետեանք-
ներով՝ զաւակների ծննդեամբ՝ որոշում է ամուս-
նացողների համար Աստուծուն և մարդկանց ծա-
ռայելու նոր և աւելի սահմանափակ մի ձեւ: Ամուս-
նանալուց առաջ մարդս անմիջապէս և բաղմա-
կողմանի կերպով կարող էր ծառայել Աստուծուն
և մարդկանց, իսկ ամուսնութիւնը սահմանափա-
կում է նրանց գործունէութեան շրջանակը և պա-
հանջում՝ նրանցից՝ մեծացնել և դաստիարակել
ամուսնութիւնից առաջ եկած սերունդը, որը
պէտք է ծառայի Աստուծուն և մարդկանց ապա-
գայում:

Ի՞նչ պէտք է անեն այր և կինը, որոնք ապ-
քում են ամուսնական կեանքով և կատարում Աս-
տուծուն և մարդկանց ծառայելու այն սահմանա-
փակ պարտականութիւնները, որոնք առաջ են
գալիս նրանց գործութիւնից՝—մեծացնելով ու դաս-
տիարակելով իրենց զաւակներին:

Դարձեալ միենոյնը.—Ճգտել միասին գայ-
թակղութիւնից աղատուելու, սրբուելու և աղատ-
ուելու մեղքից, և փոխուելու այն յարաբերու-
թիւնները, որոնք արգելք են լինում Աստուծուն
և մարդկանց ծառայելու. Ճգտել քրոջ և եղբօր
մաքուր յարաբերութեամբ փոխարինելու մարմ-
նական սէրը:

Եւ այս պատճառով ճշմարիտ չէ, երբ ասում
են, որ մենք չենք կարող զեկավարուել Քրիստոսի
իդէալով, որովհետեւ նա շատ բարձր է, կատա-
րեալ և անհասանելի: Ո՛չ, մենք նրանով զեկա-

վարուել չենք կարողանում այն պատճառով, որ
ստում և ինքներս խարում ենք մեզ:
Եթէ մենք ասում ենք, որ պէտք է ունե-
նալ աւելի իրադորելի կանոններ քան Քրիստոսի
իդէալը, ապա թէ ոչ մենք Քրիստոսի իդէալին
իրանց, իսկ ամուսնութիւնը սահմանափա-
կում է նրանց գործունէութեան մէջ, որա-
նով մենք այն չենք ասում, որ Քրիստոսի իդէալը
չափազանց բարձր է, այլ միայն ցոյց ենք տալիս,
որ նցան չենք հաւատում և չենք ուզում մեր վար-
ուունքները նրանով որոշել:

Երբ ասում ենք, որ միանգամ ընկնելուց
յետոյ կընկնենք անառակութեան մէջ, չէ որ
զրանով այն ենք ասում, որ անհաւասարի հետ-
անկումն մեղք չէ, այլ զուարձութիւն, յափշտա-
նութիւն, որը չը պէտք է ուզզել նրանով, ինչ որ
մենք ամուսնութիւն ենք անուանում: Եթէ մենք
հասկանայինք, որ անկումը մեղք է և պէտք է
հասկանայինք անքակտելի ամուսնութեամբ և
գալիս միմիայն աղքակտելի ամուսնութեամբ, որն առաջ է գալիս ա-
մուսնութիւնից ծնուած զաւակների դաստիարա-
կութիւնից, այդ գէպքում անկումն երբէք անա-
ռակութեան պատճառ չէր կարող դառնալ:

Իսկ այդ չէ որ միենոյն է թէ՝ երկրագործը
ցանք չը համարէր, ինչ որ իրեն չի յաջողուել, այլ
սերմանելով երկրորդ և երրորդ տեղերումն էլ,
իսկական ցանք համարէր միմիայն իրեն յաջող-
ուածը: Պարզ է, որ նա կը փչացնէր շատ հող և
շատ սերմ և երբէք ցանել չէր սովորիլ: Ընդու-
նեցէք ողջախոնութիւնն իրեն իդէալ, ընդունեցէք,
որ իւրաքանչիւր անկումն՝ ով և ում հետ էլլինի,

միակ և անխղելի ամուսնութիւն է ամբողջ կեանքի համար և պարզ կը լինի, որ Քրիստոսի առւած ձեռնարկը ոչ թէ բաւական, այլ և միակ հնարաւորն է:

Մարդու թոլլ է, նրան իւր ոյժերի համապատասխան խնդիր պէտք է տալ, ասում են մարդիկ: Եօյն բանն է եթէ ասենք.—«Ճեռքերս թոյլ են, չեմ կարող ուզիղ գիծ անցկացնել, այսինքն ամենակարճը երկու կէտերի մէջ. և ուզենալով դործս հեշտացնել՝ այն է ուզիղ գիծ անցկացնել, վերցնեմ իրեն օրինակ կոր կամ բեկրեկ գիծ»: Որքան ձեռքս թոյլ է, այնքան աւելի կատարեալ օրինակ է հարկաւոր ինձ:

Հնդունելով և ճանաչելով քրիստոնէական իգէալը, չի կարելի այնպէս ձեացնել, իբրև թէ մնաք չը գիտենք այն և այդ իգէալը փոխարինենք արտաքին որոշումներով: Իդէալի քրիստոնէական վարդապետութիւնը յայտնուած է մարդկութեան իսկապէս նրա համար, որովհետեւ մարդկութեան ներկայ հասակում նա կարող է ղեկավար լինել: Մարդկութիւնն արդէն անցրել է կրօնական արտաքին որոշումների շրջանը.—այլ ես ոչ չի հաւատում նրանց:

Իգէալի քրիստոնէական վարդապետութիւնն այն միակ վարդապետութիւնն է, որ կարող է մարդկութեան ղեկավար լինել: Չի կարելի և պէտք չէ Քրիստոսի իգէալը փոխարինել արտաքին որոշումներով, այլ ամուր պէտք է բռնել այդ իգէալը մեր առաջ իւր ամբողջ մաքրութեամբ և որ զլիաւորն է, հաւատալ նրան:

Ավի մօտ լողացողին կարելի է ասել. «այն բարձրութնան, հրուանդանի կամ աշտարակի ուղղութիւնը բռնիր.»

Բայց դալիս է ժամանակ, երբ լուղորդներն ավելց հետացել են և նրանց որպէս ուղղուցոյց կարող են ծառայել միմիայն անհասանելի լուսաւորներն ու կողմնացոյցը, որոնք և ցոյց են տալիս ուղղութիւնը. թէ մէկը և թէ միւսը արուած է մեզ:



Ս Ե Պ

Խելացի արարածը կարելի չէ, որ ապրի անձնաւորութեան նպատակների համար: Կարելի չէ այն պատճառով, որ բոլոր ճանապարհները նրան ցոյց են տրուած. և այն բոլոր նպատակները, որոնց ձգտում է մարդուս կենդանական անձնաւորութիւնը, պարզապէս անհասանելի են: Խելացի գիտակցութիւնը ցոյց է տալիս այլ նպատակներ և նրանք ոչ միայն հասանելի են, այլ և կատարեալ բաւարարութիւն են տալիս մարդկային խելացի գիտակցութեան: Ակզբում սակայն, աշխարհային սիալ ուսման չնորհիւ, մարդութում է թէ այդ նպատակներն հակառակ են իւր անձնաւորութեան:

Մեր աշխարհում կրթուած, զարդացած և անձնական չափազանցացրած ցանկութիւնների տէր մարդն, ինչքան էլ աշխատում է ճանաչել իրան իւր խելացի նսի մէջ, նա այդ նսի մէջ չի գտնում ձգտումն զէպի կեանք, որը գտնում է իւր կենդանական անձնաւորութեան մէջ: Խելացի նօր կարծէք գիտում է կեանքը, բայց ինքը չի ապրում և ապրելու էլ հակումն չունի: Խելացի նօր ապրելու ձգտումն չի զգում, իսկ կենդանական նօր պէտք է տանջուի, այդ պատճառով էլ մնում է մի բան՝ ազատուիլ կեանքից:

Այսպէս անբարեխիղճ կերպով են լուծում այդ ինդիրը մեր ժամանակի բացասական փիլիսոփաներ, (Շօպէնդառէրն ու Գարտմանը), որոնք մերժում են կեանքը, բայց և այնպէս՝ ապրում, վիստանակ օգտուելու կեանքից դուրս գալու հնարաւորութիւնից: Դրանց ասածից դուրս է գալիս, որ այս ինդիրը բարեխիղճ կերպով լուծում են անձնասպանները, որոնք դուրս են գալիս՝ ազատում են իրենց համար բացի չարիքից ուրիշ բան չը ներկայացնող կեանքից: Անձնասպանութիւնը նրանք միակ միջոցն են համարում մեր ժամանակի մարդկային անհասկանալի կեանքից դուրս գալու՝ ազատուելու:

Յունատես փիլիսոփաների և ամենասովորական անձնասպանների դատողութիւններն այդպէս են. կայ կենդանական նս, որը ձգտում է կեանք ունենալ. այդ նսն իւր ձգտումով չի կարող բաւարարութիւն գտնել: Կայ ուրիշ նս, խելացի, որը կեանք ունենալու ոչ մի ձգտումն չունի, որը միայն քննադատաբար դիտում է կենդանական նսի կրքութիւնն ու կենսուրախութիւնը և մերժում այդ բոլորը:

Անձնատուր լինելով առաջին նսին, ես տեսնում եմ, որ ապրում եմ անմիտ կերպով և դիմում գժրախսութեան՝ աւելի և աւելի խորունկ խոռուելով նրանց մէջ: Անձնատուր լինելով երկրորդին՝ խելացի նսին, իմ մէջ այլ ես կեանքի մէջ մնալու ձգտումն չի մնում: Ես տեսնում եմ, որ ապրել միայն այն բանի համար, ինչու համար որ ապրել եմ ուղում, այն է անձի երջանկու-

թեան համար, անմիտ և անկարելի բան է, իսկ խելացի գիտակցութեան համար կարելի է և ապրել, բայց միտք չունի և ցանկութիւն էլ չկայ:

Կեանքի այդ բոլոր խաղերին կարելի է նայել, քանի որ ձանձրալի չեն, իսկ երբ ձանձրալի դարձան, կաբելի է հեռանալ, անձնասպան լինել: Այդպէս էլ անում եմ ես:

Ահա կեանքի վերաբերութեամբ այն հակասական հասկացողութիւնը, որին մարդկութիւնը հասաւ գեռ Սոզոմոնից, Բուդդայից առաջ, դէպի որն և ուզում են վերադարձնել նրան մեր ժամանակի կեղծ վարդապետները:

Անձնաւորութեան պահանջներն հասցրած են անմտութեան ծայրահեղ աստիճանների: Արթնացած բանականութիւնը մերժում է նրանց. բայց անձնաւորութեան պահանջներն այնչափ են ա ճել, այնպէս են խաղել մարդու գիտակցութիւնը, որ նրան թւում է թէ բանականութիւնը (միաքը) մերժում է ամբողջ կեանքը: Նրան թւում է, որ եթէ դէն ձգի իւր կեանք հասկացած բանից այն բոլորն, ինչ որ մերժում է նրա գիտակցութիւնը, այդ դէպքում ոչինչ չի մնալ: Նա չի տեսնում այլ ևս ինչ որ մնում է: Մնացորդն՝ այն մնացորդը, որի մէջն է իսկական կեանքը, նրան ոչինչ է թւում:

Բայց լոյսը խաւարի մէջ լուսաւորում էր և խաւարը չը կարողացաւ ծածկել նրան:

Ճշմարտութեան վարդապետութիւնը հասկանում է այս դիլէման (երկութիւնը)՝ կամ ան-

միտ գոյութիւնը և կամ նրանցից հրաժարութիւնը և վճռում է այն:

Ճշմարտութեան վարդապետութիւնը մարդկանց ցոյց է տալիս, որ կենդանական անձնաւորութեան համար նրանց որոնած խաբումիկ երջանկութիւն փոխարէն իրենք միշտ էլ խսկական երջանկութիւն ունին, որը մատչելի է նրանց:

Երջանկութիւն ասածը միայն դատողութիւններից հանած եղբակացութեան նման մի բան չէ, այնպիսի բան չէ, որը պէտք է որոնել մի ինչոք տեղ, այլ մարդուս այն ամենածանօթ երջանկութիւն է, որին անմիջապէս ձգտում է իւրաքանչիւր չը փչացած մարդու հոգին:

Բոլոր մարդիկ իրենց մանկութեան ամենավաղ տարիներից գիտեն, որ բացի կենդանական անձի երջանկութիւնից, կայ նաև կեանքի մի ուսութիչ երջանկութիւն, որը ոչ թէ միայն անկախ է կենդանական անձնաւորութեան դանկութիւններին բաւականութիւն տալուց, այլ ընդհակառակն, այնպան աւելի մեծ է լինում, որքան մեծ է կենդանական անձնաւորութեան երջանկութիւնից հրաժարութիւնը:

Ահա այդ զգացմունքը, որը լուծում է մարդկային կեանքի բոլոր հակասութիւններն և մարդուս ամենամեծ երջանկութիւն տալիս, բոլոր մարդիկն էլ գիտեն. Այդ զգացմունքն է սէրը:

Կեանքը գիտակցութեան օրէնքին ննթարկուած կենդանական անձնաւորութեան գործունէութիւն է: Գիտակցութիւնն այն օրէնքն է, որին պէտք է ստորագրուած լինի մարդուս կենդանա-

կան անձնաւորութիւնը հէնց իրեն երջանկութեան համար; Աէրն է մարդուս միակ և խելացի գործունէութիւնը: Կենդանական անձնաւորութիւնը ձգտում է երջանկութեան, իսկ զիտակ-ցութիւնը մարդուս ցոյց է տալիս անձնական երջանկութեան խաբուսիկ լինելը և թողնում մի ճառապարհ: Ահա այդ ճանապարհով գործունէութիւնն է սէրը,

Մարդուս կենդանական անձնաւորութիւնը ձգտում է երջանկութեան, իսկ խելացի զիտակ-ցութիւնը ցոյց է տալիս նրան իրար հետ կոռուոք բոլոր անձանց խղճալիութիւնը. ցոյց է տալիս նրան, որ նրա կենդանական անձնաւորութեան համար երջանկութիւն չկայ և լինել չի կարող. ցոյց է տալիս նրան, որ միակ երջանկութիւնը և նրա համար հնարաւորը միայն այն կը լինէր, երբ գոյութիւն չէր ունենալ ոչ կոիւն այլոց հետ, ոչ երջանկութեան ընդհատումն, ոչ նրա-նով յագենալը, ոչ էլ նախապէս մահուան երակիւղը:

Եւ ահա մարդս իւր հոգւոյ մէջ գտնում է, ինչպէս մի որոշ փականքի համար շինած բանալի, այն զգացմունքը, որը նրան տալիս է հէնց այն երջանկութիւնը, որի վրայ՝ իրրե միակ հնարաւորի՝ մատնանիշ է լինում նրա զիտակցութիւնը: Եւ այդ զգացմունքը ոչ թէ միայն լուծծում է կեանքի առաջուայ հակասութիւնը, այլ կարծէք հէնց այդ հակասութեան մէջն է տեսնում արտայացուելու հնարաւորութիւնը:

կենդանական անձինք իրենց նպատակների

համար ուզում են օդուել մարդու անձնաւորութեամբ: Իսկ սիրոյ զգացմունքը նրանց մղում է ուրիշների համար անձնուրաց լինելու: Կենդանական անձը տանջուում է. և հէնց այդ տանջանքներն ու նրանց թիթեացումն կազմում է սիրոյ գործունէութեան գլխաւոր առարկան:

Կենդանական անձնաւորութիւնն՝ երջանկութեան ձգտելով, իւր ամեն մի չնչառութեամբ ձգտում է ամենամեծ չարիքի՝ մահուան, որի նախատեսութիւնը խախտում է անձնաւորութեան ամենայն երջանկութիւն: Իսկ սիրոյ զգացմունքը ոչ թէ միայն ոչնչացնում է այդ երկիւզը, այլ ընդհակառակն, մարդուս մղում է ուրիշների բարեիքի համար իւր կենդանական գոյութեան վերջին գոհարեւութեան:

Ամեն ոք զիտէ, որ սիրոյ զգացման մէջ մի ինչ որ առանձին բան կայ, որ ընդունակ է լուծելու կեանքի բոլոր հակասութիւնները և մարդեւու կատարեալ երջանկութիւնը, որին գուն տալու այն կատարեալ երջանկութիւնը, որին ձգտելու մէջն է կայանում նրա կեանքը: «Բայց չէ որ այդ զգացմունքը, որն առաջ է դալիս հազ-է այդ զգացմունքը, որն առաջ է դալիս հազ-է առաջէպ, երկար չի շարունակւում և նրա հետեանք են լինում աւելի վատ տանջանքներ.» կրկնում են սովորաբար կեանք չը հասկացող մարդիկ:

Աէրն այդ մարդկանց համար հանդիսանում է ոչ թէ կեանքի այն միակ և ամենաօրինաւոր ար-

տայայտութիւն, ինչպէս որ նա խելացի գիտակ-
ցութեան համար է, այլ իբրև մինն այն հազա-
րաւոր բազմատեսակ տրամադրութիւններից, որոնց
մէջ մարդս լինում է իւր գոյութեան ընթացքում։
Պատահում է, որ մարդս պճնում է. պատահում է,
որ նա յափշտակուած է գիտութեամբ և գեղար-
ուեստով, ծառայութիւնով, փառասիրութեամբ և
վաստակով. պատահում է, որ նա սիրում է որ և
մէկին։

Կեանք չըմբռնող մարդկանց սիրոյ տրամա-
դրութիւնը ներկայանում է ոչ թէ իբրև մարդ-
կային կեանքի էութիւն, այլ իբրև մի պատահա-
կան տրամադրութիւն, որն անկախ է նրա կամ-
քից՝ ինչպէս և միւս տրամադրութիւնները, որոնց
մարդս ենթակայ է իւր կեանքի ընթացքում։ Յա-
ճախ նոյն իսկ կարելի է կարդալ և լսել դատո-
ղութիւններ այն բանի մասին, որ սէրը մի տե-
սակ անկանոն և կեանքի սովորական ընթացքը
խանգարող և տանջող մի տրամադրութիւն է. —
Նման այն բանի, ինչպէս որ պէտք է թուի արևի
ծաղութը բուին։

Ճշմարիտ է, այդ մարդիկն էլ զգում են, որ
սիրոյ գրութեան մէջ մի ինչ որ առանձին՝ աւելի
նշանաւոր բան կայ, քան թէ միւս բոլոր տրա-
մադրութիւնների ժամանակ, բայց դրանք, չը հաս-
կանալով կեանքը, չեն կարող հասկանալ նա և
սէրը. ուստի և սիրոյ գրութիւնը նրանց նոյնքան-
դժբախտ և խարբութիկ է երեւում, որքան և միւս
բոլոր գրութիւնները։

Սիրել ... բայց որին ... ժամանակաւորապէս
չարժէ, իսկ յաւիտեան սիրել անհնարին է . . .

Այս բառերը ճշտութեամբ արտայայտում են
մարդկանց աղօտ գիտակցութիւնը, որ սիրոյ մէջն
է փրկութիւնը կեանքի թշուառութիւնից և այն
միակ բանը, որը նման է ճշմարիտ երջանկութեան։
Այդ բառերն իրենց մէջ բովանդակում են և խոս-
տովանութիւն, որ կեանք չը հասկացող մարդկանց
համար սէրը փրկութեան խարիսխ լինել չի կա-
րող։ Սիրելու ոչ չկայ և ամեն անսակ սէրն
անցնում է։ Այդ պատճառով սէրը կարող էր եր-
ջանկութիւն լինել միայն այն ժամանակ, եթե
կը լինէր սիրելու առարկան, և կինէր նա, որին
կարելի է սիրել յաւիտեան։ Բայց որովհեան այդ
չկայ, ուրիմն և սիրոյ մէջն էլ փրկութիւն չկայ և
սէրը նոյնքան խարբութիկ է և նոյնպիսի տանջանք,
ինչպէս և բոլոր մնացածը։

Ի հարկէ միայն այսպէս — և երբէք ուրիշ
կերպ չեն կարող հասկանալ կեանքն այն մարդիկ,
որոնք սովորեցնում և սովորում են, որ կեանքը
ոչ այլ ինչ է, եթէ ոչ անամանական գոյութիւն։

Այդպիսի մարդկանց համար սէրը նոյն իսկ
չի համապատասխանում այն հասկացողութեան,
որ մենք ամենքս ակամայ միացնում ենք սէր
բառի հետ։ Եաւ նրանց ասելով, սիրողին և սի-
րածին երջանկութիւն պարզեց բարի գործու-
նէութիւն չէ։ Սէրը՝ կեանք ասած բանը անաս-
նական անձնաւորութեան մէջ ընդունող մարդ-
կանց համար յաճախ այն զգացմունքն է, որի
առթիւ իւր մանկան երջանկութեան համար մայ-

բերից մինը խլում է միւս մանկան կաթը նրա մօրից և տանջլում է զինցման յաջողութեան մասին անհանգստանալուց։ Այդպիսի մարդկանց համար սէրն այն զգացմունքն է, որպէս հայրն իրեն տանջելով, խլում է հացի կտորը սովի ենթակայ մանուկներից, որպէս զի իւր զաւակներին ապահովի, այդպիսիների համար դա այն զգացմունքն է, որով կոչ սիրողը տանջլում է այդ սիրուց և հարկադրում նրան՝ տանջուել, մոլորեցնելով, կամ խանդոտութեան չործիւ կործանելով թէ նրան և թէ իրեն։ Կեանք չը հասկացող մարդկանց համար սէրն այն զգացմունքն է, որով մարդը սիրելուց քռնաբարում է կնոջը. դա այն զգացմունքն է, որով մի ընկերութեան մարդիկ վնասում են միւսներին՝ իւրայիններին պաշտպանելու համար. դա նրանց համար այն զգացմունքն է, որով մարդու տանջլում է իրեն սիրած զբաղմունքի վրայ և այդ զբաղմունքով վիշտ և տանջանք է պատճառում իրեն չը ապահով մարդկանց։

Տայց այդ գեռ քիչ է. կեանք ասածը անասնական անձնաւորութեան մէջ ընդունող մարդկանց համար սիրոյ զործունէութիւնն այնպիսի զժուարութիւններ է ներկայացնում, որ նրա արտայայտութիւնները ոչ միայն տանջող, այլ և անտանելի են դառնում։ Սիրոյ մասին չը պէտք է դատել. — ասում են սովորաբար կեանք չը հասկացող մարդիկ. — այլ անձնատուր պէտք է լինել այն նախապատռութեան և աչառութեան զգացման, որն զդում ես. ահա այդ են իսկական սէր համարում։ Նրանք իրաւունք ունին, երբ

են, որ սիրոյ մասին դատել չի կարելի, որ ամեն պատղութիւն սիրոյ մասին՝ ոչնչացնում է սէրը. բայց բանը նրանումն է, որ սիրոյ մասին սէրով են չը դատել միայն այն մարդիկ, որոնք կարող են զբանակցութիւնը արդէն զբաղեցրել են իրենց զիտակցութիւնը կեանքն հասկանալու համար և հրաժարուել անձնական կեանքի նրջանկութիւնից։ Իսկ նրանք, նաև կեանքի նրջանկութիւնից։ Որոնք չեն համարում են կեանք գանձութեան համար, չեն կարող դատել։ Նրանք անհրաժեշտօրէն պէտք է դաշտեն, որպէս զի անձնատուր լինին այն զգացմունքի, որն իրենք սէր են կոչում։ Այդ զգացման մունքի, որն իրենք սէր են կոչում։ Այդ զգացման ամենայն տեսակ արտայայտութիւնն անհնարին է ամենայն տեսակ արտայայտութիւնն անհնարին է ամենայն համար առանց դատողութեան, առանց անուծանելի ինդիրներ լուծնլու։

Մարդիկ իրօք գերադասում են իրենց մանական բարեկամներին, իրենց կնոջը, զաւակներին, կերենց հայրենիքը՝ միւս բոլոր մանուկներից, կեանցից, բարեկամներից և հայրենիքից, և այդ զգացմունքը կոչում են սէր։

Սիրել նշանակում է բարիք գործել։ Սէրն այդպէս ենք հասկանում ամենքս և այլապէս էլ կնոջով հասկանալ։ Եւ ահա ևս սիրում եմ չենք կարող հասկանալ։ Կնոջս, զաւակիս և հայրենիքս, այսինքն՝ կնոջս, կնոջս, զաւակիս և հայրենիքիս աւելի բարիք եմ ցանցաւակիս և հայրենիքիս աւելի բարիք եմ ցանցանում, քան ուրիշ երեխաներին, կանանց և հայրենիքների։ Երբէք չի լինում և լինել ել չի կարենիքների։ Երբէք միայն կնոջս, միայն զաւակիս, բոլոր ևս սիրեմ միայն կնոջս, միայն զաւակիս, միայն հայրենիքս և մարդկանց առհասարակ։ Այն նրջանկութեան պայմանները, որ նա սիրով ցան-

կանում է սիրած զանազան անձանց միաժամանակ, իրար հետ այնպէս սերտ են շաղկապուած, որ սիրոյ իւրաքանչիւր գործունէութիւնը սիրած արարածներից որևէ է մէկի համար՝ ոչ թէ միայն խանդարում է նրա գործունէութիւնն այլոց օգտափն, այլ կատարւում է ուղղակի ի վեաս միւսների:

Եւ ահա այստեղ առաջ են գալիս հարցեր՝ թէ յանուն որպիսի սիրոյ և ինչպէս գործել: Յանուն որպիսի սիրոյ զոհաբերել միւս սէրը: Որին աւելի սիրել և առաւել բարիք անել՝ կնոջը թէ զաւակներին, կնոջն ու զաւակներին թէ բարեկամներին: Ի՞նչպէս ծառայել սիրած հայրենիքին, որ չը խանդարուի այն սէրը, որը տածում ենք զէպի կինն ու զաւակները, զէպի բարեկամները: Վերջապէս ի՞նչ կերպ վճռենք այն հարցերը, թէ ես ի՞նչ չափով կարող եմ զրնել անձս, որն հարկաւոր է այլոց ծառայելու համար: Ես որչափ պէտք է հողամ անձիս համար, որպէս զի կարող զանամ՝ ուրիշներին սիրելով, ծառայել նրանց:

Այն մարդկանց, որոնք իրենց հաշիւ չեն տուել իրենց կողմից սէր անուանած զգացմանց մասին, այս բոլոր հարցերը թւում են շատ պարզ, մինչդեռ նրանք ոչ թէ միայն պարզ չեն, այլ ուղղակի անլուծելի են: Այս հարցերին պատասխան տալը միայն այն մարդկանց է հեշտ թւում, որոնք մոռանում են մարդկային կեանքի իսկական պայմանները:

Եթէ մարդիկ աստուածներ լինէին, այն ժամանակ միայն կը կարողանային սիրել ընտրեալ

մարդկանց, այն ժամանակ միայն մի մասի նաւիսպատութիւնը միւսից՝ կարող էր իսկական սէրինել. բայց մարդիկ աստուածներ չեն, այլ գտընուում են գոյութեան այն պայմաններում, որոնց ժամանակ բոլոր կենդանի արարածները միշտ իրարով են ապրում, լափում են իրար թէ ուղիղ և թէ փոխարերական մաքով, և մարդս՝ իբրեւ խելացի էակ, պէտք է զիտենայ և տեսնի այդ: Նապէտք է զիտենայ, որ մինի մարմնական երջանութիւնը սաացուում է ի վեաս միւսի:

Կենդանական շահերի այն ձնչման և կռուի ժամանակ, որոնք աշխարհիս կեանքն են կազմում, մարդս չի կարող սիրել ընտրեալներին, ինչպէս այդ երեակայում են կեանք չը հասկացող մարդիկ:

Մարդս եթէ սիրում է նոյն իսկ ընտրեալներին, երբէք միմիայն մէկին չի սիրում: Ամենարին, մարդ սիրում է և մօրը, և կնոջը, և մանկան, նայն մարդ սիրում է և մօրը, և կնոջը, և բարեկամներին, և հայրենիքը, և նոյն իսկ բոլոր մարդկանց: Եւ սէրը միայն խօսը չէ. (ինչպէս և այս բանում համաձայն են ամենքը), այլ ուրիշայս բանութեան համաձայն են ամենքը, այլ ուրիշների երջանկութեան համար ուղղուած մի գործունէութիւն է. իսկ այդ գործունէութիւնը որ և է կարդով չի կատարում, որպէս զի մարդս զգայնական իւր ամենասուժել սիրոյ պահանջները, յետոյ աւելի պակաս ուժեղները և այն և այն: Սիրոյ պահանջները զբւում են անընդհատ՝ բոլորը միապահանջների կարգի: Այս բոպէիս եկաւ մի քաղցած ծերունի, որին ես փոքր ի՞նչ սիրում եմ կերակուր է խնդրում, որը ես պահել եմ սիրած զաւակներիս ընթրիքի համար, ինչպէս կը սկսեմ:

ևս այս ժամուայ պակաս-ուժեղ սիրոյ պահանջն
ու աւելի ուժեղ սիրոյ ապագայ պահանջները:

Ի՞նչպէս վճռել, թէ ումը պէտք է ծառայել
և ինչ չափով. մարդկանց թէ հայրեներին, բա-
րեկամներին թէ ինոցա, կնոջս թէ հօրս, հօրս թէ
երեխաներին, երեխաներին թէ ինձ, (որպէս զե,
երբ որ պէտք կլինի, հնարաւորութիւն ունենամ
և այլոց ծառայելու):

Թէ որ այս բոլորը սիրոյ պահանջներն են և
այնպէս են հիւսուած իրար հետ, որ մի մասի
քաւարարութիւն տալը մարդուս զրկում է միւս
մասի պահանջներին բաւարարութիւն տալու հնա-
րաւորութիւնից: Իսկ եթէ ես ինձ թոյլ տամ չը
հազցնել ցրտից սառած երեխային, որովհետեւ դրա
համար հարկաւոր շորը երբ և իցէ պէտք կը
լինի զաւակներիս, ուրեմն ես կարող եմ յանուն
ապագայ զաւակներիս՝ սիրոյ այլ պահանջներին
անձնատուր չլինել:

Նոյնն է և հայրենիքի, և ընարած պարագ-
մունքի և բոլոր մարդկանց ուղղած սիրոյ վերա-
բերութեամբ: Եթէ մարդս կարող է մերժել ամե-
նափոքր սիրոյ պահանջներն՝ յանուն ապագայ
ամենամեծ սիրոյ պահանջների, ապա ուրեմն պարզ
չէ, որ այդպիսի մարդն, եթէ նա ամբողջ ուժով
էլ կամնայ այդ, երբէք չի կարողանալ կըուել, թէ
ինչ չափով նա կարող է մերժել ներկայիս պա-
հանջներն յանուն ապագայ պահանջների և այդ
պատճառով էլ, հնարաւորութիւն չունենալով վըճ-
ռելու այդ խնդիրը, միշտ կընտրի սիրոյ այն ար-
տայայտութիւնը, որն աւելի համելի կլինի նրա

համար, այսինքն կը գործի ոչ թէ յանուն սիրոյ,
այլ յանուն իւր անձի: Եթէ մարդս վճռում է, որ
աւելի լաւ է ներկայ ամենափոքր սիրոյ պահանջ-
ներից զուսպ մնալ յանուն այլ ապագայ մեծ սիրոյ
ներից զուսպ մնալ յանուն այլ ապագայ մեծ սիրոյ
արտայայտութեան, ապա ուրեմն նա խարումէ կամ
սիրում: Ապասնի սէր չկայ, սէրը միայն ներկայ ժա-
մանակի գործունէութիւն է. իսկ այն մարդը, որ
սէր չի արտայայտում ներկայումս նա սէր չունի:

Նոյն բանն է տեղի ունենում, ինչ որ կլինէր,
եթէ կեանք չունեցող մարդիկ կեանք պատկերա-
եցնէին: Եթէ մարդիկ անասուններ լինէին և գի-
ցնէին: Եթէ մարդիկ անասուններ լինէին և գի-
ցնէին տալ և նրանց անասունական գոյութիւնն օրի-
չէին տալ և նրանց անասունական գոյութիւնն օրի-
նաւոր և բախտաւոր կը լինէր: Նոյնն է և սիրոյ
վերաբերութեամբ. եթէ մարդիկ գիտակցութիւնից
գուրկ անասուններ լինէին, նրանց կը սիրէին,
որոնց որ սիրում են, իրենց գայլիկներին, իրենց
հօտը և չէին գիտենալ, որ ուրիշ գայլերն էլ իրենց
լակոտներն են սիրում, ուրիշ հօտերն էլ իրենց
հօտակիցներին և նրանց սէրն ու կեանքն այն կը
հօտակիցներին և նրանց գիտա-
լինէր, ինչ որ համապատասխան է նրանց գիտա-
կցական աստիճանին: Բայց մարդիկ խելացի էակ-
ներ են և չեն կարող չը տեսնել, որ ուրիշ էակներն
ներ են և չեն կարող սէրն ունին գէպի իւրայինները և այդ
էլ նոյնպիսի սէրն ունին գէպի իւրայինները պէտք է
պատճառով սիրոյ այդ զգացմունքները պէտք է
պատճառով սիրոյ այդ զգացմունքները պէտք է
մի բան:

Իսկ եթէ մարդիկ իրենց բանականութիւնը գործ են ածում արդարացնելու և մեծացնելու այն կենդանական կամ բարի զգացմունքը, որը նրանք սէր են անուանում և այդ զգացման տճե չափեր են տալիս, այդ դէպքում նա դառնում է ոչ թէ բարի, այլ ընդհանական՝ մարդուն դարձնում է ամենակատաղի, չար և սոսկալի անասուն. (սա վաղուց յայտնի մի ճշմարտութիւն է):

Այն, ինչը որ կեանք չըմբռնող մարդիկ սէր են անուանում, դա միայն իւր անձնաւորութեան երջանկութիւն որոշ պայմանների նախապատռութիւն է միւսներից: Երբ կեանք չը հասկացող մարդն ասում է, որ նա սիրում է իւր կնոջը կամ երեխային, կամ բարեկամին, զրանով ասում է միայն այն, որ նրա կեանքի մէջ՝ կնոջ, զաւակի և բարեկամի ներկայութիւնը մեծացնում է նրա անձնական կեանքի երջանկութիւնը:

Այդ նախապատռութիւնները—նոյնն են սիրոյ վերաբերութեամբ, ինչ որ գոյութիւնը—կեանքի վերաբերութեամբ: (Եթէ գոյութիւնը կարելի է կեանք անուանել, ապա ուրեմն և նախապատռութիւնը կարելի կլինի սէր կոչել): Եւ ինչպէս որ կեանք չըմբռնող մարդիկ գոյութիւնը կեանք են անուանում, նոյնպէս և այդ մարդիկ իրենց անձնական գոյութեան որոշ պայմանների միւսներից նախապատիւ համարելը կոչում են սէր:

Այդ զգացմունքները՝ որոշ անձանց նախապատռութիւնը՝ զիցուք զաւակների, նոյն իսկ որոշ պարապմունքների, օրինակ՝ զիտութեան, գեղարուեստի, մենք նոյնպէս սէր ենք կոչում, բայց

նախապատռութեան այդ իրարից անվերջ տարբերացմունքները կազմում են մարդկանց տեսանելի և սպասելի անձնական կենդանական կեանքի ամբողջ բարդութիւնը և չեն կարող սէր կոչուել, որովհետեւ նրանք սիրոյ գլխաւոր յատկանիցից զուրկ են—զուրկ են այն գործունէութիւնից, որի նպատակն ու հետեանքը երջանկութիւն է:

Այդ նախապատռութիւնների արտայայտութեան կրօնութիւնը ցոյց է տալիս միմիայն կենդանական կեանքի էներգիան (նռանգը): Մարդկանց մի մասը միւսից նախապատիւ համարելու կրօնութիւնը, որը սխալմամբ է սէր կոչում, միմիայն այն վայրի՝ պատուաստի ծառ է, որի վրայ կարող է պատուաստուել իսկական սէրը և պտուղներ տալ: Բայց ինչպէս որ վայրի տունկը խնձորենի չէ և պտուղ չի տալիս, կամ տալիս է քաղցրի փոխարէն դառը պտուղներ, այդպէս և աշառութիւնը սէր չէ և մարդկանց ոչ միայն բարեկը չի տալիս, այլ առաջացնում է աւելի մեծ չարիք:

Ճշմարիտ սէրը հնարաւոր է դառնում միայն այն ժամանակ, երբ մարդս հրաժարւում է անձնական երջանկութիւնից. ճշմարիտ սիրոյ հնարաւորութիւնը միայն այն մամանակն է սկսւում, երբ մարդս հասկացել է, որ նրա կենդանական անձնաւորութեան երջանկութիւնն իրեն համար երջան-

կութիւն չէ։ Միայն այդ ժամանակ նրա կեանքը բոլոր հիւթերը փոխադրուում են ձշմարիտ սիրոց ազնուայրած պատուասաի մէջ, որն աճում է կենդանական անձնաւորութիւնն ընի վերայ՝ նրա ամբողջ ուժով։

Մարդիկ անձնականից հրաժարում են ոչ թէ այն սիրոյ չնորդիւ, որը տածում են դէպի հայրը, դէպի զաւակներ, կինը, բարեկամներ և դէպի բարի ու սիրելի մարդիկ, ինչպէս այդ սուվորաբար կարծում են, այլ միայն անձնական գոյութեան զուր լինելն հասկանալուց յետոյ՝ մարդու ճանաչում է ձշմարիտ սէրը և ձշմարտապէս էլ կարող է սիրել հօրը, որդուն, կնոջը, զաւակներին և բարեկամներին։ Մէրը միւս արարածներին իրենից՝ իւր կենդանական անձնաւորութիւնից գերադաս համարելն է։

Մոռանալ անձնական մերձաւոր շահերը նոյն այդ անձնաւորութիւնն հեռաւոր նպատակներին հասնելու համար, ինչպէս այդ լինում է սէր կոչուած բանի ժամանակ, որն անձնուրացութեամբ չի աճել և զօրացել, դա միայն անձնական երջանկութեան համար արարածներից մի քանիսին միւսներից գերադաս համարելն է։ ձշմարիտ սէրը գործոն զգացմունք դանալուց առաջ, պէտք է որոշ զրութիւն եղած լինի։ Միրոյ սկիզբն ու նրա արմատը զիտակցութիւն խաւարեցնող զգացման տեսչանք չէ (որոյն), ինչպէս որ սովորաբար կարծում են, այլ այն խելացի, պայծառ և այդ պատճառով էլ անդորր մի տրամադրութիւն է, որն յատուկ է երեխաներին և խելացի մարդկանց։

Դա՝ առհասարակ դէպի բոլոր մարդիկ բարեհաճ լինելու տրամադրութիւն է, որը յատուկ է մանուկներին, իսկ հասակաւոր մարդկանց մէջ ծնունդ է առնում անձնուրացութիւնից յետոյ և ուժեղանում՝ անձնական երջանկութիւնից հրաժարուելու չափով։ Որքան յամախ ենք լսում՝ «ինձ համար միւսնոյն է, ինձ ոչինչ պէտք չէ» բառերը, և միւսնոյն ժամանակ տեսնում մարդկանց թշնամական վերաբերմունքը։

Իւրաքանչիւր մարդ այլոց անբարեացակամ լինելու բողէին թող փորձի ի խորոց սրտի և անկեղծ ասել իրեն՝ «ինձ համար միւսնոյն է, ինձ ոչինչ պէտք չէ» և գոնէ ժամանակաւորապէս ոչինչ չը ցանկայ իրեն համար և փորձով կը հասկանայ, թէ ինչպէս՝ հէնց նոյն բողէին, իրեն անձնուրացութեան անկեղծութեան չափով, կը ոչնչանաց ամենայն չարակամութիւն և որպիսի ուժեղ հոսանքով կը ցայտի միւսնչ այդ նրա սրտի մէջ փակուած բարեհաճութիւնը դէպի բոլոր մարդիկ։

Իրօք էլ սէրը այլ արարածներին (ուրիշ էակներին) իրենից գերադաս համարելն է, և չը որ բոլորս էլ այդպէս ենք հասկանում և սէրն այլապէս էլ հասկանալ չենք կարող։

Միրոյ մեծութիւնն այն կոտորակի մեծութիւնն է, որի համարիչն է իմ համակրութիւնն ու աչառութիւնը դէպի ուրիշներ՝ անկախ իմ իշխանութիւնից, իսկ յայտարարն է սէրը, որը կարող է անսահման մեծանալ և փրքրանալ այն չափով, ինչ չափով որ նշանակութիւն կը տամ իմ կենդանական անձնաւորութեան։

Իսկ մեր աշխարհի դատողութիւնը սիրոյ և
նրա աստիճանների մասին նման է առանց յայ-
տարարների մեծութիւնն ի նկատի ունենալու՝ մե-
միայն համարիչների չափով՝ կոտորակի մեծու-
թեան մասին գատարզութիւն տալուն:

Ճշմարիտ սիրոյ մշտական հիմքն է անձնա-
կան երջանկութիւնից հրաժարութիւն ու դրանից
առաջ եկած բարեհաճութիւնը դէպի բոլոր մար-
դիկ: Միայն այդ բարեհաճութեան վրայ կարող է
աճել ճշմարիտ սէրը դէպի մարդիկ՝ լինին նրանք
օտար թէ մերձաւոր: Միայն այդպիսի սէրն է
տալիս կեանքի ճշմարիտ երջանկութիւնն ու վըճ-
ռում խելացի և կենդանական գիտակցութեան
երկութական հակասութիւնը:

Այն սէրը, որի հիմքը չի կազմում անձից
հրաժարութիւնն ու այդ պատճառով միատեսակ բա-
րեհաճութիւնը դէպի բոլոր մարդիկ, միայն անաս-
նական կեանքն է և ենթակայ նոյն և աւելի մե-
ծամեծ զժբախտութիւնների, աւելի մեծ անմը-
տութեանն, քան թէ այդ կեանքը սիրոյ զժացմունքից
զուրկ կեանքը: Այն աչառութեան զժացմունքը,
որը սէր են կոչում, ոչ միայն չի ոչնչացնում գո-
յութեան կոիւը, չի աղատում անձնական զուար-
ձութիւնների ետեից ընկնելուց և չի փրկում մա-
հուանից, այլ աւելի և աւելի խաւարեցնում է
կեանքը, կատաղի դարձնում կոիւը, սաստկացնում
աղահութիւնը դէպի անձնական և ուրիշների
զուարձութիւններ և մեծացնում է անձնական և
այլոց սարսափը մահուանից առաջ:

Այն մարդը, որը կեանք ասած բանն ենթադ-

բում է կենդանական անձնաւորութեան գոյու-
թեան մէջ, երբէք չի կարող սիրել, որովհետեւ
աէրը նրան կը թուի իրեն անձնաւորութեան հա-
կառակ մի գործունէութիւն: Այդպիսի մարդու
կեանքը նրա անասնական գոյութեան մէջն է կա-
յանում, իսկ սէրն ամենից առաջ հէնց այդ եր-
ջանկութեան զոհաբերութիւն է պահանջում: Եթէ
կեանքը չը հասկացող մարդը նոյն իսկ ցանկանայ
անկեղծ կերպով նուիրուել սիրոյ գործունէու-
թեան, նա այդ անելու հնարաւորութիւն չի ու-
նենալ, մինչեւ չը հասկանայ կեանքը և չը փոխի
իւր յարաբերութիւնը դէպի նա: Իրեն կեանքը
կենդանական անձնաւորութեան գոյութեան մէջ
սահմանափակող մարդը, ամբողջ կեանքի ընթաց-
քում մեծացնում է իւր անասնական երջանկու-
թեան բոլոր պայմանները՝ ձեռք բերելով հարս-
տութիւն և պահպաննելով այն, հարկադրում է ու-
րիշներին ծառայել իւր անասնական երջանկու-
թեան և այդ բարիքները մասնադրում է այն
մարդկանց, որոնք նրա անձնական երջանկութեան
համար հարկաւոր են եղել Նա Բնչպէս կարող է
նուիրել իւր կեանքը, երբ այդ կեանքը պահպան-
ռում է ուրիշներից և ոչ թէ իրենից: Նրա համար
աւելի և զժուար է լինում ընտրել, թէ նախա-
պատիւ համարուած մարդկանցից որին թողնել
կուտակուած բարիքն ու որին ծառայել:

Անձնուրացութեան ընդունակ լինելու համար
ամենից առաջ հարկաւոր է տալ այն կարողու-
թիւնը, որը նա իւր անձի երջանկութեան համար
վերցնում է ուրիշներից և յետոյ էլ անել անհնա-

րինը՝ վճռել, թէ մարդկանցից որին ծառայել իւր կեանքով:

Առաջ քան նա ընդունակ կլինի սիրելու, այսինքն անձնազոհութեամբ բարիք գործելու, նա պէտք է դադարի ատելուց՝ չարիք գործելուց, դադարի իւր անձի բարօրութեան համար մարդկանց մի մասը միւսից նախապատիւ համարելուց:

Այն մարդու համար միայն հնարաւոր է իրեն և ուրիշներին բաւականութիւն պատճառով սիրոյ գործունէութիւնը, որն անձնական կեանքի մէջ չի տեսնում բարօրութիւնը, այդ պատճառով հոգս չի անում այդ կեղծ բարիքի համար, և պահպանում է իւրաքանչիւր մարդուն յատուկ բարեհանութիւնը դէպի բոլոր մարդիկ: Այդպիսի մարդու բարօրութիւնը սէրն է, ինչպէս և բոյսի բարօրութիւնը լուսոյ մէջն է. այդ պատճառով էլ՝ ինչպէս ոչնչով չը ծածկուած բոյսը չի կարող հարցնել և չի հարցնում, թէ որ կողմանի ածի և լաւ է արդեօք լոյսը, չը սպասէլ արդեօք աւելի լաւի, և վերցնում է այն միակ լոյսը, որը կայ աշխարհում ու ձգտում է դէպի նա, այնպէս էլ անձնաւորութեան բարիքից հրաժարուող մարդը չի դատում այն բանի մասին, թէ ուրիշ մարդկանցից խլած ինչ բանը որ սիրելի է ակներին տայ, կամ թէ չկայ արդեօք ուրիշ աւելի լաւ սէր, բան այն, որն այժմս արտայայտում է իւր պահանջները, այլ նուիրում և նուիրում է գոյութիւնն այն սիրուն, որը մատչելի է նրան և նրա առաջն է: Միայն այդպիսի սէրն է, որ լիակատար բաւականութիւն է տալիս:

Եւ չկայ այլ սէր բացի նրանից, երբ մարդու դնում է իւր անձը բարեկամի համար: Սէրը միմիայն այն ժամանակն է սէր, երբ նա անձնաղութիւն է: Միայն այն գէպում, երբ մարդու տալիս է ուրիշին ոչ թէ իւր ժամանակը, իւր ոյժերը, այլ երբ վատնում է իւր մարմինը սիրած առարկայի համար, երբ տալիս է նրան իւր կեանքը, միայն այդ է, որ մենք ամենքս սէր ենք ընդունում և միայն այդպիսի սիրոյ մէջ ենք դանում երջանկութիւնը, սիրոյ վարձարութիւնը: Եւ աշխարհա իւր գոյութիւնը պահպանում է չնորհիւ խարհա իւր գոյութիւնը պահպանում է չնորհիւ այն բանի, որ մարդկանց մէջ գոյութիւն ունի այդպիսի սէրը Երեխային կերակրող մայրը իրեն իբրև կերակուր է տալիս զաւակներին, որոնք այդպիսի սէրը կերակուր է տալիս զաւակներին, որոնք այդ բանի կենդանի մնալ չը պէտք է կաշառանց այդ բանի կենդանի մնալ չը պէտք է կաշառանային: Ահա դա է սէրը: Նոյն ձեռվե էլ իւր բողանային: Ահա դա է սէրը: Նոյն ձեռվե էլ իւր մարմինը բաքանչիւր աշխատաւոր մշակն էլ իւր մարմինը բաքանչիւրին իբրև կերակուր՝ նրանց երտալիս է ուրիշներին իբրև կերակուր՝ նրանց երտալիս է ուրիշներին իւր մարմինն ու մօտեցնում մահուան: Նեցնում է իւր մարմինն ու մօտեցնում մահուան: Եւ այդպիսի սէրը հնարաւոր է միմիայն այն մարմինը համար, որն անձնազոհութեան հնարաւորուգուն և այն անձանց մէջ, որոնց նա սիրում է, թեան և այն անձանց մէջ, որոնց նա սիրում է, ոչ մի արդելք չի նկատում: Այն մայրը, որն իւր ոչ մի արդելք չի նկատում է դայեակի, սիրել չի կարող երեխային յանձնել է դայեակի, սիրել չի կարող այն մարդը, որը ձեռք է բերում և պահպանում վողերը, սիրել չի կարող:

Սէրը հէնց կեանք է, բայց ոչ թէ անմիտ, տանջանքներով լի և խորտակուող, այլ երանելի և անվերջ կեանք: Եւ մենք ամենքս զիտենք այդքանից կեանք:

Սէրը գիտակցութեան հանած եղբակացութիւն չէ, նա որոշ գործունէութեան հետևանք չէ. այլ ինքը կեանքի ուրախ գործունէութիւն է, որն ամեն կողմից շրջապատռմ է մեզ և ինքներս անաչում ենք մեր մէջ մանկութեան առաջին յիշողութիւններից մինչ այն ժամանակ, քանի որ աշխարհի կեղծ վարդապետութիւնները չեն խանդարել այն մեր հոգու մէջ և չեն զրկել մեզ այն զգալու հաւատուութիւնից:


Սէրն աշառութիւն չէ դէպի այն, ինչը որ մեծացնում է մարդուս անձնաւորութեան ժամանակաւոր երջանկութիւնը, —ինչպէս օրինակ սէրը դէպի ընտրեալ անձինք կամ առարկաներ, այլ դա ձգում է դէպի այն երջանկութիւնը, որը մեզանից դուրս է և որը մնում է մարդուս մէջ միմիայն անասնական անձնաւորութեան երջանկութիւնից հրաժարուելուց յետոյ:

Կենդանի մարդկանցից որը չը գիտէ այդ երանելի զգացմունքը և դէթ միանդամ փորձած չէ ամենից յաճախ ամենավաղ մանկութեան ժամանակ, երբ նրա հոգին զեռ խճողած չըր այն կեղծ ու պատիր բաներով, որը խլացնում է կեանքը մեր մէջ, այդ խանդակաթ զգացմունքը, երբ ուղղում ես սիրել բոլորին՝ —մերձաւորներին, և հօրը, և մօրը, և եղբայրներին, և չար մարդկանց, և թշնամիներին, և շանը, և ձիուն և վերջին խոտը, երբ միմիայն մի բան ես ցանկանում՝ —որ ամենքի համար լաւ լինի, որ ամենքն երջանիկ լինին. գեռ զրանից էլ աւելին՝ —ցանկանում ես ինքտ այնպէս անել, որ ամենքի համար լաւ լինի. նուի-

րու ել անձամբ, նուիրել ամբողջ կեանքը, որպէս զի միշտ և ամենքի համար էլ լաւ և ուրախալի լինի: Ահա հէնց այդ է միայն այն սէրը, որի մէջ կայանում է մարդուս կեանքը,

Այդ սէրն ահա, որի մէջն է կեանքը, մարդուս հոգու մէջ յայտնուում է իրեկ հազիւ նկատելի քնքոյց մի ընձիւղ՝ իրեն նմանող կոպիտ և անօգուտ ընձիւղների մէջ՝ —մարդկային քմահաճութեանց մէջ, որը մենք սէր ենք անուանում: Մարդկանց՝ —նոյն իսկ մարդուն թւում է, որ գա է այն ընձիւղը, որից պէտք է ածի այն ծառը, որի տակ պէտք է հանդչին թռչուններ և որ միւս բոլոր ընձիւղներն էլ նոյն բաներն են: Մարդիկ սկզբում նոյն իսկ (աւելորդ) անօգուտ խոտերի ընձիւղներն, որոնք աւելի արագ են ածում, նաև խալատիւ են համարում և կեանքի միակ ընձիւղը թուլանում ու չորանում է, Բայց աւելի վատն ընձիւղներն, որոնք աւելի արագ են ածում, որ այն է և աւելի յածախ է պատահում այն, որ մարդիկ թէն լսել են, որ այդ ընձիւղների մէջ գանւում է մի հատիկ՝ իսկականը, կենսականը, որը կոչուում է կոչուում, բայց նրանք ոտի տակ տալով նոյն սէր է կոչուում: Բայց նրանք ոտի տակ տալով նոյն այդ զգացմունքը, սկսում են ածեցնել անօգուտ խոտերի ընձիւղներ և նրանց են սէր անուանում: Ասուերի վատն այն է, որ մարդիկ իրենց կոհայց աւելի վատն այն է, որ մարդիկ իրենց կոհայց ձեռքերով բըռնում են այդ ընձիւղն ու ապիտ զառքերով: «Ահաւասիկ մենք զտանք այն, մենք զաղակում ճանաչում ենք նրան և կածեցնենք: Սէր, այժմ վաեմ և բարձր զգացմունքը, ահա նայ: Եւ սէր, վաեմ և բարձր զգացմունքը, ահա նայ: Եւ մարդիկ սկսում են տնկել (չիթիլ անել) այն, ուղարդիկ վայականում են տրորել այնպէս, որ ընձիւղը մեռնում գել, բոնել և տրորել այնպէս, որ ընձիւղը մեռնում գել:

թառամում է առանց ծաղկելու և նոյն կամ ուրիշ
մարդիկն ասում են. «Այդ բոլորը յիմարութիւն է,
դատարկ բաներ և զգայականութիւն (սէնտիմէնտա-
լիզմ): Սիրոյ ընձիւղն, որն իւր յայտնուելու ժա-
մանակ քնքոյց է և ոչ մի չփումն չի տանում, հզօր է
միմիայն իւր աճած ժամանակ: Այն բոլորն, ինչ որ
մարդիկ կանեն, նրա համար աւելի վատ է: Նրան
հարկաւոր է միմիայն մի բան՝ որ ոչնչով չը
ծածկուի գիտակցութեան արեգակը՝ նրան աճեցնող
այդ միակ ոյժը:



ԿԱՆԱՅՑ

Ինչպէս որ ասուած է Աստուածաշնչի մէջ՝
այր մարդուն և կնոջը տրուած է օրէնք. — մար-
դուն՝ օրէնք աշխատանքի, իսկ կնոջը՝ օրէնք որ-
դեճնութեան: Թէև մենք մեր գիտութեան չորհիւ
այդ բոլորը վերացրել ենք ուսուածած ան-
քա, բայց կնոջ և մարդու վերաբերեալ օրէնքն ան-
փոփոխ է մնում, ինչպէս ստամոքսն իւր տեղում
և նրանից շեղուիլն անխուսափելորէն կը պատ-
ժուի մահով: Տարբերութիւնը միայն նրանումն է,
որ տղամարդու՝ իրեն վերաբերեալ օրէնքից շեղ-
ուիլը այնքան շուտ կը պատժուի մահով, որ նրան
կարելի է ներկայ անուանել, իսկ կնոջ օրէնքից
շեղուիլը կը պատժուի աւելի հեռաւոր ապագ ա-
յուն: Մարդկանց ընդհանուր խուսափումն այդ
օրէնքից նրանց ոչնչացնում է իսկոյն, իսկ կա-
նանց ընդհանուր խուսափումն ոչնչացնում է հե-
տեւալ սերնդի մարդկանց: Մարդկանց և կանանց
մի քանիսի խուսափումն թէև չի ոչնչացնում մարդ-
կային ցեղը, բայց խուսափողներին զրկում է
մարդկային բնութեան համապատասխան խելացի
կեանքից: Տղամարդկանց կողմից իրենց օրէնքից
խուսափելը սկսուել է շատ վաղուց այն դասա-
կարգերի մէջ, որոնք կարողացել են բռնանալ ու-
րիշների վրայ, և հետզհետէ տարածուելով, շա-
րունակուել է մինչև մեր օրերը. իսկ մեր ժամա-
քունակուել է

նակն էլ հասել է անմտութեան, դարձել է իցեալ, որը կայանում է օրէնքից խուսափելու ոէջ. իցեալ, որ արտայայտել է իշխան Բլօխինը և որին համակարծիք է Ողնանն ու ամբողջ լուսաւորեալ աշխարհը. — որ մեքենաները կը դործեն, իսկ մարդիկ կիխին վայելող նեարդերի մի միայն մի կոյտ:

Կանայք համարեամ երբէք չէին չեղուել իրենց օրէնքից: Այդ չեղումն արտայայտում էր կամ անառակութեան և կամ պատողը ոչնչացնելու մասնակի յանցաղործութեան մէջ: Հարուստ շրջանի մարդկանց կանայք միշտ կատարել են իրենց օրէնքը, մինչդեռ աղամարդիկ չէին կատարում իրենցը և այդ պատճառով էլ կանայք զօրացել են, շարունակում են իշխել և միշտ էլ կիշխնն օրէնքից չեղուած և այդ պատճառով էլ խելքները կորցրած տղամարդկանց վրայ: Առում են, որ կինը՝ (Փարիզի՝ սովորաբար անզաւակ կինը) այնքան կախարդիչ է դարձել չնորհիւ քաղաքակրթութեան սուեղծած միջոցներով օգտուելուն, որ այդ դրաւչութեամբ տիրել է տղամարդուն: Ոչ թէ ձշմարիտ չէ այդ, այլ ուղիղ հակառակն է: Մարդուն տիրել է ոչ թէ անզաւակ կինն, այլ—մայրը, նա, որ կատարել է իւր օրէնքը, մինչեւ տղամարդը խոյս է առուել նրանից: Իսկ այն կինը, որն արհեստական միջոցներով անզաւակ է դառնում և յափշտակում է տղամարդուն իւր թիկունքներով և գանգուրներով, նա ոչ թէ միայն տղամարդու վրայ իշխող չէ, այլ նրանից անառակացրած, փչացած տղամարդու աստիճանին հասած կին է, նրա նման օրէնքից չեղուող և խելացի կիանքի մասին հասկացու-

դութիւն կորցրած մի անձնաւորութիւն է միայն: Այս սխալանքից է առաջ գալիս այն զարմանալի յիմարութիւնը, որը կոչում է կանանց իրաւունք: Կանանց այդ իրաւունքների բանաձեռ (ֆօրմուլան) հետեւալն է.— հա, դու իրեն տղամարդ քո օրէնքից՝ իսկական աշխատանքից հեռացել ես, բայց ցանկանում ես, որ մնաք մեր իսկական օրէնքի ծանրութիւնը կրենք: Ոչ, եթէ այդպէս է, մնաք էլ քեզ նման այն՝ աշխատանքի նման բան կանենք, որն ինքու անում ևս բանկերում, նաւ խարարութիւնների մէջ, համալսարաններում և ձևմարաններում: Մենք էլ քեզ պէս՝ աշխատանքի բաժանման դիմակի տակ, ցանկանում ենք օգտուել ուրիշների աշխատանքով և ապրել միմիայն մեր կրքերին: յագուրդ տալու համար: Նրանք այդ ասում են և գործով ցոյց են տալիս, որ իրենք ոչ թէ վատ, այլ տղամարդուց լաւ են կատարում այդ՝ աշխատանքի նմաննեցրած զբաղմունքը:

Այսպէս կոչուած «կանանց խնդիրը» ծնունդ է առել և կարողացել է տարածուել միայն այն տղամարդկանց մէջ, որոնք չեղուել են իսկական աշխատանքի օրէնքից: Արմէ միայն դառնալ այդ օրէնքին և այդ խնդիրն այլ ևս գոյութիւն ունենալ չի կարողանալ: Կինն՝ ունենալով իւր իսկական և անխուսափելի աշխատանքն, երբէք չի պահանջիլ հանգերում և երկիր մշակելիս տղամարդու աշխատանքին մասնակցելու իրաւունքը: Մեր շրջանի կինը տղամարդուց ուժեղ էր և ուժեղ է այժմս էլ ոչ թէ իւր զրաւչութեամբ, կամ աշխատանքի նման մի բան կատարելու ճարպից

կութեամբ, ինչպէս որ այդ տղամարդիկն են անում, այլ նրանով, որ նա օրէնքի տակից գուրս չի եկել՝ չի խուսափել, որ նա միշտ կատարել է այն իսկական աշխատամքն իւր կեանքի գնով և մինչեւ վերջին ծայր լարելով իւր ոյժերը, որից իրեն ազատել է հարուստ դասակարգի տղամարդը։ Բայց ես յիշում եմ և հէնց աչքիս առաջ սկսուեց կնոջ կողմից օրէնքից վախուսա տալը, այսինքն—նրա անկումն և գարձեալ աչքիս առաջ չարունակւում և գորանում է այն աւելի և աւելի։ Կորցնելով իւր օրէնքը, կինը հաւատաց, որ նրա գորութիւնը գրաւչութեան կամ վարդսեցիական աշխատամքի նման մի բան կատարելու մէջն է։ Իսկ ինչպէս մէկին, այնպէս էլ միւսին արգելք են դառնում զաւակներ և ահա գիտութեան չնորհիւ աչքիս առաջ տեղի ունեցաւ այն, որ հարուստ դասակարգերի մէջ հարիւրաւոր միջոցներ երևան եկան արգանդի պտուղը ոչնչացնելու համար։ Եւ ահա մայր կանայք, որոնք իրենց ձեռքի մէջ էին պահել իշխանութիւնը տղամարդկանց վրայ, ձեռքից թողնում են այն, որպէս զի չը զիջեն փողոցային կանանց և նրանց հաւատարութն։ Չարիքն արդէն տարածուել է և օրէցօր աւելի և աւելի հեռու է տարածում։ Նա շուտով կը վարակի հարուստ դասակարգի բոլոր կանանց և այնուհետև նրանք կը հաւատարուին տղամարդկանց և նրանց հետ միասին կը կորցնեն կեանքի խելացի միտքը։ Բայց դեռ էլի ժամանակ կայ։

Եթէ միայն կանայք հասկանային իրենց ոյժն ու նշանակութիւնը և գործ դնէին իրենց ամու-

սիններին, և զբայրներին և զաւակներին վրկելու՝ բոլոր մարդկանց վրկելու համար, որքան հրաշալի բան կլինէր։

Հարուստ դասակարգերի մայր—կանայք, մեր աշխարհի մարդկանց վրկութիւնը՝ նրանց տանջող չարիքներից՝ ձեր ձեռքին է։

Այն կանանց ձեռքին չէ մարդկանց վրկութիւնը, որոնք զբաղուած են բարեկազմ դառնաւու հոգաով, տուռնիւրներով, սանրուածքով և մարդկու հոգաով, առունիւրներով, որոնք պահանձամբ և անզգուշութեան չնորհիւ են զաւակբերում յուսահատութեամբ և յանձնում դայեակներին, ոչ էլ այն կանանց ձեռին, որոնք յաձախում են դասընթացների և խօսում են հոգւոց կեղրոնների և համակարգութեան (ճիֆֆերենցիալիա) մասին և նոյնպէս աշխատում են զաւակ բերելուց ազատուել, որպէս զի նրանք արգելք չը դառնան իրենց յիմարանալուն, որը նրանք զարգացումն են կոչում։ Այլ այն մայր—կանանց ձեռին է այդ գիտում, որոնք հարաւորութիւն ունենալով վրկութիւնը, որոնք հարաւորութիւն ունենալով որդինութիւնից ազատուելու՝ ուղղակի գիտակութանութիւնն է իրենց կեանքի ծանրութիւնն ու նեղութիւնն է իրենց կեանքի ծանչումն։ Ահա մեր հարուստ շրջանների այդ կականաց միջուն են, որոնց ձեռին գտնուում է մեր աշխարհի նայքն են, որոնց ձեռին գտնուում է մեր աշխարհի մարդկանց վրկութիւնը նրանց ձնչող դժբախտութիւնից։ Դնաք, մայր—կանայք, որ զիտակցաբար ենթարկուում էք Աստուծոյ օրէնքին, զուք միայն ենթարկուում էք Աստուծոյ օրէնքին, զուք միայն զիտէք մեր զիբախտ, այլանդակ և մարդկային զիտէք մեր զիբախտ, այլանդակ և մարդկային

կերպարանք կորցրած շրջանում կեանքի իսկական միավն Աստուծոյ օրինաց համաձայն և գուք ձեր անձնական օրինակով միայն կարող էք ցոյց տալ Աստուածային օրէնքին ենթարկուելու այն բախտաւորութիւնը, որից նրանք զրկում են իրենց: Դուք միայն զիտէք այն հիսայմունքն ու ուրախութիւնը, որոնք համակում են մարդուս ամբողջ էութիւնը, այն նրանութիւնը, որը նախասահմանուած է Աստուածային օրէնքից չը չեղուող մարդուն: Դուք զիտէք զէպի ամուսին տածած սիրոյ երջանկութիւնը, որ չի ընդհատում և չի վերջանում՝ ինչպէս մնացած բոլոր դէպքերում, այլ կազմում է սկիզբ և հիմունք նոր երջանկութեան՝ —սիրոյ զէպի զաւակները: Երբ պարզ էք և հնագանդ Աստուծոյ կամքին, դուք միայն զիտէք այն՝ —ոչ թէ կեղծ և հանդիսաւոր զբաղմունքը, որին մեր շրջանի տղամարդիկ աշխատանք են կոչում, այլ իսկական և Աստուածանից մարդուս համար սահմանած աշխատանքը, զիտէք նրա իսկական վարձատրութիւնները, որոնք նրանից են առաջդալիս: Այն, դուք զիտէք այդ, երբ սիրոյ ուրախութիւններից յետոյ, վրդսվուած, երկիւղով և յուսով սպասում էք յղութեան տանջող դրութեան, որը ձեզ հիւանդացնելու է ինն ամսով, որը ձեզ կը հասցնի անտանելի ցաւերի և տանջանքների, և կը դարձնի մահամերձ: Դուք զիտէք իսկական աշխատանքի պայմանները, երբ ուրախութեամբ սպասում էք այն ամենասուկալի տանջանքների մօտենալուն, որից յետոյ սկսում է ձեզ միայն հասկանալի երջանկութիւնը: Դուք այդ

զիտէք այն ժամանակ, երբ այդ տանջանքներից յետոյ՝ առանց հանգստանալու, առանց ընդհատելու, ձեռք էք զարկում աշխատանքի և տանջանքների մի ուրիշ շարքի, սնուցանելու, մանկան մեծացնելու գործի, երբ գուք միանդամից հրաժարում և ձեր զզացման էք հոգատակեցնում մարդուս ամենամեծ կարիքը՝ քնոյ կարիքը, որը ժողովրդական արածների համեմատ՝ հօրից ու մօրից էլ քաղցր է. և իրար ետեից շարունակ ամիսներով ու տարիներով չէք քնում և երբեմն էլ ամբողջ զիշերներով աչք չէք փակում, այլ միայնակ, յոդնած ու թուլացած բաղուկներով օրօրում էք ձեր սիրաը մորմոքով հիւանդ մանկան: Եւ երբ դուք անում էք այդ բոլորն առանց որև է մէկից քաջալերուելու, օտար աչքից անտեսանելի, ոչ ոքից զովասանք կամ վարձատրութիւն չը սպասելով, երբ դուք այդ անում էք ոչ թէ իբրև մի էերոսական զործ, այլ իբրև Աւետարանի առակի դաշտից զարձող մշակը, համարելով, որ դուք կամարեցիք այն, ինչ որ պէտք էր, այն ժամանակ դուք զիտէք, թէ ինչ է կեղծ և հանդիսական աշխատանքը՝ մարդկային փառքի համար և ինչ է իսկականը՝ Աստուածային կամաց կատարումն, որի ցուցումն զուք ձեր սրտումն էք զգում: Դուք, եթէ իսկական մայր էք, զիտէք, որ զեռ այն ոչինչ, որ ձեր աշխատանքը ոչ ոք չի տեսնում, ոչ ոք չի գովում, այլ գտնում էք, որ այդ այդպէս էլ պէտք է լինի և որ նրանք, որոնց համար դուք աշխատում էք, ոչ թէ չնորհակալ չեն լինում, այլ յաճախ տանջում, յանդիմանում են ձեզ: Եւ ձե-

տեսալ մանկան հետն էլ նոյնպէս էք վարւում, կրկին տանջում, կրկին կրում անտեսանելի սոսկալի աշխատանք և կրկին ոչ ոքից վարձարութիւն չը սպասելով, մինոյն գոհունակութիւն էք զգում:

Եթէ դուք այդպէս էք, ոչ երկու և ոչ էլ քսան երեխայ բերելոց յետոյ երբէք չէք ասիլ, որ բաւական է զաւակ բերելը, ինչպէս և յիսուն տարեկան բանտորը չի ասիլ, որ բաւական է աշխատելը, երբ ինքը դեռ ուսում և քնում է, և չղերը գործ են պահանջում: Եթէ դուք այդպիսի մայր էք, մանկան զիեցնելու և խնամելու հոգան երբէք չէք բառնալ ուրիշ մօր վերայ, ինչպէս և աշխատաւոր մշակն իւր սկսած և աւարտելուն մօտեցրած գործն երբէք ուրիշն չի տալ վերջացնելու, որովհետեւ այդ աշխատանքի մէջ դուք դնում էք ձեր կեանքը և այդ պատճառով որքան շատ է այդ աշխատանքն, այնքան լի և երջանիկ է ձեր կեանքը: Իսկ երբ դուք այդպիսի մայր էք, (և այդպիսի կանայք բարեբախտաբար գեռ կան) նոյն այն օրէնքը՝ աստուածային կամքի կատարումն, որին դուք ենթարկում և զեկավարում էք ձեր կեանքում, գործ կը դնէք և ձեր ամուսնու, և ձեր զաւակների, և ձեր մերձաւորների կեանքում: Եթէ դուք այդպիսի մայր էք և ձեր անձնական փորձով գիտէք, որ միայն անձնուրաց, անտեսանելի, անվարձ, կեանքի գնով կատարած և մինչև վերջին ծայր լարած աշխատանքի մէջն է մարդուս այն կոչումն, որը նրան բաւականութիւն է պատճառում, ապա ուրեմն նոյն այդ պահանջները կանէք

և ուրիշներից, նոյն տեսակ աշխատանքի համար կը քաջալերէք ձեր ամուսնուն, այդ աշխատանքով կը չափէք և կը գնահատէք մարդկային արժանաւորութիւնը և այդ աշխատանքի համար կը պատրաստէք ձեր զաւակներին: Այն մայրը միայն կը դաստիարակի իւր զաւակներին որքան կարելի է շատ զուարձութեան և նրանից աւելի շատ օգտառելու համար, որը զաւակաբերութեան վրայ նայում է իրու անախորժ պատահարի վրայ. իսկ իւր սիրոյ զուարձութիւնները, կեանքի յարմարութիւնները, կրթութիւնն ու հասարակականութիւնները համարում է կեանքի միավճակ ու նպատակը: Նա կը սնուցանի քաղցրեղինով, կը զուարժացնի արհեստական միջոցներով, կը սովորեցնի ոչ թէ այն, ինչ որ նրանց ընդունակ կարող է զարձնել անձնազոհ, կեանքին վտանգ սպառնացող, վերջին ծայր ոյժերի լարումն պահանջող տղամարդու և կնոջ աշխատանքի, այլ կը սովորեցնի այն, ինչը որ կարող է ազատել նրանց այդ աշխատանքից: Ահա միայն այդպիսի՝ իւր կեանքի նպատակի մասին հասկացողութիւն կորցրած կինը՝ կը համակրի տղամարդու խարուսիկ և կեղծ աշխատանքի, որի ժամանակ նրա ամուսինն՝ ազատելով իրան մարդու պարտաւորութիւններից, հնարաւորութիւն ունի նրա հետ միասին ուրիշի աշխատանքով օգտուելու: Այդպիսի կինը միայն նոյնանձն ամուսին կընտրի իւր աղջկայ համար և մարդկանց կը գնահատի ոչ թէ նրանով, թէ նրանք ինչ են, այլ նրանով, ինչ որ նրանց հետ է

կապուած՝ զիրքով, փողով և ուրիշների աշխատանքով օգտուելու դիտութեամբ:

Կակական մայրը, գործնականապէս գիտենալով Աստուծոյ կամքը, իւր զաւակներին էլ կը պատրաստի այդ կամքը կատարելու համար։ Այդպիսի մայրերի համար՝ իրենց զաւակներին զուգուած, գիրացրած և քնքացրած տեսնելը տանջանք կլինի, որովհետեւ այդ բոլորը միայն կը դժուարացնի նրա՝ իրեն մայր փորձած՝ Աստուծու կամքին ծառայելու դորձը։ Այդպիսի մայրը ոչ թէ այն կը սովորեցնի, ինչ որ նրա որդուն կամ դստեր հնարաւորութիւն կը տայ աշխատանքից փախչելու և ազատուելու, այլ կը սովորեցնի այն, ինչ որ նեցուկ և օգնական կը լինի նրանց՝ կրելու կեանքի աշխատանքը։ Նա կարիք չի ունենալ հարցնելու, թէ ինչ սովորեցնել, ինչո՞ւ համար պատրաստել մանուկներին։ Այդպիսի կինը ոչ միայն չի խրախուսիլ ամուսնուն դէպի այն կեղծ աշխատանքը, որի նպատակը ուրիշների աշխատանքից օգտուելն է, այլ զզուանքով և սարսափով կը նայի այդպիսի գործունէութեան վրայ, որը կրկնակի գայթակութիւն է մանուկների համար։ Այդպիսի կինն իւր դստեր համար ամուսին չի ընտրի՝ ինկատի ունենալով ձեռքերի սպիտակութիւնը, ձեերի քնքութիւնն ու բարեկըրթութիւնը՝ հաստատապէս գիտենալով, թէ ինչ է աշխատանքն ու ինչ է կեղծիքը, միշտ և ամեն տեղ՝ իւր ամուսնուց սկսած, աղամարդու մէջ կը յարգի, կը գնահատի և կը պահանջի իսկական աշխատանք։ աշխատանք կեանքի զնով և վտանգով

և կ'անարգի այն կեղծ և հանդիսական աշխատանքը, որի նպատակը իսկական աշխատանքից ազատութիւն է։

Այդպիսի մայրն ինքը կը ծնի, անձամբ կը գիեցնի, ամենից առաջ ինքը կը կերակրի և կերակուր կը պատրաստի զաւակների համար։ կը կարի, կը լուանայ, ինքը կ'ուսուցանի, կը քնի և կը խօսի իւր զաւակների հետ, որովհետեւ զրամէցն է տեսնում նա իւր կեանքի գործը։ Միայն այդպիսի մայրը չի փնտուի իւր զաւակների համար արտաքին ապահովութիւն իւր ամուսնու դրամներով և զաւակների զիպլօմներով, այլ կը կրթի նրանց մէջ այն անձնագոճ՝ Աստուծոյ կամքը կատարելու ընդունակութիւնը, որը նա տեսել և ճանաչում է իւր մէջ՝ կեանք սպառելու և վտանգի և նթարկելու զնով աշխատութիւնը, որովհետեւ գիտէ, որ միմիայն դրանումն է երջանկութիւնն ու կեանքի ապահովութիւնը։ Այդպիսի մայրն ուրիշներից չի հարցնիլ, թէ ինչ պէտք է անի, նա ամեն բան կը զիտենայ և ոչնչից չի վախենալ։

Եթէ անզաւակ մարդն ու կինը կարող են կասկածել այն շաւզի մասին, որի վրայ որ գտընուում է Աստուծոյ կամքի կատարումն, մայր—կնոջ համար այդ շաւիզը հաստատուն և պարզ կերպով որոշուած է։ Եւ եթէ նա խոնարհ և հոգեկան պարզութեամբ կատարել է այն, նա՝ երջանկութեան այն աստիճանին հասած, որին համնելը միայն տրուած է մարդուս, գանումն է ուղեցոյց աստղ այն բոլոր մարդկանց համար, որոնք երջանկութեան են ձգտում։ Այն, միայն մայրը կա-

բող է մահուսանից առաջ ասել Նրան, Որն իրեն
աշխարհ է ուղարկել և Որին ծառայել է իրենից
աւելի սիրելի զաւակների ծննդեամբ և դաստիա-
րակութեամբ, այն, միայն նա՝ կատարելով իրեն
համար ասհմանած ծառայութիւնը, կարող է ասել
հանդիստ սրտով!—

«Արդ արձակեա զծառայս քո ի խաղաղու-
թիւն»; Իսկ ահա հէնց այդ է այն բարձր կատարեւ-
լութիւնը, որին, իրեմ՝ ամենաբարձր երանութեան,
ձգում են մարդիկ; Ահա հէնց այդպիսի՝ իրենց
կոչմանը ծառայող՝ կանայքն են իշխում իշխող
մարդկանց վրայ, այդպիսի կանայքն են պատ-
րաստում մարդկային նոր սերունդներ և սահմա-
նում հասարակական կարծիքը. և այդ պատճառով
այդ կանանց ձեռքին է մարդկանց սպառնացող և
արդէն գոյութիւն ունեցող չարիքներից փրկմու-
մեծ իշխանութիւնը:

Այն, մայր—կանայք, ամենից առաւել ձեր
ձեռքին է աշխարհի փրկութիւնը:

Ք.Ա.Ղ.ՈՒ.Ա.Ծ.Փ

«Կանանց» վերնագրով յօդուածի վերաբերու-
թեամբ եղած լնդդիմախօսութիւնների առթիւ գրուած
մի մասնաւոր նամակից:

Առհասարակ՝ թէ այր մարդու և թէ կնոջ
կոչումն է՝ ծառայել մարդկանց; Այս ընդհանուր
օրէնքի մասին, կարծում եմ, որ բոլոր չը փչացած
մարդիկ համաձայն են; Կնոջ և տղամարդու միջի
տարբերութիւնը միայն այն միջոցների մէջն է,
որով նրանք կատարում են այդ պարտականու-
թիւնը, որով նրանք համում են նպատակին, որով
նրանք ծառայում են մարդկանց:

Տղամարդը ծառայում է մարդկանց՝ ֆիզի-
քական աշխատանքի միջոցաւ ձեռք բերելով ապ-
րելու մնունդ. մտաւոր աշխատանքով—ուսումնա-
սիրելով բնութեան օրէնքները նրանց յաղթելու
նպատակաւ, և հասարակական աշխատանքով—
ստեղծելով կենցաղավարութեան նորանոր ձեեր և
սահմանելով մարդկանց յարաբերութիւնները; Տղա-
մարդու համար մարդկանց ծառայելու միջոցները
շատ բազմատեսակ են: Մարդկութեան ամբողջ
գործունէութիւնը՝ բացի զաւակ բերելուց և նրան
դիեցնելուց, կազմում են նրա՝ մարդկանց ծառա-
յելու ասպարէզը: Իսկ կինը, բացի այն բոլոր

ձեւրով մարդկութեան ծառայելուց, ինչպէս այդ անում է տղամարդը, իւր իսկ ֆիզիքական կազմութեամբ անխուսափելիօրէն կոչուած է այն ծառայութեան, որը միայն արտաքսուած է տղամարդու ծառայութեան շրջանակից:

Մարդկութեան ծառայելն ինքն ըստ ինքեան բաժանւում է երկու մասի. մինը՝ միծացնել գոյութիւն ունեցող մարդկանց երջանկութիւնը, իսկ միւսը՝ շարունակել նոյն մարդկութիւնը: Առաջինը կատարելու համար կոչուած են զլիսաւորապէս տղամարդիկ, որովհետեւ նրանք զուրկ են երկրորդին ծառայելու հնարաւորութիւնից. իսկ երկրորդը կատարելու համար կոչուած են կանայք, որովհետեւ այդ բանին բացառապէս նրանք են ընդունակ: Այդ տարբերութիւնը չի կարելի, չը պէտք է և մեղք է (սխալ է) մոռանալն ու ոչընչացնելը: Այդ տարբերութիւնիցն են առաջ գալիս մինի և միւսի պարտաւորութիւնները, որոնք ոչ թէ մարդկանցից են հնարուած, այլ գոյութիւն ունին իրերի բնական գրութեան մէջ: Հէնց այդ տարբերութիւնիցն է առաջ գալիս կնոջ և մարդու առաքինութեան գնահատութիւնը, որը գոյութիւն է ունեցել բոլոր գարերում, գոյութիւն ունի այժմու էլ, և քանի որ մարդկանց մէջ կայ և կը լինի խելք ասած բանը, երբէք չի գադարիլ գոյութիւն ունենալուց:

Միշտ եղել է և կը լինի այն, որ տղամարդն իրեն յատուկ ֆիզիքական, մտաւոր և հասարակական բազմաւուսակ աշխատանքի մէջ անցուցանելով իւր կեանքի մեծ մասը և կինն էլ՝ իրեն

յատուկ աշխատանքի՝ ծնելու և դիեցնելու գործում անցուցանելով իւր կեանքի մեծ մասը, միաւկերպ կը զգան, որ իրենք անում են այն, ինչ որ պարտաւոր են. և միակերպ յարգանք և սէր կը յարուցանեն ուրիշ մարդկանց մէջն էլ այն պատճառով, որ երկուսն էլ կատարում են այն, ինչ որ հէնց իրենց կազմութիւնից նախասահմանուած է արդէն: Տղամարդու կոչումն աւելի բազմաւոսակ է և ընդգարձակ. կնոջ կոչումն աւելի սահմանափակ է և միակերպ, բայց աւելի խորունկ և հէնց այդ պատճառով էլ միշտ եղել է և կլինի այն, որ հարիւրաւոր պարտականութիւններ ունեցող տղամարդն, եթէ փոխի՝ դաւաճանի նրանցից մէկն ու մէկն, կամ նրանցից տասին, չի վատանում, վնասակար մարդ չի զանում, որովհետեւ դեռ կատարում է իւր կոչման և պարտականութիւնների մեծ մասը: Իսկ կինը, որ աւելի սակաւաթիւ պարտականութիւններ ունի, դաւաճաննելով նրանցից մէկն ու մէկն, բարոյապէս այն տղամարդուց աւելի է ընկնում, որը դաւաճաննել է իւր պարտականութիւններից տասի գէմ: Այդպէս է եղել ընդհանուր կարծիքը և այդպէս էլ կը լինի, որովհետեւ այդ է գործի էութիւնը:

Աստուծոյ կամքը կատարելու համար տղամարդը պէտք է ծառայի նրան և ֆիզիքական աշխատանքի, և մտքի, և բարոյականութեան շրջանում: Նա այդ բոլոր գործերով կարող է ծառայել իւր կոչմանը: Կնոջ համար՝ Աստուծուն ծառայելու գլխաւոր և համարենա բացառիկ գործը նրա զա-

ւակներն են (որովհետև բացի նրանից՝ այդ ոչ ոք չի կարող անել):

Միայն իւր գործերով Աստուծուն ծառայելու համար կոչուած է տղամարդը, իսկ իւր զաւակներով Աստուծուն ծառայելու համար կոչուած է կինը:

Այդ պատճառով կնոջ սրտի մէջ դրուած սէրը դէպի իւր զաւակներ, բացառիկ սէր է, որի հետ գիտակցութեամբ՝ խելքին զօռ տալով կոռւելը միանդամայն զուր է և նա միշտ եղել է և կլինի մայր՝ կնոջ յասուկ գդացմունք: Այդ սէրը դէպի զաւակներ՝ նրանց մանկութեան ժամանակ, բոլորովին եսականութիւն չէ, այլ դա աշխատաւոր մշակի սէրն է դէպի իւր այն գործը, որը ձեռք առած, նա արգէն կատարում է: Խլեցէք նրանից այդ սէրը դէպի աշխատանք և աշխատելն անհնարին կը դառնայ: Քանի որ ես կարում եմ կօշիկը, ես այն ամենից աւելի եմ սիրում: Եթէ չըսիրէի, կարել էլ չէի կարողանալ: Եթէ կօշիկս փչացնեն, ես յուսահատութեան կը հասնեմ: բայց այդպէս սիրում եմ մինչեւ տշխատանքի վերջն, իսկ երբ վերջացրի ու աւարտեցի, մնում է միմիայն նախապատութիւն, մի կապ՝ շատ թոյլ և ապօրինի նոյն բանն է լինում և մօր հետ: Տղամարդը կոչուած է մարդկանց ծառայելու բազմատեսակ աշխատանքով և նա սիրում է այդ աշխատանքը՝ քանի որ կատարում է: Կինը կոչուած է մարդկանց ծառայելու իւր զաւակների միջոցաւ և նա չի կարող նրանց չը սիրել մինչև 3—7 և 10 տարեկան դարձնելը: Բնդհանուր առմամբ մարդը և

կինը Աստուծուն և մարդկութեան ծառայելու գործում բոլորովին հաւասար են, չը նայելով ծառայելու տարբեր եղանակին: Հաւասարութիւնը կայանում է նրանում, որ ծառայութեան մի եղանակը նոյնքան նշանաւոր և կարենր է, որքան և միւսը, որ մինն առանց միւսի՝ անկարելի է, որ մինը կապուած է միւսի հետ, և իսկական ծառայութեան համար՝ թէ մարդը և թէ կինը պարտաւոր են գիտենալ այն ծշմարտութիւնը, առանց որի նրանցից թէ մէկի և թէ միւսի գործունէութիւնը զաւնում է ոչ թէ օդտակար, այլ ուղղակի մարդկութեան վ්‍යասակար: Այր մարդը կոչուած է կատարելու իւր բազմատեսակ աշխատանքը, բայց այդ աշխատանքն այն ժամանակն է օդտակար, և նրա ֆիզիկական, մտաւոր և հասարակական գործունէութիւնն այն ժամանակն է բեղմնաւոր, երբ նրանք կատարւում են յանուն ծշմարտութեան և միւս մարդկանց երջանկութեան համար: Տղամարդն ինչքան էլ եռանդով աշխատի իւր զուարճութիւններն աւելացնելու ի զուր խելքին զօռ տալով և իւր անձնական օդտի համար կատարած հասարակական գործունէութեամբ, նրա աշխատանքն երեկ բեղմնաւոր չի լինի: Նա կը բեղմնաւորուի և օդտակար կը դառնայ միայն այն ժամանակ, երբ ուղղուած կը լինի ոչնչացնելու կարիքից, տղիթիւնից և հասարակական սխալ կազմակերպութիւնից առաջացած մարդկանց տանջանքը:

Նոյնն է և կնոջ կոչումը: Նրա ծննդաբերութիւնը, զիեցումն ու մանուկներ մեծացնելը միայն այն ժամանակ կը լինի մարդկանց օդտա-

կար, երբ նա զաւակ կը միծացնի ոչ թէ իւր ուշ
քախութեան, այլ մարդկանց ծառայելու համար,
մարդկութեան ապագայ ծառաներ կը պատրաստի
նրանցից. երբ այդ մանուկների դաստիարակու-
թիւնը կը կատարուի յանուն ճշմարտութեան և
մարդկային բարօրութեան. այսինքն նա այնպէս
կը կրթի իւր զաւակներին, որ նրանք լինին ամե-
նալաւ մարդիկ և ուրիշի համար աշխատողներ:

Հստ իս իդէալական կլինի այն կինը, որն
իւրացնելով իւր ժամանակաշրջանի բարձր հա-
յեացքը, անձնատուր կլինի կանացի և անյաղ-
թելի կերպով իւր մէջ զրուած բնածին կոչմանը—
կը ծնի, կը դիեցնի (ծիծ կը տայ) և կը կրթի որ-
քան կարելի է շատ զաւակներ, որոնք ընդունակ
կլինին նրա իւրացրած բարձր աշխարահայեաց-
քի համեմատ մարդկութեանը ծառայելու:

Իսկ բարձր աշխարահայեացքն իւրացնելու
համար, ինձ թւում է, որ կարիք չկայ դասըն-
թացների յաճախելու, այլ հարկաւոր է կարգալ
Աւետարանը և չը ծածկել աչքերն, ականջներն,
ու դլսաւորապէս սիրտը:

Իսկ որոնք ամուլ են (անզաւակ), մարդու
չեն գնացել կամ այրի են, նրանք ինչ անեն
նրանք շատ գեղեցիկ բան կանեն, եթէ մասնակ-
ցեն տղամարդու բաղմատեսակ աշխատանքին։
բայց անհնարին կը լինի չը ցաւել, որ կնոջ նման
անդին գործիքը զրկուել է միայն իրեն յատուկ
մեծ կոչման ծառայելու հնարաւորութիւնից:

Մանաւանդ որ՝ իւրաքանչիւր կին, ծննդա-
բերելուց յետոյ, եթէ միայն ոյժ ունի, ժամանակ

կունենայ տղամարդուն օգնելու իւր աշխատանքի
մէջ: Կնոջ օգնութիւնն այդ աշխատանքի ժամա-
նակ շատ թանկագին է, բայց տեսնել զաւակա-
բերութեան համար պատրաստ կրիտասարդ կնոջը
տղամարդու աշխատանքով զբաղուած, միշտ էլ
ցաւալի կլինի: Տեսնել այդպիսի կնոջը նոյնն է
թէ տեսնել թանկագին սեանոլը հանդիսավայրի
կամ զրուամնքի համար խիճով ծածկուած: Դեռ
աւելի ևս ցաւալի կը լինի, որովհետեւ այդ հողը
կարող էր միմիայն հաց բուցնել, իսկ կինը կա-
րող էր մարդ ծնել, որը գին չունի և բարձր է
ամեն բանից: Եւ այդ միայն նա կարող է անել:





Գիւն է 60 Կոպեկ

ՀՀ Ազգային գրադարան



NL0327239

13940